



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ULipUF ✓

96



II<sup>2</sup>  
28



2.0 02



ԵՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԿՈՒՍԻՆ



3.

1870

1870

ԱՆԵՐԿԻՄ

96

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԿՈՒՍԻՆ

Մ Ա Բ Է Ա Մ Ա Յ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ՍԱՍՈՒԷԼ ԳԱԹՇՐԻՃԵԱՆ

Ի ՄԻԹ. ՈՒՆՏԷ

955



Ի ՎԻԷՆՆԱ

Ի ՎԱՆՍ ԳԱՇՏԳԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ՌՅԳ. 1854.

23001



(4119) 96-2002  
41

1895

# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ԳԱՐԷ մը աւելի է որ Առաս ա-  
նունով սպանիացի հեղինակ մը նմա-  
նութիւն սրբոյ կուսին անուամբ գիրք  
մը ի լոյս ընծայեց, բայց ասիկա ու-  
րիշ բան չէր, բայց եթէ Ս. Աս-  
տուածածնայ առաքինութեանցը վրայ՝  
տասուերկու գլուխ բաժնուած պզտիկ  
ճառեր, եւ ամենեւին նմանութիւն  
չունէր թովմաս Գեմբացոյն Գրիստո-  
սի նմանութեան գրոյն ձեւին ու կեր-  
պարանացը: Անոր համար ուրիշ ան-  
անուն ու անծանօթ հեղինակ մը ու-  
ղելով որ յիշեալ Գրիստոսի նմանու-  
թեան պէս՝ Մարիամայ նմանութիւն  
մ'ալ ըլլայ հաւատացելոց ձեռքը, այս  
ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ  
անուամբ գիրքը շարագրեց Գաղղե-

րէն լեզուաւ, որն որ ստուգիւ անանկ  
ընդունելութիւն գտաւ ամէն ազգի  
հաւատացելոց մէջ, ինչպէս որ Թով-  
մաս Գեմբացւոյն Քրիստոսի նմանու-  
թիւնը գտած է:

Ասոր մէջ հեղինակը Ս. Աստուա-  
ծածնայ կենաց զանազան պարագա-  
ները կը նկատէ, անոր Անարատ  
յղութենէն սկսած մինչեւ յաղթա-  
նակաւ վերափոխումը: Ար նկատէ ա-  
նոր ընթացքն ու վարմունքը, զգած-  
մունքը, իր օրինակներովը մեզի տուած  
վարդապետութիւններն ու առ հա-  
սարակ կը սովորեցընէ թէ մեր կենաց  
ամէն պարագաներուն մէջ ինչպէս  
պէտք ենք Ս. Աստուածածնայ նմա-  
նելով կատարեալ գտնուիլ: Եւ որ-  
պէս զի միօրինակութենէ խորշի ու  
ընթերցողաց մտքին մէջ աւելի տպա-  
ւորութիւն ընէ, շատ անգամ խօ-  
սակցութեան ձեւերը կը փոխէ, մէյ  
մը Աստուծոյ կը խօսի, մէյ մը ըն-



Թերցողին ու մէյ մը ընդհանրապէս  
քրիստոնէից • երբեմն իբրեւ թէ ինք  
իրեն խօսելով կամ մտածականի կեր-  
պով խորհրդածութիւններ կ'ընէ ու  
շատ անգամ նոյն իսկ Ս • Աստուա-  
ծածնայ խօսել կու տայ իր ծառային  
հետ : Աս ընդհանուր ձեւերը մինակ  
չորրորդ գրքին մէջ չիպահեր ու հոս  
բանի մը գլխու մէջ Ս • Աստուածա-  
ծնայ ջերմեռանդութեան վերաբերած  
ամէն բանի , ինչպէս՝ անոր ունենալու  
յարգութեան , սիրոյ , վստահութեան  
ու մէկ խօսքով՝ մեր անոր վրայ ու-  
նենալու ամէն զգածմանց վրայ կը  
խօսի : Ամենէն ետքը Ս • Յովսե-  
փայ ջերմեռանդութեան վրան ալ  
մասնաւոր գլուխ մը կ'աւելցընէ :

Թէ որ սուրբերու վարքն ու ա-  
ռաքինութիւնները նկատելը մեծապէս  
կը նպաստէ քրիստոնէական կատա-  
րելութեան մէջ յառաջանալու , հա-  
պա ռըչափ եւս առաւել ասոր օգտա-

կար է Ամենայն սրբոց թագուհւոյն վարքն ու առաքինութիւնները նկատել: Ամենասուրբ Կուսին կենացը մէջ ամէն առաքինութիւնք ու կատարելութիւնք իբրեւ մաքուր հայելւոյ մը մէջ կ'երեւան ու Պօղոս առաքեալէն շատ աւելի իրաւամբ կրնայ աս ամենօրհնեալ Կոյսն ամէն քրիստոնէից ըսել թէ «Ինձի նմանեցէք, ինչպէս որ ես Քրիստոսի նմանեցայ», Կ<sup>ր</sup>. ԺԱ. 1:

Միշտ ու ամէն ատեն մեր Փրկչին սիրելի Մօրը ջերմեռանդութիւնը Ս. Եկեղեցւոյ մէջ մեծ ու պատուական համարուած է, եւ որչափ որ ատեն ատեն հերետիկոսք նոյն ջերմեռանդութիւնն ոտքի տակ առին ու հայհոյելով արհամարհեցին, միշտ նոյն Մարգարէից թագուհւոյն այն վճիռը կը կատարուի թէ «Ամէն ազգեր զիս պիտ'որ երանեն», : Ասն զի ի սկզբանէ մինչեւ հիմակ ամէն դարերու մէջ ա-

նոր գովութիւնը Ս. Եկեղեցւոյ մէջ  
հնչեց ու պիտ'որ հնչէ յաւիտեան :

Արնանք պարծանօք իսկ ըսել թէ  
մեր աղգին մէջ սուրբ Աստուածածնայ  
եղած ջերմեռանդու թիւնն ուրիշ աղ-  
գի մը մէջ այնչափ չենք տեսներ :  
Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր հա-  
սարակաց աղօթից ու արարողու-  
թեանց մէջ սքանչելի կերպով կը փայլի  
Տիրամօր ջերմեռանդու թիւնը : Եւ թէ  
որչափ բարեաց սկիզբ է այս ջերմե-  
ռանդու թիւնը՝ նոյն իսկ օրըստօրական  
փորձերը բաւականապէս կը ցուցը-  
նեն : Բայց ո՞րն է սուրբ Աստուա-  
ծածնայ բուն ջերմեռանդու թիւնը :  
Շատերը կարծելով թէ ասիկա կայա-  
ցած ըլլայ մինակ Ս. Աստուածածնայ  
սէր ու յարգութիւն ունենալու, հար-  
կաւորութեան ատեն զանիկա օգնու-  
թեան կանչելու եւ ասոնց նման բա-  
ներու վրայ, մինակ ասոնցմով գոհ  
կ'ըլլան : Ասոնք աղէկ են ու պէտք է

ընել, բայց Ս. Աստուածածնայ կա-  
տարեալ ջերմեռանդութիւնը չէ թէ  
ասոնց վրայ, հապա անոր առաքինու-  
թեանցը նմանելու վրայ կայացած է:  
Անանկ է նէ աս գիրքս ալ Ս. Կուսին  
նմանելու կերպը սովորեցընելով՝ անոր  
ճշմարիտ ջերմեռանդութիւնը կը սով-  
որեցընէ, որն որ հաւատացելոյ մը սըր-  
տին գեղեցիկ զարդն ու կրնանք նաեւ  
իրաւամբ ըսել անդիի աշխարհքին ե-  
րանութեանը՝ գրաւահան մըն է:

Ար բաղձանք որ աս գիրքն ըն-  
թերցողները արժանի ըլլան Ս. Աս-  
տուածածնայ այն սիրալիր մայրա-  
կան խնամոցը, որն որ մեծամեծ բա-  
րեաց սկիզբ է: Մարիամ հետեւե-  
լով իր Աստուածային վարդապե-  
տին, որն որ իր անուամբը տրուած  
Գաւաթ մը պաղ ջուրն ալ անվարձ  
չիթողուր, իրեն ցուցուած փոքր  
մէկ ջերմեռանդութիւնն ալ մեծա-  
մեծ աստուածային պարգեւներով կը

վարձատրէ եւ չիդադրիր իր ծա-  
ռային հետզհետէ շնորհքներ ընելէն  
մինչեւ որ զանիկա յաւիտենական ե-  
րանութիւնը հասցընէ :

Նարեպաշտներու դիւրութեան  
համար գրքին վերջը մեր կողմանէ  
աւելցուցինք Խոստովանութեան եւ  
Հաղորդութեան եւ Ս. Աստուածա-  
ծնայ գլխաւոր տօներուն համար ջեր-  
մեռանդական աղօթքներ :









# Գ Ի Բ Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն



ՈՐՈՒՆ ՄԷՋ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ ԸՄԵՆԱՍՊԻՐՔ  
ԿՈՒՍԻՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ,  
ԻՐ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ԻՐ ԱՍ-  
ՏՈՒԱԾԱՅԻՆ ՈՐԴԻՆ ԲԵԹՂԵՂԵՄԻ ՄԷՋ,  
ԾՆԱՆԵԼՈՒ ԱՏԵՆԸ՝

## Գ Լ Ո Ւ Խ Ա

Սուրբ Կառնի առաքինաբնիանցը նմանելա վրայ :

Ա. ԵՐԱՆԵԼԻ ԵՆ, որոնք որ իմ ճամբաս կը պահեն. երանելի է անիկա, որն որ միտ կը դնէ իմ առաքինութեանց օրինակներովս իրեն ըսածներուս<sup>1</sup> :

Սուրբ եկեղեցին այս խօսքը Մարիամայ բերանը դնելով՝ զմեզ կը յորդորէ որ սովորինք այս սրբոց թագուհւոյն երկրիս վրայ ցուցրցած վարմանքը եւ նմանինք այն բաներուն, որոնց որ իր վրայ կը զարմանանք :

Ստուգիւ երանի անոր, որն որ Մարիամայ կը նմանի, որովհետեւ երբոր մէկը Մարիամայ կը նմանի, կը նմանի նաեւ Յիսուսին, որն որ ամենայն առաքինութեանց թագաւորն ու առաջին օրինակն է :

<sup>1</sup> Առաք. Ը. 32, 34 :

Բ. Այս կուսին կեանքն ամենուն համար դաս մըն է: Հոն մարդ կը սորվի թէ ինչպէս պէտք է վարուիլ յաջողութեանց ու ճախորդութեանց, աղօթքի, աշխատութեան, պատուոյ ու անարդանաց մէջ:

Չենք կրնար երբեք այն կատարելութեան հասնիլ, զորն որ ինք իր գործոցը կու տար, սակայն այնչափ կատարեալ կ'ըլլայ մէկը, որչափ որ այս առաջին օրինակէն նուազ հեռացած կ'ըլլայ:

Գ. Վասն՝ որ ինք զինքդ Մարիամայ ծառայութեան նուիրած ես, կ'ուզես զինքդ այս ազնիւ օրինակին յարմարցնել: Զանա՛ որչափ կրնաս նէ քու վրադ նկարել անոր հաւատոցը կենդանութիւնը, հնազանդութեան արագութիւնը, խոնարհութեան խորութիւնը, հաւատարմութեան ջանքը, դիտաւորութեանց մաքրութիւնն ու սիրոյն մեծանձնութիւնը:

Չիկրնար ըլլալ, որ մէկն Ատուծոյ օգնութիւնը հայցելէն ու անով զօրանալէն ետեւ, չկարենայ իր առջեւը դնել անոր օրինակն ու գործնական կրթութեամբ այն տեսակ տեսակ առաքինութեանց հետեւիլ:

Եթէ այն կերպով անոր չես նմանիր, յայտնի է որ խիստ տկար է անոր ունեցած սէրդ, եւ անոր համար չես կրնար

յուսալ, որ անոր պաշտպանութեանը մեծամեծ նշաններն ընդունիս :

Գ. Ստոյգ է ամէն օր անոր պատուոյն համար աղօթքներ կ'ընես : Անոր ծառայութեանը քանի մը արտաքին նշանները վրադ կը կրես : Առանձնակի իրեն նուիրուած քանի մը ընկերութեանց անդամ ես : Աս ամենայն յորդոր կ'ըլլան իրեն որ քեզի համար փրկութեան շնորհք խնդրէ :

Բայց եթէ աս ամէն բաներու հետ քու Մարիամայ ունեցած ջերմեռանդութիւնդ անոր առաքինութեանցը նմանեւ լու չիձգուիր, այն սէրը զքեզ չիփրկեր :

Փղշտացիք Աստուծոյ տապանակն իրենց քովն ունեցան, մանաւանդ թէ անոր պարգեւներ ալ ըրին : Այսու ամենայնիւ իրենց օրհնութիւն մը չբերաւ, ինչու որ նոյն ատեն իրենց կուռքերն ալ կը սիրէին :

Ե. Ո՛ր թագուհի առաքինութեանց, պէտք չէ՞ մի որ, երբոր մէկն զքեզ կը սիրէ, ընէ ան բանը, զորն որ աշխարհքիս բարեկամացը համար կ'ընէ : Ի՞նչ պէս կը ջանայ անոնց բնութեանը յարմարիլ եւ անոնց իղձքն ու յօժարութիւնները կ'առնէ :

Այս յարմարութենէն յառաջ կու գայ սրտերուն իրարու հետ միանալը : Բարեկամութիւն չ'ըլլար առանց նմանութեան :

Քու սիրտդ, որն որ այնպէս խոնարհ  
ու սուրբ է եւ Աստուծոյ հրամանացը  
հնազանդ ու աստուածային գործոց մէջ  
եռանդնտա, կրնայ մի դալ միանալ սրտի  
մը հետ, որն որ լի է ցանկութիւններով,  
հպարտութեամբ. Աստուծոյ կամացն  
անհնազանդ է ու անոր փառացը նա-  
խանձը չունի:

Պօղոս առաքեալէն աւելի իրաւամբ  
կ'ըսես գուն մեզի, թէ որ զիս կը սիրէք  
ինձի նմանեցէք, ինչպէս որ ես ալ Քրիս-  
տոսի նմանեցայ<sup>1</sup>: Եթէ իմ որդիքս էք,  
ձեր մօրը հողին զգեցէք:

Զ. Մարիամայ որդւոցը հողին պէտք  
է իրենց մօրը հողւոյն նման ըլլալ: Այս  
ինքն՝ հողի մահացուցման եւ հողի եր-  
կիւզի եւ սիրոյ Աստուծոյ:

Սուրբ Կոյս, հաստատութեամբ կ'ա-  
ռաջադրեմ որ ասկէ ետքը քեզի ունե-  
ցած սէրս քու առաքինութեանցդ նմա-  
նելու վրայ հաստատեմ:

Ասիկա այն պատիւներուն ու ծառայ-  
ութիւններուն ամենէն կատարելագոյնն  
է, զորոնք ես կրնամ քեզի մատուցանել:

<sup>1</sup> Ա. Կոր. Գ. 16:

Թե որչափ պէտք էն՝ մեծ համարել որքա՞րա՞ր  
շնորհքը :

Ա . ՄԱՐԻԱՄ իր ծննդեան առաջին  
վայրկենէն ազատ էր սկզբնական մեղ-  
քէն . այսինքն Աստուծոյ շնորհաց ու  
բարեկամութեան մէջ յղացած էր :

Մենք ամէնքս աշխարհք կու գանք  
իբրեւ որդիք Աստուծոյ բարկութեանը ,  
Մարիամ միայն իր սիրովն աշխարհք ե-  
կաւ իբրեւ գլխաւոր դործ իրեն շնորհացը :

Աստուած չուզէց , որ իր բնակելու  
տաճարն աղտեղութիւն մը մտնէ : Որ-  
դւոյն պատիւը կը պահանջէր որ եւ ոչ  
փոքրիկ վայրկեան մը Մայրը գերի ըլլայ  
սատանային :

Բ . Ի՞նչ որչափ մեծ ու պատուական  
համարեցաւ Մարիամ այս սքանչելի  
պարգեւը : Այս պարգեւն անանկ էր ա-  
նոր առջեւը , ինչպէս Սողոմոնին առջեւ  
իմաստութիւնը , այսինքն իբրեւ Ամէն  
բարութեանց աղբիւր :

Աստուած ստացած էր զանիկա իր  
ճամբուն սկիզբը <sup>1</sup> : Ինք ասիկա ամէն եր-  
կրաւոր պատկներէ աւելի վեր կը սեպէր :

Թէպէտ եւ ուրիշ շատ առաքինու-  
թիւններով ալ զարդարուած էր , ամե-  
նէն աւելի ասիկա մեծ կը համարէր , ին-

<sup>1</sup> Առակ . Ը . 22 :

չու որ աւելի ասիկա զինքն Աստուծոյ  
հաճելի կ'ընէր :

Իր բոլոր կեանքը շնորհակալութեան  
ցոյց էր առ Աստուած, որով կը գոհանար  
այն յատուկ բարերարութեան համար,  
որուն մէջ զուտ արարածներէ եւ ոչ  
մէկն իրեն հաւատար ունէր :

Գ. Գուն ալ, ո՛վ քրիստոնեայ, մկրտ-  
տութեան ժամանակ ընդունեցար այն  
որբարար շնորհքը, զորն որ Մարիամ իր  
յղութեանն առջի վայրկեանն ընդու-  
նեցաւ :

Այս պարգեւով իրաւունք ստացար  
զԱստուած՝ հայր, եւ Քրիստոս՝ եղբայր  
կանչելու. ժառանգ եղար Աստուծոյ եւ  
Քրիստոսի ժառանգակից<sup>1</sup>, ու արքայու-  
թիւնը քեզի որոշուեցաւ :

Ար հասկնան այս սքանչելի արտօնու-  
թեանց բարձրութիւնը : Ար հասկնան  
նաեւ նոյն արտօնութեանց քու վրադ  
դրած ամէն պարտքերը :

Գ. Ո՛հ, ի նախատինս քրիստոնէու-  
թեան, որչափ քիչերը կան որ ասոր  
վրայ կը մտածեն եւ սուրբ գործքերով  
կը ջանան իրենց բարձր պատուոյն ար-  
ժանաւորութիւնը պահել :

Ո՛րչափ քիչերը կան, որոնք այն անմե-  
ղութեան զգեստը պահելու աշխատու-  
թիւնը կ'ուզեն կրել, որն որ Աստուծոյ

<sup>1</sup> Հռոմ. Ը. 17 :



որդւոցը մարբութեան, սրբութեան ու  
աստուածապաշտութեան նշանն է :

Մարդիկ՝ աշխարհքիս բարիքներէն  
սուտ փառք մը կը քաղեն ու խտտորնակ  
զաղափարով հոգւոյն մէջ յետին տե-  
ղին կու տան այն շնորհաց, որն որ մինակ  
արժանի է որ ամէն բանէ վեր սեպուի :

Մարդիկ ծանր կը համարին, ըստ մար-  
մնոց երեւելի կարծուած ծնունդ կամ  
տոհմ մը օտարացընել եւ չեն վախնար  
զուտ կենդանական ու մարմնական կեան-  
քով մը բոլորովին հոգեւոր ու աստուա-  
ծային ծննդենէ մը օտարանալ :

Առ աչօք ազատութիւն կը ցուցընեն  
ու չեն ամբշնար սատանային հետ այլ-  
անդակ միաբանութիւն ընել, անոր  
գրօշն ընդունիլ ու դարձեալ այն ծա-  
ռայութեան տակ մանել, որուն մէջ  
ծնած էին դժբախտաբար :

Սաստիկ ետեւէ կ'ըլլան երկրաւոր ըն-  
չից ու ժառանգութեանց եւ անհոգ  
կ'ըլլան, մանաւանդ թէ նաեւ կերպով  
մը կ'անարգեն երկնաւոր բարեաց յաւի-  
տենական ժառանգութիւնը :

Ե. Ո՛վ ապերախտ անձինք, մեղաց  
դժբախտ աւարներ, ինչպիսի անձինք որ  
ըլլաք, ս՛հ. գոնէ մի խստացուցանէք  
ձեր սիրտը աստուածային ձայնին<sup>1</sup>, որն  
որ զձեզ կը կանչէ :

<sup>1</sup> Սաղմ. ԴԳ. 8:

Գեռ ունիք երկրորդ մկրտութիւն մ'ալ, որով կրնաք ընդունիլ որդեգրութեան շնորհքը, զորն որ կորսնցուցիք, այսինքն մկրտութիւն ապաշխարութեան:

Հոն վաղեցէք համարձակութեամբ եւ անկեղծութեամբ: Չեր երկնաւոր հայրը սաստիկ կը բաղձայ ձեզի իր բարեկամութիւնը տալ: Բայց շուտ ու անյապաղ հոն դիմեցէք: Գուցէ քիչ մը ետքն ալ չկարենաք:

Չ. Սուրբ եւ անարատ Աղյս, աղօթէ մեզի համար որ մեղքէն ետ կենանք ու մէյ մ'ալ մեղք չգործենք, հաստատուն կենանք մեղք գործելով ըրած անհամեմատ կորուստնիս ձեռք բերելու համար դրած յառաջագրութիւններնուս վրայ:

Քու պաշտպանութիւնդ մեզի շնորհք ընդունի Աստուծոյ բարեկամութեան մէջ կատարեալ հաստատուն ըլլալու, որով կարող ըլլանք քու Յիսուս Որդիէդ ետեւ զքեզ իբրեւ մեր փրկութեանը պատճառն ու սկիզբը օրհնել:

Գ Լ Ո Ի Խ Գ .

Թէ ինչպէս պէտք էն զանալ որքաբար շնորհք պահելու համար:

Ա . ՍՄԱՐԻԱՄ Աստուծոյ շնորհացը մէջ յղացած ու ամէն բժէ ու նաեւ մեղաց



յօժարութենէ ազատ ըլլալով, վախ  
չունէր մեղքի մէջ իյնալու:

Բայց իրեն վարմանցը նայելու որ ը-  
լանք, կարծես թէ մեղի պէս, մանաւ-  
անդ թէ մեզմէ ալ աւելի մեղքէ կը  
վախնար:

Միշտ արթուն կը կենար ու կը հսկէր  
որտին վրայ, իբրեւ թէ կարենային ա-  
րարածք իր սէրը գողնալ:

Ար հսկէր իր խօսքերուն վրայ իբրեւ  
թէ իր շրթանցը վրայ վստահութիւն  
չունենար:

Թէպէտ եւ անմեղութեան մէջ յղա-  
ցած էր, բայց միշտ ապաշխարութեամբ  
կ'ուզէր ապրիլ:

Բ. Իսկ մենք ասոր հակառակ, թէ-  
պէտ եւ ամէն կողմանէ շողորթ ու  
խաբեբայ թշնամիներէ պաշարուած ենք,  
որոնք մեր բնութեան տկարութիւնը  
կ'ուզեն իրենց օգտին գործածել, այսու  
ամենայնիւ չենք վախնար ու արթուն  
չենք կենար:

Ար խոստովանինք որ տկար ենք, բայց  
մենք զմեզ անանկ պարագաներու մէջ  
կը ձգենք, որոնք կրնան ամենէն զօրաւոր  
եղաղներն ալ կործանել:

Արժանի չէ՞ որ ասանկ յանձնապաս-  
տան տկար մը, շնորհաց օգնութենէն  
զրկուի:

Գ. Վիւրաբեկ անօթի մը մէջ կը

կրենք շնորհաց գանձը<sup>1</sup>, որն որ կրնայ  
ամենեւին չմտածած ատեննիս կոտորիլ:

Որչափ թշնամիք կան, որոնք ետեւէ  
եղած են այս գանձը մեզմէ յափշտակե-  
լու, ոմանք մեր ներսը, ոմանք մեզմէ  
գուրս ու ոմանք մեր քովը:

Մեր ներսն են կէս մը շնուածուած  
մոլութիւնները, մեզմէ գուրս են խա-  
ւարին ոգիքը ու մեր քովն է չար ու  
նենգաւոր աշխարհք:

Գեռ նոր մարած ճրագի պէս միշտ  
կրնան դարձեալ բորբոքիլ մեր կեղքերը  
եւ սրտերնիս հրդեհել:

Թէպէտ եւ, Պօղոս առաքելոյն պէս,  
մինչեւ երրորդ երկինք վերանանք, միշտ  
պէտք ենք վախնալ որ չըլլայ թէ ապրս-  
տամք հրեշտակին հետ անգնդոց յա-  
տակը գահավէժ ըլլանք:

Դ. Պարապ տեղ կը վստահի մէկն  
իր անկեղծ մտացն ու եռանդնալից յա-  
ռաջադրութեանցը վրայ:

Մինակ մէկ դժբախտ դէպք մը կրնայ  
մեզի կորուստ պատճառել:

Մինակ մէկ նայուածք մը Գաւթին  
վրայէն Աստուծոյ բարեկամութիւնը  
վերցուց:

Երկայն տարիներով սաստիկ մրրկաց  
դէմ կռուող անապատի սիւներն ալ  
կործանած տեսանք:

<sup>1</sup> Բ. Կոր. Գ. 7:

Առարխնութեան ճամբուն մէջ, մէկ օրը մէկալին չի համեմատուիր, ինչու որ Աստուծոյ բազմապատիկ շնորհացը մէջ վայելող անձը կրնայ միշտ հաւատարմութիւնը կորսնցընել ու երեսէ ձգուիլ :

Ե . Ո՛վ որ իր յառաջագոյն դրած յառաջագորութեանցը վրայ վստահանալով՝ զգուշութիւն չ'ընէր, անյապաղ անոնց մէջ կը պակսի :

Ո՛վ որ սաստիկ ու մրրկալից ծովու մէջ կը նսւէ առանց պէտք եղած զգուշութիւնները բանեցընելու, դժբախտ նաւաբեկութենէ երկայն ատեն ազատ չըլլար :

Ես ալ դիտեմ, որ ծանր բան է, բովանդակ կենաց մէջ շարունակ իր միտութեանցն ու յօժարութեանցը վրայ հսկել ու անոնց դէմ կռուիլ, բայց չկայ մէկը, որ սուրբ եղած ըլլայ առանց տրքնութեան ու պատերազմի :

Զ . Ի՛նչեւեռէ, Տէր, իմ մարմինս քու երկիւղիղ վրայ<sup>1</sup> : Քու վախդ զիս արթուն պահէ, ու աս արթնութիւնը զիս ամէն պատերազմիս մէջ յաղթող ընէ :

Ինձի աղէկ իմացընել տուր, որ զմեզ քեզի բարեկամ ու որդի ընող շնորհքը մինակ արժանի է իմ փութոյս ու հոգատարութեանս, ու անոր կորուսան արժանի է իմ կոծերուս :

<sup>1</sup> Սաղմ. ՃԺԸ. 120 :

Երանի թէ երբեք կորսնցուցած չըլլայի այս պատուական դանձր, որչափ ցաւերէ ազատ կ'ըլլայի այս աշխարհ, քիս մէջ ու որչափ հարստութիւն կ'ունենայի անդիի աշխարհ, ք :

Է. Երանելի ու շատ երանելի եմ եթէ հաւատարիմ մնալու ըլլամ յառաջագրութեանս վրայ, զորն որ դրի, ասկէ ետքը ամէն չարեաց ու դժբախտութեանց համբերելու քան թէ ինք զինքս սրբարար շնորհքը կորսնցընելու վտանգի մէջ դնելու :

Այս դանձր պահելու որ ըլլամ, դուն իմ սիրտս կը բնակիս, քու ներկայութեամբդ զանիկա կը գրաւես, իմաստութեամբդ կը լուսաւորես, հզօր զօրութեամբդ կը զօրացընես, միշտ քու քաղցր սիրոյդ նշանները կը ցուցընես ու անոր վարձքը կ'ըլլաս աս ժամանակիս մէջ ու յաւիտեան :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Թի ինչ գոյն պէտք էն + ունենալ շնորհաց ու խորարելութեան մեջ անելու համար :

Ծառան : Ա . ՍՈՒՐԲ կոյս, դուն քու յղութեանդ առջի բոպէէն շնորհաց լըրումն ընդունած էիր : Բայց չուղեցիր խաղաղիկ նստած նոյն պարզեւր մինակ վայելել, հապա ջանացիր քու բովանդակ

կենացդ մէջ նոյնը յարգել ու շահաբեր  
ընել :

Հնորհ.քն ալ, որն որ ճիգ ու ջանք  
եղած տեղ կ'աւելնայ ու կ'աճի, օր ըստ  
օրէ զքեզ կը հարրստացնէր : Անանկ ազ-  
նիւ մշակուած երկիր էիր, որ փոքրիկ  
հաս մ'ալ հարիւրապատիկ կը բերէր :

Արչափ որ սրբութեան մէջ ալ ծնած  
էիր նէ, սրբութիւնը քեզի բնական չէր,  
հապա քու ջանքովդ ու աշխատու-  
թեամբդ նոյնը քեզի իբրեւ բնութիւն  
բիր :

Մարիամ արմաւենուոյ պէս ոստեր ար-  
ձակեց ու ոստերն էին փառաց ու Հնոր-  
հաց ոստեր<sup>1</sup> :

Մարիամ : Բ . Արդեակ, եթէ կ'ուզես  
աճեցընել քու վրագ այս Հնորհ.քը, որն  
որ զքեզ Աստուծոյ բարեկամ, Աստու-  
ծոյ սրգի, Հոգւոյն սրբոյ տաճար, Քրիս-  
տոսի եղբայր ու ժառանգակից կ'ընէ,  
փախիր աշխարհ.քէն, աղօթքը սիրէ,  
ստէպ ստէպ Հաղորդութեան մօտեցիր  
ու քու վիճակիդ պատշաճող աւաքի-  
նութեանց գործքերու ետեւէ եղիր :

Քու վրագ սրբարար եւ ունակական  
Հնորհ.քը աճեցընելու աւելի եւս աղէկ  
միջոց է, ունեցած Հնորհացդ ազդեցու-  
թեանցը հաւատարիմ ըլլալ :

Ականջ դիր քու ներսդ խօսող ձայ-

<sup>1</sup> Սիր. ԻԴ. 18, 24 :

նին եւ թող տուր որ անոր թելադրու-  
թիւնները քեզի առաջնորդեն :

Ո՛րչափ որ մէկն աս ձայնին կը լսէ,  
ս'յնչափ ալ նոյն ձայնը շատ կը սովորե-  
ցընէ . որչափ յառաջադիմութիւն կ'ը-  
նես, այնչափ կը սովորեցընէ ուրիշ նոր ու  
մեծագոյն յառաջադիմութիւն ընելու :

Գ. Շատերը ժամանակ մը առաքի-  
նութեան ճամբան երթալէն ետեւ, ը-  
րած ճամբանին բաւական սեպելով՝ կանգ  
կ'առնեն : Բայց շնորհքը երբեք չ'ըսեր  
թէ բաւական է :

Շատերն ալ կը կարծեն, թէ բաւա-  
կան է որ մէկը անդգամ ու ամպարիշտ  
չըլայ : Բայց ասիկա բաւական չէ : Ո՛վ  
որ բարի է, պէտք է որ օր աւուր վրայ  
բարեգոյն ըլլալու ջանայ :

Ո՛րչափ քրիստոնեայք պիտի զարմա-  
նան դատաստանին օրը, երբոր տեսնեն  
իրենց՝ Աստուծոյ արդարութեան ունե-  
ցած պարտքը, զորն որ վրանին ձգած  
են չբանեցընելով այն միջոյնները, որոնց-  
մով կրնային մեծամեծ սուրբեր ըլլալ :

Առաքինութեան ճամբուն մէջ յա-  
ռաջ չերթալը՝ ետ դառնալ ու չշահելը  
կորսնցընել է :

Գ. Երբոր մէկն Աստուծոյ ծառայու-  
թեանը չափ ու սահման կը դնէ, Աս-  
տուած ալ իր բարերարութեանցը սահ-  
ման կը դնէ :



Գունն որչափ քիչ ալ իրեն մատուցանես, ինք քեզի նաեւ աս աշխարհքիս մէջ ալ, առատաձեռնութեամբ ու մեծաձեռնութեամբ կը հատուցանէ:

Աշխարհային հարստութիւն՝ որչափ քիչ ալ ունենաս, միշտ բաւական ունիս, բայց շնորհաց հարստութիւնը չես կրնար երբեք բաւականէն աւելի ունենալ:

Ե. Ար պատժուի ան ծառան, որն որ իր տիրոջը յանձնած ստակը չէյարգեր:

Արդ, որդեակ, արթնցիր քու թմբութենէդ, որն որ քեզի վնասակար ու մահաբեր կրնայ ըլլալ. ջանա՛ լեցընելու կորսնցուցած ժամանակիդ տեղ:

Մի ըսեր թէ ինձի բաւական է երկնաւոր Հօր տան մէջը<sup>1</sup>, յետին տեղը բռնել: Ասանկ ըսողը ինք զինք վտանգի մէջ կը ձգէ արքայութեան մէջ ամենեւին տեղ մը չգտնելու:

Ծառան: Զ. Ո՛վ Մարիամ, հզօր ու խնամատ պաշտպան, օգնէ՛ ինձի որ սուրբ ընեմ իմ կեանքս, զորն որ Աստուած անոր համար տուաւ ինձի, որպէս զի մինակ անոր ծառայելու եւ զանիկա սիրելու գործածեմ:

Օգնէ՛ ինձի, որպէս զի արժանի ըլլամ այն փառաց, որուն մինակ իմ շնորհաց օգնութեամբ ընելու գործքե-

<sup>1</sup> Յովհ. ԺԴ. 2:

բայն կրնամ հասնիլ, ու նոյն դորձքե-  
րուն մեծութիւնն ալ զանոնք կատա-  
րած ատենա ունեցած եռանդեանս մե-  
ծութենէն պիտի չափուի:

Գ Լ Ո Ի Խ Ե .

Թի պէտք է ինչ զինչ կանոնն Աստուծոյ որս:

Ա . ] Սէ՛ դուստր ու տես խոնարհե-  
ցուր ականջդ, մոռցիր քու ժողովուրդդ,  
եւ քու հօրդ տունը, որովհետեւ թա-  
ղաւորը քու գեղեցկութեանդ փափա-  
քեցաւ, որն որ քու Տէրդ է<sup>1</sup>:

Մարիամ շուտով լսեց աստուածային  
ձայնին, որն որ զինքն առանձնութեան  
կը կանչէր եւ իր մատաղ հասակին մէջ,  
հայրենի տունը թող տալով, ինք զինք  
Աստուծոյնուիրեց, անոր տաճարին մէջ:

Բան մը զանիկա չարգելեց, ոչ իր  
հասակին պզտիկութիւնը, ոչ մարմնոյն  
տկարութիւնն ու ոչ ծնողաց սէրը:

Ան ամէն բան, որն որ զԱստուած  
փնտռող ու անկէ զատ ուրիշ բան չսի-  
րող սրտին պատարագը կ'ուշացընէ, նոյն  
սիրտը կը տրամեցընէ, ինչու որ անոր  
երջանկութիւնը կը յապաղէ:

Մարիամ տաճարին մէջ քաշուած՝  
կրցածին չափ կը ջանար ճշդիւ կատա-  
րելու այն պաշտօնները, որոնք իր հա-  
սակին զօրութեանը համեմատ՝ իրեն

<sup>1</sup> Սաղմ. ԽԳ. 12:



տրուած էին, իսկ անոնցմէ ուրիշ ատեն-  
ներն աղօթքի ու մտածութեանց կու-  
տար. ասով ինք զինք կը պատրաստէր  
այն յատուկ շնորհքներուն, զորոնք Աս-  
տուած սահմանած էր որ իրեն ընէ:

Բ. Արկնից թագաւորին դուստրը,  
ինչպէս գեղեցիկ ու փառաւոր են քու-  
առջի գնացքդ<sup>1</sup>:

Հատերը քու օրինակիդ ետեւէն պի-  
տի երթան: Քու ետեւէդ անթիւ կու-  
անք իրենք զիրենք պիտի նուիրեն ցըն-  
ծութեամբ եւ ուրախութեամբ թա-  
գաւորին տաճարին մէջ<sup>2</sup>:

Այս նուէրը, որով հոն իրենց մանկու-  
թիւնը, սիրտը, ազատութիւնն ու բա-  
լոր անձը Աստուծոյ կու տան, աստուա-  
ծային մեծփայելութեան մեծ պաշտօն  
մըն է, որն որ սկիզբ ու պատճառ կ'ըլ-  
լայ այն օրհնութեանց, որով Աստուած  
զանոնք բովանդակ կեանքերնուն մէջ կը  
լեցընէ:

Գ. Ո՛հ, որչափ կը խաբուին անոնք,  
որոնք որ կը կարծեն թէ տղայութեան  
հասակն առաքինութեան յարմար չէ:

Մարիամ ու բոլոր սուրբերը փորձով  
տեսան թէ Աղէկ է որ մարդ Աստուծոյ  
լուծը տղայութենէն առնէ<sup>3</sup>:

<sup>1</sup> Երգ. Է. 1:

<sup>2</sup> Մաղմ. ԽԳ. 16:

<sup>3</sup> Ողբ Երեմ. Գ. 27:



2002-96-955  
[10114]

Միթէ զԱստուած իբրեւ Աստուած պատուել է, կենաց խեղճ մնացորդը մինակ անոր տալ, ուր որ նոյն կեանքն անոր համար մեզի տրուեցաւ, որպէս զի բովանդակ Աստուծոյ ծառայութեանը գործածենք:

Ի՞նչ պատարագ է այն պատարագը, երբոր մէկը սպասէ մինչեւ որ աշխարհային զօրութիւնն ու օգնութիւնները հասնին ու անկէ ետեւ Աստուծոյ ծառայութեան մտնէ:

Գ. Խիստ վախնալու է որ չըլլայ թէ անհամբերութեամբ տանին Աստուծոյ լուծն անոնք, որոնք որ աշխարհքին լծէն յոգնելէն ետեւ մտքերնին կը դնեն նոյն լուծն առնել:

Ոմանք կ'ըսեն թէ տարիքնիս առնենք նէ կ'ուզենք զմեզ Աստուծոյ տալ: Բայց պիտի հասնի՞ն արդեօք անոնք իրենց յուսացած հասակին: Եւ եթէ հասնելու ալ որ ըլլան, անանկ դիւրաւ կը փոխուի՞ն, ինչպէս որ կը յուսան:

Փորձով յայտնի է որ, տարիքը դիտնագոյն կ'ընէ, բայց իմաստնագոյն չ'ըներ:

Ե. Տէր, Տէր, բայց մեզի՞ կ'ըսէին յիմար կուսանք, բայց ուշ եկած էին ու պարապ տեղ դուռը կը զարնէին:

Երանի՛ անոնց, որոնք որ իրենց առջի հասակէն զիրենք կը պատրաստեն ելլե-

<sup>1</sup> Մատթ. ԻԵ. 11:

լու մեծ դատաւորին առջեւ, որն որ ամէն հասակներէ համար պիտի պահանջէ :

Ո՛վ որ իր կենաց սկիզբն Աստուծոյ չիտար, պէտք է վախնալ որ չըլլայ թէ Աստուծոյ թոյլ տալովն իր կենաց վախճանը շուտ տեսնէ :

Զ. Աստուած իմ, որչափ ժամանակ վատնեցի առանց գ.քեզ սիրելու : Պէտք էր որ ասոր համար անմխիթար ցաւոց ու տրտմութեանց մէջ իյնայի : Եւ եթէ գիւրաւ ինք գինքս կը մխիթարեմ, ի՞նչ պէս կրնամ ճշմարտութեամբ ըսել թէ սկսած եմ գ.քեզ սիրելու :

Երանի թէ տղայութեան օրերս ըլլայի : Սիրտս, միտքս, խորհուրդներս, յօժարութիւններս ու ամէն բանս քեզի կը նուիրէի :

Հնորհակալ եմ քու մեծ ողորմութեանդ, զորն որ ինձի ցուցրցիր, պահելով իմ կեանքս այն ժամանակը, որուն մէջ զանիկա գ.քեզ վշտացրնելու կը գործածէի :

Քու շնորհացդ օգնութեամբը զօրացած, զորն որ նաեւ շատ թախանձանօք կը խնդրեմ քեզմէ, կ'ուզեմ ծառայել քեզի մինչեւ կենացս վերջի շունչը, այնչափ աւելի հաւատարմութեամբ, որչափ որ ոչ սկսայ :

Պէտք է ինչ զինչ բարեւոյնն ու ընդ Վերջ Աստուծոյ արարել :

Ծառասան : Ա . ԵՌԱՆԻԱԳԻՆ կոչս , դուն ոչ միայն կանուխ , հապա նաեւ ամբողջ ու առանց քեզի մաս մը պահելու ինք զինքդ Աստուծոյ առիւր :

Նուիրեցիր իրեն քու բովանդակ ազատութիւնդ , անանկ որ անոր կամքէն զատ ուրիշ կամք չունէիր :

Աշխարհքիս վրայ Աստուծոյ հաճոյ ըլլալու մխիթարութենէն զատ ուրիշ մխիթարութիւն չուզեցիր , նոյնպէս անոր սիրոյն համար զինքդ ամէն բանէ զրկելէն ուրիշ խնդութիւն չուզեցիր :

Երբէք աս ընթացքէդ չխտորեցար , հաստատութեամբ կը քալէիր Աստուծոյ քեզի պատրաստած ճամբուն մէջ , որ աւուր վրայ նոր յառաջադիմութիւն ընելով :

Քու օրինակդ՝ Աստուծոյ ծառայութեան մէջ ունեցած իմ անհաստատ ընթացքս ու անոր ըրած ուշադրութիւնս կը յանդիմանէ :

Երեսս ամօթով ծածկուած է : Որովհետեւ Աստուած ինձի միշտ նոյն վարմունքը կը ցուցնէ , արժանի է որ ես ալ իրեն միշտ նոյն հպատակութիւնն ու հաւատարմութիւնը ցուցնեմ :

Մարիամ: Բ. (Լայց), որդեակ, ինչու  
կանգ առիր ու կեցար, այնպէս աղէկ  
սկիզբ ընելէդ ետեւ: Ինչ է պատճառը:  
Աստուած հիմակ ալ նոյն առջի մեծա-  
ղօր ու առատածեռն տէրը չէ՞ մի:

Ամէն ատեն քու անոր հետ ունեցած  
յարաբերութիւնդ նոյն չէ: Ատեն մը  
շատ ու ատեն մը քիչ կախում ունիս  
անկէ: Քու բովանդակ անձովդ իրեն ը-  
լալու պարտքդ ամէն ատեն նոյն չէ:

Որչափ որ հասակիդ մէջ կը զարգա-  
նաս, նոյնչափ աստուածային բարերա-  
բութիւնները վրաց կ'աւելնան: Ասոնց  
հետ մէկտեղ պէտք է որ նաեւ քու  
շնորհակալութիւնդ, որով եւ քու հա-  
ւատարմութիւնդ աւելնայ:

Աստուած միայն ստեղծեց քու սիրտդ  
ու մինակ իրեն համար ստեղծեց, անանկ  
է նէ միայն ինքը սրտիդ տէր պիտի ըլլայ:

Չրսաւ քեզի թէ քու սիրտդ ինձի  
փոխ տուր, այլ թէ քու սիրտդ ինձի  
տուր: Լսեցիր անոր ձայնին ու սիրտդ  
մէյ մը իրեն նուիրեցիր, ինչ իրաւամբ  
նոյնը հիմակ ետ կ'առնես:

Գ. Խիստ մեծ սէր կը ցուցնես աշ-  
խարհքին, թէ որ սիրոյդ մէկ մասն անոր  
կու տաս. սաստիկ նախատինք կ'ընես  
Աստուծոյ, թէ որ աշխարհքն անոր դի-  
մացն իբրեւ ախոյեան կը դնես:

Կ'ըսես թէ ինձի ամէն դժբախտու-

Թիւններէ մեծ է, Աստուծոյ բարեկամացը Թուէն դուրս բլլալ: Բայց նախանձախնդիր Աստուծոյ առջեւ ինչ բարեկամ է՝ մեղկ ու տկար բարեկամը:

Աստուած ինք զինք քեզի տալով, մեծ բան մը տուած չի համարիր: Անանկ է նէ դուն ալ բոլորովին անոր եղիր: Ամէն բան անոր տուր եւ անոր քով ամէն բան կը գտնես:

Աշխարհք ու աշխարհքիս ամէն բաները, բան մը չեն անոր առջեւ, որուն ամէն բանն Աստուած է:

Ծառան: Գ. Սուրբ Աղյս, ես տկար ու անզօր եմ, սաստիկ ու զօրաւոր շնորհք պէտք է որ քու խրատներէդ օգուտ հանեմ ու քու շաղագոյդ ետեւէն քալեմ:

Ո՛հ, այնչափ յողորմող բնթացքէս ետեւ, ինչպէս իշխեմ սիրաս Յիսուսին մատուցանել: Բայց անոր բարկութիւնը զղջացեալ ու խոնարհեալ սրտի եւ քու միջնորդութեանդ առջեւ չիդիմանար:

Մայր ողորմութեան, խաղաղութիւնը բնէ անոր ու իմ մէջս, եւ ընդունէ քու բարեխօսութեամբդ որ Փրկիչն Աստուած իր շնորհքովն անանկ լեցրնէ իմ սիրաս, որ ասկէ ետքը, նոյն սիրան ասանկ բարերար Տիրոջ մը ծառայութեան մէջ չազատէ կամ բացառութիւն չընէ ու իր ամէն մէկ զարկը մինչեւ վերջին վայրկեանն անոր համար զարնէ:



Գ Լ Ո Ի Խ Է .

Առանձնահեռան օգնարներուն առ Կաղարան-  
ներանը վրայ :

Ծարան : Ա . ՍՈՒՐԲ Կոյս , ինչ զը-  
արթ ու խաղաղ էին քու օրերդ տա-  
ճարին մէջ :

Հոն խաղաղութեամբ եւ ուղածիդ  
պէս , Աստուծոյ հաղորդակցութիւնը կը  
վայելէիր , ու քու ներսդ աւելի եւս փա-  
ռաւոր ու անոր արժանաւորագոյն տա-  
ճար մը կը պատրաստէիր :

Աստուծոյ ներկայութեանը մտած-  
մունքը միշտ մտացդ առջեւն էր : Միշտ  
անոր մեծութիւններն ու կատարելու-  
թիւնները կը նկատէիր :

Հոն Սիրելիդ քուկդ ու դուն Սիրե-  
լոյդ էիր : Աշխարհքիս ամենէն հա-  
րուստ ու ամենէն գեղեցիկ բանն ալ  
քու աչքիդ առջեւ ամենեւին բան չէր  
երեւնար :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ , առանձնու-  
թեան մէջ աշխարհքէն ու անոր բանե-  
րէն բաժնուած անձ մը , իրաւցընէ երա-  
նելի օրեր կ'անցընէ :

Հոն մինակ զԱստուած կը մտածէ ,  
իբրեւ թէ աշխարհքիս վրայ ինք մինակ  
եղած ըլլայ անոր հետ :

Հոն ամէն ատեն միտքը ժողվուած է  
լսելու իր Աստուծոյ ձայնին , ու չկայ

բան մը, որ ներս մտնէ ու արդեւէ սրտին ձայնը, որն որ միշտ անոր կը խօսի :

Այս կարճ խօսքով. Աստուած սրտի իմոյ<sup>1</sup>, զորն որ իրեն քաղցր է միշտ կըրկնել, բոլոր իր փառքը, հարստութիւնն եւ ուրախութիւնը կը գտնէ :

Գ. Երգոց երգոյն հարսին<sup>2</sup> պէս, իր սիրելւոյն հովանւոյն տակ նստած, ցաւակցութեամբ կը մտածէ մարդիկներու ճգանցը վրայ, որով կ'աշխատին մեծ ու հարուստ ըլլալու : Չիկրնար խելք հասցընել, թէ ինչպէս կարելի է իր սիրելիէն զատ ուրիշ բան սիրուիլ :

Աշխարհքիս մէջ եղող ամէն բաները զինք չեն շարժեր : Իր սիրելին, ամէն ատեն նոյն է, ինչ որ ի յաւիտենից էր, ու միշտ այնպէս պիտի ըլլայ, ինչպէս որ է, նոյնպէս սուրբ ու նոյնպէս սիրելի : Ասանկ խորհուրդներով միշտ ուրախանալու նոր նիւթեր կը գտնէ :

Գ. Աստուած երբ կ'ուզէ իր աստուածային խրատները մէկուն սովրեցընել ու սիրտը խօսիլ, անապատ կը տանի<sup>3</sup> :

Ո՛րդեակ, խնդրէ անկէ սրբոց ունեցած առանձնութեան քաղցրութեանն ու մտաց ամփոփութեան ճաշակը : Սիրէ աշխարհքէն հեռու կեանք անցընել, ու

<sup>1</sup> Սաղմ. ՀԲ. 26 :

<sup>2</sup> Երգ. Բ. 3 :

<sup>3</sup> Ովս. Բ. 14 :



մի երեւնար անոր, բայց եթէ ան ատեն երբոր հարկը կը պահանջէ :

Բայց անոր երեւնալու հարկ եղած ատենն ալ, նմանէ այն աղաւնոյն, որն որ տապանէն ելլելու ստիպուելով շուտ մը նորէն ետ դարձաւ, տապանէն դուրս կենալու տեղ չգտնելով :

Թէ որ աշխարհքէն մասնաւոր փութով չես փախչիր, շուտ մը հաճելի կ'ըլլայ քեզի ու մէյ մը աշխարհքին բաներուն ճաշակն առնելէդ ետեւ, ալ չես ուզեր աստուածայնոց ճաշակն առնել :

Ե. Արդոց երգոյն Հարսն իր սիրելին երուսաղէմի փողոցները փնտռելով, հոն չգտաւ :

Գուն քեզմէ խոստովանէ որ խիստ քիչ անգամ եղած է որ, աշխարհային կենցաղավարութենէ ելած ըլլաս առանց Աստուծոյ առջեւ աւելի պարտք մը վրադ առնելու, որմէ ազատ էիր մտած ատենդ :

Թէ որ կ'ուզենք մարդկան մէջ ապահովութեամբ մտնել, պէտք ենք առանձնութիւնը սիրել : Մարդ առանձնութեան մէջ կը սովորի թէ ինչպէս պէտք է խօսիլ, երբոր մարդկան մէջ կը գտնուի :

Զ. Անմեղութիւնը պահելու զօրաւոր միջոց մըն է առանձնացեալ կեանք վարել : Ամէն բանէ աւելի մարդուն ա-

ուարինութիւնը կը թողցընէ մարդկան  
հետ յաճախ բնկերութիւնը :

Կարելի բան է աշխարհքին ժանտա-  
բեր օդը ծծել ու անոր ապականու-  
թիւնը չզգալ : Ստեպ բաժնուէ ու ա-  
ռանձնացիր մաքուր օդ ծծելու համար :

Անապատի սուրբերը խոստովանեցան  
որ ան ատեն աւելի Աստուծոյ հետ ըն-  
տանի հաղորդութեան մէջ կ'ըլլային,  
երբոր աշխարհքին ամէն գործքերէն ու  
բնկերութիւններէն հեռու կ'ըլլային :

Է. Ո՛րդեակ, Աստուած իրեն քաղցր  
բերկրութիւն կը համարի քեզի հետ ըլ-  
լալ : Քու բերկրութիւնդ ալ անոր հետ  
ըլլալն ըլլայ : Բայց ուրիշ տեղ չես կրնար  
այնպէս աղէկ իրեն հետ ըլլալ, ինչպէս  
առանձնութեան մէջ :

Ուրիշ ամէն տեղէ աւելի, նոյն առան-  
ձնութեան մէջ կրնաս քու ներքին խոր-  
հուրդներդ անոր բանալ, հոն աւելի  
դիւրին է քեզի յայտնել քու իղձերդ  
ամենայն համարձակութեամբ յարգա-  
կան վստահութեան :

Հոն Աստուած աւելի դիւրաւ քու  
միաքդ անանկ խորհուրդներ կը ձգէ, ու-  
րոնք ցաւերդ կը մեղմացընեն, վախդ կը  
փարատեն, տարակուսանքդ կը լուծեն  
եւ ամէն բանի մէջ իմաստութեամբ վա-  
րուելու համար քեզի ապահով ճամբայ  
կը ցուցընեն :

Գարձեալ նոյն առանձնութեան մէջ  
կը լսեցրնէ Քեզի իրեն սեպհական եղած  
գաղանի ձայնը. անոր սիրտը Քեզի բա-  
ներ կը խօսի, զորոնք մինակ իր բարե-  
կամները կրնան հասկընալ ու որոնք հս-  
գւոյն մէջ անանկ ճշմարտութիւններ կը  
տպաւորեն, որոնց ծանօթութիւնը պար-  
զապէս իր սիրոյն գործքն է:

### Գ Լ Ո Ւ Խ Ը.

Կենաց Վեճի Դե ընդրելու Վրայ:

Ա. ՄԱՐԻԱՄ՝ որովհետեւ իր տղայու-  
թեննէն Աստուծմէ զատ ուրիշ բան չէր  
փնտուած ու չէր սիրած, ինք զինք ար-  
ժանի ըրած էր Աստուծոյ օրհնութեան-  
ցը, որն որ իրեն անանկ վիճակ մը կը  
պատրաստէր որ յարմար ըլլայ դլուխ  
տանելու իր այն դիտաւորութիւնը, զորն  
որ անոր վրայ ունէր:

Որպէս զի մէկն՝ իր ընտրած վիճակին  
մէջ երջանիկ ըլլայ, պէտք է միտ դնել  
իր ընտրութեանը ժամանակ պատահած  
դէպքերուն, զորոնք շատ անգամ Աս-  
տուծոյ նախախնամութիւնը կը խաւրէ  
այն հաւատացելոյ, որոնք վիճակի ըն-  
տրութեան համար Աստուծոյ հետ կը  
խորհրդակցին:

Ի՛նչպէս կրնայ պատանի մը Աստուծմէ  
այս օգնութիւնը յուսալ, թէ որ իր նո-

րաբողջաջ կարեացը չար ազդեցութեանց ետեւէն գացած է :

Բ. Սախախնամութիւնն ըրաւ, որ Մարիամ իր Յովսեփայ հետ ըրած ամուսնութեամբն այն առաքինութեանց պրանչելի պտուղները քաղէ, որոնց մէջ ամենայն ճշդութեամբ կրթուած էր :

Մարիամայ փեսայ մը տալու համար աշխարհքին հետ խորհրդակցուելու որ ըլլար, պէտք էր հարուստ ու ճարտարութիւններով անուանի մարդ մը ընտրել :

Պէտք չէր անոր առաքինի ու պղտիկուց ի վեր Աստուծոյ երկիւղին մէջ մեծցած մարդ մը որոշել : Ինչու որ աշխարհք ասանկ սովորութիւն չունի :

Գ. Շատ ամուսնութեանց պատճառն անձնական շահու ակնկալութիւն ու մարդկային նկատմունք է : Ընչից ու ըստացուածոց առաւելութիւնները կը հաւանեցընեն եւ ո՛չ թէ շնորհաց առաւելութիւնները :

Ասկէ յառաջ կու գան այնչափ գրգռախտ ամուսնութիւններ, որոնց մէջ հարսն ու փեսան իրարու պատիժ են :

Աստուած թոյլ կու տայ ասիկա, որ պէս զի նոյն իսկ աս աշխարհքիս մէջ պատժէ զանոնք իրեն խորհրդակից չլլալուն համար՝ անանկ գործքի մը մէջ, որն որ գէշ ելք կ'ունենայ, թէ որ ուղղողն ինք չըլլար :

Նոյնը դարձեալ թոյլ կու տայ Աստուած՝ տղայութեան ատեն առաքինութեանց կրթութեամբ իրեն պաշտպանութեանն արժանի բլլալու հոգ չտանելնին պատժելու համար :

Դ. Մարիամայ ծնողացը, մանաւանդ թէ Աստուծոյ ընտրութիւնը Յովսէփայ վրայ ինկաւ, որն որ երկրիս վրայ եղած ամէն մարդիկներէ արդար էր ու այնպիսի կուտի արժանի փեսայ :

Ասկէ աւելի երջանիկ ամուսնութիւն մը երբէք չէ եղած, երբէք երկու սիրտք այնպէս գոհ չեն եղած իրենք զիրենք իրարու հետ միացած տեսնելով : Ինչ ցաւ կամ ինչ տրտմութիւն կրնար անոնց խաղաղութիւնը խռովել. Մարիամ ու Յովսէփ անանկ կեանք կը վարէին, ինչպէս Աստուած կ'ուզէր :

Ե. Շատերն իրենց վիճակին վրայ գոհ չեն, խիստ ծանրութիւն կը կրեն եւ շատ անգամ ալ ուրիշներուն կրել կու տան : Ինչո՞ւ : Ասան զի անանկ վիճակի մը մէջ մտած են, զորն որ Աստուած չէր ուզեր :

Իրենց կը հայի մարդարէին այն խօսքը թէ Այ՛ ձեզի ապաստամբ որդիք, որ խորհուրդ խորհեցաք առանց ինձի<sup>1</sup> :

Զ. Առջման շնորհքը մեծ շնորհք մըն է, որուն մէջ ուրիշ անբաւ շնորհքներ

<sup>1</sup> Եսայ. Լ. 1 :

կը բովանդակուին : Ո՛վ որ նոյն շնորհաց  
հաւատարիմ չ'ըլլար , անկէ հետեւեալ  
շնորհաց պարապ տեղ կը յուսայ :

Երբոր մէկը կը խոտորի այն մասնաւոր  
նախախնամութեան կարգէն , որն որ  
Աստուծոյ կամացը յարմարելու պա-  
տրաստ եղողին՝ վիճակի ընտրութեան  
շնորհքը կու տայ , ան առեն ընդհանուր  
նախախնամութեան կարգը կը մտնէ ,  
որն որ միայն ընդհանուր շնորհքներ կը  
մատուցանէ , որոնցմով թէպէտեւ կրնայ  
փրկուիլ , սակայն շատ վախ կայ որ չը-  
փրկուի կամ գէթ դժուարաւ կը փրկ-  
ուի :

Արդ վիճակ մը ընտրած առենդ , Աս-  
տուծոյ հետ խորհրդակցէ ու անոր ա-  
ղօթէ : Ըսէ մարգարէին հետ թէ Տէր ,  
ցուցուր ինձի ճամբայ , որ երթամ<sup>1</sup> :

Բայց միանգամայն այնպէս կեանք վա-  
րէ , որ Աստուած վրադ՝ զքեզ իր խնա-  
մոցն անարժան ընող բան չտեսնէ :

Է. Երբոր Աստուծոյ կամքը քեզի  
յայտնապէս ծանօթ չէ , խորհրդակցէ  
անոնց հետ , որոնք որ քու նկատմամբդ  
երկրիս վրայ՝ անոր տեղը կը բռնեն . Աս-  
տուած անոնց կը յայտնէ քու ինչ ը-  
նելիքդ :

Յիսուս երբոր զՍաւղոս Գամասկոսի  
ճամբուն վրայ դեռինը թաւալեց , իր

<sup>1</sup> Սաղմ. ՃԽԲ. 8 :



միտքը դրած խորհուրդն անոր չյայտ-  
նեց, հապա Անանիային խաւրեց որ անկէ  
խմանայ :

Քու ծնողացդ հետ՝ այնչափ մինակ  
խորհրդակցէ, որչափ որ պարտքը կը պա-  
հանջէ : Միշտ պէտք է վախնալ որ աս  
բանիս մէջ ծնողքն աշխարհքին սկըղ-  
բանցը համեմատ խրատ կու տան իրենց  
որդւոցը : Մարդուն թշնամիներն իր ըն-  
տանիքն են<sup>1</sup> :

Հուսկ յետոյ մահուան հետ ալ խոր-  
հրդակցէ, այսինքն՝ այնպէս ընտրէ,  
ինչպէս որ կենացդ վերջին ժամը կ'ու-  
զես որ ընտրած ըլլայիր :

### Գ Լ Ո Ւ Խ Թ .

Սբ Բոնեան լրայ, է- Թէ սրլաթ նոյնը պէտք  
են, յարգել :

Ա . ԵՐԲՈՐ հրեշտակն եկաւ ու Մա-  
րիամայ առաջարկեց որ Աստուծոյ մայր  
պիտի ըլլայ, չյայտնեց իրեն թէ այս  
բարձր պատիւն անոր ըրած կուսութեան  
ուխտին հետ կրնայ միաբանիլ, անոր  
համար Մարիամ իր հաւանութիւնն ի-  
կախ պահեց :

Աւելի կ'ուզէր որ կուսութեան ար-  
դեանց մէջ, քան թէ պատուոյ մէջ ու-  
րիշ ամէն արարածները գերազանցէ :

<sup>1</sup> Մատթ. ձ. 36 :

Բայց մի վախնար Մարիամ<sup>1</sup>, վասն զի նոյն իսկ այն սրբութիւնը, որուն այնչափ հոգ ունիս, զԱստուած քու արդանդդ պիտի իջեցրնէ, որն որ կ'ուզէ մինակ ի կուսէ ծնանիլ:

Իրօք ալ Մարիամ ան ատեն մինակ իր հաւանութիւնը տուաւ, երբոր հրեշտակին խօսքէն իմացաւ թէ իր Աստուածամայր ըլլալով սրբութեանը վախ մը չկայ:

Բ. Ո՛վ պատուական առաքինութիւն, որչափ սիրելի ու մեծարոյ պէտք ես ըլլալ մեզի, ինչու որ դուն մեզի մեր Փրկիչը տուիր եւ ամէն արարածնեղէն կատարելագոյնն Աստուածամայրութենէն վեր ընարեց զքեզ:

Գուն Սիրելի աշակերտը՝ Յիսուսին սիրոյն ու հաճութեան արժանացուցիր: Երանելի են այն ոգիք, որոնց զարդն ես դուն երկրիս վրայ. յաւիտենական կենաց մէջ անոնց մասնաւոր յատկութիւնը պիտի ըլլայ Գառին ետեւէն երթալ<sup>2</sup>:

Գ. Առաքելոց իշխանը մեծամեծ առանձնաշնորհութիւններ ունէր, սակայն մինակ կոյս աշակերտին թոյլ տուաւ Քրիստոս որ ընթրեաց ատեն իր լանջը փաթթուի:

Յիսուս իր եկեղեցւոյն խնամքը Պե-

<sup>1</sup> Ղուկ. Ա. 30:

<sup>2</sup> Յայտ. ԺԴ. 4:



արտին յանձնեց, իսկ Յովհաննէսին յանձնեց իր Մօրը խնամքը :

Սրբութեան ձեռքով՝ երկրիս վրայ՝ երկնից երանելեաց կեանքը կը ներկայացընենք :

Այս առաքինութեան դործքով աւանկ արդիւնք մը կը վաստակինք, որմէ զուրկ են հրեշտակք :

Սուրբ ու ողջախոհ ոգիք աւելի մասնակից կ'ըլլան այն միութեան, զորն որ մարմնացեալ բանը մարդկան հետ հաստատեց :

Դ. Ո՛վ դուք, որ աս առաքինութեան դէմ եղող մոլութիւններն իբրեւ բնական տկարութեան ներուելու բան մը կը սեպէք, գիտցէք որ խիստ քիչ մոլութիւն կայ, զորն որ Աստուած ատնց պէս քիչ անդամ ներէ ու սաստիկ պատժէ :

Այս մոլութիւնը զհողին կը հեռացընէ Աստուծմէ, որն որ, ինչպէս սուրբ Գիբբը կ'ըսէ, մարմին եղած մարդուն վրայ չիբնակիր<sup>1</sup> :

Այս ախար զմարդ տեսակ մը կուրութեան մէջ կը ձգէ : Շնութեան մեղաց մէջ ինկող Գաւթին՝ մարդարէ մը պէտք եղաւ որպէս զի իր յանցանաց մեծութիւնը ճանչնայ եւ ապաշխարութեան ետեւէ ըլլայ :

<sup>1</sup> Ծննդ. 2, 3 :

Այս մոլութիւնը մարդուն սիրտը կը  
խատացընէ : Սողոմոն, որն որ այնչափ  
տարի իմաստութեան սքանչելիք մըն էր,  
վերջին օրերը կուսպաշտութեան մէջ ին-  
կաւ, որովհետեւ անառակեցաւ :

Մեր մարմինը՝ Հոգւոյն սրբոյ տաճար  
է<sup>1</sup> : Անանկ է՛նէ, քրիստոնէին սիրտն ե-  
ղած ամէն անսրբութիւնը, Սուրբ տե-  
ղւոյ մէջ պղծութիւն աւերածոյ է<sup>2</sup> :

Ե . Ո՛վ Յիսուս, կոյսերուն փեսան,  
որ կոյս մը քեզի մայր ընտրեցիր, շնչէ  
վրաս սրբութեան քաղցր սէր մը ու մեծ  
եւ սաստիկ գարշութիւն անոր հակա-  
ռակ մոլութենէն :

Սրբութեան առաքինութիւնը բնա-  
կան կարողութենէն վեր է : Իմացայ որ  
այլազգ չեմ կրնար ժուժկալ ըլլալ,  
բայց եթէ առանձին շնորհքով մը<sup>3</sup> :

Կը խնդրեմ քեզմէ այս շնորհքը, այն  
սրբութեան ձեռքով, որն որ այնպէս  
հաճոյ եւ սիրելի ըրաւ զՄարիամ քու  
առջեւդ եւ զքեզ իրեն որդի ունենալու  
մեծ պատիւն իրեն բերաւ :

Կը խնդրեմ նոյնը քեզմէ՝ այնչափ կու-  
սանաց սիրոյն համար, որոնք երկրիս վրայ  
մինակ աստուածային փեսային գեղեց-  
կութենէն յափշտակուած էին :

<sup>1</sup> Ա . Կոր . Զ . 19 :

<sup>2</sup> Մատթ . ԻԴ . 13 :

<sup>3</sup> Իմաստ . Ը . 21 :

Տուր ինձի՝ որ ամենէն մեծ զուար-  
ճութիւնս ըլլայ, քու օրինացդ դատա-  
պարտած զուարճութեանց յաղթել:

Զ. Տնկէ սիրտս այն յաւիտենական  
հրոյն վախը, զորն որ անառակներուն  
համար պատրաստած ես:

Մարէ զգայական զուարճութեանց  
ճաշակն ու տուր ինձի երկնաւոր քաղ-  
ցրութեանց ճաշակը:

Ազատէ զիս այն թախանձեցուցիչ  
փորձութիւններէն, որոնք նոյն իսկ իմ  
քրիստոնէական աստուածպաշտու-  
թեան գործոցս մէջ ետեւէս կու գան:

Բացց եթէ թոյլ տաս որ վրաս փոր-  
ճութիւններ գան, զօրութիւն տուր ին-  
ձի, սվ Փրկիչ իմ, որ մեծ հաստատու-  
թեամբ անոնց դէմ կռուիմ ու նոյն  
դէպքերը՝ քեզի իմ սիրոյ ցոյցս տալու  
գործածեմ:

### Գ Լ Ո Ի Խ Ժ .

Սրբա-Ին-նը պահելու համար ընելու զգուշու-  
թեանց վրայ:

Ա. ՄԱՐԻԱՄ իր յղութեան շնորհ-  
քովը մոլութեանց յարձակումներէն ա-  
զատ էր, այսու ամենայնիւ, երբոր մար-  
դու կերպարանքով իրեն երեւցող հրեշ-  
տակը տեսաւ, խռովեցաւ:

Հրեշտակն անոր բարեւ կու տայ, բայց

ինք շուտ մը կը սկսի մտածել թէ ինչ է այս բարեւը<sup>1</sup> :

Առանց ուրիշ մեկուն ներկայութեան, ինք զինք անոր հետ մինակ տեսնելը բաւական կ'ըլլար զանիկա սուրբ վախով մը լեցրնելու :

Որդի պիտի ծնանիս, կ'ըսէ հրեշտակը, եւ անունը պիտի կանչես Յիսուս<sup>2</sup> : Նոր պատճառ մ'ալ խռովութեան՝ Մարիամայ :

Հրեշտակին աւետածը կարելի ըլլալուն վրայ չ'երկբայիր, վասն զի Ոչ տկարացի առ յԱստուծոյ ամենայն բան. հապամինակ կ'ուզէ տեղեկանալ, թէ ինչ կերպով պիտի կատարուի խորհուրդը :

Ինչչափ խոհեմութեամբ ու ինչչափ պարկեշտութեամբ կ'ընէր հարցումը. կարճ խօսքով, ինչ որ պէտք էր նէ անիկա ըսաւ :

Բ. Այս նշաններէն գիւրաւ կը ճանչցուի անիկա, որն որ սրբութիւնն իր դանձր կը համարի :

Զգաստութիւնը՝ փափուկ ծաղկի մը պէս, նաեւ քիչ մը հովէն կը վախնայ : Մինակ մէկ նայուածք կամ խօսք մը զանիկա կը խռովէ :

Այս առաքինութեան պատուականութիւնը գիտցող կոյս մը, անոր վնաս

<sup>1</sup> Ղուկ. Ա. 29 :

<sup>2</sup> Ղուկ. Ա. 31 :

Հասցրնելու ամէն՝ նաեւ հեռաւոր առիթներէն կը վախնայ :

Շողքորթ խօսքեր, առատամիտ ընծաներ, նաեւ անմեղ երեւցող խօսակցութիւններ իրեն հասկած կու տան եւ արթնութիւնն ու մտադրութիւնը կը կրկնապատկեն :

Գ. Արդ եթէ ողջախոհութիւնն իր բովանդակ կատարելութեանը մէջ պահելու համար այսչափ զգուշութիւն պէտք է, կրնա՞նք ըսել թէ երկրիս վրայ շատ ողջախոհ հոգիք կան :

Երանի թէ մարդիկ՝ աս առաքինութիւնը պահելու համար այն հոգն ունենային, զորն որ ունին անոր կերպարանքը պահելու համար :

Որչափներու կործանման առիթ եղած են, դատարկութիւն, փափկակեաց կեանք, մնասակար ընթերցուածներ եւ չափէն աւելի համարձակ կենակցութիւններ :

Շատ քրիստոնեայ կուսանք՝ շատ անգամ աներկիւղ ու անկասկած կը կենակցին մարդկան հետ, որոնք հրեշտակ չեն :

Ասանկները թէ որ ըսելու ըլլան, որ նոյն ատեն արթուն կը կենան՝ զգոյշ ըլլալու համար, պատասխան կու տամ որ սատանան ալ արթուն կը կենայ զանոնք ի կորուստ մատնելու համար :

Մանաւանդ գովութիւն սիրող կոյս մը, չիկրնար երկայն ատեն իրեն գովութիւն տուող անձին վրայ անտարբեր ըլլալ :

Գ. Ողջախոհութեան նիւթին մէջ, մարդ նոյն իսկ բաւական վախ չունենալուն համար, խիստ վախնալու է :

Մարդիկ չեն ուղեր տեսնել իրենց սիրած վտանգները, իսկ վտանգները սիրելուն յայտնի նշան է, զանոնք աչքերնէն ծածկելու ջանքն ու հողը :

Ամէնքնիս ալ մի եւ նոյն կաւէն շինուած ենք : Արնայ մեր գլուխն ալ գալան բանը, զորն որ իրենց տկարութեանը ցաւալի փորձն առնելով, ուրիշները կրեցին :

Ե. Թէպէտ եւ պէտք է շնորհաց օգնութեան վրայ վստահ ըլլալ, բայց պէտք չէ ասոր համար համարձակ վտանգի մէջ նետուիլ : Նոյն օգնութիւնը միայն անոնց համար է, որոնք՝ առանց իրենց ուղելուն փորձութեանց մէջ կը գտնուին :

Թէպէտ եւ տարիներով, շատ յաղթութիւններ ըրած ըլլաս ողջախոհութեան թշնամւոյն դէմ, այսու ամենայնիւ ինք զինքդ անյաղթ չկարծես : Մի վստահիր անոր վրայ ու մի վստահիր քու վրադ :

Հաւատարմութեամբ փախիր ամէն կողմանէ մեր առջեւն ելող օրրստօրա-



կան առիթներէ, զորոնք նոյն իսկ սա-  
տանան կը բազմացընէ: Ան ատեն Աս-  
տուած ալ քեզի զօրացուցիչ շնորհք  
կու տայ, քու յառաջատես շեղած ու  
յաղթելու համար աւելի քաջութեան  
պէտք ունեցած առիթներուդ մէջ:

Զ. Ո՛վ կոյս, ընդունէ ինծի անձինս  
վրայ անխտահաւթիւն, վարմանցս մէջ  
խոհեմութիւն, ու զգայարանաց մահա-  
ցուցում, որոնք խիստ հարկաւոր են ին-  
ծի ողջախոհութիւնս պահելու համար:

Չեմ կրնար, բաղձացածիս պէս, ինք  
զինքս շողոքորթել զիս հաւանեցընելով  
թէ զքեզ սիրողներուն թուէն եմ, ին-  
չու որ առանձին կերպով մը չեմ սիրեր  
այն առաքինութիւնը, որն որ քու փա-  
ռացդ մէկ սկիզբը կամ պատճառն է:

Մայր սուրբ ու ողջախոհ, թաղուհի  
կուսանաց, շնորհք ընդունէ ինծի որ ա-  
նանկ ճիշդ սրբութեամբ ապրիմ՝ որ միշտ  
կարենաս գտնել իմ վրաս այն նշանը,  
որով քու աւելի սիրելի որդիքդ կը  
ճանչնաս:

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ.

Ճշմարիտ մեծօրէնան Լրայ:

Ա. ԵՂԽԱՐՀԱՅԻՆ պատուոյ ու շնորհ-  
քէն յառաջ եկած պատուոյն մէջ ան-  
սահման խտիր ու տարբերութիւն կայ:

Անչափ հարստութիւններ, շքեղ

պալատներ, անթիւ ու անհամար ծառաներ՝ թագաւորաց մեծութիւնը կը ցուցնեն: Աշխարհքի արհամարհութիւն, մեղքէն զարհուրանք ու Աստուծոյ սէր՝ արդար մարդուն մեծութիւնը կը ցուցնեն:

Մարդուն ճշմարիտ փառքն ու ճշմարիտ արդիւնքը կայացած է Աստուծմէ վախնալու եւ անոր պատուիրանները պահելու վրայ<sup>1</sup>:

Աստուծմէ՝ Մարիամայ խաւրուած հրեշտակն՝ անոր ըսաւ. Ողջոյն քեզ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ: Ասկէ աւելի ի՞նչ փառաւոր դովութիւն կրնար խօսիլ Կուսին վրայ:

Մարդկան ու հրեշտակաց բոլոր դովութեան արժանի է ան մարդը, որուն կրնայ ըսուիլ, թէ Աստուծմէ շնորհք գտար, թէ հաճելի ու պատուական գտնուեցար Աստուծոյ առջեւ:

Բ. Հրեշտակին Մարիամայ խաւրուած ատենը, Աւգոստոս ու Հերովդէս իշխանութեան ակտոսը կը նստէին: Շարունակ մեծ, հզօր ու մեծանձն պատուանուններով կը պատուէին: Բայց ի՞նչ էին Աստուծոյ առջեւ, որն որ ճշմարիտ մեծութեան միակ դատաւորն է:

Նազարէթ՝ առանձնութեան մէջ ծածկուած մատաղօրեայ կոյս մը՝ իրենցմէ

<sup>1</sup> Ժողով. ԺԲ. 13:



անհամեմատ աւելի արժանի էր ամէն մեծամեծ գովութեանց :

Բուն ու ճշմարիտ մեծութիւնը մարդկան ընդունայն գաղափարովը չիչափուիր, հապա Աստուծոյ գաղափարովը, որն որ մինակ մեծ է, ու իր առջեւն ամէն մեծ եղած բաները մինակ իրեն յարաբերութեամբը մեծ են :

Ի՞նչ են բոլոր տիեզերաց առջեւ զարմանալի եղող դիւցազունք, երբոր համեմատուին ան մեծ մարդիկներուն հետ, զորոնք առաքինութեանց ձեռքով կրօնքը յառաջ բերած է :

Գ. Աւելի մեծ է կիրքերու յաղթել, քան թէ հզօր քաղքի մը <sup>1</sup> :

Աւելի նուազ աշխատութիւն պէտք է ուրիշներուն վրայ յաղթութիւն ընելու համար, քան թէ անձին վրայ :

Ճշմարիտ քրիստոնեան չինմանիր այն դիւցազանց, որոնք առանձին դէպքով մը դիւցազնութեան անունն առին, չինմանիր այն միօրեայ դիւցազանց, ինք դիւցազն է իր բովանդակ կենաց մէջ :

Իր փառքն է, առջեւն ելած ամէն արգելքներու յաղթել ու վախճանն է զԱստուած ստանալ ու ի նմա հանդչիլ :

Դ. Ասկէ աւելի ի՞նչ պատիւ կրնայ ըլլալ, Աստուծոյ ծառայել ու անոր ըլլալ : Անոր ծառայելը թագաւորել է :

<sup>1</sup> Առակ. Ժ. 2. 32 :

Աստուածաշունչ գիրքը, Աբրահամին, Մովսէսին ու Գաւթին վրայ խօսած ատեն, որոնք երկրիս վրայ եղած ամէն մարդիկներէն մեծ էին, զանոնք Աստուծոյ ծառաները կ'անուանէ: Աս անունն՝ ուրիշ ամէն անուններն իր մէջը կը բովանդակէ, մանաւանդ թէ ուրիշ ամէն անուններն՝ ասոր համեմատութեամբ ոչինչ են:

Աստուծոյ ծառային պատիւն՝ երկրաւոր իշխանի ու թագաւորի պատուէն այնչափ վեր է, որչափ որ Աստուած իշխան է ու թագաւոր է վեր է:

Ե. Անմահ թագաւոր, բացարձակ Տէր բոլոր տիեզերաց, ես քեզի համար ու մինակ քեզի համար եղայ: Արնայ մի մէկը զքեզ ճանչնալ եւ իր ծառայութիւնն ուրիշին նուիրել: Արնայ մի մէկը զքեզ ճանչնալ եւ անհամեմատ մեծ ու պատուական չհամարիլ անոնց վիճակը, որոնք որ քեզի կը ծառայեն:

Ինչ փառք է մարդուն, որն որ ըստ ինքեան ողորմելի արարած մըն է, որ կրնայ քեզի ծառայել ու զքեզ սիրել:

Տէր, տուր ինձի քու շնորհացդ ձեռքով որ աղէկ միտք առնեմ, թէ Մարիամայ պէս առանձնացեալ կենաց մէջ եղող անձ մը, որն որ կը ջանայ քու կամքդ կատարել ու հաւատարմութեամբ քեզի կը ծառայէ, կոյր ու ան-

միտ աշխարհքին մեծ ու փառաւոր համարած ամէն բանէն աւելի մեծ ու աւելի փառաւոր գործք կը գործէ:

Ո՛հ, քու ծառայութեանդ ունեցած ազնուականութիւնը, փառքն ու պատիւն, իմ ծառայած Տիրոջս վայել մեծանձնութիւն ու ամուր հաստատութիւն տան ինծի ամէն գործքերուս մէջ:

Գ Լ Ո Ի Խ Ժ Բ .

Աստուծոյ շնորհքը խնարհաց իւրոսի:

Մարիամ: Ա . Ո՛ր ԴԵԱԿ, քեզի կ'ուզեմ գաղանիք մը սովորեցնել, որով կարենաս Աստուծոյ մեծամեծ շնորհքները հոգունիլ . ինք զինքդ միշտ ու ամէն տեղն շնորհաց անարժան սեպէ:

Աստուած խնարհաց շնորհք կուտայ<sup>1</sup>: Ինք իրմով լեցուած սրտի մը մէջ՝ Աստուած իր շնորհքը դնելու տեղ չի գտներ:

Ծառան: Բ . Ո՛վ թագուհի որբոց, առ նիւթիս մէջ՝ դուն մեզի անանկ օրինակներ տուիր, որ մեզի մեծամեծ խորասաներու սկիզբ են:

Ո՛վ կրնայ, Աստուծոյ կողմանէ քեզի եկող հրեշտակին հետ ունեցած վարմունքդ նկատել ու քու անձինդ վրայ ունեցած խնարհ զգածմունքդ շտեմներ:

Հրեշտակը քեզի կ'աւետէր, որ Աս-

<sup>1</sup> Յակոբ. Դ. 6:

տուճոյ մայր պիտի ըլլաս ու դուն չէիր  
ըմբռներ թէ ինչպէս Աստուած անանկ  
բարձր պատուոյ մը զքեզ ընտրած ըլլայ :

Բնութենէ այնչափ վեր եղող պա-  
տուոյ մը դաղափարը , իբրեւ թէ կառ-  
կած ելի կ'ըներ քեզի հրեշտակին պատ-  
գամաւորութիւնը :

Նոյն իսկ Բարձրեալ Էակը քու ար-  
դանող եկած ու փակուած ատեն , դուն  
մինակ քու ոչընչութեանդ մէջ ընկրղ-  
մեցար :

Քու ընդունած պատուոյդ հետ կա-  
պուած այնչափ պատուանուններէն մի-  
նակ Աղախին Տեառն տիտղոսն ըն-  
տրեցիր :

Գ. Ո՛վ նոր Եւայ , առջինէն բոլորովին  
տարբեր : Անոր հպարտութիւնն իր ար-  
տօնութիւնները կորսնցընել տուաւ ,  
իսկ քու խոնարհութիւնդ քու արտօ-  
նութեանցդ սկիզբն եղաւ :

Ամենակալը քու վրադ մեծամեծ բա-  
ներ գործելու համար , բնական առա-  
ւելութեանցդ ու տոհմիդ պայծառու-  
թեանը չնայեցաւ , հապա քու սեփա-  
կան կարողութեանդ վրայ ունեցած  
խոնարհ զգածմանցդ նայեցաւ :

Բնական բան էր , որ Աստուած , որն  
որ մարդ ըլլալով սաստիկ պիտի խոնար-  
հէր , խոնարհութեան վրայ անբաւ հա-  
ճութիւն ունենար :

Անոր համար կը վայլէր, որ այնպիսի մէկն իրեն մայր ընտրէ, որն որ իր խորին խոնարհութեամբը, ամէն պատիւներէ մեծ եղող պատուոյն աւելի արժանաւոր ըլլայ:

Քու կուսութեամբդ Աստուծոյ հաճոյացար եւ քու խոնարհութեամբդ զանիկա յղացար:

Մարիամ: Գ. Արդեակ, մարդկան առջեւ, բայց անհամեմատ աւելի Աստուծոյ առջեւ աւելի մեծ արդիւնք ունի անիկա, որն որ կը կարծէ թէ ամենեւին արդիւնք չունի, ու ասիկա նոյն իսկ անատեն, երբոր արդիւնքով լեցուն ըլլայ:

Որոնք են, որոնց Աստուած թէ երկինքն ու թէ երկրիս վրայ խնդութեամբ կը նայի, բայց եթէ խոնարհ ոգիք<sup>1</sup>:

Նոյն իսկ ինք կ'ըսէ. Որոնց նայիմ, եթէ ոչ ազգատաց ու անոնց, որոնց սիրտը խոնարհեալ է<sup>2</sup>:

Ե. Աստուած կը հեռանայ անոնցմէ, որոնք որ զիրենք կը բարձրացընեն ու կը մերձենայ անոնց, որոնք որ զիրենք կը խոնարհեցընեն:

Հպարտութիւնն է պատճառ ազգատութեան այնչափ քրիստոնէից, որոնք զուրկ են շնորհաց բարիքներէն:

Թէ որ իրենք զիրենք ճանչնալու ջանք

<sup>1</sup> Սաղմ. ՃԺԲ. 5:

<sup>2</sup> Ես. 42. 2:

ունենային, նոյն ծանօթութիւնն անոնց սիրտը խոնարհութիւն յառաջ կը բերէր, ու խոնարհութիւնն ալ իրենց չքաւորութիւնը կը դարմանէր՝ իրեն հետ բերած շնորհքներուն ձեռքով :

Զ. Ո՛րդեակ, դուն քեզմէ պարպուէ, ու Աստուած զքեզ իր պարզեւներովը կը լեցընէ : Խոստովանէ որ դուն քեզմէ խեղճ ու տառապեալ ես, ու հարուստ կ'ըլլաս :

Թէ որ խոնարհ կ'ըլլաս, Աստուած զքեզ իր փառացը կը գործածէ : Իր փառացը հոգն անոնց կը յանձնէ, որոնք որ նոյնն իրենց չեն յափշտակեր ու անկէ իրենց բաժին չեն հաներ :

Երբ որ Աստուծմէ շնորհք մը կ'ընդունիս, մտածէ խոնարհութեամբ ու շնորհակալութեամբ, թէ որչափ բարերար Տէր է Աստուած, որ իր յետնադոյն ծառային այսչափ շնորհք կու տայ :

Է. Վրու ո՛չ ունեցած ու ո՛չ ըրած բարիքդ քուկդ համարէ :

Նոյն իսկ ան ատեն, երբ մեծ հաւատարմութեամբ շնորհաց համեմատ կը վարուիս, միտքդ բեր որ նոյն իսկ այն հաւատարմութիւնը շնորհաց օգնութենէն է, եւ թէ Աստուած քու հաւատարմութեանդ վարձ տալովն, իր յատուկ պարգեւները կը վարձատրէ :

Այս երէք ճշմարտութիւնները միշտ



աչքիդ առջեւն ունեցիր . Աստուած ա-  
մէն բան է եւ ես ոչինչ եմ . Աստուած  
ամէն բան ունի եւ իմ ունեցածս մինակ  
թշուառութիւն ու խեղճութիւն է .  
Աստուած ամէն բանի կարող է ու ես  
բանի մը կարող չեմ , առանց անոր օգ-  
նութեան :

Ան ատեն , թէպէտ եւ դուն քեզմէ  
ոչինչ ըլլաս , բան մը չունենաս ու բանի  
մը կարող չըլլաս , այսու ամենայնիւ Աս-  
տուծոյ առջեւ բան մը կ'ըլլաս , իր պար-  
գեւները քեզի կը պարգեւէ ու բոլոր  
քու թշնամեացդ դէմ զքեզ յաղթող  
կ'ընէ :

Գ Լ Ո Ի Խ ԺԳ .

Ճշմարիտ փարփ աւելի քրիստոնէական խանար-  
հութեան մէջ կը գործուի :

Ա . ՀՐԵՇՏԱՎԻՆ Մարիամայ խօսած  
խօսքերուն իմաստը , ամենեւին չէին  
միաբանէր նոյն կուսին մտաց մէջ իր վրայ  
եղած գաղափարներուն հետ :

Իր հոգին սուրբ վախով մը խռովե-  
ցաւ . վախցաւ որ չըլլայ թէ իր առջեւն  
ըլլող բաները , զգայարանաց պատրանք  
մը եւ կամ փորձիչ սատանայէն լարուած  
որողայթ մ'ըլլան :

Հրեշտակն ըսաւ իրեն . Օրհնեալ ես  
դու ի կանայս : Բայց որովհետեւ ինք  
զինքն ամենէն յետին կը կարծէր , չէր

ըմբռներ, թէ ինչպէս ատանկ գովու-  
թիւն կը տրուի իրեն :

Հրեշտակն անոր աւետեց նաեւ թէ  
անանկ շնորհք գտած է Աստուծոյ առ-  
ջեւ, որ՝ բաւական թէ հաւանութիւն  
տայ, անոր մայր կ'ըլլայ :

Բայց Մարիամ իրեն պատրաստուած  
բարձր աստիճանը տեսնելով, խոնարհե-  
ցաւ ու ամէն երանութենէ վեր սեպեց  
Աստուծոյ աղախինն ըլլալը :

Ո՛վ մարդիկ, որ փառաց ետեւէ էք,  
Մարիամ կը սովորեցրնէ ձեզի, թէ նոյնը  
գտնելու տեղն ո՛ւր է :

Բ. Ղշմարիտ ու տեւական փառքն  
ինք զինք պզտիկցրնելու վրայ կայացած  
է. նոյն իսկ Աստուած ասանկ վճիռ  
տուաւ. Մէջերնիդ ամենէն պզտիկն ա-  
մենէն մեծ է<sup>1</sup> :

Այս մեծութիւնը, ո՛չ միայն հաս-  
տատուն, հապա նաեւ ապահով է :  
Մէկը չիբառնար նոյնը քեզմէ :

Ամենէն պզտիկ ըլլալով, ամենէն մեծ  
կ'ըլլաս, ինչու որ համոզուած ըլլալով  
որ դուն քեզմէ ոչինչ ես ու բանի մը  
կարող չես, այս համոզումը զքեզ խո-  
նարհեցրնելով, իբրեւ ամենայն բարեաց  
սկիզբ Աստուծոյ կը բարձրացրնէ :

Ան ատեն Աստուծոյ կարողութեանը  
վրայ կրնաս վստահիլ, այնչափ աւելի

<sup>1</sup> Ղուկ. Թ. 48 :



Հաստատունն վատահուլթեամբ, որչափ որ Աստուած յօժարամիտ կը զօրացընէ տկարները :

Գ. Ասկէ զատ, խոնարհուլթիւնը կ'ազատէ զքեզ այն նախատինքներէն, ուր փառասիրուլթիւնն ու հպարտուլթիւնը կը տանին : Մեծնալու կիրքէն բմբռոնուած կամ ամենէն գովուլթիւն ընդունել ուզող մարդէ մը աւելի անարգ անձ չկայ :

Խոնարհուլթիւնը զքեզ կ'ազատէ մարդկային նկատումներէն ու մարդկան սնտոի գաղափարներէն, որոնց կ'ըսես առաքելոյն հետ. Հոգս չէ ձեզմէ դատուիլս : Իմ դատաւորս, յատկապէս խօսելով, մինակ մէկն է, այսինքն Աստուած<sup>1</sup> :

Խոնարհուլթիւնը քեզի անտարբերուլթեամբ նայել կու տայ աշխարհային պատիւներու, ինչու որ անոնց պայծառուլթեանց մէջ, անոնց ընդունայուլթիւնն ու ստուլթիւնը կը տեսնես :

Խոնարհուլթիւնը զքեզ կը յորդորէ, ոչ թէ ինք զինքդ ընկերիդ հետ համեմատելու, հապա զանիկա պատուելու եւ առանց դժկամակուլթեան մը զանիկա, թէ աստիճանաւ եզեր է եւ թէ համարմամբ քեզմէ վեր տեսնելու :

Գ. Խոնարհուլթիւնը մարդուն անարգ

<sup>1</sup> Կոր. Գ. 3, 4 :

կ'երեւայ, ինչու որ մարդ ամէն բան զգայարանքով կը դատէ ու մինակ զգալի բարիքները զանիկա կը շարժեն. սակայն խոնարհութիւնը սիրան ազնուական յու մեծանձն ընելու յատուկ առաքինութիւններէն մէկն է :

Խոնարհութիւնն ուրիշ ամէն առաքինութիւններէ աւելի՝ մտաց մէջ հաստատութիւն եւ հոգւոյ մէջ արութիւն կը տպաւորէ :

Բայց ամէն բանէ աւելի խոնարհութիւնը կու տայ քեզի այն նկարագիրները, որոնցմով նման կ'ըլլաս Յիսուսին, որն որ ճշմարիտ մեծութեան ու փառաց սկիզբ ու աղբիւր է :

Ե. Ան ատեն մինակ մեծ ու փառաւոր կ'ըլլանք, երբոր այն աստուածային օրինակին կը նմանինք ու ան ատեն մինակ աւելի անոր կը մօտենանք, երբոր խոնարհ կ'ըլլանք ունախատուած ատեննիս խոնարհութիւնը կը սիրենք :

Յիսուս խոնարհ էր ու խոնարհութիւնը կը սիրէր, ինչու որ գիտէր՝ թէ որչափ կը փառաւորէ անով իր Հայրը :

Եւ իրօք ալ Յիսուսին խոնարհութեան գործքեր ըրած ատենն էր որ երկնաւոր Հայրը յայտնեց թէ կը հաճի իրեն, եւ հրեշտակները «Փառք ի բարձունս Աստուծոյ», երգեցին :

Թէ որ Յիսուսին պէս խոնարհ կ'ըլլաս,

Աստուած կը փառաւորուի, ու Աստու-  
ծոյ փառք պատճառելէն աւելի ինչ  
փառաւոր բան կրնայ ըլլալ :

Զ. Ո՛վ թագուհի երկնից, որ քու  
վրայ խիստ պայծառ կերպով ստու-  
գուեցաւ այն պատգամը թէ. Ո՛վ որ ինք  
զինք կը խոնարհեցընէ, կը բարձրանայ<sup>1</sup>,  
ու այնչափ աւելի բարձրացար, որչափ որ  
աւելի խոնարհ էիր, ընդունէ ինծի իմ  
սրտիս մէջ տիրող հպարտութեան ար-  
մատը խլելու համար հարկաւոր եղած  
չնորհքները :

Ո՛հ, մինչեւ հիմա խոնարհութեան  
մինակ արտաքին կերպարանքը ցուցըցի  
ու այս առաքինութիւնը մինակ անոր  
համար ձեւացուցի, որպէս զի աշխարհ-  
քին համարումը շահիմ, որն որ որչափ  
չար ալ է նէ, հպարտները կ'անարդէ :

Ընդունէ ինծի անկեղծ խոնարհու-  
թիւն մը, որով իմ տկարութիւնս ճան-  
չնալով՝ քու օրինակիդ նման, ամէն բան  
Աստուծոյ սեփականեմ, ամէն բան Աս-  
տուծմէ սպասեմ, ամէն բանի մէջ Աս-  
տուծմէ կախում ունենամ, ու անով  
արժանի ըլլամ որ Աստուած, ամէն  
ճշմարիտ մեծութեան ու պատուոյ միակ  
աղբիւրն, ինծի հաճութեամբ նայի :

<sup>1</sup> Ղուկ. ԺԷ. 14:

Գ Լ Ո Ւ Խ ԺԴ .

Խոնարհ անջ ՚ը իը Զանայ ին+ ղին+ Ժորդիան ար-  
 վե- այնպէս շոտ-ցընէլու, ինչպէս է Ասորո-ծոյ  
 ար-վե- :

Ա. ՄԱՐԻԱՄԱՅ խրկուած հրեշտակն՝  
 անոր մեծամեծ գովութիւններ տուաւ  
 ու աւետեց թէ Աստուծոյ մայր պիտի  
 ըլլայ : Բայց Մարիամայ բերնէն մէկը չի-  
 մացաւ հրեշտակին իրեն ըսած աս բանը :

Մէկն արտաքուստ չտեսաւ որ իբրեւ  
 Մեսիային մայրը վարմունք ու գործո-  
 ղութիւն ցուցրնէ : Արտաքուստ անանկ  
 կը վարուէր, իբրեւ թէ հասարակ կա-  
 նանցմէ մէկն ըլլայ :

Թէպէտ եւ զՅովսէփ իր փեսան կը  
 սիրէր, թէպէտ եւ շատ անգամ անոր  
 հետ կը խօսակցէր, սակայն աս բանիս  
 վրայ բան մը չզրուցեց :

Երբոր Եղիսաբէթին այցելութեան  
 գնաց, տեսաւ որ արդէն անիկա տեղեակ  
 է խորհրդոյն, բայց այս յարմար պարա-  
 գայէն առիթ չառաւ, բանն աւելի եւս  
 անոր բացայայտելու :

Բ. Մարիամ իրեն փառք բերող ա-  
 սանկ գաղտնիք մը յայտնելու հոգը մի-  
 նակ Աստուծոյ կը ձգէր, որ իրեն պատ-  
 շած սեպած ատենը յայտնէ :

Իր բոլոր ջանքն էր, խոնարհութեան  
 մէջ հաստատուն կենալ :

Ասանկ՝ պէտք է մարդիկներուն առ-

ջեւ ծածկել, ինչ որ է մէկը Աստուծոյ  
առջեւ ու ինչ որ անոր առատածեռնու  
թեանէն կ'ընդունի :

Գ. Օստուծոյ առաքինութիւնն  
ապահով է : Մինակ Աստուծոյ կ'իյնայ  
զաննիկա յայտնել :

Երբոր մէկն իր գանձը հրապարակաւ  
դուրս կը դնէ, նոյնը կ'որսնցընելու  
վտանգի մէջ կ'իյնայ : Ամենէն գեղեցիկ  
գոյներն ալ՝ համատարած օդի տակ կը  
դեղնին :

Մարթա երբոր իր քրոջն ըսաւ, թէ  
Վարդապետն եկած է ու զքեզ կը կան-  
չէ<sup>1</sup>, խիստ ցած ձայնով ըսաւ :

Մարգիկ միշտ կոյր ու շնջաւոր ըլլա-  
լով, բանի տեղ չեն դներ ու նաեւ չեն  
իմանար, ինչ որ զգայարանքներէ վեր է  
ու ինչ որ Աստուծոյ հոգւոյն կը պատ-  
կանի<sup>2</sup> : Ասանկ բաներու վրայ անոնց խօ-  
սիլն ալ, ամենասուրբ բաներն անոնց  
կատականաց տակ ձգել է :

Դ. Աստուծոյ հոգին՝ ծածկութեան  
մէջ ինք զինք կը հաղորդէ, եւ կ'ուզէ որ  
ինչ որ իր ու իրեն սիրելի եղող հոգւոյն  
մէջ կ'ըլլայ, ծածուկ ըլլայ :

Հազարներու մէջէն մինակ մէկ հոգի  
մը<sup>3</sup> կ'ընայ ու պէտք է քու հոգեւոր

<sup>1</sup> Յովհ. ԺԱ. 28 :

<sup>2</sup> Կոր. Բ. 14 :

<sup>3</sup> Ժողով. Ե. 29 :

Հարստութիւններդ ճանչնալ, որպէս զի քեզի սովրեցրնէ զանոնք աղէկ գործածել: Այս մարդն անիկայ է, որն որ երկրիս վրայ, քու նկատմամբդ, Աստուծոյ տեղը կը բռնէ, փրկութեան ու կատարելութեան ճամբուն մէջ քեզի առաջնորդելու համար:

Իսկ ուրիշներուն նկատմամբ, արտաքուստ բարի ու առաքինի մարդկան պէս վարուէ, խոնարհ եղիր, պարկեշտ ու քաղցր ու միշտ միօրինակ բնութեամբ սակայն քու ներսդ անոնց դոց ըլլայ:

Թող որ անանկ կարծեն, թէ դուն հոգեւորական բաներու շատ տեղեակ չես ու զքեզ իրօք եղածէդ բոլորովին տարբեր համարին: Ասով Աստուծոյ քեզի ըրած շնորհքները կը ծածկուին:

Ե. Աստուած կ'ուզէ որ իր ճամբուն մէջ եռանդեամբ երթբցուի, բայց խիստ լաւ է, ինչպէս խօսքիս կարգը կը բերէ ըսել, առանց ոսնածայնի երթալ:

Շատերը, որոնք Աստուծմէ առանձին ու մեծամեծ շնորհքներ ընդունած էին՝ կորսուեցան, մտքերնուն մէջ անոնց վրայ խիստ շատ մտածելուն, սնտաի հաճութիւն մ'ունենալուն ու զարմանք դրդուելու մտօք՝ վերաբերութիւն չունեցող անձանց յայտնելուն համար:

Ասանկներուն սիրտը սուրբ Կուսին ներքին տրամադրութիւնը որ ունենար,



խոնարհութեան հոգին, որն որ աստուածային լոյսը միշտ իր հեան ունի, իրենց վրայ իմաստուն անվստահութիւն մը կու տար ու հպարտութեան հոգւոյն խաբէութիւններն անոնց կը յայտնէր :

Զ. Մէկը չիկրնար չափէն աւելի զգուշութիւն բրած ըլլալ հոգեւոր ճամբու, եւ եւս աւելի անծանօթ ճամբաներու մէջ չխաբուելու համար :

Խիստ ընտիր ու բոլորովին երկնային ըմպելիք մ'ալ, առանց այս զգուշութեան կրնայ թոյն ըլլալ :

Միշտ փորձով տեսնուած բան է, որ ճշմարտապէս ինք իր սիրտը պահող անձ մը, կը վշտանայ ու կը տրամի, երբոր Աստուած թոյլ կու տայ, որ իրեն տուած առանձին շնորհքներէն մէկն երեւան ելլէ. անանկ որ անոր համբերելու համար Աստուծոյ կամացը մեծ հպատակութիւն ընելու հարկաւորութիւն կ'ունենայ :

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Հոռատոյ իսկեմս-իեան վրայ :

Ա. ԱՒԵՏԱՐԱՆԻՉԸ կ'ըսէ, թէ երբ որ հրեշտակն Աստուծոյ կողմանէ Մարիամայ պատգամաւորութիւն բերաւ, Մարիամ կը մտածէր : Աս մտածմունքն իր խոնարհութենէն ու նաեւ հաւատքէն յառաջ կու գար :

Ամենախոհեմ կոյսը դիտէր, թէ եր-



բեմն խաւարային հրեշտակը լուսոյ հրեշտակի կերպարանք ու մոլորութեան ոգին երբեմն ճշմարտութեան ոգւոյն ձայնը կ'առնէ :

Անոր համար կը հարցընէ հրեշտակին ու անոր պատասխանին կը սպասէ , տեսնելու համար թէ արդեօք մարգարէից՝ Մեսիային վրայ ըսածներուն ու իր կրօնից սկզբանց հետ կը համաձայնին :

Բ . Խոհեմութիւն կայ , որ ոչ միայն հաւատոյ դէմ չէ , հապա նաեւ անոր հպատակելու կ'առաջնորդէ :

Խոհեմութիւնը նախ աչքը կը բանայ յայտնութիւնն ստուգելու համար , ու անկէ ետեւ հնազանդութիւնն՝ աչքը կը դոցէ՝ կուրօրէն անոր հպատակելու համար :

Պէտք չէ ամէն հոգւոյ հաւատալ<sup>1</sup> : Կրօնի նիւթի մէջ ամէն լսածիս չեմ հաւատար , հապա մինակ անոնց կը հաւատամ , որոնք Աստուծոյ կամ անձամբ եւ կամ եկեղեցւոյ ձեռքով , որն որ ճշմարտութեան սիւն ու հաստատութիւն է<sup>2</sup> , յայտնածներուն համաձայն են :

Գ . Աստուած մեզի միջոց տուած է իր յայտնածները ճանչնալու : Բայց մէյ մը յայտնութիւնը ստոյգ ըլլալէն ետեւ , Նզովեալ ըլլայ նոյն իսկ հրեշտակ

<sup>1</sup> Ա . Յովհ . Գ . 1 :

<sup>2</sup> Ա . Յիմ . Գ . 15 :

մը<sup>1</sup>, որն որ նոյն յայտնութեան ինծի սովրեցուցածէն տարբեր կ'աւետարանէ :

Ար հաւատամ ան ամէն բանի, ինչ որ հաւատքը կը սովրեցընէ, վասն զի ան բանը մինակ ինծի կը սովրեցընէ, ինչ որ Աստուած ըսած է : Նոյն իսկ ճշմարտութեան ըսածէն աւելի ստոյգ ինչ կրնայ ըլլալ :

Ինչպէս որ անկարելի է, որ Աստուած խարէ կամ խարուի, անանկ ալ անկարելի է, որ ես խարուիմ :

Գ. Սեծ խենդութիւն է, բանի մը իբրեւ Աստուծոյ խօսքին հաւտալ, աւանց արդար պատճառի : Ասանկ է հեթանոսաց եւ նաեւ շատ քրիստոնէից յիմարութիւնը :

Բայց երբ որ մէկն ուղիղ ու արդար պատճառներով, բանի մը իբրեւ Աստուծոյ խօսքին կը հաւատայ, մեծ իմաստութեան նշան է :

Աստուծոյ յայտնած ճշմարտութեանց՝ հաստատուն հաւատքով հաւատալը, նոյն իսկ Աստուծոյ անսխալութեանը հաղորդակից ըլլալ է :

Ե. Արօնի նիւթին մէջ, Մարիամայ հողւոյն եղած քննութիւնը, մարդուն հաւատքը հաստատ ու անխախտ կ'ընէ :

Բայց շատերն՝ ո՛չ թէ անոր համար աւանկ քննութեանց մէջ կը մտնեն, որ-

<sup>1</sup> Գաղատ. Ա. 8 :

պէս զի իրենց հաւտալու եւ սիրելու բանը գիտնան, հապա որպէս զի իրենց սիրած մուրթութիւնները հաստատեն:

Անոնց գիտաւորութիւնը՝ ճշմարտութիւնը գտնել ու անոր յարիլ չէ, հապա իրենց ատելի եղող ճշմարտութեան վրայ երկբայելու պատճառ գտնել:

Իրենց հաւտալիքն ու ապրելու կերպը ճանչնալու ապահով կանոններ չեն փրատներ, հապա իրենց խուզարկութեանց նպատակը յանցանաց մէջ առանց խրղճմտանաց խայթի ապրիլ է:

Զ. Անկրօնութեան ճամբան խիստ համաձայն է անոնց քմայր, որոնց տաղտկալի է հաւատքը:

Հաւատքն ան ատեն կասկածոտ կ'ըլլայ, երբ որ կը սկսի տաղտկալի ըլլալ.

Ամպարիշտներն աւելի հաւատոյ սկզբանց սրբութեան համար, քան թէ անոր խորհրդոցը անհասանելիութեան համար, անոր դէմ կը զինին:

Պէտք են կամ մտի կիրքերէն հրաժարիլ եւ կամ անդադար խղճմտանաց խայթ ու վախ կրել: Անոր համար մըտքերնին կը դնեն որ բանի մը չհաւատան եւ կամ ամէն բանի վրայ երկբայութիւն հանեն, ու մինակ իրենց անցուցած ցոփ կենաց անամօթութեան վրայ չեն երկբայիր:

Հասարակ հնազանդ ըլլալու լրոյն:

Ա. ԵՐԲՈՐ Մարիամ ստուգեց, թէ Աստուած է՝ որ իր հրեշտակին բերնովն իրեն կը խօսի, հաստատ հաւատաց որ հրեշտակին իրեն աւետած ամէն բաները պիտի կատարուին, ու հաւատաց միանգամայն առանց ետեւէ ըլլալու, որ զանոնք հասկընայ:

Ա. քաղին պէս նշան շինողրեց եւ ոչ ալ Չաքարիային պէս երկբայեցաւ: Ա՛լ անկէ ետեւ չ'ըսաւ թէ «Ի՞նչպէս պիտի ըլլայ ինձի ատիկա»,:

Թէ ի՞նչպէս այն տղան, որուն որ ես մայր պիտի ըլլամ, փրկութիւն պիտի ընէ: Ի՞նչպէս պիտի հաստատէ իր թագաւորութիւնը: Հրեշտակն՝ իրմէ ասանկ առարկութիւններ չլսեց:

Ասանկ հարցումներ ու հետաքրքրութիւններ չըրաւ, որոնք յատուկ են տկար հոգիներու: Շուտ մը իր միտքը հաւատոյ լուծին տակ խոնարհեցուց:

Բ. Անոր օրինակին պէս, խոնարհեցուր զքեզ, անձն իմ, հնազանդելով քու միտքդ այն ճշմարտութեանց, որոնք քու խորհուրդներէդ վեր են:

Ետեւէ մի ըլլար միտք հասցընելու այն խորհրդոց, զորոնք հաւատքը քու առջեւդ կը դնէ: Թէ որ միտք հասցը-

ներու ըլլայիր, խորհուրդ չէին ըլլար :  
Քեզի բաւական է գիտնալ որ ճշմարիտ  
են :

Եւ իրօք ալ կը համոզուիս անոնց ճշմարտութեան, թէ որ նկատելու ըլլաս նոյները քեզի սովորեցրնող հաւատքն՝ իր ան ամէն յասկութիւններովը, որոնցմով բոլոր տիեզերաց ընդունելի եղաւ :

Ար խոստովանիմ, որ նոյն խորհուրդներն անհասանելի են, սակայն հաւատքն իր արդիւնքը կը կորսընցընէր, թէ որ մարդկային միտքը կարենար զանոնք մեկնել : Երանի անոնց, որոնք որ չտեսան ու հաւատացին<sup>1</sup> :

Գ. Մեծամեծ աստղներէն մինչեւ մանր ծաղիկներն, ամէն բան ծածուկ խորհուրդ են բնութեան մէջ : Այս բնութեան խորհուրդներուն խելք չես կրնար հասցընել ու կ'ուզես Աստուծոյ խորհուրդներուն խելք հասցընել :

Ա'ուզես աստուածային բաները յայտնի ու պայծառ տեսնել, ուր որ երկրաւորները խիստ անկատար կերպով կը տեսնես :

Պէտք չէ անիմանալի ու անասման էակին ամենակարողութիւնն ու դորձքերը մարդկային մտաց տկար գաղափարներովը չափել ուզել :

Աստուած՝ ինչ որ է նէ, անիկա կ'ըլ-

<sup>1</sup> Յովհ. Ի. 29 :

լամբ, թէ որ մենք կարող ըլլայինք անոր էութեանը խորութեան թափանցել:

Գ. Աչքով չտեսնուած ու մտք չբմբռնուած բանին հաւատալը ծայրագոյն ճշմարտութեան մեծ յարգութիւն ընել է:

Աստուած իմ, չէ թէ իմ լուսովս կ'ուզեմ դատաստան ընել, հապա քու լուսովդ, զորն որ հաւատքն ինձի կը հաղորդէ:

Գուն ինձմէ կ'ուզես որ չէ թէ միայն իմ սիրտս քեզի նուիրեմ, հապա նաեւ իմ միտքս ալ, որն որ հաւատքով կ'ըլլայ:

Ե. Ար յուսամ որ օր մը երկինք պիտի հասնիմ, ուր ամէն բան պիտի յայտնուի: Բայց նոյն իսկ երկնից մէջ, պիտի չկարենամ երբէք կատարելապէս միտք հասցընել քու կատարելութեանցդ եւ ոչ ալ գործքերուդ, ինչու որ դուն միշտ անտահման պիտի ըլլաս ուես սահմանաւոր:

Ար հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատութեանս<sup>1</sup>: Աւելցնուր իմ հաւատքս<sup>2</sup>:

Ձեռ կրնար զլանալ ինձի հաւատոյ պարզեւը, որն որ ուրիշ ամէն պարզեւաց սկիզբն է, թէ որ, ինչպէս որ պէտք է նէ՝ քեզմէ խնդրելու ըլլամ:

<sup>1</sup> Մարկ. Թ. 23:

<sup>2</sup> Ղուկ. Ժէ. 5:



Նոյնը կը խնդրեմ քեզմէ սուրբ Կուսին բարեխօսութեամբը, որն որ իր հաւատոց հնազանդութեամբն ու արդեամբը քեզմէ ըսուածներուն իր վրայ կատարումը տեսաւ<sup>1</sup> :

Զ. Տ՛ուր ինձի կենդանի ու ընդհանուր հաւատք մը, առանց երկբայութեան ու բացառութեան: Ինչու որ երկբայիլը՝ չհաւատալ է, ու մէկ բան մը ի բաց առնելն, ամէնն ալ մերժել է:

Տ՛ուր ինձի սիրով զօրացած հաւատք մը, որ կարենամ հաւատքին սովորեցուցած ճշմարտութեանց համաձայն ապրիլ:

Չեմ խնդրեր որ հրաշքներ գործեմ, ինչպէս որ հաւատքը գործել տուաւ քու սուրբերուդ, հապա կը խնդրեմ այն հաւատքը, որն որ զանոնք սուրբ ըրաւ:

Գ Լ Ո Ի Խ Ժ Է .

Թէ ի՞նչպէս պիտի Լանայ սփռուի մեծ ճշմարտութեան մէջ ընդհանրութիւնը:

Մարիամ: Ա. Ո՛ր ԴԵԱԿ, քու հիմակուան մտածած խորհուրդդ կրնայ քեզի ուրիշ մտածութիւններ ալ տալ, զորոնք մտքէդ չեն անցրներ:

Ծառան: Բ. Ո՛վ թաղուհի երկնից, դուն սովորեցուր ինձի նոյները: Խօսէ, քու ծառայ զքեզ մտիկ կ'ընէ<sup>2</sup> :

<sup>1</sup> Ղուկ. Ա. 45:

<sup>2</sup> Ա. Թագ. Գ. 9:



Հրեշտակին պատգամաւորութիւնը  
ընդունելէս յառաջ, Խորայեւացոց ար-  
դարներուն պէս, շատ անգամ երկինքը  
կը հայցէի, որ քաղցր ցօղ դառնայ ու  
Արդարն երկրիս վրայ իջեցնէ: Բայց եր-  
բէք չէի կրնար կարծել որ աշխարհքին՝  
իր Փրկիչը տուող կոյսն ես պիտի բլամ:

Բայց երբոր հաստատ գիտցայ որ ըն-  
տրուած եմ անոր մայր բլալու, ասանկ  
բարձր ու սքանչելի կոչման առջեւ ինք  
զինքս խոնարհեցրնելով, ս՛հ, ինչ բա-  
րեպաշտական զգածումներ ունեցայ եւ  
ինչ ուրախութեամբ լեցուեցայ, գիտ-  
նալով որ ՂԱտուած իմ ծոցս պիտի ու-  
նենամ:

Գ. Երբն Ատուած, որն որ արժանի  
համարեցաւ գալ ու իր մարմնաւորու-  
թեամբն ինձի հետ սերտիւ միանալ, կը  
բաղձայ, սրգեակ, քեզի հետ ալ միա-  
նալ Հաղորդութեան խորհրդոյն ձեռ-  
քով, բայց դուն խիստ քիչ փոյթ ունիս  
զանիկա ընդունելու:

Միտ մի դներ քու հեղգ անհոգու-  
թեանդ ու սուտ խոնարհութեանդ՝ նոյն  
սուրբ սեղանէն զքեզ հեռու բռնելու  
համար թելադրած պատճառանքներուն:

Երկիւղ ու յարգութիւն կը պատ-  
ճառես: Բայց երկիւղն ու յարգութիւնը  
մինակ սէրն աւելի աչալուրջ ընելու  
պէտք են ծառայել:

Գ. Արբ որ կերպարանաւոր մեծա-  
րանաց համար, նոյն խորհուրդէն հեռու  
կը կենաս, կը զլանաս Յիսուսին այն ու-  
րախուժիւնը, զորն որ կ'ուզէ ունենալ  
քեզի հետ բնակելով:

Այս ուրախուժիւնը ինք քեզի յայտ-  
նած է, ըսելով թէ իմ ցնծութիւնս  
մարդկան որդւոցը մէջն է<sup>1</sup>:

Յաճախ պակասութեանց մէջ կ'իյնամ,  
կ'ըսես, անոր համար սրբոց Սուրբին չեմ  
կրնար մօտենալ: Բայց, որդեակ, որչափ  
որ տկար ալ ըլլայ մէկը, թէ որ ինք  
զինք ուղղելու բոլոր ջանքն ի գործ կը  
դնէ, Յիսուս միշտ ուրախութեամբ ա-  
նոր սիրտը կու գայ:

Ա'ըսես թէ անոր համար Հաղորդու-  
թենէ հեռու կը կենամ, վասն զի զինքս  
անարժան կը զգամ: Պէտք էիր ըսել  
թէ ձեռքէս եկածին չափ կ'ուզեմ ջա-  
նալ որ զինքս հաղորդելու արժանի ը-  
նեմ, որպէս զի մասնակից ըլլամ այն  
շնորհաց, զորն որ Յիսուս կը շնորհէ  
Հաղորդութեամբ իրեն հետ միացող  
բարեպաշտ հոգիներուն:

Ե. Վիչ հեղ Հաղորդութեան կը  
մերձենաս, վասն զի զգուշանալէն ու  
քեզի դէմ բռնութիւն ընելէն կը վախ-  
նաս:

Ար վախնաս այն ջերմեռանդական

<sup>1</sup> Առակ. Ը. 31:

կեանքէն, որն որ քեզմէ կը պահանջուի ստէպ ստէպ Հաղորդութեան մերձենալու հրաման տալու համար :

Քու հոգւոյդ տկարութեան ու հիւանդութեան վրայ տրտունջ կ'ընես : Արդ «կենաց հացով», քեզի արուած աղքատ դեղը գործածէ :

Զ. Յիսուս իր աւետարանին մէջ իր աստուածային խնճոյքին՝ տկարները, հիւանդներն, աղքատներն ու կոյրերը կանչեց :

Ար ճանչնայ քու խեղճութիւններդ ու ողորմելութիւններդ, ու իր խորհրդոյն ձեռքով քեզի անանկ կերակուր մը կու տայ, որ զքեզ սփոփելու եւ զօրացնելու մէկիկ է :

Բաղձալի բան է որ Հաղորդութիւն ընդունելու համար կատարեալ սրբութիւն ունենայիր, սակայն Յիսուս զասիկա չի պահանջեր :

Թէ որ ասիկա հարկաւոր ըլլար, որչափ քիչերն անոր սեղանին կ'ընդունուէին, նաեւ իր այնչափ հրաւերքէն ետեւ :

Նոյնը հարկաւոր կարծելն, ուրիշ բան չէ, բայց եթէ պահանջել իբրեւ պատրաստութիւն Հաղորդութեան՝ ան բանը, որն որ անոր պտուղը պիտի ըլլայ :

Է. Հաղորդութեան մօտեցած ատենդ քու անարժանութեանդ անկեղծ

խոստովանութիւն մ'ըրէ, ու առաւելապէս սիրտդ մաքուր ու սուրբ ըլլայ կամ գոնէ հաստատուն յառաջադրութիւն ունենաս սրտիդ սրբութեանն աշխատելու. ան ատեն Հաղորդութիւնդ աղէկ ընդունած կ'ըլլաս :

Գիտցիր որ աղէկ եղած Հաղորդութիւն մը, երբեք հոգւոյն մէջ առանց պատու բերելու չ'անցնիր :

Թէ որ քու ջանքովդ ու հաւատարմութեամբդ՝ ինք զինքդ անանկ վիճակի մէջ կը դնես, որուն մէջ կը պահանջուի որ դանուխ յաճախ Հաղորդութեան սուրբ խորհուրդին մերձենալու հրաման տալու համար, խիստ յառաջացած կ'ըլլաս կատարելութեան ճամբուն մէջ :

Երկինքը Յիսուսին ներկայութիւնը վայելելու բաղձանքով անհամբեր անձ մը, իր մեծ ցնծումը կը համարի երկրիս վրայ, կըրցածին չափ, Հաղորդութեան մէջ անոր ներկայութիւնը վայելել :

### Գ Լ Ո Ւ Խ ԺԸ .

Թէ ինչ զգածմամբ պէտք է լեցուիլ անձ մը, Հաղորդութեան խորհրդով Յիսուս անոր սրտին մէջ եղած արեւն :

Մարիամ : Ա . ՈՐԴԵԱԿ, սուրբ սեղանոյն վրայ զՅիսուս ընդունելէդ ետեւ ու քու սիրտդ հանգչած ատեն, ունեցիր

այն զգածումները, զորոնք ես՝ զինքն իմ  
ներսս ունեցած ատենս ունէի :

Ծառան : Բ . Ո՛վ Մարիամ, միտք մը  
չիկրնար իմանալ ու լեզու մը չիկրնար  
բացատրել, հապա Աստուած միայն գի-  
տէ ան ատեն քու հոգւոյդ ունեցած  
զգածումներն ու եռանդը :

Աստուծոյ Բանին քու կոյս արգան-  
դիդ մէջ անցուցած ինն ամսուան վայր-  
կեաններուն մէջ՝ հաւասար, խոնարհու-  
թիւն, եռանդ, շնորհակալութիւն, սէր  
ու ամէն առաքինութիւններ իրարու կը  
յաջորդէին :

Մարիամ : Գ . Ո՛րդեակ, թէ որ գիտ-  
նալու ըլլայիր Քրիստոսի՝ իր խորհրդեան  
մէջ ինք զինք քեզի տալով՝ քեզի բրած  
շնորհաց պատուականութիւնը, եւ թէ  
ինչ զգածումներ ունի քու վրայ, կըր-  
նայիր անոր վրայ զգածում չունենալ :

Արարիչն՝ իր արարածին, փառաց  
թագաւորն՝ աղքատին, երկնային մխի-  
թարիչը՝ տառապեալ անձի մը ու նոյն  
իսկ սրբութիւն եղողը՝ մեղաց մէջ թաթ-  
խուած մարդու մը այցելութեան կու գայ :

Խորին խոնարհութեամբ խոնարհի-  
անոր առջեւը : Բու բոլոր ըմբռնումէդ  
անսահման բարձր մարդասիրութիւնը  
բարձրացուր :

Բու անցած ժամանակուան մէջ բրած  
ապերախտութիւններէդ գարշէ, ապա-

դային համար՝ անոր օգնութիւնը հայցէ  
ու յաւիտենական հաւատարմութիւն  
խոստացիր :

Գ. Սուրբ ցնծութեամբ լեցուէ :  
Աղաչէ հրեշտակաց ու սրբոց, որ քու  
կողմանէդ Յիսուսին անանկ շնորհակա-  
լութիւն ընեն, որն որ, եթէ կարելի  
ըլլայ, անոր քեզի ըրած սքանչելի պար-  
գեւին համապատասխանէ :

Բաղձա՛, որ ասանկ քաղցր բարի Աս-  
տուած, ինչպէս երկինքն, անանկ ալ երկ-  
րիս վրայ սէր ու փառաւորութիւն գտնէ :

Բաց սիրտդ անոր սիրոյն ամէն բոցե-  
րուն ու բաղձա՛ որ անոնցմով սպառիս :

Ե. Մնոր բարերարութեանց դիմացը  
շնորհակալ ըլլալու եւ քու տկարու-  
թեանդ տեղ լեցրնելու համար, նուիրէ  
իրեն նոյն խորհրդեան մէջ Չերմեռան-  
դութեամբ ու սիրով զանիկա ընդունող  
սուրբ անձանց իղձերը :

Առաւելապէս նուիրէ իրեն այն իղձերը  
կամ զգածումները, որոնցմով զիս լե-  
ցուց, երբ որ իր մարմնաւորութեամբը  
ներքուստ ինձի հետ միացաւ :

Հաղորդութեան խորհրդոյն մէջ՝ իր  
քեզի տուած առաքինութեանց մեծա-  
մեծ օրինակներուն ու առանձնապէս իր  
խոնարհութեան վրայ մտածէ ու շնորհք  
խնդրէ նմանելու :

Զ. Այս խորհրդոյն մէջ, ոչ միայն իր



աստուածութիւնը, հապա նաեւ իր մարդկութիւնը ծածկուած է: Մինակ հաւատոյ աչքովդ զՅիսուս հոն կը տեսնես: Խնդրէ՛ իրմէ որ ծածուկ ու ընկեցիկ կեանքը սիրես, պատիւներէ ու փառաւորութենէ փախչիս ու գործքերդ առանց տեսնուելու եւ ուրիշներէն համարում ստանալու դիտաւորութեան ընես:

Այս խորհրդոյն մէջ Յիսուս շատ մարդիկներէ արհամարհանք ու շատ սրտերէ անտարբերութիւն կը գանէ, որոնք խիստ քիչ մասամբ անոր են, մեծաւ մասամբ աշխարհքին են ու բոլորովին իրենք իրենց են: Շնորհք խնդրէ իրմէ, որ համբերութեամբ տանիս անիրաւութեանց ու հակառակութեանց:

Ո՛րդեակ, ահա ասոնք պիտի ըլլան քու գործքերդ՝ Հազարդութեան մերձեցած ատենդ ու զՅիսուս ընդունելու երանութիւնն ունեցած բոլոր օրդ:

### Գ Լ Ո Ի Խ ԺԹ.

Ո՛րանց բարեպաշտութան գործոց ու նախա ստաբի Հազարդութեան ընդունանք արեւն զբացած ցած Գոգոսութեան վրայ:

Ծառան: Ա. Շ ՆՈՐՀԱԿԱԼ եմ քու ինձի տուած խրատներուդ համար, ո՛վ կոյս, որ Յիսուսէն ետքն իմ ապաւէնս ու խորհրդատուս ես:



Բայց, կոյս սուրբ, շատ անգամ Հաղորդութեան ատեն, որչափ որ կը ջանամ նէ ալ որ Յիսուսին մարմնոյ ու արեան ընդունելութեան յառաջ բերած իղձերով պատաղիմ, միտքս չոր ու սիրտս պաղ կ'ըլլայ:

Ո՛հ, ինչո՞ւ չեմ կրնար ան ատեն այն քաղցր սիրոյ զգածումներն ու քաղցրութիւնները զգալ, զորոնք դուն կը զգայիր, երբոր զՅիսուս քու ծոցդ կը կրէիր ու զորոնք բարեպաշտ անձինք Հաղորդութեան ատեն կը զգան:

Մարիամ: Բ. Ո՛րդեակ, երբ որ Հաղորդութեան ատեն զինքդ ցամաքութեան մէջ կը տեսնես, խոնարհէ՛ ճանչնալով որ քու անհաւատարմութեանցդ համար այն վիճակին մէջ դռնուելու արժանի ես, նոյնը համբերութեամբ կրէ՛ քու յանցանացդ քառութեան համար, բայց ամենեւին մի վհատիր:

Թէ որ պատճառ ունիս կարծելու որ այս վիճակը իբրեւ պատիժ խաւրուած ըլլայ քեզի, զինքդ ուղղէ: Իսկ եթէ իբրեւ հաւատարմութեանդ փորձ խաւրուած է, նայէ որ Աստուծոյ կամօցը հպատակելով, անով արդիւնք վաստակիս:

Գ. Հարկ չկայ որ Հաղորդութեան պտուղը, նոյն իսկ Հաղորդութեան ճաշակն ըլլայ: Անոր էական պտուղն է, պարտուց մէջ հաւատարմութիւն:

Միրտ մը կրնայ անկեղծութեամբ ու բոլորովին Աստուծոյ ըլլալ ու միանգամայն աստուածային բաներու մէջ համ կամ ճաշակ չգտնել :

Կատարելութեան ճամբուն մէջ եռանդնոտ եղող շատ անձինք՝ աղօթից մէջ ու նոյն իսկ սուրբ սեղանին մօտեցած ատեննին ցամայքութեամբ կը փորձուին :

Գ. Առաքինութեան համար զգալի ճաշակն էականապէս հարկաւոր չէ : Մանաւանդ թէ շատ անգամ վախնալու է որ հոգին անոնց չյարի :

Աստուածային փեսան աղէկ գիտէ թէ ինչ բան իր հարսերուն օգտակար է : Ոմանց քաղցրութիւն ու մխիթարութիւն կու տայ ու ոմանց չիտար : Այս վերջինները պէտք է որ Աստուծոյ՝ նոյններն իրենց զլանալու համար ունեցած պատճառներուն երկրպագութիւն ընեն, առանց ետելէ ըլլալու որ իմանան :

Ո՛րչափ որ անհոգ ու անփոյթ անձ մը Յիսուսի առատաձեռնութենէն բան մը պէտք չէ յուսալ, այնչափ ալ հաւատարիմ ու եռանդնոտ անձ մը պէտք չէ վշտանալ, երբոր անանկ առիթներ կ'ունենայ, որոնց մէջ կրնայ ցուցնել Յիսուսին, որ ինք աւելի նոյն իսկ իրեն համար կը ծառայէ իրեն, քան թէ իր պարգեւներուն համար :

Անոր համար զինքդ Աստուծմէ մեր-  
ժուած մի կարծեր, երբոր անոր ծա-  
ռայութեան մէջ ձանձրութիւն կը զգաս,  
հապա հաւատարմութեամբ, անոր հա-  
ճոյ ըլլալու համար, ըրէ ան բանը, զորն  
որ կ'ընէիր թէ որ անոր ծառայութեան  
մէջ քաղցրութիւն զգայիր:

Ե. Ո՛րդեակ, աւելի հաւատքով քան  
թէ զգայարանքով քու Աստուծոյդ  
զնա, ջանա՛ ամէն բանի մէջ անոր հա-  
ճոյ ըլլալ: Ասոր որ հասնիս, սրբոց բաղ-  
ձացած ու գտած երանութիւնը կը  
դանես:

Յամաքութեան վիճակը՝ զքեզ սուրբ  
ընելու յատուկ վիճակ մըն է, թէ որ  
Աստուծոյ դիտաւորութեանը համաձայն  
զանհկա աղէկ կը գործածես:

Զքեզ ասանկ վիճակի մէջ զնելով,  
Աստուծոյ ունեցած դիտաւորութիւնն  
ան է, որ քեզի սովրեցընէ ինք զինքդ  
չփնտուել ու իր հաճութիւնը քու երա-  
նութիւնդ ու արդիւնքդ համարիլ:

Ծարան: Զ. Սուրբ Կոյս, ես, որ ամէն  
մխիթարութեան անարժան եմ, ինչ-  
պէս ամէն նիւթի, անանկ ալ ասոր մէջ  
զինքս աստուածային վարդապետին բո-  
վանդակ կամացը կը հպատակեմ:

Թէ որ զիս այն հոգիներուն թիւը կը  
խոթէ, որոնց զգալի քաղցրութիւններ  
կու տայ, օրհնեալ ըլլայ, եւ եթէ նոյն

քաղցրութիւնները կը զլանայ, դարձեալ օրհնեալ բլայ:

Յիսուսէն մինակ աս մխիթարութիւնը կը խնդրեմ, որ միշտ իրեն հաւատարիմ բլամ:

Աստուած իմ, մեծապէս երջանիկ կը համարիմ զինքս, թէ որ իմ սրտիս ամէն հաճութիւնները՝ Յիսուսին սրտին հաճութեանը համար, զոհելու բլամ եւ իմ ամէն պարագերս կատարեմ՝ մինակ այն ուրախութիւնն ունենալով, զորն որ մէկը կը զգայ՝ մտածելով որ անոր հաճոյ բլալու համար կ'ընէ:

Գ Լ Ո Ի Խ Ի .

Գործնական կենաց համար՝ սուրբ Հաղորդութիւնէ բաշտելու պարզ լրաց:

Ծառան: Ա. ՄԱՅԲ գեղեցիկ սիրոյ, քու գոյութեանդ առջի վայրկենէն բուրրովին սուրբ էիր, բայց քու կուսական արգանդիդ մէջ Բանը մարմին առնելէն ետեւ, ինչ նոր զարգացում բրիր:

Յիսուսին ինն ամիս քու ներսդ ունեցած ներկայութիւնն անանկ սրբութեան տպաւորութիւն բրաւ վրադ, որ քու բովանդակ կենացդ մէջ տեւեց:

Աստուծոյ քեզի բրած այս մեծ շնորհաց յիշատակովը մինչեւ վերջի շունչդ միշտ սուրբ հոգ ու ջանք մը ունեցար միջոցներ գտնելու եւ ձեռքէ առիթ

չկորանցընելու, քու շնորհակալութիւնդ  
անոր յայտնելու համար:

Մարիամ: Բ. Ո՛րդեակ, ահա իմ օրի-  
նակս առջեւդ է: Հաղորդութեան խոր-  
հրդով բովանդակ սրբութեան Աս-  
տուածը կ'ընդունիս, պէտք է որ սուրբ  
ըլլաս:

Մինակ մէկ անգամ սրբութեամբ ըն-  
դունած Հաղորդութիւնդ բաւական է  
սրբոց բովանդակ եռանդեամբը զքեզ  
լեցընելու: Իսկ քու Հաղորդութիւն-  
ներդ միշտ զքեզ քու հին հեղգու-  
թեանդ մէջ կը ձգեն:

Բողոքովին ու առանց քեզի բան մը  
պահելու զինքդ Յիսուսին չես նուիրեր,  
ուր որ ինք քեզի իր բարերարութիւն-  
ները տալու մէջ ամենեւին չափ չինայիր:

Գ. Շատ անգամ երբոր զանիկա  
սիրտդ կ'ընդունիս, առաքինութեանց  
մեծամեծ իղձեր կու տայ քեզի, դուն  
ալ անոր խոստումներ կ'ընես, բայց թէ  
իղձերն ու թէ՛ խոստումները շուտ մը  
աներեւոյթ կ'ըլլան:

Ասանկ չես ըներ՝ քեզի այցելութեան  
եկող երկրաւոր իշխանի մը նկատմամբ:

Երբ որ բարեկամիդ ըրած բարերա-  
րութենէն կը շարժիս, շուտ մը քու  
շնորհակալութեանդ ցոյցը կ'ընես, սերդ  
չիհանդարտիր մինչեւ նոյնն ընելու մի-  
ջոց մը չգտնես:

Գ. Արդեակ, կը պակսի՞ն արդեօք քեզի առաքինութեան այն առիթները, զորոնք սուրբերը Հաղորդութենէն ետեւ կը գործածէին՝ Յիսուսին ցուցնելու համար, թէ իրենց ընդունած շնորհաց սրչափ երախտազէտ են :

Ամէն բանէ աւելի Յիսուս կը պահանջէ քեզմէ որ աչալըջութեամբ քու իղձերուդ եւ յօժարութեանցդ վրայ հսկես, անանկ որ իրմէ դուրս ուրիշ բանի յօժարութիւն չունենաս :

Հաղորդութիւնն ընդունելէդ ետեւ, թէ որ դուն քու վրայ հսկելու բլլայիր, Հաղորդութեան ատեն ունեցած ջերմեւանդութիւնդ կը պահէիր :

Ամէն մէկ Հաղորդութենէ ետեւ ասանկ հսկողութիւնը, ամենէն աղէկ պատրաստութիւնն է, զորն որ կրնաս բնել հետեւեալ Հաղորդութեան համար :

Ծառան : Ե. Անորք կոյս, որ ամէն առաքինութեանց օրինակ ես, քու ոտքդ ինկած՝ կ'ամչնամ իմ հեղգութեանս ու ապերախտութեանս վրայ :

Խնդրէ Յիսուսէն, որ քանի անգամ որ իմ սիրտս կու դայ, անոր ամէն շարժումներն ուղղէ, բոլորովին իրեն դարձրնելով :

Հանէ ինձմէ աս ողորմելի սիրտս, որն որ իրեն անարժան է ու տեղը նոր սիրտ մը հաստատէ, որն որ քու սրտիդ նման



ըլլայ, այսինքն եռանդնոտ, առատա-  
միտ, քաղցր ու անյողդողդ սիրտ մը,  
ինչպէս է իր սիրտը մեր վրայ:

Գ. Լ ՈՒ Խ ԽԱ.

Ընկերսիրութեան վրայ:

Ծարան: Ա. Ո՛վ եռանդնոտ կոյս,  
ու թէ առանց դիտաւորութեան քու  
Նազարեթի առանձնութիւնդ թողու-  
ցիր ու դուրս ելար: Ընկերսիրութիւնը  
քեզի առաջնորդեց:

Երանելի են քու կոխած բլուրներդ:  
Հրէաստանի լերինք, ուրախ եղէք ցրն-  
ծութեամբ:

Բ. Ո՛վ մայր արժանի այն Աստուծոյ,  
որն որ եկաւ հոս մեզի սուրբ սէր սովորե-  
ցընելու. երբ որ հրեշտակին բերնէն քու  
Եղիսաբեթ ազգականիդ ինչ վիճակի  
մէջ գանուիլն իմացար, շուտ մը փու-  
թացիր անոր այցելութեան երթալ:

Ինչպէս աւետարանը կը զրուցէ, փու-  
թապէս գացիր: Հողւոյն սրբոյ ազգե-  
ցութիւնները կ'ուզեն որ շուտ մը ի  
գործ գրուին:

Առջեւդ եղած անցնելու լեռները  
զքեզ չեն արգելեր: Ընկերսիրութիւնը  
քաջասրտութեամբ ու մեծանձնու-  
թեամբ իր պարտքը կը կատարէ:

Առ ժամանակ մը քու առանձնու-  
թեանդ քաղցրութիւնները թողուցիր:



Աստուած պաշտութեան քաղցրութիւնը պէտք է որ տեղի տայ ընկերօրրութեան իրաւանց :

Գ. Վու ընկերօրրութիւնդ անցողական բերում մը չէր, հապա “շուրջ երեք ամիս, Եղիսաբեթին քով կեցար ու մտադրութեամբ եւ հոգողութեամբ անոր ծառայեցիր :

Ինչ երջանիկ սրբութեան պտուղ ունեցաւ այս ընկերօրրական այցելութիւնը : Եղիսաբեթ Հոգւով սրբով լեցուեցաւ : Յովհաննէս Մկրտիչ իր մօրն արգանդին մէջ սրբուեցաւ :

Եղիսաբեթ ու անոր փեսան առաքինութեանց գործքերով կ'ապրէին, սակայն քու օրինակովդ սովբեցան նոյներն աւելի եւս կատարելապէս ընելու :

Մարիամ : Գ. Արդեակ, [թէ որ զԱստուած ճշմարտիւ կը սիրես, պէտք է որ ընկերդ ալ սիրես, որուն համար որ անիկա երկինքէն իջաւ, մարդ եղաւ ու իր կեանքը տուաւ խաչին վրայ :

Քու ներքին իղձերուդ վրայ մի կենար : Քու ընկերօրրութիւնդ գործնական ըրէ : Այնչափ տառապեալք կարօտութիւն ունին քու խօսքերովդ միսթարուելու, այնչափ խեղճեր կարօտութիւն ունին քու ծառայութիւններովդ սփոփութիւն գտնելու :

Աստուած [թոյլ տուած է, որ աշ-

խարհքիս վրայ շատ խեղճեր ըլլան, որպէս զի անոնք իրենց համբերութեամբ սուրբ ըլլան ու դուն ալ քու ընկերսիրութեամբդ :

Ե. Շուտ եղիւր բարիք ընելու մէջ, թէ որ կրնաս շուտ ընել : Յապաղումը միշտ ընկերսիրութեան արդիւնքը կը պակսեցընէ :

Ընկերին սիրոյն մէջ առատաձեռն եղիւր : Տարածէ նոյն սէրդ որչափ որ քու կարողութիւնդ կը ներէ :

Ճշդելով ընկերին ծառայութիւն ընելը, ընկերսիրութեան պարտքէն աւելի փախչիլ է, քան թէ նոյնը կատարել :

Երբոր չես կրնար անձամբ քու ընկերիդ ծառայութիւն ընել, ջանա՛ իրեն համար ուրիշներէն օգնութիւն գտնել, եւ թէ որ աս ալ չ'օգտեր՝ դոնէ Աստուծոյ մարդասիրութիւնը հայցէ անոր համար :

Զ. Քու ընկերդ իբրեւ մարդ մի մրտածեր, հապա անոր վրայ զԱստուած նկատէ : Ան ատեն, ս'վ որ ըլլայ քեզմէ օգնութիւն խնդրողը, բան մ'իրեն չես զլանար, ինչու որ բան մը չես ուզեր զլանալ Աստուծոյ :

Թէ որ մէկը, մարդկան բարիք ընելու համար, անոնց արդեանցն ու բարի յատկութեանցը նայի, խիստ քիչ անդամ անոնց բարիք կ'ընէ :

Ո՛րդեակ, սիրէ ընկերսիրութեան այն  
գործքերը, զորոնք կատարելու համար  
պէտք էս դժուարութիւններ կրել: Քու  
ընկերսիրութիւնդ ի գործ դնելու համար  
յօժար սրտով յանձն առ անձնասիրու-  
թիւնդ զո՛հել:

Նայն իսկ Աստուած՝ իր օրինակաւը կը  
սովբեցընէ քեզի, ամէն մարդու, նաեւ  
ամենէն ապերախտներուն բարիք ընել:

Է. Տուէք, ըսաւ Յիսուս, ու ձեզի  
կը արուի<sup>1</sup>: Քու ժամանակաւոր հարրս-  
տութենէդ քիչ մը բան տուր ու Աս-  
տուած քեզի յաւիտենական հարստու-  
թիւն կու տայ:

Քու ընկերիդ խորհուրդ տուր, որպէս  
զի իր երկբայութեանց մէջէն ելլէ: ու Աս-  
տուած իր ազդեցութիւններովը քեզի  
կ'օգնէ ու քու նեղութիւններէդ կ'ա-  
զատէ:

Մխիթարական խօսքեր տուր վշտա-  
ցելոց ու “Աստուած ամենայն մխիթա-  
րութեանց,” իր շնորհաց խօսքերովը, քու  
վշտացդ մէջ, զքեզ կը զօրացընէ:

Գ Լ Ո Ի Խ Ի Բ.

Աստուծոյ մեծ-խեանց վրայ:

Ա. ԼՍԷ՛, սիրտ իմ, ըէ՛ Մարիամայ,  
որն որ սուրբ բորբոքմամբ կը գովէ իր

<sup>1</sup> Ղուկ. Զ. 38:

Արարչին մեծութիւններն ու փառաւորութիւնը :

Մանենք իր ունեցած զգածմանց մէջ, ու մեր զովարանութիւնն ալ՝ անոր զովարանութեանց հետ միացընենք :

Փառաւորենք, անոր հետ, այն հզօր Աստուածը, որն որ ուզած ատեն, մեծամեծ սքանչելիքներ կ'ընէ ու որուն սուրբ անունն երկնից ու երկրի երկրպագութեան արժանի է .

Որն որ՝ իր հզօր բազուկը կը տարածէ ու հպարտներուն խորհուրդը կը ցրուէ, աս աշխարհքիս մեծամեծները կը խոնարհեցընէ ու խոնարհները կը բարձրացընէ, կարօաներն իր բարիքովը կը լեցընէ ու հարուստները կը մերկացընէ :

Բ. Ալ իրօք ալ, որուն կը վայլէ փառք ու զովութիւն, եթէ ոչ քեզի, ո՛վ Աստուած իմ :

Մարդկան մեծութիւնը չափաւորեալ, կարօտ ու եղծանելի է, ուրիշներուն համարումէն կախուած ու շատ անգամ երեւակայական ու սուտ է :

Բայց քու մեծութիւնդ, Աստուած իմ, չափ չունի<sup>1</sup> : Գուն ես քու յատուկ փառաւորութիւնդ ու մէկէ մը նոյնը չես առած, ուրիշ ամէն մեծութիւններ, քու կինիդ համեմատութեամբ, անցական ստուեր մը ու ոչինչ են :

<sup>1</sup> Սաղմ. ՃԻԴ. 3 :

Թագաւորաց մեծութիւնն՝ իրենց կենացը հետ կը լմբննաց, իրենց անկմանը աղմկէն ետեւ, յաւիտենական մտացութիւն կու գայ<sup>1</sup> :

Իսկ դուն, Տէր, յաւիտեան կը մնաս : Քու փառքդ չեն կրնար բովանդակել ոչ տիեզերաց ու ոչ ալ ժամանակաց սահմանները :

Գ. Ի՞նչ բանով կրնան պարծիլ քու արարածներդ : Ի՞նչ կարողութիւն ու հարստութիւն որ ունին, քեզմէ ընդունած են : Անոնք բան մը չեն կրնար առանց քեզի, դուն ամէն բան կրնաս առանց անոնց :

Դուն մինակ ինք իրենդ մեծ ես : Օտար զօրութիւն մը հարկաւոր չէ քեզի՝ քու կամքդ ի գործ դնելու համար :

Քու քովդ ուզել ու ընել մի եւ նոյն բանն է :

Առանց դուն քեզմէ դուրս ելլելու, քու վրադ կը գտնես երեւելի եւ աներեւոյթ էակաց կարելի եղած կատարելութիւնները՝ առանց սահմանի ու առանց անկատարութեան :

Դուն միայն էապէս ու յատկապէս ունիս ամէն հնարաւոր կատարելութիւնները, վասն զի դուն միայն ունիս էութիւն բովանդակ լրութեամբ :

Դ. Այս աշխարհքիս մեծերը, մինակ

<sup>1</sup> Սաղմ. Թ. 7 :

անոր համար արժանի են մեծարանաց  
ու յարգութեան, վասն զի քու մեծու-  
թեանդ պատկերն են ու քու կարողու-  
թենէդ մաս մը տուած են անոնց: Բայց  
ինչ են անոնք քու առջեւդ: Հող ու  
մոխիր, ուրիշ մարդկան պէս:

Անանկ է նէ ամէն աշխարհային մե-  
ծութիւն խաւարի ու շերեւնայ քու առ-  
ջեւդ: Ճշմարիտ մեծութիւն մինակ ան  
է, որն որ ոչ կրնայ ածիլ ու ոչ նուազիլ:

Տէր Աստուած զօրութեանց, ո՞վ կը  
նմանի քեզի<sup>1</sup>: Դուն մինակ արժանի են  
երկնից ու երկրի երկրպագութեան, վասն  
զի դուն են մինակ Աստուած մեծ, Աս-  
տուած՝ միշտ մեծ ու Աստուած՝ յամե-  
նայնի ու ամէն տեղ մեծ:

Ե . Մեծ են քու ամէն դործքերուդ  
մէջ, ինչպէս ամենէն սքանչելիներուն,  
անանկ ալ ամենէն պզտիկներուն մէջ,  
ինչպէս երկնից հաստատութեան վրայ  
եղող աստղներուն, անանկ ալ դաշտի  
ծաղկանց մէջ:

Մեծ՝ իմաստութեան, կարողութեան,  
արդարութեան ու մարդասիրութեան  
մէջ: Ո՛հ, Աստուած մեծ, ո՞վ կրնայ քու  
մեծութեանցդ վրայ քեզի արժանի ե-  
ղած կերպով խօսիլ:

Կը խոստովանիմ, որ են շեմ կրնար ու  
աս խոստովանութիւնը յիրաւի քեզի

<sup>1</sup> Սաղմ. 22. 9:



պատիւ է: Քու անսահման մեծութիւնդ պատուել է, ճանչնալը՝ թէ նոյնն ամէն դովութենէ ու բացատրութենէ վեր է:

Գ. Լ Ո Ի Խ Ի Գ .

Աստուծոյ ողորմութեան շնորհ:

Ծառան: Ա. Ո՛վ Մարիամ, խիստ կ'ուրախանամ, երբոր կը լսեմ թէ նոյն ձայնով, որով Աստուծոյ մեծութիւնները կը պատմէիր, կը պատմես նաեւ անոր ողորմութիւնը, որուն վրայ մեծ համարում կու տաս ինծի:

Թէ որ քեզի հեա քննելու ըլլամ, անոր ազգէ ազգ ցուցուցած ողորմութեանցը շղթան, չեմ տեսներ Աստուծոյ երկիւղածներէն մէկը, որուն վրայ նոյն ողորմութիւնը հանդիսած չըլլայ:

Մինակ ան ատեն իր բարկութեամբը մեղաւորներուն կը զարնէ ու սաստիկ պատժով կը պատժէ զանոնք, երբ որ իր բարերարութիւնները կարող չեն ըլլար զանոնք ուղղել ու իրեն քաշել:

Բ. Իր ժողովրդեանն ապերախտութիւններն ու անհաւատարմութիւնները չկրցան իր բարերարութեանց աղբիւրը ցամքեցընել: Հայրական գթով բացաւ անոր՝ իր ողորմութեան ծոցը:

Խոստացած էր Աբրահամն ու անոր զաւակացը, որ վրկիչ մը պիտի խաւրէ: Ոչ միայն խոստմունքը չաւրեց, հապա

նաեւ նախահարց վրայ պատճառներ  
կը փնտռէր, որ անոնց սրդւոցը, որոնք  
անարժան էին, շնորհք ընէ :

Գ. Եկաւ նոյն Փրկիչը : Մարդիկ  
տեսան այն սէրը, զորն որ նոյն Փրկիչն  
իրենց վրայ ունէր :

Ամէն դժբախտներուն երկնցուց իր  
օգնիչ ձեռքը : Մեղաւորները՝ ոչ միայն  
անոր բարերարութիւններէն դուրս չը-  
ձգուեցան, հապա նաեւ մասնաւոր հոգ-  
ու խնամք տեսան :

Տրամուլթեամբ ու մեծ ցաւով կը  
տեսնէր, որ այնչափ ապերախտք զինքը  
կը թողուն ու սուտ ազատութիւնն՝ ա-  
նոր ծառայից ու բարեկամաց թիւէն ըլ-  
լալու պատուական առաւելութենէն վեր  
կը դասեն :

Իր անապառ սիրոյ ցոյցերուն լրում՝ ը-  
նելու համար, խաչ ելաւ ու անոր վրայ իր  
արեան մինչեւ վերջին կաթիլը թափեց :

Մարդիկ զանիկա այս վիճակի մէջ  
տեսան, ու միշտ զանիկա կը նկատեն  
առանց սրտերնին շարժելու : Սակայն  
Աստուծոյ կորուսիչ շանթը տակաւին  
չարձակուեցաւ : Միշտ իր սղորմութիւնն  
ու իր արեան ձայնն անոնց կողմը կը  
խօսին :

Գ. Սուրբ կոյս, ես իսկ կենդանի ա-  
պացոյց մըն եմ այն համբերութեան,  
որով Աստուած կը սպասէ մեղաւորին,

ու այն ողորմութեան , որով ինք զանհի-  
կա կ'ընդունի :

Մոլորած ոչխար էի ու այս աստուած-  
ծային հովուին ձեռքովը փարախ բե-  
րուեցայ : Նոյն իսկ ինք զիս վերցուցած  
կը տանէր , կարծես թէ , վախնալով որ  
դառնալու ատենս շատ չյողենիմ :

Երբէք պիտի շմոռնամ այն օրը , որ  
զթած հայրս տեսնելով իմ դառնալս ,  
որ իր անառակ որդին էի , զիս դրկեց ,  
իր արցունքովը թրջեց ու իր սրտին վրայ  
ճնշեց :

Ե . Ո՛հ , ինչչափ բարի է Աստուած :  
Երբոր անկեղծութեամբ ստրջացած ու  
խոնարհած սիրտ մը կը տեսնէ , կը մոռ-  
նայ իր դատաւոր բլալն ու մինակ իր  
հայր բլալը կը յիշէ :

Ո՛վ կոյս , որ մայր ես անոր , որն սր է  
Աստուած ողորմութեանց , դուն որ իմ  
դարձիս համար բարեխօսեցիր , ընդունէ  
ինձի շնորհք յարատելութեան :

Գիտես թէ իմ անցած կենացս մէջ  
ունեցած բարի բաղձանքներուս վրայ  
ինչչափ յողգողդ ու անհաստատ եղայ :  
Հիմակ սրբութեան աս նոր բաղձանքս ,  
զորն որ շնորհքն իմ սրտիս մէջ յառաջ  
կը բերէ , պահէ վրաս , զօրացուր ու քու  
պաշտպանութեամբդ կատարելագործէ :

Ստուգիւ քու ինձի ունեցած գթած  
սէրդ , իմ քեզի ունեցած վատահուլութե-

նէս նուազ չէ : Միթէ իմ թշնամիս զիս  
ի կորուստ մատնելու համար աւելն պիտի  
գործէ, քան որչափ դուն զիս վերկելու  
համար :

Զ. Ո՛վ, ամէն մայրերէ աւելի սիրելի  
ու գթած մայր, ընդունէ քու որդւոյդ՝  
անցած ատենուան համար սաստիկ ցաւ,  
ներկային համար ճիշդ հաւատարմու-  
թիւն ու ապագային համար անյող-  
դողդ հաստատութիւն, որպէս զի քու  
հօր պաշտպանութենէդ օգնութիւն  
գտնելով արքայութեան մէջ երգեմ Աս-  
տուծոյ ողորմութիւններն ու քու բա-  
րերարութիւններդ բոլոր յաւիտենակա-  
նութեան ատեն :

### Գ Լ Ո Ի Խ Ի Գ .

Աստուծոյ բարերարութեանց համար՝ ցոյցնելու  
շնորհակալութեան վրայ :

Ա. ԱՆՍԱՀՄԱՆ բարի Աստուած, որ  
ինձի այնչափ ժամանակաւոր ու հո-  
գեւոր շնորհքներ ըրիր՝ երկրիս վրայ ը-  
լալէս վեր, ասոնց շնորհակալութիւն  
ընելու համար կ'ընծայեմ քեզի ան ա-  
մէն շնորհակալութեան զգածմունքը,  
զորոնք ունեցաւ Մարիամ քու բարե-  
րարութեանցդ վրայ, իր բոլոր կենացը  
մէջ, բայց մանաւանդ երբոր Զաքա-  
րիային ու Եղիսաբէթին տունը մտաւ :

Եղիսաբէթ կու տար Մարիամայ՝ անոր

արդիւնաւորած գովութիւնները: Բայց Մարիամ կ'ուզէր որ մտցընել տայ Եղիսաբեթին զանիկա, որն որ պարզեւն ընդունած էր, ու մինակ պարզեւատուն յիշեցընէ:

Ար բաղձար, որ ամէն արարածք միաբան զքեզ օրհնեն, ով Աստուած իմ, քու անոր ըրած պարզեւացդ համար:

Մինակ անոր համար ինք զինք երջանիկ կը սեպէր, որ Հզօրը զիջած ու իր ազախնոյն խոնարհութեանը նայած է, իր մեծութեան ու ողորմութեան շատութիւնը ցուցընելու համար:

Բ. Ո՛հ, Տէր, քու սիրոյդ այնչափ նշաններն ընդունելէս ետեւ, ոչ միայն ասանկ զգածումներէ հեռու եմ, հապա նաեւ քեզի ապերախտ եմ:

Բարիքը քեզմէ կ'ընդունիմ ու մարդկան շնորհակալ կ'ըլլամ: Երբ որ իմ դիտաւորութիւններս գլուխ կ'ելլեն, յողորմութիւնն իմ ճարտարութեանս կուտամ:

Ի՞նչ եմ ես՝ ինծմէ, ի՞նչ բանի կարող եմ, մանաւանդ իմ փրկութեանս նկատմամբ: Այսու ամենայնիւ մտքէս չեմ անցընէր, փրկութեանս մեծ գործքը գլուխ տանելու համար քու ինծի ցուցըցած օգնութեանցդ շնորհակալ ըլլալու:

Գ. Թէ որ վրաս բան մը կայ, որ քու

աչքիդ առջեւ հաճելի ըլլայ, մինակ  
քեզմէ առած եմ ու առանց քեզի չեմ  
կրնար նոյնը պահել :

Ստոյգ է, ազատ կամօք քու շնորհացդ  
գործակից կ'ըլլամ, սակայն նոյն իսկ այն  
գործակցութիւնն ինծի ուրիշ պատճառ  
կու տայ շնորհակալութեան, ինչու որ  
բարին ուզելու ու ընելու ալ քու օգնա-  
կանութեամբդ է :

Ահհիս իմ խեղճութեանս ու տկարու-  
թեանս : Ի՞նչ կ'ըլլամ, թէ որ քու  
շնորհքդ զիս թողու, ինչչափ արտա-  
սուելի մոլութիւններու կը տանին զիս  
իմ չար յօժարութիւններս :

Գ. Մինակ ան ատեն ապահովու-  
թիւն կրնամ ունենալ, երբ որ իմ տկա-  
րութիւնս ճանչնամ ու միշտ երախ-  
տագէտ ըլլամ այն շնորհաց, որոնցմով  
քու ողորմութիւնդ իմ տկարութեանս  
նեցուկ կ'ըլլայ :

Աստուած իմ, մի թողուր, որ իմ  
անհաւատարմութեամբս զիս անարժան  
ընեմ քու բարերարութեանցդ ու իմ  
ապերախտութիւնս քու ինծի ըրած ե-  
րախտիքդ ինծի մոռցնել տայ :

Քու սիրտդ խիստ յօժար ու մէտ է  
արարածոց բարիք ընելու, սակայն ապե-  
րախտութիւնն ամէն պակտութիւննե-  
րէն աւելի քու ողորմութեանցդ ըն-  
թացքը կ'արդելէ :



Բիւր անգամ արժանի եղայ որ քու բարերարութիւնդ ալ շիգանեմ, բայց դուն ուզեցիր քու բարերարութեանդ զէնքովը սրտիս յաղթել:

Ե. Աստուած իմ, ասկէ ետքը չեմ ուզեր քեզի դէմ կենալ: Ասկէ ետեւ բոլորովին քուկդ պիտի ըլլամ: Ինչպէս որ մինակ քեզմով կ'ապրիմ, ասանկ ալ միշտ քեզի համար կ'ուզեմ ապրիլ:

Բայց որովհետեւ իմ կարօտութիւնս ու քու բարերարութիւններդ մշտնջենաւոր են, տուր ինձի քու շնորհքովդ, որ իմ բոլոր կենացս մէջ քու բարերարութիւններդ խնդրեմ ու անոնց համար քեզի շնորհակալ ըլլամ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Այցելութեան իմ դիմումներս շնորհ:

Ա. ՄԱՐԻԱՄԱՅ իր Եղիսաբեթ ազգականին քով ըրած այցելութեամբը տուած օրինակը կրնայ մեզի կանոն ըլլալ՝ քաղաքային կենաց ասանկ պարագային մէջ՝ մեր բռնելու վարմանց:

Խոնարհ Աղյսը՝ թէպէտ եւ Աստուծոյ մայրն էր, սակայն չսպասեց որ նախ Եղիսաբեթ իրեն դայ, որպէս զի իրենց պատուոյն նախանձախնդիր ու յառաջնութեան համար միշտ կուռի մէջ եզող այնչափ անձանց ընդունայն հոգն ամբշնչէ:

Բ. Բայց ի՞նչ բանի համար ըրաւ Մարիամ այս այցելութիւնը: Տարակոյս չկայ որ մինակ կրօնասիրութեան համար:

Աշխարհքիս մէջ եղած շատ այցելութեանց պատճառը, հետաքրքրութիւն, բնդունայնութիւն ու անձնասիրութիւն է: Ասանկ չէր, ամէն կոյսերէ հաւատարիմ Աուսին ըրած այցելութիւնը, որովհետեւ մինակ սուրբ պատճառաւ կ'ընէր:

Առաքինի մարդիկ նոյն իսկ այցելութիւննին առաքինի պատճառաւ կ'ընեն, թէպէտ աշխարհք զանիկայ իբրեւ վայելութեան պարտք մը կը սեպէ:

Բարեպաշտութիւն, ընկերասիրութիւն ու Աստուծոյ փառքը կ'առաջնորդէին Մարիամայ քայլերուն: Անանկ տուն մը գնաց, ուր Աստուած ծառայութիւն ու սէր կը գտնէր. գնաց ուրախակից ըլլալու իր ազգականին՝ Աստուծոյ անոր ըրած շնորհացը համար, ինչպէս որ հրեշտակէն իմացած էր:

Անոր այցելութեան գնաց, անոր օգտակար ըլլալու ու մէջերնին եղած սուրբ ազգականութեան կապն աւելի զօրացրնելու համար:

Գ. Բարեպաշտութիւնը քաղաքային կենցաղավարութեան պարտքը կատարելու հակառակ չիկենար, հապա անոր գործադրութիւնը քրիստոնէական դի-

տաւորութեանց ձեռքով սուրբ ընել  
կու տայ :

Արովհետեւ բարեպաշտութիւնը ամէն մէկ բոսի օգտի կ'ուզէ գործածել, ձեռքէն եկածին չափ, ամէն անօգուտ կենցաղավարութենէ ու պարզապէս զուարճութեան համար եղած այցելութենէ ետ կը կենայ :

Գ. Բարեպաշտ մարդիկ՝ մինակ այնպիսի այցելութեանց կը բաղձան, որոնց մէջ իրենք շինութիւն գտնեն եւ ուրիշներուն ալ շինութիւն տան :

Աւրիշ ամէն այցելութիւններ իրենց ախորժելի չեն ըլլար : Առաքինութիւնը միշտ կ'ուզէ առաքինութեան քով գտնուիլ : Մանաւանդ թէ ուրիշ ամէն այցելութիւնք զիրենք կը ձանձրացրնեն. ամէն էակ իր տարրէն դուրս եղած ատեն նեղութիւն կը կրէ :

Ե. Սուրբերը բոլորովին անտարբեր երեւցող գործքերն ալ, Աստուծոյ փառացը, ընկերաց շինութեան ու իրենց կատարելութեանը կը գործածեն :

Եթէ ամէն մարդիկ անոնց նմանէին ու նոյն հոգւով իրարու այցելութիւն ընէին, ինչչափ բարիք կը քաղէին այն քաղաքավարական կենսակցութենէն, որն որ ընկերական կենաց մէկ պարտքը եղած է :

Հոն բիւր անմեղ քաղցրութիւններ

կ'առնենային, զորոնք աշխարհային մարդիկ չեն դիտեր ու փոփոխակի իրար առաքինութեան կը յորդորէին :

Չէ թէ աշխարհային ձանձրանալի այցելութեանց պէս, պարապ ու դատարկ սրտիւ անկէ ետ կը դառնային, հապաանանկ սրտի խաղաղութեամբ, որն որ բարեպաշտ մարդկան բաժինն է :

Զ. Արդ, դուն, սլ քրիստոնեայ, Մարիամայ ասոր մէջ քեզի տուած օրինակն աչքիդ առջեւէն մի հեռացրներ : Անոր պէս՝ քու առանձնութենէդ խիտ քիչ անգամ ելիր ու մինակ ատուածասէր մարդիկներու հետ կենցաղավարէ :

Մարիամայ պէս ետեւէ եղիր մինակ զԱտուած փառաւորել տալու եւ ընկերին շինութիւն ըլլալու : Նայէ որ մարդիկներու հետ՝ հարկաւոր եղած կենցաղավարութիւնդ քու յաւիտենական օգտիւդ ընես :

#### Գ Լ Ո Ի Խ Ի Զ .

Ընկերական խօսակցութեանց վրայ :

Ա. ՄՏԲՈՎՍ Եղիսաբեթին քով կ'երթամ, Մարիամայ՝ անոր այցելութեան դացած ատեն : Ի՞նչչափ համեստութեան, խոնարհութեան, զգուշութեան ու ընկերսիրութեան խրատներ կ'առնեմ հոն :

Եղիսաբեթ զՄարիամ Աստուծոյ մայր ճանչցաւ, անոր անհամար գովութիւն ու օրհնութիւն տուաւ, անոր մեծութիւնները բարձրացուց ու առանձնաշնորհութիւնները երանեց :

Մարիամ իր պատուովը չշլանալէն զատ, իրեն տրուած բոլոր գովութիւնները Աստուծոյ տուաւ եւ նոյն պատեհ գէպքն առիթ առնելով զԱստուած փառաւորեց :

Բ. Չուրացաւ, ինչ որ Հղօրն իրեն բրած էր, բայց անոր փառքն Աստուծոյ տուաւ, եւ թէպէտ Աստուծոյ մայրն եղած էր, սակայն չմոռցաւ իր աղակին ըլլալը :

Իր խոնարհութիւնն անկեղծ էր ու չունէր այն սուտ համեատութիւնը, որուն տակ խիստ շատ անգամ ծածուկ հպարտութիւն կը տեսնուի :

Ո՛րչափներ, անոր համար մինակ գովութիւնները կը մերժեն, որպէս զի վրանին աւելի մեծ գովութիւններ բերեն ու անանկով ճարտար անձնասիրութեամբ մը, նոյն իսկ համեատութիւնը անապարծութեան կը ծառայեցընեն :

Գ. Մարիամ ու Եղիսաբեթ Աստուծոյ ու անոր մեծութեանց ու ողորմութեանց վրայ կը խօսակցէին : Անոր սիրովը լեցուած ըլլալով, անոր իմաստութեան, կարողութեան ու բարերարու-

Թեան սքանչելիքը պատմեն իրենց զուարճութիւն կը սեպէին :

Երբ որ զմեզ ուրախացրնող բաները մինակ Աստուծոյ պարգեւները կ'ըլլան, մեր շնորհակալութեան ու գովութեան նիւթը մինակ Աստուած կ'ըլլայ :

Բերանը սրտին աւելցուքէն կը խօսի<sup>1</sup> : Գուն մինակ աշխարհքին ու անոր նանրութեանց վրայ կը խօսիս . յայտնի նշան է որ մինակ զաշխարհք կը սիրես ու սիրող անոր սուտ գեղեցկութենէն բռնուած է :

Անոնք աշխարհքէն են, կ'ըսէ Յիսուսին սիրելի աշակերտը, անոր համար աշխարհքին վրայ կը խօսին եւ աշխարհք անոնց կը լսէ<sup>2</sup> : Թէ որ Աստուծակ ըլլային, Աստուծոյ վրայ կը խօսէին կամ գէթ չէին խօսեր անանկ բան, որն որ ըստ Աստուծոյ չէ :

Միտքդ բեր, որ Աստուծոյ դատաստանին օրն ամէն պարապ խօսքի՝ համար պիտի տաս : Ի՞նչ աղէկ պատճառ է ասիկա քեզի՝ վախի մէջ ըլլալու :

Դ. Աոյն իսկ անանկ անձանց մէջ, որոնք բարեպաշտ կենաց ետեւէ եղած են, սրչափ քիչ խօսակցութիւններ կ'ըլլան, որոնց մէջ Աստուծոյ տալու համարը չշատնայ :

<sup>1</sup> Մատթ. ԺԲ. 34 :

<sup>2</sup> Ա. Յովհ. Դ. 5 :



Ի՞նչ բանի վրայ աւելի կը խօսուի ընտանեկան կենսակցութեանց մէջ: Ընդունայնութեանց, քաղաքային շիտթութեանց ու շնչին բաներու վրայ: Մանաւանդ թէ ասոնք ամէն խօսակցութիւններէ անմեղ կը համարուին:

Գարձեալ կը կարծուի՝ որ առանց ընկերին պակասութեանց վրայ խօսելու կենսակցութիւն չըլլար: Չանձրանալի կ'ըլլայ խօսակցութիւնը, երբ որ մէջը քրննագատութիւն ու նաեւ բամբասանք չիմաններ:

Ե. Վ՝ այ՛ ձեզի, բամբասողք, որ միշտ օձի պէս լեզունիդ կը սրէք ու զուարճութիւն կը համարիք ներկայ շեղողներուն պատիւը կոտրել:

Նոյնպէս վայ անոնց, որոնք նոյնպիսի խօսքեր ախորժելով կը լսեն: Ո՛վ որ ազատ կամօք բամբասանքի ականջ կը դնէ, անոր մասնակից կ'ըլլայ:

Խիղճ բրէ մէկու մը վրայ չարիք խօսելու: Երբ որ չես կրնար արդելել, որ ուրիշները բամբասանք չընեն, գէթ քու լուծութեամբդ ցուցուր որ անոնց բամբասանաց հաղորդ չես:

Զ. Խորշէ ու գարշէ համեստութեան գէմ եղող ամէն խօսքերէ: Զգուշացիր ժպտելէն անանկ խօսքերու վրայ, զորոնք աշխարհք կատակ կ'անուանէ, բայց շատ անգամ մոլութեանց խօսքեր կ'ըլլան:

Քեզի պատիւ սեպէ, երբ որ քու առջեւդ կրօնի ու բարեպաշտութեան դէմ բան խօսելու չեն համարձակիր: Ամբարիշտը սուրբ համարձակութեամբ մը յանդիմանէ: Բայց երբոր անոր բերանն ամբարշտութենէ չես կրնար արդէլէլ, գէթ արտաքուստ յայտնի նշանով մը ցուցուր քու տօգոհութիւնդ:

Է. Բան մը պատմած ատենդ ճշմարտախօս եղիր, խօսելու ատենդ պարկեշտ ու զգոյշ, բայց ամենուն հետ քաղցր եղիր ու անմեղ զուարճութեանց ընկերացիր. առաքինութիւնը քեզի նոյնը կը ներէ, մանաւանդ թէ երբեմն նաեւ կը հրամայէ:

Ո՛րչափ որ լեզուովդ մեղանշելու վրտանդի մէջ ես, նոյնչափ անոր պակասութիւններէն պէտք ես զգուշանալ:

Երբ որ քու տանդ մէջ մինակուկ Աստուծոյ հետ խօսելու վարժած ես, ան ատեն մարդիկներու մէջ երեւնալու հարկ որ ըլլայ, անոնց հետ խօսակցելու ատենդ քիչ վտանգ կ'ունենաս:

Ը. Ընկերութեան մը մէջ չզայցած, Աստուծոյ խնդրէ որ բերանդ պահապան դնէ<sup>1</sup>, ու խօսակցութեանդ ատեն միտքդ բեր, որ Աստուած ներկայ է ու խօսածդ կը լսէ: Երբեմն երբեմն ալ ի ներքուստ սրտիդ իղձերովն անոր հետ խօսէ:

<sup>1</sup> Սաղմ. ճԽ. 3:

Կենսակցութիւնդ լմբննալէն ետեւ ,  
դուն քեզմէ համար ուղէ անոր մէջ խօ-  
սած նիւթերուդ վրայ . թէ որ՝ ինչպէս  
պէտք է նէ՝ անանկ վարուած կը տես-  
նես ինք զինքդ , Աստուծոյ շնորհակալ  
եղիւր , իսկ եթէ յանցանք մ'ըրած կը  
գտնուիս ուղղէ :

Այս կերպով կը ստանաս այն ընտրու-  
ղութիւնն ու իմաստուն զգուշութիւնը ,  
որուն համար հոգեւոր կենաց վարպետ-  
ները խրատ կու տան եւ նոյնն իրաւամբ  
կատարելութեան բարձր մէկ աստիճանը  
կը սեպեն :

### Գ Լ Ո Ւ Խ Ի Է .

Ճշմարիտ Բարեխոսութեան վրայ :

Ծառան : Ա . ՍՈՒՐԲ ԳԻՐՔՐԸ կ'ըսէ , թէ  
Հաւատարիմ բարեկամը մեծ գանձ է  
ու Աստուծմէ վախցողները զանիկա կը  
գտնեն <sup>1</sup> :

Ո՛վ Մարիամ , այս պատուական գանձը  
Աստուած քեզի գանել տուաւ զեղի-  
սաբէթ քեզի բարեկամ տալով , նոյն-  
պէս Եղիսաբէթին ալ գտնել տուաւ ,  
զքեզ անոր բարեկամ տալով :

Գուք երկուքնիդ մեզի օրինակ կու  
տաք կատարեալ բարեկամութեան մը ,  
որն որ սուրբ ու մաքուր է ան ամէն բա-

<sup>1</sup> Սիր . 2 . 14 , 16 :

ներէ, որոնք սովորաբար մարդկային բարեկամութիւնները կ'ապականեն ու կը խանգարեն :

Աստուածային զգածմանց երջանիկ միաբանութիւն մը զձեզ իրարու հետ կը կապէր : Գուն Եղիսաբեթին վրայ շնորհքն ու առաքինութիւնը կը յարգէիր, Եղիսաբեթ ալ նոյնպէս քու վրագ նոյնները կը յարգէր :

Ստէպ իրարու հետ կը խօսակցէիք : Ձեր սրտին գաղանիքն իրարու կը յայտնէիք : Իրարու խորհուրդ կու տայիք : Իրարու ծառայութիւն ընելու մէջ կը մրցէիք : Բայց ձեր իրարու ցուցրցած բոլոր բարեկամութեան նշանները մինակ մէկ շահ մը կը դիտէին, այսինքն Աստուծոյ փառաց շահը :

Բ. Եղիսաբեթ հարկաւ կ'իմանար թէ իր սիրտը քու սրտիդ հետ միանալէն ետեւ, առջինէն շատ աւելի աստուածային սիրով լեցուեցաւ :

Գուն ալ, ո՞վ սուրբ Աոյս, սրբութեան մէջ այնչափ զարգացում կ'ընէիր քու ազգականիդ տունը, սրչափ որ կ'ընէիր թէ որ Նազարեթ քու առանձնութեանդ մէջ մնացած ըլլայիր :

Ձեր մէկտեղ գալուն վրայ գոհ եւ ուրախ ըլլալով, իրարմէ բաժնուեցաք, իրար սիրելէն առանց դադրելու : Երկու սիրտ իրարու հետ կապող առաքինու-

Թիւնը չի կրնար յողդողդ ու անհաստատ  
ըլլալ:

Մարտի 1: Գ. Որդեակ, ինք զինքդ մի  
խաբեր որ բարեկամութեան անմեղ  
քաղցրութեան ճաշակը կ'առնուս, երբ  
որ նոյնը առաքինի բարեկամութեան մէջ  
չես փնտուեր:

Մարդիկ միշտ կը խաբուին ու կը մո-  
լորին իրենց բարեկամ ընտրելու մէջ:  
Մարդ ինք զինք՝ անոնց մինակ պէտք է  
հաւտալ, որոնց հաւատարմութիւնը  
յայտնի է ու որոնց կրօնասիրութեան  
վրայ կրնայ վստահ ըլլուիլ:

Հաստ կը գտնես այն հասարակ ու սո-  
վորական բարեկամներէն, որոնք արտա-  
քին միաւորութեան մը նշաններ կու  
տան քեզի, բայց ասոնցմէ աւելի բան  
մը մի յուսար անոնցմէ:

Քեզի բարեկամ կ'ըլլան, երբ որ քու  
յաջողութենէդ օգուտ մը կրնան վաս-  
տրկիլ: Բայց երբ որ յաջողութիւնդ կը  
կորսնցընես, ալ քու բարեկամներդ չեն:

Հոգ կը տանին զքեզ այն պակասու-  
թիւններէն ուղղելու, որոնց նախա-  
տինքն իրենց վրայ ալ կ'իյնայ: Բայց ա-  
նանկ պակասութեանց մէջ, որոնք թէ-  
պէտ եւ քրիստոնէական վարդապետու-  
թեան դէմ են, բայց աշխարհք անոնց  
կը հաւնի, նոյն իսկ իրենք առաջին կ'ըլ-  
լան զքեզ մոլորցընելու:

Գ. Ղշմարիտ բարեկամը հարկաւորութեան մէջ օգնութեան կը հասնի, վշտաց մէջ կը մխիթարէ, երկբայութեան մէջ կը լուսաւորէ, գործոց մէջ կ'առաջնորդէ, մոլորութենէ կը կանգնէ եւ ամէն բանէ աւելի իր խօսքերովն ու օրինակներովը յորդոր կ'ըլլայ պատահանութիւնները կատարելու :

Բայց քիչ անգամ մարդ ասանկ բարեկամ կրնայ գտնել, վասն զի քիչ անգամ կը պատահի որ մարդ բարեկամ մը ընտրած ատեն առաքինութեան խորհուրդ հարցնէ :

Գուն սիրէ առաքինութիւնը ու անիկա քեզի անանկ բարեկամ մը գտնել կու տայ, որ քեզի արժանի ու իբրեւ քու երկրորդը ըլլայ :

Հատ բարեկամութիւնք ի սկզբան անկեղծ կ'երեւան, բայց քիչ մը ետքը կը վերջանան, անոնց միաբանութեան կապը մինակ մոլութիւն ըլլալուն համար :

Ե. Արցածիդ չափ ջանա՛ որ քու բարեկամութիւնդ՝ փոփոխակի շինութիւն ըլլայ, անանկ որ դուն քու բարեկամացդ բարի օրինակ տաս ու անոնցմէ բարի օրինակ առնես :

Բարեկամացդ ան ամէն հաճոյքը կատարէ, զորոնք խիղճդ թոյլ կու տայ, բայց անկէ անդին մի՛ անցնիր :

Գուն ալ անոնցմէ արդար ու պատշաճ



չեղալ բան մի պահանջեր ու ամէն բանէ  
աւելի նայէ՝ որ անոնցմէ շողոքորթու-  
թիւն գտնելու մտօք զանոնք շողո-  
քորթես :

Գ. Լ Ո Ւ Խ Ի Ը .

Աստուծոյ վտար ըլլալու է զինք անոր նու-  
իտինամանիտան յանցնելու վրայ :

Ա. ԱՍՏՈՒԾՈՅ վրայ վստահ ըլ-  
լալն՝ ամէն յարգութիւններէն մեծ է,  
զորոնք մենք կրնանք անոր կատարելու-  
թեանցը տալ : Ո՛րչափ որ մեր վստա-  
հութիւնը կատարեալ կ'ըլլայ, նոյնչափ  
անոր պատիւ կ'ըլլայ :

Այս վստահութեամբ կը ճանչնանք  
զանիկա իբրեւ ծայրագոյն էակ մը, որն  
որ իր ուզածն ընելու կարողութիւն ունի  
ու որուն բարի կամքն ալ կարողութեանը  
հաւասար է :

Այս վստահութիւնն ազէկ միջոց է՝  
Աստուծմէ շատ սքանչելի շնորհքներ ու  
պարգեւներ ընդունելու :

Բ. Մարիամ այս առաքինութեան  
զանազան օրինակներ տուաւ մեզի : Ամե-  
նէն գլխաւորներէն մէկն է այն օրինակը,  
զորն սր տուաւ, երբ իր համբաւին հօգը  
Աստուծոյ ձգեց :

Իրեն կուսութեանը պահապան ըլլա-  
լու համար արուած փեսան, վրան ա-  
նանկ կասկած ունեցաւ, որն որ իր պա-

տուոյն մնասակար էր ու կը մտածէր  
զինքը լուելեայն արձակել:

Մարիամ ասոր վրայ չայլայլեցաւ:  
Վստահութիւնն Աստուծոյ վրայ գնե-  
լով, հպատակութեամբ՝ անոր նախա-  
խնամութեան սահմանած ժամանակին  
սպասեց:

Եկաւ հասաւ ժամանակը: Յովսէփ  
երկինքէն յայտնութիւն ընդունեցաւ,  
կասկածը փարատեցաւ, ալ երկբայու-  
թեան մէջ չմնաց, հապա մեծ համա-  
րում ստանալով իր հարսին առաքի-  
նութեանը վրայ, աւելի եւս անքակ կեր-  
պով անոր յարեցաւ:

Ասկից կրնայ իմացուիլ, թէ որչափ  
աղէկ է Աստուծոյ վստահ ըլլալ ու մեր  
ամէն հոգն անոր յանձնել:

Աստուծոյ վրայ վստահութիւն ունե-  
ցողին խոստացուած է ամէն բան, եր-  
կնից ցօղ, երկրի պարարտութիւն եւ  
ժամանակաւոր ու յաւիտենական բարիք:

Գ. Ո՛վ որ մտեղէն բազկի վրայ կ'ա-  
պաստանի, անապատին մէջ աճող մու-  
շավայրիին կը նմանի<sup>1</sup>: Ար չորնայ ու կ'ա-  
պականի:

Բայց, ո՛վ որ իր վստահութիւնն Աս-  
տուծոյ վրայ կը գնէ, ու զանիկա իր նե-  
ցուկը կ'ընէ, կը նմանի այն պտղաբեր  
ծառերուն, որոնք ջրերու ամուկքը կ'ա-

<sup>1</sup> Երեմ. Ժ. 5—6:

ճին: Իրենց տերեւները խորշակէն պատրաստարուած ըլլալով, իրենց դալարութիւնը կը պահեն ու անդադար պտուղ կու տան:

Ամէն բան զմեզ կը յորդորէ Աստուծոյ վրայ վստահ ըլլալու. Աստուծոյ բարերարութիւնը, կարողութիւնը, խոստմունքը, հաւատարմութիւնը, մեր հարկաւորութիւնները ճանչնալը, մեր տկարութիւնն ու ամէն օր փորձով տեսնուած մարդկան անկարողութիւնն ու նաեւ նենգութիւնը:

Գ. Արդ վստահութեամբ դիմէ անոր նախախնամութեանը՝ քու ամէն տեսակ վշտացդ մէջ: Ար տրտնջես, որ քու տառապանացդ մէջ Աստուած քեզի օգնութեան չիհասնիր, բայց Աստուած նոյն օգնութիւնը քեզի ընելու համար կը սպասէ որ քու վստահութիւնդ զքեզ իր ոտքը բերէ՝ զանիկայ իրմէ խնդրելու:

Աստուած գիտէ քու խեղճ վիճակդ, բայց երբ որ քու վստահութիւնդ նոյնն Աստուծոյ առջեւ չիդներ, Աստուած քեզի հետ անանկ կը վարուի՝ իբրեւ թէ քու նոյն վիճակդ չգիտնար:

Հոգերու ու վհատութեան մէջ կը մտնես, իբրեւ թէ Իսրայելի մէջ Աստուած չլլայ<sup>1</sup>:

Ե. Շատ անգամ մարդիկ կ'այլայլին

<sup>1</sup> Գ. Թագ. Ա. 16:

ու կը խառնվին, ուր որ մինքն կ'վատահու-  
թեան մէկներգործութիւն մը կրնար հո-  
գւոյն խաղաղութիւն ու հանգիստ բերել:

Քու վտանգներուդ, տարակուսանացդ  
ու արտմութեանդ մէջ զգուշութիւն-  
ներ բանեցուր, միջոց փնտռէ ու խոր-  
հուրդ հարցուր, բայց ամէն բանէ յա-  
ռաջ Աստուած ըլլայ քու ապաւէնդ:

Մարդիկ մինակ այնչափ կարողու-  
թիւն, լուսաւորութիւն ու կամք ունին  
քեզի օգնելու, որչափ որ Աստուած ա-  
նոնց կու տայ:

2. Մեր Աստուծոյ վրայ ունեցած  
վատահութիւնն որչափ շատ ալ ըլլայ,  
չափէն աւելի չիկրնար ըլլալ, բաւական  
որ յանդուգն չըլլայ:

Մարդ որչափ որ տկար է ինք իրմէ,  
այնչափ Աստուծով կը զօրանայ, երբ  
որ յոյսն անոր վրայ կը դնէ:

Քու վրադ հասած արկածները, թէ-  
պէտ քու առողջութիւնդ քեզմէ վեր-  
ցուցած ըլլան, բայց չեն նուազցուցած  
անոր զօրութիւնը, որն որ մինակ կարող  
է նոյնը նորէն քեզի տալ:

Մահը՝ թէպէտ քեզմէ անանկ մարդ  
մ'առած ըլլայ, որն որ քու օգնա-  
կանդ էր, բայց դուն չես կորսնցուցած  
զանիկակ, որն որ նոյն մարդուն քեզի հա-  
մար ըրած գործքերուն կ'առաջնորդէր:

Թէ որ աղէկ միտ գնենք, կը տեսնենք

որ Աստուծոյ զնութիւնը մեզմէ մինակ  
ան ասնն կը պակսի, երբ որ մեր անվըս-  
տահութեամբը զմեզ անոր անարժան  
կ'ընենք :

Գ Լ Ո Ի Խ ԻԹ .

Հնազանդութեան Լրաց :

Ա . ՄԱՐԻԱՄ ու Յովսէփ Գաւթի  
ցեղէն ըլլալուն համար Նազարեթէն  
Բեթղեհէմ դացին, այն աշխարհագրին  
մէջ մտնելու համար, զորն որ Աւգոստոս  
հրամայած էր որ ըլլայ իր բոլոր պետու-  
թեան մէջ, որպէս զի իր իշխանութեանն  
ընդարձակութիւնն իմանայ :

Չքննեցին ամենեւին որ իշխանն իր  
անձնական շահուն ու սնապարծութեան  
համար տուած է նոյն հրամանը, հապա  
երբոր հրամանը տրուեցաւ ու իրենք ի-  
մացան, շուտ մը հնազանդեցան :

Աւգոստոս թէ որ զՄարիամ ճանչ-  
նար, կ'ըսէր իրեն թէ Նոյն օրէնքը քեզի  
համար չէ տրուած<sup>1</sup>, ինչպէս Արտաշէս  
Եսթերին ըսաւ : Բայց որովհետեւ օ-  
րէնքն, ինչպէս ուրիշներուն, անանկ ալ  
անոր կը տարածուէր, անոր համար ու-  
րիշներուն պէս, մանաւանդ թէ ուրիշ-  
ներէն շատ աւելի աղէկ կերպով հնա-  
զանդեցաւ, ինչու որ խոնարհութեամբ,

<sup>1</sup> Եսթ. ժե. 13 :

համբերութեամբ ու առանց տրանջման նոյնը կատարեց,

Մարիամ՝ իշխանին հրամանն իբրև Աստուծոյ կամբը նկատեց: Աստուածային նախախնամութեան տրամադրութիւնը սեպեց նոյն հրամանն ու կուրաբար հնազանդեցաւ:

Բ. Հնազանդութիւնը պատճառ չի փնտուեր, հապա միամտութեամբ կը վարուի: Ամէն բանէ աւելի հնազանդութեան ոգւոյն դէմ է մարմնոյ խոհեմութիւնը, որն որ ամէն բան տեսնել ու քննել կ'ուզէ:

Ստորակարգութիւնն ինչ կը դառնար, թէ որ հրամայելու իշխանութիւն ունեցողներուն հրամանները, անոնց դատաստանին տակ իյնար, որոնց որ հնազանդիլ կ'իյնայ:

Գ. Թէ որ ժամանակաւոր տէրը, որ քեզի կը հրամայէ, արժանի չէ որ դուն անոր հնազանդիս, սակայն արժանի է այն ծայրագոյն Տէրը, որուն ներկայացուցիչն է անիկա:

Ստոյգ է քեզի հրամայողը կրնայ մտրիլ, բայց երբ որ աստուածային օրինաց դէմ բան մը չի հրամայեր, քու՝ Աստուծոյ համար՝ անոր ըրած հնազանդութիւնդ չի կրնար մտրութեան ենթակայ ըլլալ, ու միշտ մեծ արդիւնք կ'ունենայ Աստուծոյ առջեւ:



Գ. Սրբոց հարց վարդապետութիւն է, որ աւելի աղէկ է փոքր գործք գործել հնազանդութեամբ, քան թէ մեծամեծ բաներ ընել անձնական կամօք:

Աշխարհային իմաստութիւնը հնազանդ սրտից խոնարհ միամտութեան վրայ կը ծիծաղի, վասն զի աստուածային բաներն իրեն ոչինչ կ'երեւան<sup>1</sup>:

Բայց ինչ հոգ մարդկային դատաստաններէն անոնց, որոնք որ իրենց դատաստանաց կանոն եւ ուղղիչ առած են աւետարանը:

Ե. Ամէն հնազանդութիւն արդիւնաւոր չէ: Այն հնազանդութիւնը, զորն որ՝ քեզի հրամայողին բարի յատկութեանցը համար կ'ընես, զուտ բնական հնազանդութիւն է, որուն համար մինակ մարդիկներէն կրնաս վարձք յուսալ:

Հատ անգամ մեր նոյն իսկ Աստուծոյ համար բրած հնազանդութեան մէջ պակասութիւններ կը խոթենք, որոնցմով անոր յարգին ու արդեանց մէկ մասը կը կորսնցընենք:

Ո՛վ որ մինակ իր յօժարութեանց համեմատ եղող բաներու մէջ շուտով եւ ուրախութեամբ կը հնազանդի, աւելի իր կամքը, քան թէ ուրիշին կամքը կը կատարէ: Ասիկա չէ թէ հնազանդիլ է, հապա ուզածը կատարել:

<sup>1</sup> Ա. Կոր. Բ. 14:

Ճշմարտապէս հնազանդ մարդը, հրամայուած բանը կատարելու չիյապաղեր, եւ ոչ ալ իրեն հրամայողներուն իշխանութեան դէմ արտունջ կ'ընէ:

Զ. Սուրբ Գիւրքը մեզի կը սովբեցընէ, որ ամենայն յարգութեամբ մեր տերանց հնազանդ ըլլանք, չէ թէ մինակ բարբար ու հեզ եղողներուն, հապա նաեւ տմարդիներուն<sup>1</sup>:

Մեզի դիւրին ու թեթեւ կու գայ հնազանդութիւնը, թէ որ այնչափ չըմտածենք այն մարդը, որուն կը հնազանդինք, որչափ զԱստուած, որուն համար մարդուն կը հնազանդինք:

Ինչպէս Հողին սուրբ կը վկայէ, Հնազանդ մարդուն յաղթութիւնը ստոյգ է<sup>2</sup>:


Անձնական կամքը սկիզբ է մտորութեանց: Իսկ հնազանդութիւնը սուրբ կ'ընէ նոյն կամքը ու զմեզ շատ ձախորդութենէ ու ետքը զղջալէն կը պահէ ու Աստուծոյ հաճութեան արժանի կ'ընէ:

<sup>1</sup> Ա. Պետր. Բ. 18:

<sup>2</sup> Առակ. ԻԱ. 28:

# Գ Ի Բ Ք Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ՈՐՈՒՆ ՄԻՋ ԿԸ ՆԿԱՏՈՒՒ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍՈՒՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՈՐԴԻՈՅՆ ԲԵԹՂԷՀԵՄԻ ՄԷՋ ԾՆԱՆԵԼԷՆ ՍԿՍԱԾ ՄԻՆՁԵՒ ԱՆ ԱՏԵՆԸ, ԵՐԲ ՈՐ ԱՆՈՐ ԳՈՂԳՈԹԱ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ ՄԱՐԴԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՌՆԻԼԸ ՏԵՍԱՒ:



## Գ Լ Ո Ւ Խ Ա .

Աղգարաց երկամիսեան շրջան:

Ծարան: Ա. ՅՕԺԱՐ մաօք եւ ուրախութեամբ կը նկատեմ, սուրբ կոյս, անխաղաղութիւնը, որով լեցուած էր քու սիրտդ Բեթղէհեմի դամբն մէջ, ուր զՅիսուս աշխարհք բերիր:

Ան արհամարհական մերժումները, զորոնք Բեթղէհեմ իջեւան փնտռած ատենդ գտար, նոյն խաղաղութիւնդ ամենեւին չվրդովեցին:

Բ. Արեշտակաց թագուհին ուրախութեամբ ինք զինք աղքատ հովիւներու մէջ կը տեսնէ: Տարւոյն եղանակներուն Տիրոջ մայրը սիրով կը տեսնէ ինք զինք՝ ախտի մը մէջ խիստ ու դժբնդակ եղանակի մը տառապանաց տակ ինկած:

Գուն, Մարիամ, բիւր անդամ աւելի  
դո՛հ էիր, աս ախոռին մէջ՝ քու տառա-  
պանաց վիճակէդ, որուն մէջ զքեզ թու-  
ղուցած էին, քան թէ Բէթղէհէմի մե-  
ծատուններն՝ իրենց առատութեան ու  
յղփութեան վիճակէն, որուն մէջ կ'ա-  
պրէին:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, ասկից սովրէ  
որ ինչչափ անարդ պիտի համարիս եր-  
կրաւոր բարիքները, եւ եթէ զուրկ ես  
անոնցմէ, սովրէ քու վիճակդ մեծ ու  
պատուական համարիլ:

Եւ իրաւցրնէ կրնան մի արդեօք աղ-  
քատներն իրենք զիրենք թշուառ կար-  
ծել, երբ որ մտածեն թէ Յիսուս ուզեց  
որ իր մայրն աղքատ ըլլայ, եւ թէ նոյն  
իսկ իրեն ծնած ատենը, որրոցն աղքատ  
ու ողորմելի մտւր մըն էր. տեղ մը չու-  
նէր որ զլուխը դնէ՝ ու մեռած ատենը  
խաչն իր անկողինն եղաւ:

Իր առաքեալները հարուստներու եւ  
գիտուններու մէջէն չընտրեց, հապա  
տգէտներու եւ աղքատներու մէջէն:

Աւետարանն՝ աւելի աղքատներուն  
քարոզելու համար եկաւ, ու այնչափ  
սիրեց զանոնք, մինչեւ ըսաւ, թէ ինչ  
որ անոնց կ'ըլլայ, իբրեւ իրեն եղած կը  
համարի<sup>2</sup>:

<sup>1</sup> Ղուկ. Թ. 58:

<sup>2</sup> Մատթ. ԻԵ. 40:

Գ. Մեծատունք՝ աղքատները կ'անարգեն: Բայց նոյն Ատուած որ ըսաւ թէ Վայ ձեզ մեծատանց<sup>1</sup>, աղքատները իր ընթրիքը կանչեց<sup>2</sup>:

Երանի անոնց, կ'ըսէ Յիսուս, որ հոգւով աղքատ են, վասն զի երկնից արքայութիւնն անոնց է<sup>3</sup>: Աս խօսքերը թէ ան աղքատներուն վայ կը ձգուին, որոնք իրենց աղքատութիւնը կը սիրեն, եւ թէ ան մեծատուններուն, որոնք սրտերնին իրենց հարստութեանցը չեն կապած:

Անանկ է նէ աղքատներն իրենց վիճակն՝ աշխարհքիս առջեւ անարգ ու ընկեցիկ ըլլալէն պէտք չեն շտփել, հասկա պէտք են մտածել թէ ինչչափ մեծ ու փառաւոր երեւցուցած է զանիկա աւետարանը:

Եւ ոչ մէկ աղքատ մը, բաւական որ հաւատք ունենայ ու անոր խորհրդոյն անսայ, կ'ուզէ իր վիճակն աշխարհքիս հարուստներուն ու երջանիկներուն վիճակին հետ փոխել:

Ե. Որդեակ, առատութեան մէջ մարդ երկրիս կը կապուի, երկինքը կը մոռնայ, փորձութիւնները կը սաստկանան ու անկումները կը յաճախին:

<sup>1</sup> Ղուկ. Զ. 24:

<sup>2</sup> Ղուկ. ԺԳ. 21:

<sup>3</sup> Մատթ. Ե. 3:

Հարստութեանց ցանկալն ուրիշ բան  
չէ, բայց եթէ փրկութեան վնասակար  
եղող բաներու ցանկալ :

Պարսպ տեղ մարդիկ կենդանութեան  
ժամանակ մեծ ինչք կը ժողվեն, մա-  
հուան ատեն հետերնին պիտի շտանին :

Մահուան ատեն մինակ առաքինու-  
թիւնն է, որ կը մնայ. արդ՝ չքաւորու-  
թեան վիճակը շատ առիթ կու տայ ա-  
ռաքինութեան գործքեր ընելու :

Աւետարանին մէջ օրինակ բերուած<sup>1</sup>  
հարուստը դժոխքի մէջ թաղուեցաւ,  
ուր որ Ղազար, զորն որ ինք անդոսնած  
ու արհամարհած էր, մահուրնէն ետեւ  
հրեշտակներու ձեռքով Աբրահամու  
գողը տարուեցաւ :

Ծառան : Զ. Այն սուրբ, կը սովորեցը-  
նես ինծի թէ աղքատութիւնը հարբու-  
տութիւններէ պատուական է : Տուր,  
որ ասկէ ետեւ իմ բաղձանքներս եր-  
կնաւոր բարիքներու վրայ դնեմ ու եր-  
կրաւորները սուրբ արհամարհանօք մը  
անարգեմ :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Կոճաւոր աղգարանիւն վրայ :

Ծառան : Ա. Ինչե՛՛ր հարկադրեցար  
կրել քու աղքատութեանդ մէջ, սով  
կոյս, Մայր Աստուծոյ, բայց երբէք արը-

<sup>1</sup> Ղուկ. ժԶ. 22 :



տունջ մը չըրիր: Մարդիկ ալ ամենեւին մտքերնէն չանցուցին քու աղքատութեանդ օգնութիւն մ'ընելու:

Բայց ինչպէս դուն Յիսուսին առջեւը չդրիր քու վիճակիդ խստութիւնը: Աստուծոյ մայր ըլլալով, քու մինակ մէկ խօսքդ ալ բաւական էր, ու որդիդ քեզի բան մը չէր զլանար:

Հրեշտակները շուտ մը քեզի ծառայելու կու գային, ու իրենց պատիւ կը համարէին քեզի պէտք եղած օգնութիւնները մատուցանել:

Մարիամ: Բ. Ո՛րդեակ, բաւական հարուստ է մէկը, երբ որ զՅիսուս ունի: Անձ մը, որուն միակ բարիքն Աստուած է, աշխարհքիս բարիքներուն անտարբեր աչքով կը նայի ու յօժարութեամբ յանձն կ'առնէ աղքատ ըլլալ:

Կը տեսնէի զՅիսուս երկնից թագաւորն ու աշխարհքիս տէրը՝ հարստութենէն աղքատացած, որպէս զի աղքատութեամբը զմարդիկ հարստացընէ<sup>1</sup>:

Երանի կամաւոր աղքատաց, որոնք աս աստուածային օրինակին նմանելով, իրենցմէ կը մերկանան աշխարհքիս բարիքները, որպէս զի մտքերնին մինակ անոր սիրոյն ու երկնաւոր բարեաց հարրատութիւններն ստանալու ետեւէ ըլլայ:

<sup>1</sup> Բ. կոր. Ը. 9:

Երանի անոնց, թէ որ Յիսուսի նմաներով, աղքատութեան դժուարութեանցը կամաւ կը համբերեն, ու թէ որ սրտերնին նաեւ անանկ իրերէն՝ որոնց կիրառութիւնն իրենց ներուած է բոլորովին կը բաժնեն :

Գ. Բայց աս կատարելութեան վիճակն յանձն առնողներէն շատերը, իրենց վիճակին պահանջած կատարելութենէն շատ հեռու են :

Սրտերնին շատ անգամ ձեռք բերել կրցած պզտիկ բաներուն վրայ անանկ յարած է, ինչպէս մեծերուն վրայ կը յարէր թէ որ ունենային :

Արնայ մի մէկն ըսել թէ Յիսուսի համար աղքատացած բլլայ, երբ որ ուզէ առանց հարստութեանց հոգն ու աղմուկն ունենալու, անոնց հանգստութիւնը վայելել :

Գ. Արոնք որ կամաւ ու յօժարութեամբ Յիսուսի սիրոյն համար աղքատացան, անոր Բեթղէհէմ ծնած՝ Նազարեթ ապրած ու Գողգոթա լերան վրայ մեռած ատենը տուած օրինակին նմանեցան :

Աս օրինակին պէտք է որ իրենք զիրենք ջանան նմանցընել ամէն քրիստոնեայք, հոգինին ու սրտերնին իրենց բոլոր հարստութիւններէն բաժնելով :

Հոգին սուրբ ամէն մարդու չ'ըսեր թէ

Հրաժարէ թու հարստութիւններէդ :  
Աս կատարելութեան աստիճանն ամենէն  
չկապահանջեր, բայց ամենուն կ'ըսէ  
թէ Սրտերնիդ անոնց մի կապէք :

Ե. Աստուած չիկրնար դնել իր ար-  
քայութիւնն անանկ սրտի մը մէջ, որն  
որ երկրաւոր կորստական բարեաց յա-  
րած է :

Յիսուս երբոր երկիրս եկաւ, աշխարհ-  
քիս առջեւ երջանիկ համարուած վի-  
ճակ մը չընտրեց իրեն, հարստութիւն-  
ներն անարգեց. անանկ է նէ պէտք է  
որ իրօք ալ անարգելի ըլլան :

Երկրաւոր բարիքները սուս ու պատիր  
են ու վնասակար են ամենուն, բաց ա-  
նոնցմէ՝ որոնք նոյներով յաւիտենական  
բարիքներ կը գնեն :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Աղտարսիրութեան շրջան :

Մարիամ : Ա . ՈՐԴԵԱԿ , աղքատները  
սիրէ . ան ամէն առիթներն , որ իրենց  
խեղճութիւնները սփոփելու համար կ'ու-  
նենաւ , դատարկ մ'անցըներ :

Ասանկ որ ընես , զքեզ արժանի որդի  
կը ցուցընես Աստուծոյ , որն որ սուրբ  
Գրոց մէջ ինք զինք բացայայտ հայր աղ-  
քատաց կոչեց , ու չէ թէ պարզապէս  
խրատ տուաւ , հապա պատուիրեց ամէն

Սաղմ . ԿԱ . 11 :

կարողութիւն ունեցողներուն որ ողորմութիւն ընեն :

Ծաստան : Բ. Ո՛վ փառաւորեալ կոյս, սա բանիս մէջ ալ քու օրինակդ՝ տուած խրատներդ կը հաստատէ : Քու մեծ ծառաներէդ մէկը՝ կ'ըսէ, որ դուն նորածին Փրկչին երկրպագութիւն ընելու եկող թագաւորներուն բերած ծանրագին ընծաներն՝ աղքատաց բաժնեցիր :

Բնական էր որ զանոնք արտաքոյ կարգի աղքատութեանդ, որուն մէջ Բեթղէհէմ կը գտնուէիր, օգնելու գործածէիր, բայց նոյն վիճակը քեզի սիրելի էր, ինչու որ վաքեզ քու աստուածեղէն օրդւոյդ նմանող կ'ընէր :

Աս վիճակն ամէն հանգստութիւններէ վեր գասեցիր, զորոնք կրնայիր ունենալ : Ուզեցիր այն կարօտութեան ու անծանօթութեան մէջ մնալ, որուն մէջ թէպէտ Գաւթի ցեղէն էիր, սակայն Աստուած ուզեց որ ծնանիս :

Չարմանալի օրինակ երկրաւոր բաներու սիրտ չկապելու եւ միանգամայն ընկերսիրութեան : Ան բանը, որն որ կրնար քու աղքատութիւնդ մեղմացընել, աղքատաց սիրտութեանը գործածեցիր :

Մարիամ : Գ. Ո՛րդեակ, մարդ իր ունեւորութիւնն աղէկ կը գործածէ, երբ որ անով աղքատները կը մխիթարէ :

1 Ս. Բոնաւենտ. վարք Քրիստոսի, ԳԼ. Թ :

Թէ որ հարստութիւն ունիս, մտածէ որ նախախնամութիւնը նոյնը քեզի իբրեւ պաշտօնատէրի մը տուած է, որպէս զի անկէ զուրկ եղողներուն մատակարարես:

Մի նմանիւր ան հարուստներուն, որոնք միշտ իրենց աղէքը գոց կը պահեն իրենց եղբարցը պիտոյից, եւ աւելի կ'ուզեն որ անոնք թշուառութենէ կորսուին, քան թէ իրենք զիրենք քանի մը բանէ անոնց համար զրկեն:

Ուրիշ բան չեն մտածեր, բայց եթէ գանձել աս ներկայ կենաց համար, բայց ատեն մը պիտի գայ, որ ժամանակէ յաւիտենականութեան անցնելով, իբրեւ խորունկ քնէ մը պիտի արթըննան ու իրենք զիրենք ձեռնուռնայն պիտի գտնեն<sup>1</sup>:

Գ. Սմանէ ան գթած ու արգահատող հարուստներուն, որոնք իրենք զիրենք աղքատաց հայր կ'ընեն ու ամենեւին չեն վախնար յաճախ ողորմութիւն ընելով աղքատութեան մէջ իյնալէն:

Ո՛րչափ օրհնութիւն կ'ընդունին ասանկներն երկրիս վրայ, բայց ինչչափ աւելի երկինքը:

Հասարակօրէն աս աշխարհքիս մէջն ալ Յիսուս ատկոսեօք կը վարձատրէ, ինչ որ առատաձեռնութիւնը կարօտելոյն դողը կը զեղու: Իսկ անոնց՝ յաւի-

<sup>1</sup> Սաղմ. ՀԵ. 6:

տենականութեան մէջ յուսալէքք, իր  
խոստմանցը բոլոր ընդարձակութիւնը կը  
բռնէ :

Եթէ իրենց մեղքերն երկնից բնա-  
կութիւնն իրենց դոցած ալ ըլլան, ո-  
ղորմածութիւնը նոյնը կրնայ իրենց բա-  
նալ : Անով կրնան իրենց ամպարչտու-  
թիւնները քաւել<sup>1</sup> :

Արդ, դուն քեզի պարտք սեպէ տա-  
ռապելոց սփոփանք ու մխիթարութիւն  
տալ : Ականջ մի կախեր ընչաքաղցու-  
թեան, որն որ երբեք բաւական չհամար-  
րիր ունեցածը :

Ե. Արնաս խնայող ըլլալ, բայց խիստ  
ու ազահ մ'ըլլար : Գովելի է ան խնայ-  
ութիւնը, որն որ ընկերին սփոփու-  
թեանը համար կ'ըլլայ :

Քանի որ դուն ալ աղքատ չես, ինք  
զինքդ ողորմութիւն տալէն ազատ մի  
համարիր : Ըրէ, որչափ որ կրնաս<sup>2</sup> :

Եթէ շատ ունիս, շատ սուր, եթէ  
քիչ ունիս, ունեցածդ յօժարութեամբ  
աղքատին ու քու մէջդ բաժնէ<sup>3</sup> :

Որդեակ, ողորմածութեան դործք  
ընողները, մեծ համարձակութիւն պիտի  
ունենան ողորմութեանց Աստուծոյն  
դատաստանին առջեւ :

<sup>1</sup> Դան. Գ. 24 :

<sup>2</sup> Տովբ. Գ. 8 :

<sup>3</sup> Տովբ. Գ. 9 :



Գ Լ ՈՒ Խ Գ .

Մասնա-Ռեան հարկա-որո-Ռեան ու օգո-րնե-  
րան լրաց :

Ծառան : Ա . թ՝ՈՂ կրկնէ մեզի Բեթ-  
ղէհեմի այրն ան խորհուրդները , զորոնք  
տուաւ Մարիամայ , երբ որ Հովիւներն  
եկած մարդ մէջ Յիսուսին երկրպագու-  
թիւն կ'ընէին :

Մանաւանդ , ով կոյս Մայր Աստու-  
ծոյ , դուն ըսէ մեզի , թէ ինչ մտած-  
մունքներով լցուած էիր ան ատեն :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ , մարդ մը մէջ  
պատկած , խանձարրոց մէջ փաթ թուած  
մանակ Աստուծոյ զարմանալի տեսա-  
րանը , ինձի անպատ մտածմանց աղ-  
բիւր մըն էր :

Չէի կրնար աս մեծ խորհուրդը մտա-  
ծելէն դադրիլ : Ի՛նչ որ կը տեսնէի , ու  
ի՛նչ որ կը լսէի սրտիս մէջ կը քանդա-  
կուէր<sup>1</sup> , ու խորունկ տպաւորութիւն կը  
ձգէր :

Հովիւներէն աւելի կը զարմանայի ե-  
ղած սքանչելեաց վրայ : Աս մեծ խոր-  
հուրդը բոլոր հոգւոյս կարողութիւնները  
յափշտակած էր :

Անոր համար սրտէս շարունակ բիւր  
քաղցր իղձեր կ'ելլէին ու չէի դադրեր  
Բարձրելոյն դոհութիւններ ու օրհնու-  
թիւններ մատուցանելէն :

<sup>1</sup> Ղուկ . Բ . 19 :

Գ. Ո՛րդեակ, եթէ կ'ուզես որ հաւատոյ մեծամեծ նիւթերը զքեզ շարժեն, պէտք էս մասնաւոր ջանքով անոնց զբաղել ու մտադրութեամբ խոկալ:

Քրիստոնէից մեծ մասին հաւատքն անոր համար տկար ու դաղջ է, վասն զի չեն ջանար մտածութեամբ նոյնը սնուցանելու եւ զօրացնելու:

Ուսկից են երկրիս վրայ յանցանքներն ու անկարգութիւնները, բայց եթէ յաւիտենական ճշմարտութեանց մտաւրցութենէն:

Դ. Սուրբերը յաճախ Աստուծոյ կատարելութեանց ու մարդկային բաներու ընդունայնութեան վրայ մտածելով իրենք զիրենք արարածներէն բաժնեցին ու բոլոր իղձերնին ու բաղձանքնին Արարչին վրայ ձգեցին:

Ասանկ կրթութիւններով սովբեցան այն բաները մինակ յարգելու եւ պատուական համարելու, որոնք որ Աստուծոյ առջեւ մեծ ու պատուական են: Ասկրթութեանց մէջ անոնց սիրտը կը բորբոքէր, որմէ երկնային բոցեր ցլանալով կ'ելլէին ու Աստուծոյ սրտին մէջ կը թաղուէին:

Անանկ է նէ, որ մ'ալ մ'անցնե՞ր առանց քանի մը փրկարար ճշմարտութիւններով հոգիդ պարարելու: Ասանկով կը սովբուի սրբոց գիտութիւնը:

Հատերուն պէս, ինք զինքդ մ'ար-  
գարացըներ, բտելով՝ որ ատեն չունիմ.  
չէ թէ ատեն՝ հապա կամք չունիս :

Ե. Աենացդ մէջ բուն մէկ գործք  
մ'ունիս, որն որ է գործք փրկութեան :  
Հատ նուազ ու ոչինչ գործքի տեղ կը  
գնես ասիկա, թէ որ արժանի չես հա-  
մարիր ջանալու, որ առանց ատոր վրայ  
մտածելու օր մը չանցընես :

Ամէն օր ատեն կը գտնես ժամանա-  
կաւոր ու անցաւոր շահու վերաբերեալ  
բաներու վրայ խնամով մտածելու :

Բայց ի՞նչ կայ քեզի աւելի մօտանց  
վերաբերութիւն ու օգտակարութիւն  
ունեցող, քան դյաւխտենական բաները :

Գարձեալ մ'արգարացըներ զքեզ,  
թէ չեմ կրնար մտածութիւն բնել :  
Արնաս բիւր հետաքրքրական բաներու  
վրայ մտածել, բայց երբ որ հաւատոյ ու  
յաւխտենական մեծամեծ բաներուն վրայ  
մտածելու կու գայ նէ, պատճառանք  
կ'ընես թէ չեմ կրնար :

Այս՝ սրբութեան համար զօրաւոր մի-  
ջոցին անհոգ ըլլալը, սաստիկ յանցա-  
ւոր անտարբերութիւն մը կը ցուցընէ  
առ Աստուած ու առ անձին փրկու-  
թիւն :

Զ. Որդեակ, կեանքդ միշտ կանոնա-  
ւոր ու կարգաւորեալ կ'ըլլայ, թէ որ  
ամէն օր ատեն մը որոշես՝ Աստուծոյ

առջեւ մտածելու համար, թէ արդեօք այնպէս ես նկատմամբ Աստուծոյ, ինչպէս որ պէտք ես ըլլալ:

Մահը յանկարծակի վրայ չի հասնիր, թէ որ կը սովորես ամէն օր աղէկ մեռնիլ:

Խորանի մը կամ քու խաչելու թեանդ առջեւ, ամէն օր Աստուծոյ մեծութեանցն ու խոստմանցը վրայ մտածելու համար տուած քառորդ ժամդ, քեզի անանկ գիտութիւն մը կու տայ, որն որ շատ վեր է բոլոր իմաստնոց գիտութեանէն, որոնց գրքերը ամէն բան կը սովորեցընեն, բաց ի փրկութեան գիտութեանէն:

Ինչ օգուտ է մարդուն, որ ամէն ըստ աշխարհի օգտակար ու պատուական գիտութիւններով լցուած ըլլայ, թէ որ սրբոց ունեցած ու զանոնք սուրբ ընող գիտութիւնները չունենայ:

Է. Մինակ առաքինի ըլլալու բաղձանքով առաքինի չըլլուիր. պէտք է անոր հարկաւոր եղած միջոցներն աղէկ միտք առնել ու գործածել:

Թախանձելով խնդրէ Յիսուսէն որ շնորհք տայ քեզի, որպէս զի յաղթես այն դժկամակութեան կամ չօժարութեան, զորն որ ունիս ատանկ հոգեւորական կրթութեան մը դէմ, որմէ կ'ուզէ սատանան զքեզ հեռացընել, գիտնալով թէ ինչչափ մեծ ու պատուական բան է:

Ասկէ, չէ թէ մինակ դուն քու վարմանցդ համար, հապա նաեւ առանձնապէս քու հսկողութեանդ յանձնուած անձանց կենցաղավարութեանը համար ալ մեծամեծ բարիքներ յառաջ կը բերես :

### Գ Լ Ո Ւ Խ Ե .

Աորստայ օրինացը պահպանութեան վրայ :

Ա . ՄԱՐԻԱՄ Հողւոյն սրբոյ զօրութեամբը յղացած էր : Մայր եղած էր, առանց կոյս ըլլալէն դադրելու : Իր որդւոյն ծնունդը, զինքն աւելի եւս սուրբ ու մաքուր բրած էր : Անանկ է նէ կանանց սրբութեան օրէնքը իր վրայ չէր տարածուեր :

Բայց, սրչափ որ ան օրինաց մէջ ինքը չէր իմացուեր նէ ալ, ուղեց նոյնը պահել. եւ անանկ ճիշդ կարգով ալ պահեց, որ մէկ պարագայ մ'ալ ի բաց չթողուց :

Յիսուսին՝ ինք զինքը թլփատութեան օրինաց տակ դնելով տուած օրինակն իրեն չէր ներեր, որ իր արտունութիւնը գործածէ :

Որովհետեւ օրէնքը բացառութիւն չէր ըներ, անոր համար Մարիամ անյապաղ ու անպատճառ հնազանդեցաւ :

Անանկ կ'երեւար որ իր որդին ըստ օ-

րինաց տաճարին մէջ ընծայելով, զանիկա ուրիշ մարդկան տղոց հետ մէկ ընէ :

Բայց օրէնքը կ'ըսէր, թէ մայրերն իրենց անդրանիկ որդին տաճարին մէջ Աստուծոյ մատուցանեն : Երկնաւոր Հայրը թէ որ հարկաւոր սեպէ, Յիսուսին փառքը կրնայ յայտնել : Մարիամ մինակ հնազանդելու կը նայի :

Բ. Ի՛նչչափ կ'ամրացրնէ առ օրինակը Աստուծոյ օրէնքներուն հնազանդելու մէջ մեր ունեցած թուլութիւնն ու պարսպ պատճառանքները, զորոնք կը փրնտուենք ու մէջ կը բերենք շուտ ու ճիշդ ծառայութենէ պրծելու համար :

Զարմանալու բան է, թէ ինչպէս բարձրեալ Աստուծոյ մը՝ իր ամէն հպատակեալներէն պահանջած ծառայութիւնը կրնայ զլացուիլ :

Գուն որ հող ու մոխիր ես, ինչպէս կը յանդգնիս Աստուծոյ պէս մեծ Տիրոջ մը ըսել, թէ չեմ կրնար հնազանդիլ, տուած օրէնքդ արտաքոյ կարգի բան կը պահանջէ իմ տկարութենէս. ինչ յանդրգնութիւն, ինչ լրբութիւն :

Ի՛նչչափ ամօթ է որ քրիստոնէից շատ ծանր կու դայ Քրիստոսի լուծը, թէպէտ եւ ինք իր բերնովն ըսաւ, թէ Իմ լուծս քաղցր ու թեթեւ է. իսկ անկէ աւելի կ'ընտրեն աշխարհքին լուծը, որն որ այնչափ ծանր ու բռնաւորական է :



Գ. Աշխարհքին հնազանդ գտնուելու համար, ամենէն պատուական բաներն ալ անոր կը տրուին, ծաղիկ հասակը, մտաց կայտառութիւնը, սրտի փափկութիւնն ու կարողութեանց եւ ձրից անդու գործածութիւնը: Իսկ Աստուծոյ որ դայ, ապագայ ատեն մը կ'որոշուի՝ անոր կամացը հնազանդելու համար:

Ասիկա ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ տարեաց մրուրը, մնացորդ իղձերը կամ զգացումներն ու ան ամէն բան, զորն որ ալ աշխարհք չիկրնար գործածել, Աստուծոյ պահել:

Գ. Աշխարհքին հաճոյ ըլլալու համար մարդիկ իրենք զիրենք կուրօրէն անոր յօժարութեանցն ու այլանդակ սովորութեանցը տակ կը ձգեն, բայց երբ որ բանն Աստուծոյ, մեր սիրելի Տիրոջ՝ իր տուած օրինացը կուրօրէն հնազանդելով՝ հաճոյանալու որ դայ, շատ կը դժուարին իրենք զիրենք անոր տակ ձգելու, կամ նաեւ պատճառներ ալ կը փնտռեն լուծը վրաներնէն նետելու:

Թէ որ յառաջ քան ինք զինքդ՝ Աստուծոյ մատուցանելու պարտական եղած հնազանդութեանդ որոշելու՝ դուն քեզի եւ կամ աշխարհքին խորհուրդ կը հարցնես, գիտցած ըլլաս, որ կամ ամենեւին չես հնազանդիր եւ կամ սահմա-

նաւոր չափով մը կը հնազանդիս, ինչու  
որ Աստուծոյ օրէնքները քու միտու-  
թեանցդ ու աշխարհքին օրինացը հա-  
կառակ են :

Աստուածային օրինաց նիւթերու մէջ  
մարմնոյ ու արեան խորհուրդ պէտք չէ  
հարցընել : Բնութիւնը՝ թուլութեան,  
ու աշխարհք՝ ապստամբութեան կը տա-  
նի զմեզ :

Ե. Ո՛վ արձակ ու վերին Տէր, որ մի-  
նակ իրաւունք ունիս ուղելու, անանկ  
որ մենք ամենեւին իրաւունք չունինք  
քու կամացդ : Վասնոր փնտռելու,  
բաց սիրտս քու օրինացդ<sup>1</sup> :

Քու խօսքերդ նոյն իսկ արդարութիւն  
ու իրաւունք են<sup>2</sup> : Քաղցր ցօղի պէս<sup>3</sup>  
սրտիս մէջ իջեցուր զանոնք :

Քու մարդարեղ իր երգերէն մէկուն  
մէջ<sup>4</sup> մեզի կը յայտնէ թէ խաղաղու-  
թիւնը բաժին է անոնց, որոնք սր քու  
օրէնքներդ կը սիրեն ու կը պահեն :

Ա՛րսէ թէ քու օրէնքդ ամենէն պար-  
զամիտներուն իմաստութիւն կու տայ,  
ու ճշմարիտ երջանկութեան կ'առաջ-  
նորդէ. սրտի ախրութիւնը կը մերժէ ու  
հոգւոյ խաւարը կը փարատէ :

<sup>1</sup> Բ. Մակար. Ա. 4 :

<sup>2</sup> Սաղմ. ՃԺԸ. 142 :

<sup>3</sup> Երկր. Օր. ԼԲ. 2 :

<sup>4</sup> Սաղմ. ՃԺԸ. 165 :

Ոսկիէ ու պատուական քարերէ աւելի նախամեծար է, ու ամենաքաղցր մեղրէ ալ անոյշ :

Զ. Նորէն խոստում կու տամ որ քու օրէնքէդ չճեռանամ : Տէր, հաստատէ զիս իմ յառաջագրութեանս մէջ :

Մինչեւ կենացս վերջի շունչը քու օրէնքդ պիտի պահեմ : Նոյնը իմ առջեւս իբրեւ հարուստ ժառանգութիւն մըն է, զորն որ կ'ուզեմ զգուշութեամբ պահել : Անիկա միշտ իմ ուրախութիւնս պիտի ըլլայ :

### Գ Լ ՈՒ Խ Զ .

Բարի օրէնքի քաղցր լրաց :

Ա. ՄԱՐԻԱՄ սրբութեան օրէնքը պահեց, որպէս զի գայթակղութեան առիթ չտայ Հրէից, որոնք իր կոյս ըլլալը չէին գիտեր : Պահեց նոյն օրէնքը, որպէս զի Յովսեփայ, իր փեսային, ինչպէս նաեւ անոնց, որոնց Աստուած նոյն խորհուրդը յայտնած էր, կոյր ու մեծանձն հնազանդութեան օրինակ տայ :

Բ. Օճանց մ'առնեք ընելու՝ նաեւ պարտականութիւն չունեցած դորձքդ ալ, թէ որ անոր զանցառութիւնն ուրիշը կրնայ գայթակղեցընել :

Եւ եթէ ատոր համար աստուածային նկատութեանց քաղցրութիւնն ալ պէտք ըլլայ թողուլ, մի երկմտիր, ա-

սիկա զԱստուած՝ Աստուծոյ համար թու-  
ղուլ է:

Երբ որ մէկը զԱստուած կը սիրէ, կը նայի որ ուրիշներուն սրտերն անոր շահի: Բայց սրտերն Աստուծոյ շահիլն ամենէն աղէկ անով կ'ըլլայ, որ բարի օրինակաւ սովորեցընէ, թէ ինչպէս պէտք է զԱստուած սիրել:

Գ. Առաքինութեան յորդորմունքը, առաքինութեան վրայ մեծ վարկ ու համարում կու տան, բայց երբ որ յորդորանաց վրայ դործք ալ կ'աւելցուի, ան ատեն շատ աւելի աղէկ հաւանութիւն կը դանէ առաքինութիւնը: Արբոյ օրինակը սուրբ կ'ընէ:

Առաքելոց ու առաջին հաւատացելոց ցուցրցած առաքինութեան դործքերը, շատերուն սրտին մէջ իրենց խօսած ճառերէն ու հրաշքներէն նուազ ազդեցութիւն չէին ըներ:

Ո՛հ, որչափ քիչ քրիստոնեայք կան հիմակ, որ իրենց առաքինութեան օրինակներովը, հոտ անոյշ կ'ըլլան քրիստոսի:

Գ. Վարժես թէ մարդիկ անոր համար իրարու հետ կը տեսնուին, որպէս զի իրենց տուած շար օրինակներովը փոփոխակի իրարու դատապարտութեանը օգնեն:

Թէ որ դատապարտուիլ կ'ուզես, դուն

միայն դատապարտուէ, ու կորսուիլ մի տար նաեւ ան տկար եղբօր, որուն համար քրիստոս մեռաւ 1 :

Ի՞նչ մեծ յանցանք է, ընկերիդ երկրաւոր բարիքը գողնալ. հապա սրչափ աւելի մեծ է անոր յաւիտենական բարիքը գողնալ : Ասիկա ուրիշ բան չէ, բայց եթէ սատանայի գործակալ ու գործիք ըլլալ :

Մանաւանդ անոնք, որոնք որ իշխանութիւն կամ աւագութիւն մ'ունին, պէտք են միտ դնել որ բարի օրինակ տան, ինչու որ իրենց ստորակարգեալներն անոնց կենացն ու վարմանցը կը հետեւին :

Ե. Աս հոգն աւելի առանձին եղանակաւ մեծերը պիտի ունենան : Թէ որ ասոնք Աստուծոյ ու եկեղեցւոյ օրինացը յարգութիւն չեն ունենար, շուտ մը իրենց նմանողներ կ'ունենան : Որովհետեւ ան ատեն ուրիշներն անոնց օրինակին հետեւիլը փառք կը սեպեն :

Այս մեծերն արդեօք Ս. Աստուածածինէն աւելի մեծ են, որն որ Աստուծոյ Մայր ըլլալով, Աստուծմէ ետքն արարածի մը կարելի եղած մեծութեան ամէն պատուանուններն ունէր :

Թող սորվին Ս. Կոյս Աստուծոյ մօրմէն, իրենց բարձր աստիճանը՝ զիրենք

1 Ա. Կոր. Ը. 11 :

նոյնին մէջ դնող Աստուծոյ փառացը  
գործածելու :

Զ. Ի՞նչ, մեծութիւնն անանկ պա-  
տիւ մըն է արդեօք որ առաքինի քրիս-  
տոնեայ չըլլալու իրաւունք տայ :

Բարձրագոյն վիճակ մը, աղէկ որ  
նայուելու ըլլայ, ուրիշ բան չէ, բայց  
եթէ մեծագոյն պարտաւորութիւն :

Գ Լ Ո Ի Խ Է .

Խոնարհութիւնը «իբեւ» է «յարգեւ» Վրայ :

Ա. Ո՛րՉԱՓ մեծ խոնարհութիւն էր,  
Աստուած իմ, քու սուրբ մօրդ, սրբու-  
թեան օրէնքը պահելը, որն որ հասա-  
րակ մարց համար դրուած էր :

Այն կուսութեան պայծառութիւնը,  
որուն համար հրեշտակին՝ քու մարմնա-  
ւորութիւնդ իրեն աւետած ատեն՝ այն-  
չափ նախանձաւորութիւն ցուցուց, աս  
կրօնի արարողութեամբ, եղանակաւ մը  
մթագնեցաւ :

Բայց Մարիամ անտեղեակ չէր, որ օր  
մը նախատինքն ու արհամարհանքը քու  
բաժինդ պիտի ըլլայ, ու ինք զինքն եր-  
ջանիկ կը համարէր որ ասոր մէջ կարող  
կ'ըլլայ քեզի նմանիլ :

Գուն որչափ որ զինքն ուրիշ կանանց  
մէջէն որոշեցիր, ինք այնչափ կ'ուզէր  
ինք զինքն անոնց հետ մէկ ընել ու իր  
յառաջամասնութիւնները ծածկել :



Բ. Անձ մը, որն որ Մարիամայ պէս, ուրիշ բան չ'ուզէր բայց եթէ Աստուծոյ հաճոյքը ըլլալ, մարդկան համարումը բանի տեղ չիղներ ու անոնց պատիւն ու գովութիւնը զինքը չեն շարժեր:

Աւելի կ'ուզէ, ինչպէս մարդարէն կ'ըսէ, ընկեցիկ ըլլալ Աստուծոյ տանը մէջ, քան թէ աշխարհ, քիս որդւոցը պայծառութիւնն ու փառքն ունենալ:

Իրօք ալ առաքինութիւնը շատ աւելի ապահով է՝ խոնարհ ու ընկեցիկ վիճակի մը մէջ, քան թէ պատուոց ու անուանոց մէջ:

Առաքինութիւնը՝ սրչափ որ անյայտ ու ծածկուած կ'ըլլայ մարդկան առջեւ, այնչափ աւելի պայծառ կ'ըլլայ Աստուծոյ առջեւ:

Գ. Ղշմարիտ առաքինութիւնն անմինակ կը բաղձայ որ Աստուծոյ աչքը իր վրայ ձգէ: Ո՛րչափ որ մարդկան առջեւ անձանօթ ու անարդեալ ըլլայ, նայնչափ ինք զինքն երջանիկ կը համարի:

Նոյն իսկ նախախնամութիւնը, որն որ արդարոց վրայ կը հսկէ, հառարակօրէն զանոնք խոնարհութեան ճամբով արդեանց ու փառաց կը տանի:

Տարակոյս չկայ որ անձնասիրութեան հակառակ է ինք զինքը խոնարհած տեսնել. բայց նոյն իսկ ասոր համար փրկութեան օգտակար է խոնարհութիւնը:

Սուրբերն իրենց կրած թշնամանաց համար, իբրեւ մեծ շնորհք մը, Աստուծոյ գոհութիւն կու տային :

Գ. Աս նոյն զգածումն անոր համար չունիմ, զի ան զի դեռ բոլորովին երկրաւոր ու մարմնաւոր մարդ եմ, ու մինակ զԱստուած չեմ փնտուեր :

Եղան նաեւ սուրբեր, որոնք այնչափ փափաք ունեցան իրենց կատարելութեանը, որ Աստուծմէ մեծամեծ նուաստութիւններ խնդրեցին :

Եթէ ես նոյնչափ քաջութիւն չեմ զգար նէ վրաս, գէթ պատրաստ ըլլամ այն նուաստութիւնները, զորոնք Աստուած իմ բարեոյս համար, առանց իմ խնդրելուս ինծի կը խաւրէ, հպատակութեամբ ընդունելու :

Թէ որ մէկ արհամարհանք մը պարտական եղած համակերպութեամբ Աստուծոյ համար կրելու ըլլամ, աւելի կը փառաւորեմ զԱստուած, քան թէ բարձրագոյն պարգեւներով :

Ե. Աստուծոյ Որդին այնչափ խոնարհեցաւ որ մինչեւ ինք զինք ունայնացոյց, ինչպէս կ'ըսէ առաքեալ : Աս օրինակիս պիտի ջանամ ես ալ նմանելու :

Խոնարհական բաներէ քաշուիլը Քրիստոսի նմանութենէն քաշուիլ է, զորն որ անոնք մեզի կու տան :

Եթէ Աստուած յաճախ կը խաւրէ

զանոնք ինծի, ըսել է որ կ'ուզէ իր Որդւոյն պատկերը վրաս աւելի կատարեալ ընել:

Անանկ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ պէտք եմ ընդունիլ նրաստութիւն մը, ինչպէս Քրիստոսի ճշմարիտ խաչին մէկ կտորը կ'ընդունէի:

### Գ Լ Ո Ի Խ Ը .

Թէ ինչպէս պիտ'որ ընեն+ Աստուծոյ այն շահերը, շրոն+ Թեզէ իւ պահանջէ:

Ծարան: Ա . ՄԱՐԲ իրենց անդրանիկ որդիքը տաճարին մէջ Աստուծոյ մատուցած ատեննին, սրտերնին քիչ զըկում կամ ցաւ կը զգային: Բայց երբ որ դուն, Այո սուրբ, զՅիսուս նուիրեցիր, ճշմարիտ զո՛հ մ'ըրիր:

Գիտէիր որ Յիսուս օր մը մարդկան փրկութեան համար իր կեանքը պիտի տար, ու արդէն նոյն ատենէն զանիկա իբրեւ զո՛հ կը նուիրէիր:

Բուն իսկ իբրեւ պատարագ ընծայեցիր դուն զանիկա, ու ինքն ալ նոյնպէս ինք զինք իբրեւ պատարագ յաւիտենական Հօր ընծայեց:

Հոն իբրեւ թէ առջի վայրկեանն եղաւ, որ Յիսուսի համար վշտանալու սկսար, որն որ անոր կենաց մինչեւ վերջին շունչը տեւեց:

Ան ատենէն սկսաւ սիրտդ այն ցաւոց

որէն խոցիլ<sup>1</sup>, զորն որ Սիմէոն զՅիսուս  
գիրկը բռնած կը նախագուշակէր :

Բ. Աշխարհքիս մայրերն որչափ որ  
իրենց որդիքը սիրեն, բովանդակ սէրեր-  
նին անոնց չեն տար : Ո՛րչափ ընդու-  
նայնութեանց կը պահեն ու որչափ ի-  
րենց անձանց : Բայց դուն զՅիսուս կը  
սիրէիր, բոլոր սրտանց, ու մինակ զա-  
նիկա կը սիրէիր :

Յիսուս քու մէկհատիկ որդիդ ըլլա-  
լով դեռ նոր կը սկսէիր մայրութեան ու  
ասանկ որդւոյ մը մայր ըլլալու ճաշակն  
առնել :

Այսու ամենայնիւ զանիկա Հօր մա-  
տուցանելու օրը հասածին պէս<sup>2</sup>, շուտ  
մը ճամբաց ելար :

Աբրահամու արժանի դուստրը, ու  
անոր հաւատոցը ժառանգը, դուն ամէն  
բնական զգածումները զսպեցիր ու խրդ-  
դեցիր ու մինակ Աստուծոյ ձայնին ա-  
կանջ դրիր, որն որ կ'ուզէր որ աշխարհ-  
քիս վրայ քու ամենէն աւելի սիրելիդ  
անոր զո՛հ ընես :

Մարիամ : Գ. Ո՛րդեակ, ինծի պէս հաս-  
տատուն ու մեծանձն եղիր, երբ որ Աս-  
տուած քեզմէ ինչպիսի եւ իցէ բան մը  
կը պահանջէ :

Ո՛հ, Աստուած ինծմէ պահանջեց, որ

<sup>1</sup> Ղուկ. Բ. 35 :

<sup>2</sup> Ղուկ. Բ. 22 :

անանկ բան մ'իրեն զոհեմ, զորն որ ի-  
բաւունք ունէի ես սիրելու: Բայց քեզմէ  
ի՛նչ կը պահանջէ հասարակօրէն: Ան  
բանին զոհը կը պահանջէ, զորն որ դուն  
պէտք էիր ատել:

Եթէ զԱստուած կը սիրես, մեծան-  
ձնութիւնը քու սիրոյդ գլխաւոր նկա-  
րագիրը պիտ'որ ըլլայ: Անձուկ ու նեղ  
սիրտ մը չնդիտեր թէ ի՛նչ է սիրել:

Երբ որ մէկը, Աստուծոյ համար աշ-  
խատալի բանի մը չ'ուզեր ձեռք զարնել,  
ու առջեւն ելած դժուարութենէ մը կը  
վախնայ ու կը վհատի, միթէ կը սիրէ  
զԱստուած:

Ի. Ղմարիտ սէրը ցաւոյ ու պատե-  
րագճաց մէջ յայտնի կ'ըլլայ: Փափկու-  
թիւնը Յիսուսի աշակերտին զգածմանցն  
ու վիճակին հետ չիմիաբանիր:

Մ'ուզես որ քու նուէրքդ Աստուծոյ  
հաճոյ ըլլան, շուտ ու անյապաղ ըրէ  
զանոնք, առանց քննելու թէ որչափ  
դժուարութիւն պիտի արժէ քեզի ա-  
նոնց կատարումը:

Աշխարհք իր հետեւողներէն խոտա-  
գոյն նուէրներ կը պահանջէ, բայց բաւ-  
ական որ անիկա մէկ անգամ խօսի,  
շուտ մը ամբողջապէս, ըսածը կը կա-  
տարուի: Մինակ Աստուած պիտի ըլլայ  
անանկ տէր մը, որուն համար պէտք չըլ-  
լայ ամենեւին նուէր մ'ընել, առանց

յառաջագոյն քննելու թէ արդեօք չափէն աւելի չիպահանջեր :

Ե. Ա՛հ, որդեակ, որչափ քիչ կը սիրէ զԱստուած անիկա, որն որ անոր մատուցած սիրոյ ցոյցերուն մէջ՝ ինք իրեն չափ ու սահման կ'որոշէ :

Մինակ երեւակայութեամբ կառավարուող աշխարհքին՝ մարդիկ չեն համարձակիր անանկ սիրտ մը նուիրել, զորն որ քրիստոնէից մեծ մասը չիքաշուիր Աստուծոյ նուիրել :

Որդի մը, որն որ մինակ ան կ'ընէ, ինչ որ բացարձակ հրամայուած է, հարս մը որ մեծ հոգ մը չ'ըներ իր փեսային անհաճոյ գտնուելուն, միթէ անանկ անկեղծ սէր կը ցուցընէ, որուն վրայ կարող ըլլայ դո՛հ ըլլուիլ :

Զ. Աստուած յանչափս բարի ու զթած է իր արարածոցը, բայց միանգամայն «Աստուած նախանձոտ», է :

Իր ուզածին պէս ու ըստ արժանւոյն իրեն չիճառայուիր, երբ որ կատարեալ ու իր ամէն կամայք հնազանդ սրտով չիճառայուիր <sup>1</sup> :

Ամբ չցիր որ քու ծառայութեանդ մէջ անանկ հեղգ ես, ամբ չցիր որ Աստուած քեզի այնչափ բան ընելէն ետեւ, դուն այնչափ քիչ բան կ'ընես իրեն համար :

Է. Ար տեսնես որ երբեմն շատ դը-

<sup>1</sup> Կողոս. Գ. 12 :



Ժուարին հրամաններ կու տայ քեզի :  
Ո՛հ, որդեակ, տակաւին ուրիշ անանկ  
հրամաններ ալ պիտի տայ քեզի, վասն  
զի պէտք է որ անոր տալու վարձքն ար-  
դիւնաւորիս :

Ինչքդ, հանգիստդ, պատիւդ ու  
մինչեւ կեանքդ ալ կրնայ քեզմէ պա-  
հանջել, ամէն բանի իրաւունք ունի :

Մի զարմանար որ որչափ աւելի կու  
տաս դուն իրեն այնչափ աւելի կը պա-  
հանջէ քեզմէ : Ասիկա ուրիշ բանի հա-  
մար չ'ընէր, բայց եթէ, որպէս զի զքեզ  
աւելի եւս մեծամեծ շնորհքներու պատ-  
րաստէ աս աշխարհքիս մէջ, ու անդիի  
աշխարհք աւելի մեծամեծ վարձուց ար-  
դիւնաւորեցրնէ :

Գ Լ Ո Ի Խ Թ .

Թե ինչպիսի հոռտ պիտի նկատենք մեր շրայ հա-  
սած շնորհք :

Մարիամ : Ա . Ո՛ր ԴԵԱԿ, քու արտա-  
սուացդ ու երկինք բարձրացուցած հա-  
ռաչանացդ պատճառն ի՞նչ է :

Ծառան : Բ . Ո՛հ, թագուհի սրբոց,  
հաղիւ թէ սկսած էի քիչ մը հանգըս-  
տութեան մէջ վայելելու, մէկէն վրաս  
նոր նեղութիւններ հասան :

Անիրաւութիւն, զրպարտութիւն ու  
ապերախտութիւն նոր դաւեր կը գոր-

ծեն ինծի դէմ: Գթած մայր, տուր քու  
պաշտպանութիւնդ քու սրղւոյդ:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, քանի մը կող-  
մանէ ըստ ամենայնի նոյն վիճակի մէջ  
կը գտնուիս, ուր ես ինք զինքս գտայ  
տաճարին մէջ, Սիմէոնին պատգամը լրած  
ատենս:

Քրիստոսի ապագայ մեծութիւնն ինծի  
ծանուցանելէն ետեւ նախապատմեց որ  
հակառակութեանց ու հալածմանց միջ-  
նակէտ պիտի ըլլայ, եւ թէ ցաւոց սուր  
մը իմ սիրտս մխուելով զիս ալ իմ որ-  
դւոյս կրելու աղետիցը հաղորդ պիտի ընէ:

Արդէն սուրբ Գրոց մէջէն տեղեակ էի  
Յիսուսին քաշելու շարժարանացը: Աբե-  
լին սպանուիլը, Յովսէփին վաճառուիլը,  
Գաւթին հալածումը ու զատկական գա-  
ռին զենումը ինծի մէջ մէկ օրինակներ  
էին որ Յիսուսին գլուխը գալիքներն ին-  
ծի կ'իմացընէին:

Գ. Ո՛հ, ինչ դառնութիւն կու տար  
իմ օրերուս Յիսուսի շարժարանաց ու  
մահուան տեսարանը, զորն որ անդադար  
աչքիս առջեւ ունէի:

Ի՞նչ ներքին հեծութիւններ չէի ը-  
ներ, երբ որ զՅիսուս գիրկս բռնած ա-  
տենս կը մտածէի թէ ամենէն անգութ  
մահուամբ պիտի փրկէ աշխարհքը:

Երբ որ տաճարին մէջ գառնուկի մը  
մտրթուիլն ու աղաւնւոյ մը զենուիլը կը

տեսնէի, Ո՛հ, կ'ըսէի ես ինձի, օր մը Յիսուս ասանկ պիտի զենուի:

Ծառան: Ե. Հիմա կ'իմանամ, սով կոյս Մայր, թէ ինչչափ ցաւազին եղած պիտի ըլլայ քու վիճակդ, եւ թէ իրաւամբ կը կանչէ զքեզ Եկեղեցին՝ Թագուհի մարտիրոսաց:

Մարտիրոսները գլխատեցան, դազաններու առջեւ դրուեցան, ջրով կամ կրակով մեռան: Բայց իրենց տանջանքը հասարակօրէն երկարատեւ չեղաւ: Իսկ քու կինդ երեսուն ու երեք տարի տեւեց:

Բոլոր աս ժամանակը մէկանց, ամէն մարտիրոսներէ աւելի քաջութեամբ ու զօրութեամբ՝ գիւցազնական կերպով, միշտ Աստուծոյ քեզի պատրաստած նոր չարչարանքները, մանաւանդ օր մը Գողգոթայի վրայ քաշելու չարչարանքդ աչքիդ առջեւը կը բերէիր:

Զ. Իսկ ես, վրաս չարչարանք մը հասած ատեն, բոլորովին վատ ու ծոյլ եմ:

Երբ որ Յիսուսին կրելու չարչարանացը վրայ մտածելով անդադար սրտիդ ցաւը կը նորոգուէր, դուն ալ անդադար կը նորոգէիր տաճարին մէջ զինքը նուիրելով բրած պատարագդ:

Սիրտդ խոր արտմութեան մէջ էր, Բայց խաղաղութիւնդ բնաւ չէր խռոված: Կատարեալ հնազանդութեամբ մինակ Աստուծոյ ուզածը կ'ուզէիր:

Բայց ես կը դողամ, երբ որ Աստուծոյ ինձի պատրաստած նոր խաչերը կը մտածեմ: Խաղաղութիւնս ու հանդիստս կը կորսնցընեմ ու միտքս կ'ապստամբի եւ սիրտս կը տրանջէ:

Մարիամ: Է. Ո՛րդեակ, Աստուած չիթողուր զքեզ որ քու զօրութենէդ վեր փորձուիս<sup>1</sup>, ու տառապիս, հասցա միշտ փորձութեան համեմատ օգնութիւն ալ կու տայ:

Լսէ իր շնորհացը, որն որ քեզի կը խօսի, իր քու սրտիդ մէջ գրգռած շարժմանցը համեմատ գնա: Ո՛րչափ որ Աստուած մէկու մը խաչ կը պատրաստէ, նոյնչափ ալ զանոնք աղէկ կրելու համար միջոցներ կը պատրաստէ:

Խաչերն՝ Աստուծոյ՝ իր արարածոցն ըրած ամէն պարզեւնեքէն մեծն են ու արարածի մը Արարչին ընելու ամէն պատարագներէն աւելի հաճոյական է նոյն խաչերը յօժարութեամբ ընդունիլ:

Ը. Քեզի սահմանած խաչերը մեծ են. ըսել է թէ քու սրբութեանդ համար մեծամեծ դիտումներ ունի: Ա՛ռ զե՞ս Աստուծոյ դիտմանցը գործադրութիւնը խափանել:

Քու խռովութիւնդ ու վախերդ նոյն խաչերը քեզմէ չեն կրնար հեռացընել: Ի՛նչ որ ընես, պէտք է որ զանոնք կրես:

<sup>1</sup> Ա. Կոր. Ժ. 13:

Անանկ է նէ, ո՞րը պէտք էս ընտրել, [Թէ որ իմաստուն էս :

Ո՞րդեակ, շատ լաւ է որ Աստուծոյ ամէն հրամայածին հնազանդիս : Ըսէ . Աստուած Տէր է, ինչ որ աղէկ կը դատի նէ, ինծի ընէ <sup>1</sup> :

Թ . Ասանկ որ ընես, կը տեսնես որ Աստուած քու հնազանդութենէդ շարժելով, իր խոստմանցը համեմատ, իր խաչերը, որոնք հեռուանց քեզի անանկ ծանր կ'երեւան, քու չկարծածիդ չափ [Թեթեւ կ'ընէ :

Անանկ կը [Թեթեւցընէ քեզի նոյները, մինչեւ ըսես, [Թէ Ո՞րչափ որ Յիսուսի չարչարանացը հաղորդ կ'ըլլանք, նոյնչափ՝ Քրիստոսի ձեռքով եկած միսի-թարութեանց ալ հաղորդ կ'ըլլանք <sup>2</sup> :

Ծառան : Ժ . Ե՛նորհակալ եմ քեզի, սլ փառաւորեալ Մարիամ, քու տուած խրատներուդ համար, որոնք զիս [Թըմբութենէս կ'արթընցընեն :

Ո՞հ, դուն ընդունեցար ինծի աս նոր զօրութիւնը, զորն որ սրախս մէջ կը զգամ՝ քաջութեամբ խաչերու դիմացն երթալու, որոնց վրայ քիչ մը յառաջ զարհուրելով կը մտածէի :

Օրհնեալ ըլլայ Աստուած <sup>3</sup>, որ իր

<sup>1</sup> Ա . Թագ . Գ . 18 :

<sup>2</sup> Բ . Կոր . Ա . 5 :

<sup>3</sup> Սաղմ . ՃԽԳ . 1 :

աստուածեղէն մօրը խրատուցը ձեռքով  
ձեռուրներս պատերազմի կը պատրաստե-  
ու կը զօրացնէ, զիս պատերազմի մը  
դէմ, որուն չէի կրնար դիմանալ առանց  
օգնութեան :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Ինչպէս պիտի վարուի անձ մը, ու ինչ շքան-  
մանք պիտի ունենայ, երբ որ Աստուած անոր  
նկատմամբ անանկ ընկացած մը ինք Բրանի, որուն իր  
խելքը չեհասնիր :

Ա . ԱՍՏՈՒԱԾ յանկարծ իմացուց  
Մարիամայ՝ Յովսեփայ ձեռքով, որն որ  
հրեշտակին պատգամաւորութիւնն ըն-  
դունած էր, որ Եգիպտոս փախչի ու մա-  
նուկ Յիսուսը Հերովդեսի կատղութեան  
ձեռքէն ազատէ :

Բայց Աստուծոյ անբաւ զօրութիւնը  
չունէր միջոց մը առ իշխանին սիրտը  
դարձրնելու : Աստուծոյ անվայել բան  
չէ մի տկար մահկանացուի մը երեսէն  
փախչիլ :

Չէր կրնար Աստուած Յիսուսին հա-  
մար երկրորդել այն պատիժները, որոնց-  
մով զԵգիպտացիները պատժեց իր ժո-  
ղովուրդը փրկելու համար :

Բ . Բայց Մարիամ ամենեւին ետեւէ  
չ'ըլլար Աստուծոյ՝ իր վրայ բռնած ճամ-  
բովն ունեցած դիտաւորութիւնն իմա-  
նալու :



Միշտ պէտք է որ Աստուծոյ կամացը հաւատարմապէս հնազանդինք, թէպէտ անոր պատճառն իմացեր ենք, թէպէտ չենք իմացեր :

Մարիամ չիքններ ամենեւին որ արգեօք անապատներու մէջ երկայն ճամբորդութեան ատեն ու նոյն օտար երկրին մէջ, ուր կը խաւրուի, ապրուստ պիտի գտնէ :

Նոյն Աստուած, որն որ իրեն հրաման խաւրեց որ ելլէ ու ճամբայ իյնայ, իրեն ապրելու միջոցներ ալ գտնելու կարող է, թէպէտ եւ ինքը չէր տեսներ :

Գ. Միշտ Եզրիպտոս պիտի կենայ : Ասոր վրայ ալ շուղեր տեղեկանալ, հապա ան ատեն կը դառնայ, երբ որ Աստուած իրեն կ'իմացընէ թէ դառնալու ատենն է :

Եթէ աւելի անիմանալի հրամաններ ալ տար նէ Աստուած, իր հողին ամենեւին խաղաղութիւնը չէր կորսնցըններ :

Ի՞նչ բանէն կրնայ խռովիլ անձ մը, երբ որ կը մտածէ թէ Աստուած կ'առաջնորդէ իրեն : Նախախնամութենէն աւելի հաստատուն ու ապահով պաշտպանութիւն կայ :

Բ. Տէր, դուն ինձի կը հրամայես, որ ինձի անձանօթ եղած ճամբաներէն քալեմ : Աս բաւական է. քու կամքը լուսոյ ու պատճառի տեղ կը բռնէ :

Չեմ գիտեր թէ ո՞ւր կ'երթամ, բայց ապահով եմ, որ եթէ զիս քեզի պէս իմաստուն վարչի մը առաջնորդութեանը կը թողում, երբեք չեմ սայթաքիր:

Թէպէտ եւ միջոյ մէջ սակայն ապահովութեամբ կը քալեմ, ինչու որ ստոյգ եմ որ դուն զիս ձեռքէ չես թողուր:

Ո՛հ, ինչ կը ծառայէ ինձի իմ տկար լուսաւորութիւնս անանկ ճամբու մը մէջ, զորն որ դուն ինձի կը բանաս ու կը հրամայես որ կոյր հնազանդութեամբ հետեւիմ: Մէյ մը դուն խօսելէդ ետեւ, պէտք է որ ես առանց ինձի խորհրդակցելու գործեմ:

Խոհեմ ու լուսաւորեալ կարծուած մարդու մը առաջնորդութեան՝ մարդիկ բոլորովին կը վստահանան. արդ կրնամ մի ես, ո՞վ յաւիտենական իմաստութիւն, պատճառ մ'ունենալ անվստահութեան, երբ որ դուն ինձի կ'առաջնորդես:

Ե. Քու նախախնամութիւնդ շատ հեղ հակառակ երեւցող միջոցներով իր վախճանին կը դիմէ:

Անոր համար որչափ արտաքոյ կարգի տրամադրութիւններ ալ ընես վրաս, կ'ուզեմ մինակ անոնց երկրպագութիւն ընել: Գուն աւելի կրնաս ընել, քան որչափ ես ճանչնալ:

Քու վարչութիւնդ մեզմէ գաղտնի

ըլլալուն համար, մեր երկրպագութեանը նուազ արժանի չէ: Քու գործքերուդ վրայ բարձրագոյն իմաստութեան նկարագիր մը կը տեսնուի, թէպէտ եւ անոնց գաղանխքը մեզի յայտնուած չէ:

Զ. Ասկից ետքը կ'ուզեմ քու հրամաններուդ, նոյն իսկ անոնց պատճառն ամենեւին չգիտցած ատենս, իմ հնազանդութիւնս մատուցանել, անանկ ինչպէս որ քու յայտնած ճշմարտութեանցդ կը մատուցանեմ:

Թէպէտ եւ նոյն ճշմարտութիւններուն միտքս չհասնի, սակայն անոնց վրայ՝ ակներեւ տեսնալէս աւելի հաստատեմ, ինչու որ, Տէր, դուն խօսեցար:

Գ Լ Ո Ի Խ ԺԱ .

Նախախնամութեան որդարաց լրաց ցոյցըստ ինտիմ:

Ծարուած: Ա. Ո՛վ հնազանդ կոյս, ուրախութեամբ կը նկատեմ քու անհոգւոյ անտարբերութիւնդ, զորն որ եզիպտոս փախած ատենդ պահեցիր:

Վստահ էիր որ Աստուած, որուն առաջնորդութեանը զքեզ յանձնած էիր, բոլոր ճամբան վրադ կը հսկէ, եւ թէ անոր նշանակած տեղն երթալէդ ետեւ զքեզ ամենեւին իր ձեռքէն չիթողուր:

Եւ կրնա՞ր մի իր աչքը՝ քու եւ քեզի յանձնուած աւանդին վրայ չհսկել:

Չէ, չէ, ո՛չ գիշերային դարաններէ վախնալու բան ունէիր ու ո՛չ ալ ցորեկը թշնամեաց արձակած նետերէն<sup>1</sup> :

Աստուած քու պահպանութեանդ համար հրեշտակներ դրաւ<sup>2</sup>, որոնց հրամայուած է, որ քու բոլոր ճամբուդ մէջ ետեւէդ գան :

Աստուած հրամայեց անոնց, որ զքեզ ամէն վտանգներէ պահեն ու պէտք եղած ատեն իրենց բազկացը վրայ տանին :

Թէպէտ եւ քու երթալու երկիրդ օձերով ու գազաններով լեցուն ըլլայ, սակայն դուն իժերու եւ քարբերու վրայ անմնաս պիտի պտըտիս ու առիւծն ու վիշապը ոտքովդ պիտի կոխես :

Մարիամ<sup>3</sup> : Բ. Ո՛րդեակ, Աստուած սուրբ Գրոց մէջ շատ տեղ խոստացած է, իրեն յուսացողները պաշտպանելու :

Անոր համար երբեք մի խռովիր Աստուծոյ քեզի տուած հրամաններէն, որչափ դժուարին ալ ըլլայ զանոնք կատարելը : Յուսա՛ իրեն ու քեզի կ'օգնէ :

Թէպէտ եւ անոր կամացը հնազանդութիւնը սաստիկ կարօտութեան մէջ ձգէ զքեզ, բոլոր քու հոգդ իրեն թող տուր : Իր նախախնամութիւնը թող չհտար որ քեզմէ բան մը պակսի<sup>3</sup> :

<sup>1</sup> Սաղմ. Գ. 6 :

<sup>2</sup> Սաղմ. Գ. 11. եւ այլն :

<sup>3</sup> Սաղմ. ԼԶ. 39 :

Թէպէտ եւ չարերուն այսպանութեան ,  
թշնամանաց ու հալածանաց մէջ իյնաս ,  
սակայն մի վհատիր : Աստուած քու  
պաշտպանդ կ'ըլլայ նեղութեան ատեն<sup>1</sup> :

Գ. Արդարներուն՝ Աստուծոյ վրայ  
ունեցած վստահութիւնը , անոր պաշտ-  
պանութեանը գրաւական կամ հաստա-  
տութիւն մըն է : Թէ որ քիչ մը ատեն  
զիրենք թողուցած կ'երեւայնէ ալ , ետքը  
անոնց նորէն խաղաղութիւն կու տայ<sup>2</sup> :

Բետիղուայի բնակիչ քնակ իրենց հար-  
ցը Աստուծմէն բան մը չէին յուսար ան ատեն ,  
երբ որ ամէն ժամանակէ աւելի  
նախախնամութեան աչքն իրենց վրայ  
կը նայէր :

Ողջախոհ Յովսէփ Աստուծմէ չմոռ-  
ցուեցաւ : Երբ որ խաւարին բանար դա-  
տապարտուած շղթաներու տակ կը հե-  
ծէր , յանկարծ անկէ հանուեցաւ եւ  
պատիւներու կատարը բարձրացաւ ու  
բարձրագոյն իշխանութեան հասաւ :

Դ. Բայց նախախնամութիւնն ար-  
դարներն ամէն վախէ ու վտանգէ միշտ  
չ'ազատեր , ու միշտ իրենց բաղձացած ու  
խնդրած կերպովը իրենց պիտոյքը չի-  
հոգար :

Բայց միշտ իր գործքը զարմանալի է ,  
թէպէտ կարօտութենէ ազատէ , թէ-

<sup>1</sup> Սաղմ. 12. 40 :

<sup>2</sup> Սաղմ. ԾԴ. 23 :

պէտ նոյնին մէջ թողու, թէպէտ անիրաւութեան վրէժն առնէ, թէպէտ թոյլ ապ որ անոր զոհ ըլլան :

Իրենց նեղութեանց մէջ, Աստուած համբերութեան շնորհք կու տայ, որով ամէն յաջողութիւններով զիրենք լեցրնելէն աւելի, իրենց օգուտ կ'ընէ :

Ե. Ո՛րչափ քրիստոնեայք կան, որոնք զրբէթէ ամէն բանէ զուրկ ու կարօտ են, սակայն անանկ զոհ ու հաճ են իրենց վիճակին վրայ, որ կարծես թէ ամենեւին պակաս բան մը չունին : Նախախնամութիւնը կ'օրհնեն ու չեն ուզեր իրենց վիճակն աշխարհքիս երջանիկներուն վիճակին հետ փոխել :

Արդ քու ամէն կարօտութեանդ մէջ դիմէ Աստուծոյ ու բոլոր յոյսդ անոր վրայ դիր : Իրմէ ընդունած օգնականութիւններդ շատ անգամ զգալի ու երեւելի ալ չեն ըլլար նէ, անով մի կարծեր որ իրական ու մխիթարական չըլլան :

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Ալե՛սի՛մ Վե՛նաց դերձ Վե՛նայ, սօր խորոշ  
ԸԸԸ՛ան՝ Աստուծոյ շարձայել, Բասախան որ Աս-  
տուծոյ զեղ հոն խաշ ըԸԸ՛այ :

Մարիամ : Ա . Ո՛ՐԴԵԱԿ, ինչո՞ւ այնչափ կը տրանջես քու գանուած վիճակիդ ու հանգամանացդ վրայ : Կ'ըսես



Թէ նոյնին մէջ չեմ կրնար, ինչպէս որ պէտք է նէ, Աստուծոյ ծառայել:

Երկինքը սուրբերով լեցուն է, որոնք քու վիճակիդ ու դրիցդ նման վիճակի ու դրից մէջ սուրբ եղան:

Ես գտայ զԱստուած Եգիպտոս, ուր հարկադրեցայ երթալ, ինչպէս որ Հրէաստանի մէջ գտած էի, ու ջանացի նոյն կերպով իրեն ծառայելու:

Բաւական որ մարդ ամէն տեղ Աստուծոյ շնորհքն ու բարեկամութիւնը պահէ, ամէն տեղ պէտք է գոհ ըլլալ:

Բ. Ինչպէս կ'երեւար, ինձի ու իմ փեսայիս Յովսէփայ շատ ծանր պիտի գար Խորայելացւոց երկիրը թողուլ: Սակայն ամենեւին դժուարութիւն մը չցուցրցինք:

Երբ որ կանչուեցանք, ուրիշ յօժարութիւն չունեցանք, բայց եթէ Աստուծոյ կամքը կատարելու, որն որ յամենայնի մեր միակ կանոնն էր:

Որդեակ, թէ որ քու կամքդ կատարելու ետեւէ չես ըլլար, հապա երկնաւոր Հօր կամքը կատարելու, ան ատեն ինչ վիճակի ու հանգամանաց մէջ որ զքեզ կը դնէ, գոհ կ'ըլլաս եւ ուրիշ վիճակի մը չես բաղձար:

Գ. Աստուած ցուցրցած է ամէն մեկուն՝ իր ճամբան, որուն իւրաքանչիւր ոք պէտք է հետեւիլ սրբութեան հասնելու

Համար: Մեծապէս կը սխալի, ո՞վ որ կը կարծէ թէ անկէ ուրիշ ճամբայ մը բռնելով կրնայ սուրբ ըլլալ:

Առանց շնորհաց օգնութեան մէկը սուրբ չի կրնար ըլլալ. արդ Աստուած կու տայ աս շնորհքն ամէն մէկուն պէտք եղածին չափ ու ան վիճակին համեմատ՝ որուն որ կոչած է, ու ան պաշտամանց համեմատ՝ որոնց սահմանած է:

Ո՞վ որ միայնութեան մէջ քաշուած է, ալ աշխարհքին սէր ու կարօտ պիտի չունենայ: Ո՞վ որ աշխարհքի մէջ մտած ու կապուած է, պիտի չըսէ թէ հոն չեմ կրնար փրկուիլ: Թէ մէկուն ու թէ մէկալին ապահով վիճակն ան է, որուն մէջ որ Աստուած կ'ուզէ որ ըլլայ:

Գ. Ինչ վիճակի մէջ որ մարդ գրանուի, փրկութիւնը շնորհաց հաւատարիմ ըլլալէն կախուած է:

Յովհաննէս Մկրտիչ Յորդանանի գետեզերքը սուրբ եղաւ, ուր որ Աստուած կ'ուզէր որ ինք բնակի: Չուզեց անկէ դուրս ելլել: Իր սրբութեանն աւելի յարմար չտեսաւ առաքելոց վիճակը, որոնք Յիսուսի հետ կը պարտէին ու անոր վարդապետութիւնները կը սովորէին:

Չէ, քու վիճակդ քու սրբութեանդ արդեւք չ'ըլար: Չէ թէ տեղն ու գործքը մարդը սուրբ կ'ընեն, հապա մարդը զանոնք սուրբ կ'ընէ:

Ե. Հասարակօրէն աւելի անհանգրասութեան համար, քան թէ բարւոյ սիրոյն համար իր վիճակէն տարբեր վիճակի մը աչք կը տնկուի :

Ինչ պիտի շահիս վիճակդ փոխելով : առջինէն լաւագոյն պիտի ըլլաս : Տեղն ու հանգամանքը փոխելով բնութիւնն ու նկարագիրը չիփոխուիր :

Մարդն ամէն տեղ պակասութիւնը հետը կը տանի : Դուն զքեզ փոխէ, սրգեակ, ոչ թէ քու վիճակդ ու գործքդ :

Սուրբ ըրէ քու վիճակիդ զբաղմանքները, զանոնք Աստուծոյ վերացընելով, ու անկէ ետեւ ալ չես տրանջեր, որ նոյն զբաղմունքները միտքդ կը ցրուեն :

Մեծ թագաւորութեան մը կառավարութեան զբաղմանց բաղմութիւնը, զԳաւիթ չարգելեց աղօթքի պարապելէն ու օրը եօթը հեղ Աստուծոյ օրհնութիւնները երգելէն<sup>1</sup> :

Զ. Այն թէ միայն զբաղմանց բաղմութիւնը սուրբերը սուրբ ըլլալէն չէր արգելեր, հապա նաեւ նոյն իսկ իրենց սրբութիւնը զիրենք կարող կ'ընէր իրենց պարտքերն աղէկ կատարելու :

Սրբութիւնը՝ ուր եւ ինչպէս կ'ուզուի նէ Աստուծոյ ծառայելու վրայ չէ կայացած, հապա ուր եւ ինչպէս որ Աստուած կ'ուզէ :

<sup>1</sup> Սաղմ. ճԺԲ. 164 :

Աւելի կը փառաւորես զԱստուած ցաւոց անկողնի մը վրայ, [Ժէ որ ինք կ'ուզէ որ հոն գտնուիս, քան [Ժէ՛ երբ որ իրեն հոգիներ շահելու համար աշխատութեանէ հիւծիս ու մաշիս :

Գ Լ ՈՒ Խ Թ Գ .

Աստուծոյ շահարկութեան մէջ սահմանաւորութեանը վրայ :

Ծառան : Ա . ՍՈՒՐԲ կոյս, քու կենացդ ինծի ծանօթ եղած ամէն պարագաներուն մէջ եռանդնոտ աստուածպաշտութեան մեծամեծ օրինակներ կուտաս ինծի :

Այս աստուածպաշտութեան եռանդներ որ զքեզ ամէն տարի Չատկի տօնը կատարելու համար Երուսաղէմ՝ կը բերէր<sup>1</sup> :

Թէպէտ եւ աս մեծ տօնախմբութիւնը կատարելու պարտքը մինակ քու Յովսէփ փեսայիդ կը վերաբերէր, սակայն դուն ալ իրեն ընկերանալէն ետ չէիր կենար :

Բ . ՎՋու՛ Աստուծոյ ունեցած սերդանանկ մեծանձն էր որ ճիշդ ու անհրաժեշտ պարտականութեան չէր կապուեր :

Ո՛հ, ինչչափ ապերախտ եմ ես, մինչեւ հիմա բոլորովին ուրիշ կերպ վարուեցայ ես Աստուծոյ հետ :

<sup>1</sup> Ղուկ . Բ . 41 :

Իր այնչափ բարերարութեանցը զի-  
մացը, ես ազահ ու ուիշտ սիրտ մը ու-  
նեցայ: Պէտք եղաւ որ տիրաբար ինծի  
հրաման տայ, որպէս զի իրեն հնազան-  
դիմ, ու զինքը մեծարեմ:

Մարիամ: Գ. Որդեակ, զԱստուած  
սիրող սիրտ մը ամենեւին բան մը զանց  
չ'առնէր, որն որ կրնայ անոր հաճոյքը լլալ:

Աղէկ չես ճանչնար, թէ սրչափ բանի  
արժանի է քու Տէրդ, որուն կը ծա-  
ռայես, թէ որ անոր ծառայութեանը  
մէջ դուն քեզի կը խնայես:

Մտածէ, որ ինչեր կ'ընեն աշխարհ-  
քին՝ անոր կուսակիցները, ու սովրէ՛ ա-  
նոնցմէ, քու Աստուծոյ ընելիքդ:

Տես անոնց ճիգն ու ջանքը: Աշխարհ-  
քին ծառայութեանը համար ոչ աշխա-  
տութիւն ու ոչ վաստակ կը խնայեն:  
Իրենք զիրենք բիւր անհարթութեանց  
ու անհանգստութեանց մէջ կը ձգեն  
անոր հաճոյքը լլալու համար:

Բայց մեծ դժուարութիւն մըն է քե-  
զի՛ Աստուծոյ հաճոյքը լլալ, եւ ստէպ  
ստէպ աս բարձրագոյն Տիրոջ քու սի-  
րոյդ նշանները ցուցընել: Երբ որ քեզմէ  
կը պահանջուի որ քու սիրտդ շատ ան-  
դամ անոր վերացընես ու նոյն իսկ  
պզտիկ բաներու մէջ անոր հաւատարիմ  
ըլլաս, կը կարծես թէ քեզմէ չափէն  
աւելի նուաստանալ կը պահանջեն:

Գ. Ամօթ չէ՞ քեզի, որ հարկ կ'ըլլայ քու առջեւդ օրինակ դնել աշխարհասէրները, ու անոնց խաւրել որ սովորիս թէ ի՞նչպէս պէտք էս Աստուծոյ ծառայել :

Ո՛հ, մի թողուր որ մեծանձնութեան մէջ աշխարհքիս որդիքը քեզի յաղթեն, մի թողուր որ աշխարհք պարծի թէ իրեններն աւելի եռանդեամբ իրեն կը ծառայեն, քան թէ քրիստոնէից Աստուծոյն՝ անոնք, սրոնք իրենք զիրենք անոր ծառայքը կը կոչեն :

Ե. Ասկէ ետեւ մի ըլլար ան քրիստոնէաներէն, որոնք մեծ աստուածապաշտ կը կարծեն իրենք զիրենք, Աստուծոյ մինակ պատժով հրամայած պատուիրանները ճշդիւ կատարելնուն համար :

Չի՞րնար մի իրաւամբ ասանկներուն վրայ կասկածուիլ որ դիւրաւ յանձն կ'առնուն Աստուծոյ շնորհքը կորսնցրնելու, թէ որ նոյնը անպատիժ կարող ըլլան ընել : Ասանկ մարդիկ աւելի կը վախնան Աստուծմէ, քան թէ զանիկա կը սիրեն :

Չ. Արդեակ, վախցիր Աստուծմէ, որն որ սաստիկ կը պատժէ, բայց աւելի վախցիր աս բարի ու սիրելի Աստուածը բաւական չսիրելէն :

Արնայ մի բարեկամ մը զքեզ իր



խանդակաթ բարեկամը սեպել, մինակ բարեկամութեան ի հարկէ պահանջած բաներն ընելուդ համար :

Սէրը մեծանձն է . մինակ իր ընելու պարտական եղած բաներուն չիկապուիր : Երբ որ մէկն աղէկ կը սիրէ զմէկը , ամէն պատեհ առիթները ձեռքէ չփախցըներ իր բարեկամութեան ցոյցն անոր ընելու :

Է . Թէ որ խանդակաթ սէր ունենայիր առ Աստուած , ինչ որ ընելու ըլլայիր իրեն , միշտ քու ուզածէդ վար կը մնար :

Սիրէ եռանդեամբ ու սէրն աշխատութիւնը կը քաղցրացընէ : Եռանդնոտ սրտի մը մէջ Աստուած անանկ օծութիւն մը կը զեղու , որ իրեն ամենէն աւելի դժնդակ եկող գործքերու մէջ ալ քաղցր զուարճութիւն կը զգայ :

Ծանօթ : Ը . Սիրելի մայրս , ընդունէ քու որդւոյդ՝ ըսած եռանդդ , որուն որ մեծամեծ օրինակներ տուիր ինձի :

Ամբշնալով կը խոստովանիմ , որ քիչ մը դժուարութիւն զիս կ'արգելէ : Չանձրութեան ու ցամաքութեան առջի փորձութեանը կը հաւանիմ : Շատ անգամ մարդկային նկատմունքը , շնորհաց ինձի ազգած բաներուն գործադրութիւնը կ'արգելէ ու զիս անկէ ետ կը կեցընէ :

Ար տեսնես թէ ինչչափ հարկաւորու-

Թիւն ունիմ թելադրութեամբ հոգի առնելու : Ո՛հ, երանի թէ քու փրկաւէտ խրատներդ վառէին սրտիս մէջ ան եռանդնոտ սէրը, որով սիրոյ Աստուածը արժանի է ծառայութիւն ընդունելու :

Գ Լ Ո Ւ Խ ԺԴ .

Թե ի՞նչու՞ է թէ իշխանութիւնն է շնորհքն ինչպէս :

Ա. ՅՈՍՈՒՍ տասուերկու տարւան էր, երբ որ Մարիամայ ու Յովսէփայ՝ Չառկի տօնի ժամանակ իրենց սովորութեանը համեմատ Երուսաղէմ եկած ատեն, անոնց ընկերացած էր :

Տօնը ընդհատուէր ետեւ Մարիամ ու Յովսէփ Կազարէթ դարձան : Յիսուս մինակ՝ առանց անոնց գիտնալուն՝ Երուսաղէմ մնաց : Օրուան մը ճամբայ ընելէն ետեւ, իմացան որ Յիսուս հետերնին չէ :

Ի՞նչ մեծ տրտմութիւն տուաւ իրենց Յիսուսին ասանկ մէջ տեղը չտեսնուիլը : Մանաւանդ Մարիամ՝ որչափ ցաւեցաւ աս կորստեան վրայ :

Բ. Ի՛նչ, ո՛հ Փրկիչ իմ, Մարիամ իր յանցանքովը չկորսընցուց զքեզ : Գուն ինք զինքդ իր աչքէն հեռացուցիր քու երկնաւոր Հօրդ գործոցը զրազելու համար :

Իսկ ես՝ որ այնչափ անդամ, իմ ան-

օրէնութիւններովս զքեզ կորսընցուցի  
ու այնչափ անդամ ստիպեցի զքեզ  
ինձմէ հեռանալու, կրնամ մի աս կո-  
րստեան ու հեռաւորութեան ցաւը՝  
ըստ բաւականին զգալ:

Գ. Մարիամ՝ Յիսուսին մինակ մար-  
մնաւոր ներկայութիւնը կորսընցուցած  
էր ու անոր բարեկամութեանը մէջ էր:  
Իսկ ես աշխարհքիս ամենէն պատուա-  
կան բանն, այսինքն՝ Յիսուսի շնորհքն  
ու բարեկամութիւնը կորսընցուցի:

Կրնան մի աշխարհք ու իր զուար-  
ճութիւնները իմ ըրած կորստիս տեղը  
լեցընել:

Դ. Արանի՛ անոնց, որոնցմէ որ Յի-  
սուս երբէք հեռացած չէ ու միշտ զՅի-  
սուս հետերնին ունին: Անոնք միայն  
զիտեն ու կրնան ըսել թէ երկրիս  
զրախար սրն է:

Ի՛նչ քաղցր ընկերութիւն է Յիսուսի  
հետ ըլլալ, ի՛նչ սքանչելի կենակցու-  
թիւն, ի՛նչ անուշ բարեկամութիւն ու  
ի՛նչ աստուածային յագուրդ ու կշտա-  
ցում:

Ի՛նչ զարհուրելի միայնութիւն է Յի-  
սուսէն հեռու ըլլալ, ի՛նչ խաւարին գի-  
շեր, ի՛նչ արտաքոյ կարգի ողորմելու-  
թիւն ու տարաժամ դժոխք:

Ո՛հ, զՅիսուս կորսընցընողը՝ թէ որ իր  
թշուառութիւնը ճանչնար, զանիկա

նորէն զանելու համար ամէն հարստութիւն, ամէն պատիւ ու կենաց ամէն զուարճութիւնները կը թողուր:

Ե. Դամանակաւոր բան մը կորսընցուցած ատեննիս կու լանք ու անմխիթար կ'ըլլանք, իսկ զԱստուած կորսընցուցած ատեննիս չենք լար, ու ամենեւին բան չենք զգար: Ուր որ քրիստոնէի մը ասկէ աւելի մեծ կորուստ չկայ:

Չէ, չկայ մարդ մը որ բարիք մը կորսընցընէ առանց ցաւի: Ո՛վ Աստուած իմ, բացարձակ ու անբաւ բարութիւն. մարդիկ զքեզ մինակ առանց ցաւի կը կորսընցընեն: Ո՛հ, սրչափ չեն ճանչնար զքեզ:

Չ. Արնայ մի հարս մը, բաւական որ անողջայ չըլլայ, իր ամենատիրելի փեսան կորսընցընելէն ետեւ, հանգիստ ըլլալ:

Արնայ որդի մը, բաւական որ օտարացեալ չըլլայ, իր ազնիւ հայրը կորսընցընելէն ետեւ, ցաւ չունենալ:

Հայր ողորմութեան, տուր քու բարեկամութիւնդ քու տղուդ: Մեր սրտին աստուածային փեսան, տուր իմ սրտիս քու սէրդ:

Տես ու արգահատէ աշուրներէս իջած արցունքներուն, զորոնք առատութեամբ կը հեղում կորսընցուցած բոլոր բարեյս ցաւը զգալով:

Է. Ար զարհուրիմ ու կը դարչիմ ես

ինձ մէ, երբ որ կը մտածեմ թէ ես զիս արժանի ըրի կորսրնցընելու զքեզ, որ այնպէս մեծամեծ նշաններով ինձի ունեցած սէրդ յայանեցիր ու զիս քեզի մօտ տեսնելու ունեցած բաղձանքդ ցուցըցիր:

Ո՛հ, սիրտս բաւական չէ իմ ապերախտութիւնս աղէկ արհամարհելու ու անկէ գարչելու: Չէ, ամէն մարդկան որտեղը մէկտեղ որ դան, չեն բաւեր իմ անօրէնութիւններս անանկ սաստիկ ատելու, որ նոյները գործելովս իմ ունեցած թշուառութեանս հաւատարի:

Որովհետեւ ես ամենէն մեծ ապերախտն եմ, քու ամենէն մեծ ողորմութիւնդ կը խնդրեմ: Անիկա իմ պակասութիւնս ու անկատար զղջումս լեցընէ:

Ը. Այրանի թէ իմ զղջումս զիս լուսաւորող հաւատքին պէս ընդհանուր ըլլար: Նոյն հաւատքը ինձի կը ցուցընէ թէ ինչպէս անհնարին զղուում պիտի ունենամ մեղքէն, ու սրչափ զքեզ պիտի սիրեմ:

Ա՛իմանամ իմ բոլոր ընթացքիս անարժանութիւնը, բայց այնչափ սաստիկ չէի իմանար նոյնը, եթէ քու ինձի ըրած բարերարութիւններդ նուազագոյն ըլլային:

Ո՛հ, իմ այնչափ ապերախտութիւնս քու համբերութիւնդ չկրցաւ լքուցա-

նել : Անանկ զիջողութեամբ ու գթով  
մը ինծի սպասեցիր , որուն վրայ չեմ  
կրնար բաւական զարմանալ ու շնորհա-  
կալ ըլլալ :

Թ . Քու առջեւդ ունեցած խեղճ  
վիճակիս մէջ ինչ բանի վրայ կրնամ  
յոյս ունենալ , բայց եթէ քու մարդա-  
սիրութեանդ վրայ : Փրկիչ իմ Յիսուս ,  
քու բարեկամութիւնդ ինծի նորէն տա-  
լով , ցուցուր թէ մինչեւ ո՛ւր կը հասնի  
քու բարեկամութիւնդ :

Գիտեմ որ քու արդարութեանդ ա-  
մենէն գծնդակ պատժոցն արժանի ե-  
ղայ : Ո՛հ , պատժէ , պատժէ զիս ապրս-  
տամբս , բայց նորէն տուր ինծի ան տեղը  
զորն որ քու սրտիդ մէջ ունէի :

Չեմ ընդդիմանար , վերցուր ինծմէ  
ան ամէն բան , որն որ զիս աշխարհքին ,  
ընչից ու ստացուածոց , մարդկային պա-  
տուոյ ու համբաւոյ , յարգի ու բարեկա-  
մութեան հետ կը կապէ , բայց ամենեւին  
մի թողուր որ մէյ մ՝ ալ զքեզ կորսըն-  
ցընեմ :

Թ . Ո՛հ , թէ կարող ըլլայի իմ սի-  
րոյս հաւատարմութեամբն ու եռան-  
դեամբը քեզմէ հեռու անցուցած ա-  
տեններս ապագայ ժամանակուան մէջ  
ուղղել :

Յիսուս , թող տուր որ նորէն մերձե-  
նամ քեզի : Քու սիրտդ միշտ նոյն է ,



միշտ բաց է զմեզ ընդունելու, թէպէտ  
եւ մոլորած ալ ըլլանք :

Հոն կ'ապաւինիմ : Ո՛հ, թէ կարող  
ըլլայի անկէ երբեք դուրս չելել ու անոր  
մէջ յաւիտեանս ընկղմիլ :

### Գ Լ Ո Ի Խ Ժ Ե .

Թէ զՅիսուս իբր ընչընէլէն ետէս, ինչպէս ե-  
սէր պետք է զանիկա փորձել :

Ա. ՄԱՐԻԱՄ՝ Յիսուսին իր հետք չըլ-  
լալն իմանալուն պէս, սկսաւ մեծ հոգով  
փնտռել, նախ իր բարեկամներուն մէջ  
ու ետքը Երուսաղէմ, ուր որ գտաւ ալ  
զանիկա :

Աս իր սիրելի որդին նորէն տեսնելով  
զգացած ուրախութիւնն՝ անոր հեռա-  
ւորութեանը պատճառած հոգին ու  
ցաւին տեղը լեցուց :

Բ. Ը՛նձն իմ, զՅիսուս կորսընցուցիր :  
Աս քաղցր մօր խնամոցը նմանէ, անոր  
օրինակին համեմատ, ամէն բան թող  
տուր ու զանիկա գտնելու ետեւէ եղիր :

Կարօտով ու արտասուօք խնդրէ զա-  
նիկա ամէն արարածներէն, երկնքէ ու  
երկրէ, օրուան լուսէն ու գիշերուան  
մութէն :

Հասարակօրէն զՅիսուս կը խնդրենք  
ու զանիկա չենք գտներ, վասն զի ինչ-  
պէս որ պէտք է նէ՝ անանկ չենք խըն-  
դրեր : Փնտռուած եղանակէն անանկ մը

կ'երեւայ, իբրեւ թէ զանիկա գտնելը մեզի մէկ ծանրութիւն մ'ըլլայ:

Քու զինքը փնտռելու արագութիւնդ ու զանիկա գտնելու հոգդ ցոյց մը պիտի ըլլայ զինքը կորսընցընելուդ վրայ ունեցած ցաւիդ:

Գ. Իսայց ո՛ւր կրնաս գտնել զՅիսուս: Աշխարհքի՞ն մէջ: Յիսուս անոր յայտնի թշնամին է:

Մի խաբեր նաեւ զքեզ թէ մարմինն ու արիւնը քեզի օգնեն զանիկա գտնելու համար: Մարիամ չգտաւ զանիկա գրացիներուն ու ճանչուորներուն մէջ<sup>1</sup>:

Աւետարանին պատգամացը, սրբոց ու Աստուծոյ պաշտօնէիցը հարցուր ու անոնք քեզի կ'ըսեն թէ ո՛ւր կը գտնես:

Դ. Զո՞ն կրնաս գտնել զՅիսուս, ուր որ Մարիամ գտաւ, այսինքն՝ տաճարին մէջ, աղօթից տունը, հոգեւոր կրթութեանց եւ իր պաշտօնէիցն ու ծառայիցն ընկերութեան մէջ:

Կը գտնես նաեւ զանիկա միայնութեան ու մանաւանդ սրտի միայնութեան, այսինքն՝ կիրքերու լուութեան ու ամփոփման մէջ:

Նոյն իսկ ինք հոն կը կանչէ զքեզ<sup>2</sup>, որպէս զի հոն իր ձայնն ու բերնէն ելած կենաց խօսքերը լսես:

<sup>1</sup> Ղուկ. Բ. 44:

<sup>2</sup> Ովս. Բ. 14:

Հոն փնտուեցին ու կը փնտուեն զՅիսուս ան ամէնքը, որոնք անկեղծութեամբ կ'ուզեն անոր մօտենալ, թէպէտ յանցաւոր կենաց մոլորութեամբ անկէ հեռացած ըլլան, թէպէտ անհոգութեամբ ու կամաւոր ջրմամբ զանիկա աչուրներնուն առջեւէն կորսընցուցած ըլլան :

Ե . Ո՛հ, անձն իմ, ի՛նչ քաղցը խաղաղութիւն կը վայելես զՅիսուս գրանալէդ ետեւ : Յիսուսէն հեռու ի՛նչ երջանկութիւն կրնայ մէկն ունենալ :

Ո՛վ որ զՅիսուս կը դանէ, շուտ մը փորձով կ'իմանայ թէ ասանկ մեծ դանձմը ստուգիւ արժանի է եղեր զինքը փնտուելու աշխատութեան :

#### Գ Լ Ո Ի Խ Ժ Զ .

Թե ի՛նչպէս պէտք է վարուիլ զՅիսուս գրանալէն ետեւ :

Ծառան : Ա . Ո՛վ Մարիամ, դուն նորէն գտար զՅիսուս ու առած Նազարէթ կը բերես : Ի՛նչ երջանկութիւն, նոյն իսկ հրեշտակները քու աս երջանկութեանդ կը նախանձին :

Ի՛նչչափ մայրենի մտադրութեամբ պիտի հսկես ասկից ետքը աս մեծագին դանձիգ վրայ : Ի՛նչչափ աւելի հոգ պիտի ասնիս անոր կենացն ու անձին :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ, ստուգիւ մեծ

երջանակութիւն է զՅիսուս գտնել, որուն ստացումն ապահովցրնելու համար ամենայն ինչ պէտք է ի դործ դնել:

Ծարձան: Գ. Այո սուրբ, դուն սովրեցուր ինծի թէ ինչ պէտք եմ ընել որ մէյ մ'ալ աս բարձրագոյն բարիէն ինք զինքս զուրկ չտեսնեմ:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, աղէկ քննէ թէ ինչ բան զՅիսուս քեզմէ հեռացուց, եւ թէ ինչպէս անոր շնորհքը կորսրնցրնելու եւ զանիկա քեզի թշնամի ընելու հասար:

Անոր ծառայութեան մէջ թուրնալէն ու անհամար անհոգութիւններով յանցաւոր գտնուելէն չակամբ մի, պահք զՅիսուս քեզմէ պաղեցուցին:

Յաճախ անհոգութիւնները՝ Յիսուսին ու մեր մէջ անողալապէս բաժանման պատ մը կը շինեն:

Չողոքեցիր երբեք քու վտանգաւոր մէկ կիւրքդ, փոխանակ քու սրտիդ մէջ վառուած կայծերն իմացած իդ պէս շուտ մը ճնշելու:

Երբոր Աստուած քեզմէ քանի մը մարդկային միտութեանց ու յօժարութեանց նուէրն ուղեց՝ չզլացամբ արդեօք իրեն:

Ե. Ո՛վ որ Աստուծոյ խնդրած նուէրը կը զլանայ, ինք զինք կը զրկէ անոր ատշուղթեանը մասնաւոր վարչութենէն, որն

որ կը զգուշացնէ՛ ու ողբալի մտորու-  
թենէ՛ կը պահէ՛ :

Երբոր կ'իմանաս թէ աս կամ ան  
պատճառները Յիսուսին քեզմէ հեռա-  
նալուն առիթ եղած են, չարեաց հիմն  
ու սկիզբը փնտռէ : Պատճառը կտրելով  
կրնայ մինակ գործքը կտրուիլ :

Արկին մտադրութեամբ հսկէ վրադ :  
Ամէն կարելի հոգով սիրտդ պահէ՛ ,  
ու անկէ դուրս մի հեռանար :

Ջ. Սիրտը երբեք չի կրնար վնասիլ ա-  
ռանց մեծ վտանգի : Սրտին պահպանու-  
թենէն՝ նոյն իսկ կենաց ու հոգւոյ պահ-  
պանութիւնը կախուած է :

Մեծ բաներու մէջ անհաւատարիմ  
չըլլալու վախով, պզտիկ բաներու մէջ  
հաւատարիմ եղիւր : Թեթեւ պահու-  
թեանց արհամարհութիւնը, կամաց կա-  
մաց մեծամեծ պահսութեանց կը տանի<sup>2</sup> :

Յիսուս բաժնուած սիրտ չ'ուզեր : Ինչ-  
պէս որ քու սիրտդ ամբողջ ստեղծեց,  
նոյնն ամբողջ իրեն կ'ուզէ առնուլ :

Է. Ըն պզտիկ պահսութիւնները, զո-  
րոնք այնպէս դիւրաւ դուն քեզի կը նե-  
րես, որդեակ, ու այնչափ հեղգ անձինք  
բանի տեղ չեն դներ, առանց իմանալու  
Յիսուսէն կը հեռացընեն ու նոյն իսկ  
զՅիսուս անզգալապէս կը տարագրեն :

<sup>1</sup> Առակ. Դ. 23 :

<sup>2</sup> Սիր. ԺԹ. 1 :

Յիսուսին բարեկամութիւնը բոլորովին չեն վերցըներ, սակայն անոր կը պատրաստեն: Յիսուս անանկ պակասութիւններն իբրեւ պաղութեան նշան կը տեսնէ ու սա պաղութիւնն իր շնորհացը թիւը կը նուազցընէ:

Հաւատարմութիւնն է որ Յիսուսի եւ արդարոյն սրտին մէջ եղած քաղցր հազորդութիւնը հաստատուն կը պահէ:

Ը. Յիսուսի հետ այնպէս վարուէ, ինչպէս կը բաղձաս որ ինք քեզի հետ վարուի: Արբաղձաս որ Յիսուս իր սիրոյն ամէն հարատութեանց դանձր քեզի բանայ, դուն ալ քու բոլոր սիրտդ անոր բաց:

Անոր ծառայութեանը մէջ ճիշդ ու ռիշտ ըլլալը նեղ ու անձուկ սրտի նշան է: Իրմէ դուրս ուրիշ բանի մը սէր ու նենալն իրեն նախանձ մը կը բերէ:

Մարդ իր սիրած անձին պզտիկ մէկ խօսքն ալ սիրով կ'ընդունի: Միշտ մի եւ նոյն սիրալիր ու հաւատարիմ պատրաստութեամբ ընդունէ Յիսուսին ազդեցութիւնները՝ թէպէտ մեղքէ հեռանալու, թէպէտ առաքինութեանց մէջ աճելու միջոցներ ազդէ իր շնորհքովը:

Ծարտան: Թ. Ս'ի Աոյս, որ կատարելապէս ճանչցար, թէ ինչ է սէրն ու հաւատարմութիւնը, կը յուսամ որ Յիսուսի շնորհացը օգնականութեամբը, զորն որ դուն կը հաճիս ինձի համար



խնդրելու, քու խրատներդ կը գործադրեմ:

Բայց, կոյս սուրբ, ներէ որ մէկ վախաբանեմ: Արդեօք ասանկ տկարութեամբ պիտի չկորսընցընեմ մէյ մ'ալ զՅիսուս, պիտի չկորսընցընեմ զանիկա ընդ միշտ:

Մարիամ: Ժ. Ո՛րդեակ, աղէկ է որ կը վախնաս, եւ եթէ աս վախը դուն չունենայիր, ես ետեւէ պիտի ըլլայի, որ նոյնք քու սիրտդ շնչեմ:

Բայց աս վախը պէտք չէ խռովութեամբ ու անհանգստութեամբ խառն ըլլալ: Մանաւանդ թէ ասոր հակառակ Աստուծոյ վրայ ունեցած վստահութեամբդ պիտի չափաւորուի:

Քու կողմանէդ կրցածդ ըրէ, Յիսուսի սիրոյն մէջ յարատեւելու համար ու իր բարութենէն սպասէ յարատեւութեան շնորհաց:

Ծառան: ԺԱ. Ո՛վ քաղցր մայր, ինչ տարժանելի անատուգութիւն է ասիկա անանկ անձի մը, որն որ յարատեւութենէ պակսելէն սոստիկ կը վախնայ, սակայն Աստուած զանիկա կը թողու որ չզիւնայ թէ արդեօք պիտի յարատեւէ:

Մարիամ: ԺԲ. Ո՛րդեակ, աս անատուգութիւնը չէ թէ միայն քու, հապաամէն պանդխտութեան ճամբուն մէջ եղողներուն բաժինն է: Աստուած աս

ասնկ ուզեց, որպէս զի չըլլայ թէ յան-  
դրդնութեան վտանգի մէջ իյնաս :

Նոյն անտուգութիւնը պէտք է զքեզ  
խոնարհութեան մէջ բռնել, քու վրադ  
անվստահութիւն տալ եւ քու փրկու-  
թիւնդ ահիւ եւ դողութեամբ ընել  
տալ :

Մինակ երկիրքը կարելի է ամէն վա-  
խերէ ազատ ըլլալ, ու միշտ Յիսուսի  
հետ ըլլալու երջանիկ վստահութիւնն  
ունենցուիլ :

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Հասարակ մէջ պէտք է ցամառանիւտան ա-  
րին է- երբոր Յիսուս իր հետապետ իւ-  
ր թոշակով, վճարել :

Ա. ԱՍՏՈՒԱԾ երբեմն արդարներու  
հետ անանկ կը վարուի, որ կը շփոթին  
ու կը խռովին : Անոնց հաւատարմու-  
թիւնը փորձելու համար քիչ մը ատեն  
իր զգալի ներկայութիւնը ետ կը քաշէ :

Ասանկ ըրաւ Յիսուս իր սուրբ մօրը :  
Նախատես եղած էր թէ որչափ վիշտ  
պիտի պատճառէ անոր իր հեռաւորու-  
թիւնը, այսու ամենայնիւ քիչ մը ատեն  
անկէ հեռացաւ, ու առանց անոր գիտ-  
նալուն տաճարը մնաց :

Բ. Ո՛վ քրիստոնեայ, եթէ Աստուած  
նոյն եղանակաւ զքեզ ալ փորձելու կը

հաճի, մի խոսովիր, քաջ եղիր. համբե-  
րութեամբ անոր դարձին սպասէ :

Թէպէտ եւ միշտ քու խնդրած ա-  
տենդ իր օգնականութիւնը տալու հա-  
մար քեզի մօտ է, սակայն աղէկ է որ  
երբեմն երբեմն քեզմէ հեռացած ե-  
րեւայ, որպէս զի իմանաս թէ ինչչափ  
խեղճ ու ողորմելի կ'ըլլաս, երբոր զինքը  
բոլորովին կորսնցրնես :

Երբոր իր մխիթարութիւնները մէկու  
մը կու տայ, զանիկա իր վշտացը մէջ  
անասան պահելու համար կու տայ : Իսկ  
ետքը, երբոր թոյլ կու տայ որ ցամա-  
քութիւն ու հոգւոյ Լքում ունենայ,  
անոր համար կ'ընէ, որպէս զի իր անոր  
բրած մեծամեծ բարերարութիւններովը  
չհպարտանայ :

Գ. Յիսուսի ամէն բարեկամները,  
կամ գէթ խիստ շատերը, ասանկ փո-  
փոխակի՝ մէյ մը ուրախութիւն, մէյ մը  
տրամուծիւն, մէյ մը ջերմեռանդու-  
թիւն ու մէյ մը ձանձրութիւն, մէյ մը  
խաղաղութիւն ու մէյ մը փորձութիւն  
ունեցած են :

Երբոր Յիսուս իրենցմէ հեռացած ու  
իբրեւ թէ զանոնք իրենց թողուցած կ'ե-  
րեւար, ան ատեն իրենց տկարութիւնը  
կը զգային, բայց ամենեւին չէին վհատիր,  
ինչու որ, գիտէին, թէ որչափ որ իր մօ-  
տաւորութիւնը զգալի ալ չէ նէ, իր

օգնականութիւնը միշտ ստոյգ ու ապահով է :

Գիտէին, թէ Աստուած մեր կրած տառապանքը յառաջունէ տեսած է, անոր համար անոնցմէ մեզի օգուտ հանելու միջոցները պատրաստած է :

Գ. Աստուծոյ շնորհքը զքեզ քաղցրութիւններով ու մխիթարութիւններով պահելու որ ըլլար, դիւրութեամբ ու հանգստեամբ կ'ապրէիր, սակայն մի կարծեր որ ան ատեն աւելի յառաջացում կ'ընէիր :

Առաքինութեան մէջ ան ատեն աւելի յառաջադիմութիւն ունեցար, երբ որ ցամաքութեան մէջ իյնալով համբերութեամբ, խոնարհութեամբ ու հնազանդութեամբ կրեցիր նոյն լքումն, ուր որ Աստուած զքեզ ձգած կ'երեւար :

Ե. Աս վիճակը, ստոյգ է, արամալի է, ինչու որ միշտ կը վախցուի, որ նոյնը չէ թէ փորձ, հապա պատիժ ըլլայ :

Այսու ամենայնիւ, սով քրիստոնեայ, երբոր նոյն վիճակին մէջ կը գտնուիս, չէ թէ միայն քու վստահութիւնդ մի կորսընցընէր, հապա նաեւ միշտ յուսն. հաստատութեամբ յուսն որ քիչ մը ետքը սիրելիդ կը տեսնես առջինին պէս քաղցր ու սիրուն եւ թէ փորձը երկայն շիտեւեր, ինչպէս որ Մարիամայ փորձն ալ երկայն շտեւեց :

Զ. Ան առեն աս աստուածային մօր  
իր Արդին գտնելու համար ունեցած հո-  
գողութեան ու ջանքին նմանող եղիր :

Անոր պէս՝ սուրբ բաղձանքով մը եւ  
սուրբ անհամբերութեամբ մը զՅիսուս  
գտնելու ետեւէ եղիր :

Բայց մի տրանջեր : Յիսուս բան մը  
պարտական չէ քեզի : Ամբ եթէ արը-  
տունջ մ'որ կ'ընես, Մարիամայ պէս՝ սի-  
րոյ արտունջ ըլլայ :

Է. Ո՛րդեակ, ըսաւ, ինչ ըրիր մեզի<sup>1</sup> :  
Տառապած էինք զքեզ կորորնցընելուս  
վրայ :

Գուն ալ աս կերպով ըսէ . Ո՛վ Յի-  
սուս իմ, ինչո՞ւ իմ սիրտս ասանկ խիտ  
փորձի մը տակ դրիր : Գուն գիտես թէ  
սրչափ վիշտ է ինձի քու հեռաւորու-  
թիւնդ :

Արդեօք իմ կողմանէս անհաւատար-  
մութիւն մ'ընելուս համար ստիպուեցար  
ինձմէ ասանկ հեռանալ :

Թէ որ քեզի անհաճոյ եղող վար-  
մունքով մը աս հեռաւորութեան պատ-  
ճառ տուի նէ, թողութիւն տուր, Տէր :  
Ասկից ետքն աւելի ուշադրութիւն կ'ու-  
զեմ ընել փախչելու ան ամէն բանէ, որն  
որ կրնայ քեզի անհաճոյ ըլլալ :

Քու ինձի հետ խտուութեամբ վա-  
րուելուդ պատճառն ինչ որ կ'ուզէ՝ ը-

<sup>1</sup> Ղուկ. Բ. 49 :

լայ, ես կը հնազանդիմ քու ուղածիդ  
պէս եւ այնչափ ատեն որչափ որ դուն  
կ'ուզես՝ փորձի տակ իյնալու, միայն թէ  
քու սէրդ սրտիս մէջ պահեմ:

Գ Լ Ո Ի Խ Թ Ը .

Քաշտած իմ ծածկոտած իննաց լրաց:

Ծառան: Ա. ՍՈՒՐԲ կոյս, մեկնէ ին-  
ծի քու Նազարեթի մէջ անցուցած ան-  
ծանօթ ու ծածուկ կենացդ գաղանխքը:

Հրապարակաւ որ երեւնայիր, կրնայիր  
անտարակոյս շատերուն սիրտը Յիսուսին  
ձգել:

Մարիամ: Բ. Ո՛րդեակ, ես ինծի փառք  
կը համարիմ նմանիլ Յիսուսին, որն որ  
երկրիս վրայ երկայն ատեն Աստուած  
անծանօթ՝ ուզեց ըլլալ:

Յիսուս եկած էր աս աշխարհքս իր  
վարդապետութեամբը մարդկան սովըն-  
ցընելու որ փառաւորութիւններէ փախ-  
չին ու խոնարհ ըլլան: Յառաջ քան  
նոյնը խօսքով սովընցընելը, Նազարեթի  
մէջ իր ծածուկ կեանքովն անոր օրինակը  
տուաւ:

Երկնաւոր Հայրը կ'ուզէր Յիսուսի  
թաքուն կեանքովը փառաւորուիլ: Յի-  
սուս ալ աս ծածուկ կեանքն աւելի վեր  
սեպեց ան դքանչելիքներէն, զորոնք կըր-  
նար ընել:

Ն. Ե. Խ. 15:



Գ. Ասով սովրեցուց որ մարդկան մեծ մասին կատարելութիւնն ու արդիւնքը չէ թէ Աստուծոյ համար մեծամեծ բաներ ընելու վրայ, հապա Աստուծոյ կամայր կատարմանը համար եղած ձեռաց աշխատութեան եւ աշխարհքին առջեւ ցած ու անարգ եղող բաներու զբաղելու վրայ կայացած է:

Ուզեց նաեւ մարդկան այն սուտ դազափարն ուղղել, զորն որ նոյն իսկ սրբութեան վրայ ունին, կարծելով թէ հոն միայն կայ սրբութիւն, ուր յայտնի առաքինութիւններով կը ցուցուի:

Քայց ամենէն աւելի կը դատապարտէ ասով այն սատարիկ ջանքը, զորն որ մարդկան մեծ մասն ունի, հրապարակաւ երեւնալու, եւ այն ուրիշէն յարգուելու, գովուելու եւ պատիւ դանելու բաղձանքը:

Գ. Ո՛րդեակ, սիրէ ծածկուած, անծանօթ ու մոռցուած ըլլալ: Աստուած քու գործքիդ հաւնելէն ետքը, ինչ պէտք է քեզի աշխարհքին հաճութիւնը: Աշխարհք ու անոր հետ ամէն բան կ'անցնի:

Նազարեթի մէջ ինծի հետ ունէի ղՅիսուս: Ես անոր սէրն ունէի ու անիկա իմ սէրս: Ասկէ աւելի ինչ պէտք է երջանիկ ըլլալու համար:

Ե. Երկրի պզտիկ անկիւն մը, ուր մինակ խաչելութեամբ մը բոլորովին ան-

ծանօթ կարենաս ապրիլ, պէտք է որ  
թագաւորներու ամէն պալատներէն ա-  
ւելի ընտրելի ըլլայ . քեզի :

Հոն կրնաս գտնել սրտի սուրբ բեկ-  
ման արտասուաց աղբիւրը, որ աւուր  
վրայ քու անօրէնութիւններէդ զքեզ  
աւելի լուարու համար :

Հոն, միշտ աւելի ընտանութեամբ  
Յիսուսի հետ միանալով, կրնաս անոր  
սիրոյն մէջ արքայութեան նախաճաշակն  
առնուլ :

Չ. Թաքուն ու ծածուկ կեանք մը  
քեզի տխուր կ'երեւայ, ինչու որ անոր  
քաղցրութեանցը ճաշակն երբեք չես  
առած :

Թէ որ նոյն քաղցրութիւնները ճա-  
շակելու սկսած ըլլայիր, կը տեսնէիր որ  
աշխարհքին պատիւներն ու զուարճու-  
թիւնները բոլորովին սնտախ են, իսկ  
զանոնք փնտռողներն ալ աւելի սնտախ :

Ստոյգ է, ասանկ կենաց մը մէջ շատ  
կատականք կրելու է աշխարհասէրներէն,  
որոնք կ'ապշին ու կը զարմանան թէ՛  
ինչպէս իրենց զուարճութիւնները կ'ա-  
նարգուին, բայց նոյն իսկ նա կատականքը  
մեծ օգուտ կ'ընէ, ինչու որ աւելի սեր-  
տիւ զմեզ Յիսուսի հետ կը միացընէ,  
զորն որ մինակ կը փնտռենք :

Է. Որդեակ, քիչերը կան՝ որ խաղա-  
ղութեան մէջ կ'ապրին, քիչերը կան՝ որ

Հողեւոր ու իրենք իրենց ժողվուած ըլ-  
լան, ինչու որ քիչերը կան որ Յիսուսի  
հետ մինակ ըլլալու համար՝ իրենք զի-  
րենք բազմութեան ու ամբօխին մէջէն կը  
հանեն:

Կան ալ, որ հրապարակաւ հողեւոր  
կենաց տուած են իրենք զիրենք, բայց  
վրանին շատ նուազ ճշմարիտ ու հաս-  
տատուն աստուածապաշտութիւն կը  
տեսնուի: Ասորպատճառն ան է որ շատ  
գուրս տարածուած են, կ'ուզեն հրապա-  
րակաւ երեւնալ:

Գրեթէ մինակ խօսքով հողեւորասէր  
են: Եւ իրաւցընէ ալ հողեւոր բաներու  
վրայ խօսին աւելի դիւրին է, քան թէ  
նոյները գործադրելը:

Ը. Շնորհքն երկայն ատեն չիկենար  
ցրուեալ կամ երկնաւոր փեսային աչքէն  
ուրիշ աչքեր իր վրայ ձգելու՝ ետեւէ  
եզող անձին վրայ:

Խնդրէ Յիսուսէն՝ անոր իր սուրբերուն  
տուած լոյսերէն մէկը, որոնք որ զիրենք  
Քրիստոսիւ յԱստուած ծածկուած կե-  
նաց՝ երջանկութեան վրայ լուսաւորեցին:

Գ Լ Ո Ի Խ ԺԹ.

Ներքին ինչոյ վրայ:

Ա. ԼՈՒՆՆՁԻՆ եղանակաւ մը Մա-  
րիամայ կը պատշաճի Հողեւորն սրբոյ ան

1 Կող. Գ. 3:

վկայութիւնը թէ Սիոնի դասեր ամէն փառքն իր ներսն է<sup>1</sup> :

Ի՛նչ որ Ս. Աստուածածնայ վրայ դրսէն կը տեսնենք, իր ներսն եղածներուն համեմատութեամբ ոչինչ են :

Միտքդ բեր աս կոյս մայրը Նազարէթ՝ իր տանը մէջ : Մտի՛ր մինչեւ իր ներսը ու հոն առաքինութիւն սովրէ :

Բ. Ո՛վ կրնայ ստորագրել իր իղձերը, յօժարութիւններն ու բաղձանքները, ո՛վ կրնայ ըսել թէ ինչեր կ'անցնէին աս պատուական սրբարանին մէջ :

Իր բոլոր հոգւոյ կարողութիւնները քեզի հետ էին, ո՛վ Աստուած իմ, դուն միայն էիր իր ամէն գործոցը սկիզբն ու վախճանը :

Դուն միշտ անոր սրտին առջեւն էիր, ամէն արարածներու վրայ զքեզ կը տեսնէր : Բան մը չէր կրնար զինքը քեզմէ բաժնել, ինչու որ ամէն բանի մէջ դուն իր ամէն բանն էիր :

Գ. Ի՛ր դատաստանները քու յաւիտենական իմաստութեանդ սկզբանցը վրայ կանոնաւորուած էին, իր գնացքը քու հոգւովդ կ'առաջնորդուէր, իր ընկերակցութիւնն ու խօսակցութիւնը քու սիրովդ լեցուած էր :

Մարիամ ամէն աշխարհային հաղորդութիւններէ հեռացած ու սոսկ մարդ-

<sup>1</sup> Սաղմ. ԽԴ. 14 :

կային տեսութիւններէ ու մտածմունքներէ բոլորովին ազատ հոգւով, Աստուծոյ ու իր անային զբաղմանցը կը պարապէր :

Թէպէտ եւ մասնաւոր առանձնաշնորհութեամբ իր սրտին շարժմանցը վրայ իշխանութիւն ունէր, այսու ամենայնիւ սաստիկ զգուշութիւններ կ'ընէր իր սրտին մէջ օտար բաներու ամենեւին մուտք չտալու համար :

Գ. Աստուծոյ եւ կամ անոր պատուոյն համար չեղող յօժարութենէ, խորհրդէ ու բաղձանքէ, որչափ որ ամենափոքր ու անտարբեր բան ալ ըլլար, իբրեւ մեծ պակասութենէ կը գարշէր :

Աս օրինակէն կ'երեւայ թէ ինչ բանի վրայ կայացած է ներքին կեանքը : Այսինքն՝ ինք իրեն հսկելու վրայ, սրտին վրայ, որպէս զի անոր բոլոր յօժարութիւնները մինակ Աստուծոյ համար ըլլան, ու մտաց վրայ, որպէս զի ամէն բան անոր խորհուրդներն Աստուծոյ վերացընելու առիթ ըլլան :

Ե. Աս հսկողութիւնը, իբրեւ թէ ամէն իժիր բաց աչք մըն է, բնութենէն յառաջ եկած բաներն ընտրելու եւ նուաճելու ու նոյնպէս շնորհքէն յառաջ եկածներն որոշելու ու անոնց հաւատարիմ գտնուելու համար :

Աս հսկողութեամբ մարդ շնորհք ու զօրութիւն կ'ընդունի որ երբեք բնական

ու զգայական շարժառիթներու՝ համար  
բան չգործէ :

Առանց աս արթնութեան, յաճախա-  
կի մեծամեծ սխալմունք ու կորուստ կ'ընէ  
մարդ . իսկ ասով՝ առանց արտաքուստ  
կարգէ դուրս բաներ ընելու, մարդ կրնայ  
յաճախ ու մեծամեծ առաքինութեան  
ներդործութիւններ ընել :

Ո՛րչափ սուրբ միանձունք ու սուրբ  
կուսանք երանելեաց առջի կարգը հասան  
մինակ ներքին կենաց արդիւնքով :

Ձ. շէս առնուր Հոգւոյն սրբոյ ուրա-  
խութեան ու խաղաղութեան՝ ճաշակը,  
քանի որ ներքին զգածմանցդ շէս հսկեր :

Ներքին մարդը կրնայ ինք իրեն տէր  
ըլլալ : Որովհետեւ հոգին գերող ու  
կիրքերը բորբոքող յարձակումներէն ինք  
զինք պահելու համար, իր վրայ հսկողու-  
թիւն կ'ընէ, ու հասարակ համբերու-  
թիւն ունեցող մարդը սասանեցընելու  
բաւական եղող գէպքերուն մէջ իր սրբ-  
տին խաղաղութիւնը կը պահէ :

Իսկ ասոր հակառակ արտաքին կամ  
զրոսի երեւոյթներով մինակ շատացող  
մարդը խաբէութիւններ կը մտածէ, բիւր  
տեսակ իր աշխատութեանը չարժող ըն-  
դունայն բաներու ետեւէ կը ձգնի կը  
ջանայ, ու անոնց համար իր հանդիսան  
ու խաղաղութիւնը կը կորսընցընէ :

1 Հռոմ. ԺԳ. 17 :



Է. Ներքին մարդը մինակ ըստ Աստուծոյ իմաստութիւնը կը ճանչնայ, որն որ երկրային բաներուն ոչնչութիւնը իրեն յայտնելով, իր խորհուրդներն ու ատեալութիւնները մինչեւ երկնային բաներու նկատութեանցը կը հանէ :

Արտաքին մարդը մինակ մարմնոյ խորհեմութեան խորհուրդ կը հարցընէ : Ի՞նչ որ անկէ հեռու կ'երեւայ, իր աչքին առջեւ լուսաւորութեան պակասութիւն է ու երբեմն նաեւ յիմարութիւն :

Մէկը միշտ զգայնոց նենգութիւններէն ու պատրանքէն կը զգուշանայ, իսկ մէկաւն ամէն բան ըստ զգայնոց կը դատէ, ամէն բանի մէջ ըստ զգայնոց կը վարուի ու ամէն բան անոնց կը վերածէ :

Ը. Վուցնծութիւնդ ըլլայ Աստուծոյ վրայ մտածել, ամէն բանի մէջ զԱստուած փնտուել, ամէն բան Աստուծոյ վերածել ու ան ատեն քու ներսդ Աստուծոյ արքայութիւնը կ'ունենաս :

Յիսուսին ըսած այն ճշմարիտ երկրպագուն կ'ըլլաս, որն որ հոգւով ու ճշմարտութեամբ զԱստուած կը պաշտէ<sup>1</sup> :

Ինչո՞ւ համար մարդիկներէն շատերը խռովութեան ու տրտնջմանց մէջ են Վասն զի բոլորովին արտաքին կեանք մը կը վարեն : Մինակ երկրաւոր բաներու կը պատաղին :

<sup>1</sup> Յովհ. Դ. 23 :

Նոյն իսկ անոնք, որոնք որ իրենց կենաց տարազովը կ'երեւան թէ միշտ Աստուծոյ հետ ըլլան, իրենց երեւցածին պէս չեն: Իրենց սիրտը շատ անդէպ յօժարու թիւններու բաժնուած ու միտքը անհամար ընդունայն խորհրդոց ցրուած է:

Թ. Ներքին մարդուն խորհուրդներուն կենդրոնը մինակ Աստուած է, ու անոր մտադրութիւնն ու սիրտը մինակ Ճաստուած է: Ուրիշ ինչ որ ըլլայ, սրչափ փառաւորութիւն ունեցող բան ալ ըլլայ, ամենեւին զինքը չիշարժեր:

Մարդուն արտաքինը պէտք է որ ներքինէն կանոնաւորուի. բայց շատերն աս կարգը կը յեղաշրջեն. անոնց քով արտաքինը՝ զներքինը կը կանոնաւորէ ու կը խտտորեցնէ:

Ժ. Արդ սովորէ միշտ քուներսդ բնակիլ ու դադարիլ ու արտաքին բաներու այնչափ միայն ինք զինքդ պատաղցուր, սրչափ որ Աստուած կը պահանջէ:

Բայց նոյն իսկ քու վիճակիդ պարտուցը համար արտաքին բաներու զբաղած ատենդ քու յօժարութիւններդ ու դիտաւորութիւններդ քննելու համար՝ զքեզ քուներսդ կանչող շնորհաց հրապուրանացն անտա՛:

Ներքին կեանքը մասնաւոր վիճակի ու ժամանակի յատուկ բան մը մի կարծեր: Ամէն վիճակի ու նոյն իսկ սաստիկ

աղմկալից հողերու մէջ ներքին կեանք  
կրնայ պահուիլ :

ԺԱ. Արնայ ըլլալ աղքատութեան  
ու հարստութեան մէջ, հիւանդութեան  
ու առողջութեան, գործքի ու հանգրո-  
տեան, մրրկի, փորձութեան ու հանգար-  
տութեան եւ խաղաղութեան ատեն :

Չկայ կենաց վիճակ մը, որուն մէջ մարդ  
չկարենայ ինք իր ներսը մտնել, տեսնելու  
համար թէ հոն ինչ կ'ըլլայ :

ԺԲ. Իայց ան ատենը մանաւանդ  
ներքին կենաց կրթութեանցը ետեւէ  
ինկիր, երբոր Աստուած զքեզ ուրիշնե-  
րուն հոգւոցը խնամ տանելու համար կը  
կոչէ : Եթէ նոյն ատեն աս կատարելու-  
թեան միջոցը ձեռք չես առներ, ինք  
զինքդ շատ դուրս կը տարածես ու աւ-  
ելի զքեզ կը փնտռես, քան թէ զԱս-  
տուած :

Աստուած ալ քու ձեռքովդ առա-  
քինութեան մէջ հոգւոց յառաջադի-  
մութիւն չ'ընէր, ինչու որ մարդ իր հա-  
զիւ ճանչցած բանն ուրիշներուն չիկրնար  
գործադրել տալ :

Գ Լ Ո Ի Խ Ի .

Լրտեսութեան վրայ :

Ծառան : Ա . ԹԱԳՈՒՆԻ առաքինու-  
թեանց, քեզի կու դամ լուութիւն ու  
ատենին խօսիլ արվելու համար :

Գուն անանկ կատարեալ եղանակաւ լուսթեան առաքինութիւնը ի գործ դրիր, որ ամենէն ազէկ կրնաս ինծի անոր գործադրութիւնը սովրեցընել:

Աւետարանը քու խօսքերէդ մէկ քանին մէջ կը բերէ, որոնցմէ կը տեսնեմ թէ դուն մինակ առաքինութեան մը վախճանաւ կը խօսէիր:

Բ. Ինչչափ սրբութեան սէր, խոնարհութիւն ու հնազանդութիւն կար ան խօսքերուդ մէջ, զորոնք յանուն ամենասուրբ Երրորդութեան զքեզ ողջունելու եկող հրեշտակին ըսիր:

Եղիսաբէթին տունն՝ Աստուծոյ տուած պարգեւներուն շնորհակալ ըլլալու համար խօսեցար: Երբոր զՅիսուս նորէն տաճարին մէջ գտար, քու մայրենի սէրդ անոր յայտնելու համար խօսեցար, ու կանայ հարսանեաց մէջ ուրիշներուն պիտոյիցը համար խօսեցար, զորն որ ընկերսիրութիւնը քեզի իբրեւ պարտք դրած էր:

Գ. Իայց շատ անգամ անանկ պարագաներու մէջ ալ, ուր կ'երեւայ թէ կը պահանջուէր որ քովիններուդ քու զգածումդ կամ միտքդ յայտնէիր, լուս կը կենայիր:

Ասանկ ըրիր Յիսուսի ծնանելու ժամանակն եղած սքանչելիքը տեսնելու ու անոր առջի երկրպագութիւն ընողներուն

պտտմածները լսելու ատենդ : Անոնց ը-  
տածներէն բան մ'ալ մտքէդ չէիր հաներ :  
Հապա , ինչպէս աւետարանը կ'ըսէ<sup>1</sup> սուրբ  
լուծեամբ մը զանոնք սրտիդ մէջ կը  
պահէիր :

Տաճարին մէջ մանուկ Յիսուսն ըն-  
ծայելու ատենդ զարմանալի լուծիւն  
պահեցիր , զորն որ աւետարանիչը զանց  
չ'առնէր ըսելու , ինչու որ անիկայ մեզի  
խրատ պիտի ըլլար :

Ետքը Յիսուսին հետ Գողգոթա լեռն  
ելար , անոր խաչին քովն ոտքի վրայ  
կեցար , իր վերջին հառաչանքն ընդու-  
նեցար : Բայց բոլոր նոյն ատենը համբե-  
րուծեամբ ու ինք զինքդ Աստուծոյ կա-  
մացը յանձնելով , քու կողմանէդ կա-  
տարեալ լուծիւն պահեցիր :

Մարիամ : Գ . Ո՛րդեակ , իմ լուծիւնս  
քեզի կը խօսի : Ամէն աստուածապաշտ  
հոգիներ շատ աղէկ կը հասկընան անոր  
լեզուն :

Իմ ամբիփման ու ինքզինքս ժողվելու  
հոգիս էր որ աս լուծիւնն ինձի կը շն-  
չէր , զորն որ ան ամէն աւիթներու մէջ  
կը պահէի , որոնց մէջ Աստուծոյ փառքը  
եւ ընկերին սէրը չէր պահանջեր որ  
խօսէի :

Իմ լուծիւնս քեզի կը սովընցընէ  
որ մարդ ինք իրեն քաշուած ունէրս

<sup>1</sup> Ղուկ. Բ. 19 :

Ժողովուած ըլլալու համար, պէտք է քիչ  
խօսիլ, մտածելով խօսիլ, ու գրեթէ  
չխօսիլ, բայց միայն ըստ Հոգւոյն սրբոյ,  
որն որ իրեն խորհուրդ հարցընողին սրբ-  
տին մէջ կ'ազդէ՝ ինչ որ պէտք է խօսիլ:

Ե. Շատ խօսիլ սիրելը ցրուեալ  
սրտի ու մտաց նշան է, եւ աս ցրումն  
իսկ մեծ չարիք մըն է:

Աստուած պաշտութեան զգածումնե-  
րը խօսակցութեանց մէջ դիւրաւ կը ցըն-  
դին: Լուսութիւնը զանոնք կը պահպանէ  
ու կը զօրացընէ:

Քիչ մարդիկ կը գտնես, որոնք իրենց  
լուս ըլլալուն համար զղջան. իսկ ասոր  
հակառակ շատերը կը գտնես որ շատ  
խօսելուն համար կը զղջան:

Զ. Իմաստունն ան ատեն մինակ կը  
խօսի, երբոր խօսելու ժամանակն է<sup>1</sup>,  
այսինքն՝ երբոր դէշ կամ անդէպ է լուելը:

Ո՛վ որ իր լեզուն պահել չի գիտեր,  
ամէն կողմանէ բաց քաղքի մը կը նմա-  
նի<sup>2</sup>, որն որ թշնամեաց յարձակման ու  
ասպատակութեան ենթակայ է:

Գրեթէ կարելի չէ երկայն խօսակցու-  
թեանց մէջ մեղք մը չընել<sup>3</sup>:

Միշտ աւելի խոհեմ է անիկայ, որն որ  
աւելի քիչ կը խօսի:

<sup>1</sup> Սիր. Ի. 2:

<sup>2</sup> Առակ. ԻԵ. 28:

<sup>3</sup> Առակ. Ժ. 19:



Է. Հաստատուն փորձառութեամբ տեսնուած է, որ ուր որ աւելի լուսութիւն կայ, հոն աւելի անմեղութիւն կայ :

Աս սկիզբն աղէկ միտք առ, որ միշտ աւելի օգտակար է լուս. կեննալ հոն, ուր որ խօսելու հարկ չկայ :

Մեծ արուեստ մին է խօսելու կամ լռելու պատեհ առննք զխանալ: Արնայ մէկն ուրիշ արուեստներու մեջ փորձ ըլլալ ու աս արուեստը չգիտնալ: Շնորհքը ամէն մարդկային դասերէն աւելի աղէկ կը սովորեցնէ զասիկա:

Ը. Ո՛րդեակ, որչափ որ դուն արարածոց հետ քիչ կը խօսիս, նոյնչափ Աստուած քու սիրտդ շատ կը խօսի :

Ան բիւր տեսակ ընդունայն բաներն, որոնք հասարակօրէն աշխարհքին խօսակցութեանց նիւթերն են, Աստուծոյ քեզի հետ ընել ուղած հազարդութեանց իբրեւ արդելք մտածէ :

Թ. Մանաւանդ քու վշտացդ ու տառապանացդ վրայ մարդկան հետ քիչ խօսէ: Մարդիկ քու կարծածիդ պէս անոնց չեն վշտակցիր:

Շատ խօսէ անոնց վրայ Աստուծոյ հետ, ինչու որ ինք միշտ պատրաստ է զքեզ մխիթարելու:

Նոյն իսկ այն նեղութիւնները քեզի ընկերէդ հասած ատենն ալ, ասանց բացարձակ հարկաւորութեան, անոնց

վրայ երբեք մի խօսիր: Ասան զի շատ  
անգամ դուն քեզի դէմ կը զլարիս  
չափէն աւելի ըսած ըլլալուդ համար:

Գ Լ Ո Ի Խ Ի Ա .

Հոգոյն՝ Աստուծոյ հետ փանուլան վրայ:

Ծառան: Ա . ՕՐՀՆԵԱԼ ըլլաս յաւի-  
տեան, ո՞վ Աստուած սիրոյ, որ մեր Փրկի-  
չին մայր ընտրած կուսիդ ի ներքուստ  
ինք զինքդ հողորդեցիր:

Գուն ալ, ո՞ կոյս սուրբ, ընդունէ ան  
իրաւացի գովութիւնները, որոնց որ ար-  
ժանի ես, քու Աստուծոյդ շնորհացը  
հաւատարմութիւն ցուցրնելուդ համար:

Քու դբանչելի առաքինութեանցդ  
վրայ զարմանալէն չեմ կշտանար, բայց ա-  
մենէն աւելի իմ զարմանքս գրդուողն է այն  
անձուկ ու հանապազորդեայ միութիւնը,  
զորն որ Աստուծոյ հետ կըցար պահել:

Բ . Քու սիրտդ արարածոց ամէն յօ-  
ժարութենէն պարապ ըլլալով իբրեւ  
ներքին ու խորհրդական երկինք մըն էր,  
ուր ախորժելով կը բնակէր Աստուած,  
ու դուն ալ հոն խաղաղ ու հանգիստ  
անոր ներկայութիւնը կը վայելէիր:

Քունդ աս հաղորդութիւնն ամենեւին  
չէր ընդհատէր, ու կրնայիր դուն ըսել  
Երգոց երգոյն հարսին պէս, թէ Ես կը  
քնանամ ու սիրտս արթուն է<sup>1</sup>:

<sup>1</sup> Երգ. Ե. 2:

Ինչո՞ւ ես Աստուծոյ հետ միացած  
ապրելու եւ մինակ մարմնոյ կապանքով  
երկրի հետ կապուած ըլլալու երանու-  
թիւնը չունիմ :

Մարիամ : Գ . Ո՛րդեակ, մեծ շնորհք  
մըն էր որ ինձի Աստուած ըրած էր , իր  
ներկայութիւնն երբէք չկորսընցընելու :

Եթէ դուն ալ նոյն պարզեւին կը  
բաղձաս , սիսէ ամէն երկրաւոր յօժա-  
րութիւններէն զքեզ ազատելու եւ ան  
ամէն բանէ զքեզ հեռացընելու , որն որ  
Աստուծմէ դուրս է :

Տարակոյս չկայ որ ասիկա քեզի մեծ  
դժուարութիւն կու տայ , բայց քու աշ-  
խատութեանցդ ու կրած դժուարու-  
թեանցդ արժէքը չես կրնար աւելի սուղ  
ճախել :

Գ . Դարձեալ քու չորս գիդ եղած  
բաներն Աստուծոյ ելլելու համար դոր-  
ժած է : Ամէն կողմ բիւր առիթ կը դանես  
զանիկայ գովելու եւ փառաւորելու :

Երկինքը , որն որ վեհութեամբ քու  
զլխուդ վերեւը կը դառնայ , անոր փառ-  
քը քեզի կը պատմէ : Աստեղաց լուսա-  
ւորութիւնն անոր պայծառութեան  
մէկ պատկերն է :

Ծովուն համատարած ընդարձակու-  
թիւնն անոր անչափութիւնը կը նկարէ  
քու առջեւդ :

Բնութեան մէջ սփռած բոլոր էակ-

ներն անոր առաքինութիւնները քեզի  
կըխօսին: Ամէն բան, մինչեւ դաշտերու  
մանրիկ ծաղիկը, քու աչքիդ առջեւը  
բացուած գիրք մըն է, որնոր դ.քեզ Աս-  
տուծոյ կը կանչէ:

Ե. Առանց քեզմէ դուրս ալ ելելու,  
կրնաս քու Աստուածդ գտնել: Քու  
ունեցած կեանքդ շարժումդ ու գոյու-  
թիւնդ անոր մէջ ու անով է:

Ինքն է որ քու միտքդ կը լուսաւորէ,  
կամքդ կը շարժէ, քու սրտիդ դուռը  
կը զարնէ<sup>1</sup>, ու սաստիկ քաղցրութեամբ  
ու սիրով քու սիրտդ կ'ուզէ:

Նոյն ամենաբարեբար Աստուածն է որ  
քու պահպանութեանդ խնամ կը տանի  
ու բնութեան կը հրամայէ, որ քեզի  
քու պիտոյքդ անդադար մատուցանէ:

Զ. Անանկ է նէ, հարկ չկայ զԱստու-  
ած քեզմէ հեռու փնտուել: Գուն քու  
ներսդ մտիր ու միտ դիր անոր սուրբ ներ-  
կայութեանը, ինք քեզի իր ներկայու-  
թիւնը շատ եղանակաւ կ'իմացընէ:

Երբեմն քեզի կ'իմացընէ զանիկա լու-  
սոյ կենդանի նշոյլներով, յանկարծական  
լուսաւորութեամբ, երբեմն ծածուկ ազ-  
դեցութեամբ, բարեպաշտ զգածումով  
ու երբեմն քու անհաւատարմութիւն-  
ներդ սիրալիր յանդիմանելով:

Զգոյշ եղելը, չըլլայ որ շնորհաց ասանկ

<sup>1</sup> Առակ. ԻԳ. 26:

տեսակ տեսակ գործողութեանցն արգելք դնես կամ մտաց թեթեւութեամբ մը եւ կամ կամաւոր ձանձրութեամբ :

Է. Ինք զինքդ անանկ հոգեւոր կրթութեանց տուր, որոնք աւելի յարմար ըլլան զքեզ Աստուծոյ տանելու, բայց երկիւղածութեամբ ու աստուածպաշտութեամբ կատարէ նոյն կրթութիւնները :

Քու միճակիդ պաշտամանցն ու հասարակ գործոցը մէջ, ինք զինքդ յարմարէ նախախնամութեան դիտմանցը, որն որ նոյն օրրատօրական գործքերը քեզի որոշած է :

Բան մը արտօրալով մ'ըներ : Արտօրալը, նոյն իսկ սուրբ գործքերու մէջ, կը մեասէ ներքին մտաց, որով որ Աստուծոյ հետ կը միանանք :

Ը. Ուրախութեան կամ տրտմութեան մէջ եղած ատենդ բնութեան շարժմանցը մի անտար : Չէ թէ արարածներու, հապա Աստուծոյ քով փնտուէքու սրտիդ մխիթարութիւնն ու հանգիստը :

Անոր համար Աստուծոյ հետ խօսակցէ թէ ան բաներուն վրայ, որոնք որ զքեզ կը տրտմեցնեն եւ թէ անոնց վրայ որոնք որ կ'ուրախացնեն, զանիկա իբրեւ հայր ու իբրեւ բարեկամ մը մտածելով,

որուն ծոցը կրնաս վստահութեամբ դրնել քու թէ տրտմութեանցդ եւ թէ ուրախութեանցդ պատճառները :

Աս ներքին վստահութեան ձեռքով մարդ իր սիրտն ամենէն աղէկ կը վստարկի ու կը յառաջանայ այն սուրբ միաւորութեան մէջ, որն որ քրիստոնէի մը կենաց պահնչելի քաղցրութիւնն է :

Գ Լ Ո Ի Խ Ի Բ .

Վե՞տի պարտոց վրայ :

Ա . Ը ԱՏ քիչ հեղ կը խնդրէ Աստուած որ արտաքոյ կարգի գործքերով մեր ունեցած սէրն իրեն յայտնենք : Աս սէրն ամէն մէկուն իր վիճակին պահանջած պարտուցը մէջ ցուցրցած հաստատ հաւատարմութենէն կ'երեւայ :

Աս հաւատարմութեան ձեռքով Մարիամ անանկ արդիւնքներ ստացաւ, որոնք զինքը հրեշտակներէն վեր բարձրացուցին : Երեսուն տարի Փրկչին հեռաձայնութեամբ մնաց Նազարէթի մէջ : Հոն իր գլխաւոր հոգն էր իր աստուածեղէն Որդին մեծցընել, որ աւուր վրայ աւելի իր փեսային վստահութիւնը վստարկիլ ու կարողութեանը չափ աշխատելով իր ընտանեացը պէտքը հոգալ :

Սովրէ իրեն օրինակէն, թէ ինչ բանի աւելի ջանք պիտի ընես, թէ որ կ'ուզես սրբութեան հասնիլ :



Բ. Ար սխալի մէկը, երբոր սրբութիւնն անանկ գործքերու վրայ կը դնէ, որոնք իր վիճակին պարտքերէն դուրս են, ու նոյն պարտքերը զանց առնելով ինք զինք անոնցմէ օտար գործքերու կու տայ :

Ամէն կատարելութիւններէն մեծ է իր վիճակը սիրել ու որչափ հասարակ ու ստորին վիճակ ալ ըլլայ, անոր պարտքերը կատարել, ինչու որ նոյն վիճակը նախախնամութիւնը կարգադրած է :

Մէկ արուեստաւոր մը, որն որ իր ուտելիքը ճակտին քրտինքովը կը վաստակի, մէկ հայր մը, որ առանց փառախնդրութեան հասարակ ու միջակ հարստութեամբ մը անձանօթ կ'ապրի, իր փրկութեան գործքը աւելի նուազագոյն չի գործեր քան զանոնք, որոնք որ բարձրագոյն վիճակներու մէջ ու նոյն իսկ սուրբ պաշտամանց մէջ կը գտնուին: Մանաւանդ թէ շատ անգամ նոյն արուեստաւորն ու նոյն հայրն աւելի անվրտանգ իրենց փրկութիւնը կը գործեն :

Գ. Քեզի համար ամենէն աղէկ վիճակն ան չէ, զորն որ դուն ամենէն աւելի կատարեալ կը կարծես, հապաանիկայ է, որուն մէջ Աստուած զքեզ դրած է :

Ար խաբուի անիկայ, որն որ իր աղէկ տեսած կերպովը կ'ուղէ սուրբ ըլլալ, եւ չէ թէ Աստուծոյ ուղած կերպովը: Մէկն

ան ատենը մինակ գործք մը կատարելութեամբ կը գործէ, երբոր նոյնը Աստուծոյ կամքն բլլալուն համար ու անոր ուզածին պէս կ'ընէ :

Մեր գործողութեանց արդիւնքը, ըրած գործքերնուս բնութենէն աւելի, նոյն գործոց կենդանութիւն տուող հագիէն ու մեր Աստուծոյ կամացը հետ ունեցած միաբանութենէն կախում ունի :

Գ. Աստուած քեզմէ պզտիկ գործքերու յարատելութիւն կը պահանջէ, իսկ դուն կ'ուզես մեծամեծ գործքեր ընել : Ասկէ յառաջ կու գայ որ ոչ մէկն ու ոչ մէկայն աղէկ կ'ընես :

Մարթա, Մարթա, դուն շատ բանի ետեւէ ես<sup>1</sup> ու ինք զինքդ կը խաբես Աստուծոյ քեզմէ պահանջածէն աւելի բան ընել ուզելով : Գոհ եղիր իրեն ուզածն աղէկ ընելով ու անանկ եռանդ ունեցիր անոր, իբրեւ թէ մեծ գործք մ'ըլլար :

Ի՞նչ կ'ընէր ան զօրաւոր կիներ, զորն որ նոյն իսկ Հոգին սուրբ կը գովէ : Իլիկ կը մանէր ու տանը շնչին գործքերուն կը զբաղէր :

Ե. Այլեղեցւոյ մէջ ըլլալ, աղօթք ընել, հիւանդաց պոյելութիւն ընել, իրաւցրնէ դբանչելի գործքեր են : Բայց եթէ անոնք անանկ ատեն կ'ընես, երբ

<sup>1</sup> Ղուկ. Ժ. 41 :

քու վիճակդ բոլորովին ուրիշ բան կը պահանջէ, կրնաս ըսել որ Աստուծոյ կամքը կը կատարեմ:

Պէտք է աղօթք ընել ու յաճախ աղօթք ընել: Մանաւանդ թէ պէտք է, կարելի եղածին չափ միշտ աղօթք ընել: Բայց եթէ աղօթք ընելու համար տնային պարտքերդ կը թողուս, քու աղօթքդ Աստուծոյ հաճոյական չըլար:

Ո՛րչափ գործքեր Աստուծոյ առջեւ կը կորսուին, իրենց սկիզբը սեպհական կամքն ըլլալուն համար:

Իսկ ո՛րչափ դանձ կը շահուի հասարակ կենաց գործքերով, ատոնց՝ Աստուծոյ կամաց կնքովը կնքուած ըլլալուն համար:

Զ. Եւ տէրը, որոնք որ չես կարծեր թէ մեծ արդիւնք ստանան, արքայութեան մէջ քու կարծածէդ աւելի բարձր պիտի ըլլան, իրենց վիճակին մանր պարտուցը մէջ ունեցած հաւատարմութեան համար, զորն որ դուն չես տեսներ:

Աւետարանին մէջ օրինակ բերուած տէրը չըսաւ իր ծառային թէ Մտիր քու աիրօջդ ուրախութեանը մէջ, որովհետեւ մեծամեծ բաներ ըրիր, հապա որովհետեւ քիչին մէջ հաւատարիմ եղար<sup>1</sup>:

<sup>1</sup> Մատթ. 16. 21:

Թէ ինչպէս սուրբ ընկաւ է օրոսան աշխարհիսննն ու զանազան զբաղմանսնսրը :

Մարիամ : Ա . Ո՛ր ԳԵԱԿ , քու վիճակիդ պարտքերը քեզի շատ հոգ կը պատճառեն . բայց զանոնք կատարած ատենդ վայրկեան մը Աստուծոյ վրայ չես մտածեր :

Ծառան : Բ . Միշտ հաւատարիմ ու արթուն կոյս , սովորեցուր ինձի թէ ինչպէս , քու օրինակիդ համեմատ , իմ աշխատութեանս ու վիճակիս գործքերը կատարելու ատենս կրնամ Աստուծոյ հետ միանալ :

Մարիամ : Գ . Ո՛րդեակ , ձեռաց աշխատութիւնը , ու նոյն իսկ ամենէն դժուարին ու ամբոխիչ գործքերն ալ հոգեւոր ու քաշուած մարդու մը Աստուծոյ հետ ունեցած միութիւնը չեն կրնար խափանել :

Սովորաբար ինք իրեն ժողվուած մարդ մը զարմանալի դիւրութիւն մ'ունի Աստուծոյ յիշատակը միտքը բերելու՝ նոյն իսկ անանկ առիթներու մէջ , ուր վիճակի պարտաւորութիւնները կը զբաղեցընեն ու կարծես թէ միտքը կը ցրուեն :

Իր դիտաւորութեան սրբութիւնը , որով իր ամէն մէկ գործքերուն հոգի ու կենդանութիւն կու տայ ու Աստուծոյ կը նուիրէ , զանիկա կը պահէ մտաց

ցրումէ, որուն մէջ խիստ շատ անգամ  
կ'իյնան անմտադիր անձինք :

Հաւատոյ ու կրօնի հոգին, ամէն բան  
կ'աղնուացրնէ, ամէն բան կը քաղցրա-  
ցրնէ ու ամէն բան կը սրբացրնէ : Ի՛նչ որ  
աս հոգւով կ'ըլլայ, Աստուծոյ հաճոյա-  
կան գործք կ'ըլլայ, զորն որ իր վարձուցն  
ալ արժանի կը դատէ :

Գ. Ի՛նչ որ ուրիշ այնչափ մարդիկ  
աշխարհքի կամ ժամանակաւոր շա-  
հու համար կ'ընեն, դուն անիկա Աստու-  
ծոյ համար ըրէ : Քու վիճակիդ պահան-  
ջած գործքերուն զբաղէ, բայց քրիստո-  
նէական տեսութեամբ ըրէ զանոնք : Ան  
ատեն թէ աս ժամանակիս եւ թէ յա-  
ւիտենականութեան համար գործած  
կ'ըլլաս :

Թէ որ քու ախորժանօքդ կամ բնու-  
թեամբդ, կամ բռնի, կամ սովորու-  
թեամբ եւ կամ ուրիշ զուտ մարդկային  
պատճառաւ մը, գործքի մը կամ աշխա-  
տութեան ետեւէ կ'ըլլաս, ու քեզի  
գործել տուող սկիզբն Աստուած չըլ-  
լար, ամբողջ ժամեր կ'անցրնես սրտիդ  
մէջէն առանց իղձ մը հանելու առ Աս-  
տուած :

Ե. Ս'ըսեր, թէ չեմ կրնար մի եւ նոյն  
ատեն երկու բան մտածել : Սիրով լե-  
ցուն սիրտ մը, իր ըսել ուղածը շուտ մը  
կը զրուցէ Աստուծոյ :

Մարթա, որ Յիսուսի համար կ'աշխատէր, իր աշխատութենէն չարդելուեցաւ, երբ անոր վրայ Յիսուսին հետ կը խօսէր :

Աշխատութեանցդ մէջ նոյն իսկ քու քովդ եղողներուն հետ քու զբաղմանցդ վրայ կը խօսակցիս : Խօսակցէ ուրեմն Աստուծոյ հետ ալ, որն որ քու ամէն բրածներուդ ներկայ է :

Իր խօսակցութիւնը, որն որ խիստ տարբեր է մարդկային խօսակցութիւններէ, ամենեւին անախորժութիւն ու ձանձրութիւն չունի : Մանաւանդ թէ աս առաւելութիւնն ալ ունի որ ամէն տեսակ աշխատութեանց ու զբաղմանց մէջ մարդ կրնայ անոր քաղցրութիւնները ճաշակել :

Զ. Արնայ մարդ մեծ սուրբ մ'ըլլալ մինակ հասարակ բաներ ընելով, բայց հասարակ կերպիւ չընելով :

Շատերն իրենց գործքը մինակ պարտաւորեալ ըլլալնուն համար կ'ընեն : Ամենեւին չեն մտածեր՝ Աստուած իրենց հրամայած ըլլալուն ու անոր հաճոյ ըլլալու համար ընելու :

Բայց դուն, օրդեակ, քու աշխատելու ատենդ ըսէ Աստուծոյ, թէ իմ բոլոր զուարճութիւնս քու կամքդ կատարելն է, եւ թէ քեզի հաճոյ ըլլալու համար, աշխատութիւնս աւելի տարժանելի ալ



բլար նէ իմ փոյթս ու ջանքս ամենեւին  
չէի նուազցրներ :

Է . Քու աշխատութիւնդ՝ Յիսուսին  
քուկին փրկութեանդ համար քաշած  
բոլոր աշխատութեանցը հետ միացրնե-  
լով Աստուծոյ նսւիրէ :

Թէ որ աշխատութիւնդ կը յաջողի ,  
օրհնէ զանիկա , որն որ յաջողութիւն  
կու տայ : Թէ որ չիյաջողիր , գլուխ ծռէ  
նոյն այն մահացուցման , զորն որ Աստու-  
ած քեզի կը խաւրէ քու համբերու-  
թիւնդ փորձելու համար :

Երբոր քու ամենափոքր գործքերուդ  
մէջ ալ Աստուծոյ հետ ասանկ միաբան  
կ'ըլլաս , ան ատեն գրտէն ամենէն անարդ-  
երեւցող գործքերն ալ , անանկ կը բար-  
ձրանան , որ երկինքը զքեզ փառաց  
նոր աստիճանի մը արժանի կ'ընեն :

### Գ Լ Ո Ի Խ Ի Գ .

Մեր Յիսուսին սնեակու սերոյն վրայ :

Ծարտան : Ա . ՍՈՒՐԲ մայր Յիսուսի ,  
երբոր գուն Յիսուսին հետ Նազարէթ կը  
բնակէիր , մարդիկ զանիկա չէին ճանչնար  
ու մանաւանդ թէ զանիկա կ'անարդէին  
ու երեսը չէին նայեր : Բայց ինք ան մխի-  
թարութիւնն ունէր , որ իր մայրն անկեղ-  
ծութեամբ , եռանդագին , սերտիւ ու  
հաստատութեամբ զինք կը սիրէր :

Գուն անոր աստուածութեանն ան-

սահման կատարելու թիւնները ճանշնալով, շատ աւելի կը սիրէիր զանիկա, քան որչափ ամէն սուրբերը սիրած են, կը սիրեն ու պիտի սիրեն:

Քու սէրդ ամէն ուրիշ մարց ունեցած սէրէն շատ աւելի բարձր ու պատուական էր: Գուն կը սիրէիր քու որդիդ իբրև Աստուած ու միանգամայն մարդ:

Ասկէ էր քու փափաքդ, որ ամէն մտաւոր արարածք քեզի չափ զանիկա սիրեն:

Բ. Սուրբ ու յատակ սիրոյ յատկու թիւն է ինք զինք ուրիշներու հաղորդելու ետեւէ ըլլալ ու բաղձալ որ իր սեպհական սիրոյ բոցերն ամէն սրտերու անցնին:

Պէտք էր քեզի պէս զՅիսուս ճանշնալ, քեզի պէս կատարեալ եղանակաւ զանիկա սիրելու համար:

Նոյն սիրոյն վրայ արժանապէս խօսելու համար պէտք է մարդ կարողու թիւն ունենալ սրտիդ վրայ քու սիրելւոյդ նկատմամբ զգացածդ կարդալ:

Ո՛հ, բաց մեզի նոյն սիրտը, որն որ անանկ կատարելապէս կը սիրէ: Հոն ցուցուր մեզի քու անըմբռնելի սիրոյդ բարձր սրբութիւնը, քաղցրութիւնը, կենդանութիւնն, ու մեծանձնութիւնը:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, ես Յիսուսին արժանի մայր չէի ըլլար, թէ որ իմ սէրս ամէն մտաւոր արարածներու սէրը չգերազանցէր:

Աս սիրոյս մէջ որ աւուր վրայ կ'աճէի ,  
ինչու որ ամէն որ նոյն աստուածեղէն  
որդւոյս վրայ նորանոր կատարելութիւն-  
ներ կը տեսնէի :

Իմ բոլոր քաղցրութիւնս ու երանու-  
թիւնս աս սէրն էր : Ասիկա իմ սնունդս ,  
կեանքս , հանգիստս , ուրախութիւնս ու  
ցնծութիւնս էր :

Նազարեթի մէջ աղքատ ու անձանօթ  
կեանք մը կ'անցընէի , բայց ասոր տեղ  
կը լեցընէր ան զանձը , զորն որ Յիսու-  
սովս ունէի : Մարդ զանիկա մինակ ունե-  
նալէն ետեւ , պէտք է ինք զինք ամենէն  
հզօր թագաւորներէ ալ հարուստ հա-  
մարիլ :

Գ. Աշրանի , բիւր ու բիւր անգամ ե-  
րանի ան սրտերուն , որոնք Յիսուսի սի-  
րովը կ'ապրին ու բոլոր հառաչանքնին  
անոր կը ձգուի :

Մինակ Յիսուսի սէրը մարդուն սիրար  
կը յազեցընէ ու կը հանգարտեցընէ : Ա-  
ռանց աս սիրոյ , բան մը երկայն ատեն  
հաճութիւն չիտար :

Ինչ հաճոյական բանի ճաշակ կրնայ  
առնել աշխարհքիս վրայ՝ ան մարդը , որն  
որ չզգար թէ սրչափ սիրելի է Յիսուս :

Որչափ որ մէկը զՅիսուս կը սիրէ , նոյն-  
չափ զուարճութիւն կը զգայ զանիկա  
սիրելէն , որն որ ճշմարտապէս ու անսահ-  
ման արժանի է սիրուելու :

Ե. Ո՛վ որ զՅիսուս չիտիրեր, գիտէ՞ արդեօք թէ ի՞նչ է Յիսուս: Գիտէ՞ թէ որչափ սիրելի է:

Յիսուս իր վրայ միացուցած է ամէն բնական կատարելութիւնները, բայց անանկ բարձրագոյն եղանակաւ, որ նոյն կատարելութիւններն արարչին ձեռացն ամենակատարեալ գործքը կ'երեւցնեն:

Զ. Յիսուս իր վրայ միացուցած է շնորհաց ամէն կատարելութիւնները, անանկ որ ամէն մարդ անոր լրութենէն կամ առատութենէն կ'առնէ:

Յիսուս իր վրայ միացուցած է ամէն աստուածային կատարելութիւնները, որոնք իր վրայ գոյացապէս կան:

Կարողութիւնն՝ Աստուծոյ կարողութիւն է, գեղեցկութիւնը՝ Աստուծոյ գեղեցկութիւն, իմաստութիւնը՝ Աստուծոյ իմաստութիւն ու սրբութիւնն՝ Աստուծոյ սրբութիւն է:

Ծառան: Է. Ո՛հ, եթէ Յիսուս յինքեան ու իրեն համար չէ նէ, զիս անսահման սիրելուն համար, անսահման սիրելի է: Ի՞նչչափ չարչարանք չքաշեց իր սէրն ինձի ցուցնելու համար:

Մարիամ: Ը. Ասոր վրայ ան ալ աւելցուր, որ իր այնչափ չարչարանքները չկշտացուցին իր քեզի համար չարչարուելու բաղձանքը: Սէրն՝ երբեք բաւական է չ'ըսեր, բայց ամէն սէրէ

աւելի եռանդազօն է ու ինք զինք յայ-  
անելու փոյթ ունի Յիսուսին սերը :

Յիսուս քու փրկութեանդ համար իր  
տուածէն աւելի կու տար , թէ որ ինք  
իրմէ աւելի բան մ' ունենար քեզի տալու :

Որդեակ , թէ որ Յիսուսէն աւելի քու  
սիրոյդ արժանի բան մը կը գտնես նէ ,  
ինք քեզի կը ներէ որ քու սերդ անոր  
տաս : Իսկ եթէ ուրիշ ամէն բանէ յա-  
ռաջ ու ամէն բանէ վեր՝ ինք քու սիրոյդ  
արժանի է , կրնամ մի նոյնն անոր զլանալ :

Ծարտան : Թ . Ո՛հ , ինչ որ աս աշ-  
խարհ քիս կը վերաբերի , աչքիս չ'երեւայ :  
Ասկէ ետքը մինակ զՅիսուս կ' ուզեմ սի-  
րել ու կը սիրեմ :

Մարիամ : Ժ . Ո՛վ որ զՅիսուս կը ճանչ-  
նայ , ուրիշ ամէն բան իրօք կ'անարդէ :  
Անոր սիրոյն քաղցրութեան ճաշակն  
առնողին առջեւ աշխարհ ք բան մը չէ :

Ծարտան : ԺԱ . Արնամ ու կ' ուզեմ  
զՅիսուս ինձի բարեկամ ունենալ : Եթէ  
անհոգ ըլլայի ասանկ մեծ երանութիւն  
մը ձեռք բերելու , իրաւքնէ խիստ ար-  
ժանի էի թշուառ կեանք մ' ունենալու :

Մարիամ : ԺԲ . Որդեակ , իմաստուն  
ես եթէ քու սիրոյդ անանկ առարկայ  
մը կ'ընարես , որն որ նեղութեան ու ցա-  
ւոց ամենեւին պատճառ մը չիտար , փո-  
փոխութեան տակ չէ , մահուամբ քեզմէ  
չիկրնան կողոպտուիլ , հապա մանաւանդ

նոյն իսկ մահուան ատեն քու յախտե-  
նական ժառանգութիւնդ կ'ըլլայ:

Յիսուս մինակ հաւատարիմ բարե-  
կամ է, որն որ ուրիշ բարեկամներուն  
թողուցած դացած ատեն՝ չիպակսիր:

Աս բարեկամին մինակ մէկ խօսքը,  
տառապեալ սրտի մը մխիթարութիւն  
կու տայ: Ուրիշ բարեկամները չար  
մխիթարութիւններ կու տան<sup>1</sup>:

ԺԳ. Ի՞նչ անգոհութիւն, ի՞նչ ցաւ  
կրնաս ունենալ ու ո՞ր թշնամին քեզի  
վնաս կրնայ հասցընել, թէ որ դուն Յի-  
սուսին սէրը սրտիդ մէջ ունենաս:

Թէ որ Յիսուս քու սրտիդ մէջ կ'իշխէ  
ու հոն իր աթոռը դրած է, երկրիս վրայ  
եղած ու ըլլալու ամէն մարդիկներէ ա-  
ւելի հարուստ, զօրաւոր ու երջանիկ ես:

Յիսուսի սէրն անանկ բարիք մըն է, որ  
զանիկայ ունեցողն ուրիշ բարիքներէն եւ  
ոչ մէկուն կարօտութիւն կը քաշէ: Մի-  
թէ բաւական չէ Յիսուս՝ զինքը սիրող  
սիրտ մը գոհ ընելու:

Ծարան: ԺԳ. Ո՛վ իմ Յիսուսս ու  
Աստուածս, քու սուրբ մօրդ քեզի ունե-  
ցած սիրոյն համար, քեզմէ շնորհք կը  
խնդրեմ՝ զքեզ անանկ սիրելու, որ ու-  
րիշ բան մը չսիրեմ՝ քեզմէ վեր ու քեզի  
հաւասար, ու ինչ որ կը սիրեմ, քու սի-  
րոյդ համար սիրեմ:

<sup>1</sup> Յոր. ԺԶ. 2:



Ես չեմ կրնար զքեզ այնչափ սիրել, որչափ որ դուն արժանի ես, բայց քու շնորհացդ օգնութեամբը, կ'ուզեմ զքեզ այնչափ սիրել, որչափ որ կարող եմ: Ասանկով իմ պարտականութեանս չափ զքեզ սիրած կ'ըլլամ:

ԺԵ. Այս առէ սրտիս մէջ ան սէրը, որով որ կ'ուզես որ զքեզ սիրեմ: Ա'ուզէի սիրոյ աստուածային կրակէն անանկ պրիլ բորբոքիլ որ սպասիմ:

Յիսուսին որչափ սիրելի ըլլալը ճանչնալ ու զանիկայ իրեն արժանի եղածին չափ սիրել չկրնալը մարտիրոսութիւն մըն է, զորն որ ուրիշ բան չիկրնար մխիթարել, բայց եթէ միշտ աւելի եռանդագին սիրոյ նոր բաղձանք մը:

#### Գ Լ Ո Ի Խ Ի Ե .

Թէ պէտք է զՅիսուս օրինակ արնիւս անոր նմանիլ:

Մարիամ: Ա. ՈՐԴԵԱԿ, դուն ալ ան քրիստոնեաներէն չե՞ս, որոնք աւելի գեղեցիկ գեղեցիկ կը խօսին, քան թէ կը գործեն: Ատեն ատեն իրենց եռանդը բորբոքելով գեղեցիկ իղձեր կ'ունենան, բայց ետքը իրենց բռնած բնթացքն անոնց համեմատ չ'ըլլար:

Ոմանք կ'ըսեն թէ զԱստուած կը սիրեմ, եւ կ'երեւայ որ անանկ կը զգան, ինչու որ շնորհքն իրենց վրայ ազդեցու-

Թիւն ըրած ատեն , քանի մը սիրոյ ար-  
ցունք կը թափեն , բայց դեռ ասիկա  
ճշմարիտ ցոյց մը չէ անկեղծ սիրոյ :

Յիսուսին քեզմէ ուզած սիրոյ ցոյցն  
ան է , որ քեզի տուած առաքինութեանց  
օրինակներուն նմանիս :

Ծառան : Բ . Ղուն , Մարիամ , որ ա-  
մէն առաքինութեանց օրինակն ես , Նա-  
զարեթի մէջ Յիսուսի հետ ապրած բոլոր  
ատենդ անոր օրինակացը կը նմանեիր :

Աւետարանին մէջ կը տեսնենք որ  
դուն ուշադրութեամբ միտ կը դնէիր Յի-  
սուսին ամէն խօսքերուն . իր ամէն գործ-  
քերը խնամով կը նկատէիր ու զանոնք  
կը մտածէիր ու սրտիդ մէջ կը պահէիր<sup>1</sup> :

Մարթա : Գ . Այո , որդեակ իմ , զՅի-  
սուս նկատելն իմ դիւաւոր զբաղմունքս  
ու անոր նմանիլն իմ գլխաւոր ճիգս էր :  
Դուն ալ ջանա՛ Յիսուսի կեանքը նկա-  
տել , որպէս զի անոր նմանիս :

Ասոր վրայ թափէ քու բոլոր ճիգդ :  
Յիսուսէն դուրս ճշմարիտ գիտութիւն  
չկայ : Անոր համար քու վարպետդ մի-  
նակ անսկիա ըլլայ :

Դ . Յիսուս թագաւոր մըն է , որն որ  
քու բոլոր մեծարանացդ արժանի է : Իր  
քեզմէ պահանջած գլխաւոր մեծարանքն  
է , իր առաքինութեանցը նմանիլ :

Շատ անգամ ինք զինքդ նոյն մեծ ու

<sup>1</sup> Ղուկ . Բ . 50 :

բարձրագոյն օրինակին հետ բաղդատէ ,  
յառաջ քան Աստուծոյ ատեանին առ-  
ջեւնոյն օրինակին համեմատ դատուիլդ :

Ե . Յիսուսին քեզի ունեցած սէրը ,  
դինքր շարժեց քեզի խոնարհութեան ,  
համբերութեան ու հնազանդութեան  
այնչափ օրինակներ տալու :

Յառաջագրէ ամէն բանի մէջ ու ամէն  
տեղ , կրցածիդ չափ ճշտիւ անոր նմա-  
նելու :

Աղօթքի կեցած ատենդ առջեւդ բեր  
անոր աղօթքի ատեն ունեցած մտաց  
ամփոփութիւնը : Երբոր Աստուծոյ տա-  
ճարը կ'երթաս , անոր նման՝ կրօնի ու Աս-  
տուծոյ մատուցում ընելու հոգւով զնա :

Մարդկան հետ խօսակցած ատենդ ,  
մտածէ թէ ինչպէս կը խօսակցէր Յիսուս  
մարդկան հետ , ինչ համեստութեամբ  
ու ինչ քաղցրութեամբ :

Զ . Էզ ու խոնարհամիտ Յիսուսին  
նմանելու համար , քու վշտացդ վրայ մի  
տրանջեր ու գէշին տեղ աղէկ հաստու-  
ցում ըրէ : Աշխարհքիս պատիւներէն  
փախիր ու սիրէ մոռցուած ու անար-  
գուած ըլլալ :

Յիսուս երբեք իր կամքը կատարելու  
ետելէ չեղաւ <sup>1</sup> : Աստուծոյ փառքն ու  
անոր կամացը կատարումը քու գործ-  
քերուդ սկիզբն ու վախճանն ըլլան :

<sup>1</sup> Հուով. ԺԵ. 3 :

Յիսուսին մահկանացու կենացը մէջ չկայ վիճակ մը, որ սովբելու բան մը առջեւնիս չհանէ : Իր թէ՛ ծածուկ ու թէ՛ հրապարակական կեանքն իր ճշմարիտ աշակերտացը համար սովբելու անապառաղբիւր է :

Է. Յիսուս՝ ճանապարհ, ճշմարտութիւն ու կեանք է<sup>1</sup> : Մինակ իր օրինակացը մէջ կրնաս գտնել երթալու ճամբայ, լսելու ճշմարտութիւն ու քու հոգւոյդ կեանքը պահելու միջոց :

Քու կենացդ ամէն մէկ դիպացը մէջ, ինք իրենդ հարցուր թէ՛ ի՞նչ կ'ընէր կամ ի՞նչ կ'ըսէր Յիսուս, թէ՛ որ աս գէպքիս մէջ ըլլար, ու անկէ ետեւ իր խօսքերովն ու գործքերովը քեզի թողուցած օրինակին հետեւէ :

Գիտես անոր յօժարութիւնները, բաղձանքներն ու իղձերը : Քննէ նաեւ քու կիներդ ալ, համեմատէ եւ ուղղէ . բայց միտքդ բեր որ աս ուղղութիւնը, որն որ զքեզ Յիսուսի նմանող պիտի ընէ, մէկ օրուան գործք չէ :

Ը. Յիսուս անանկ կատարեալ օրինակ մըն է, որ երբէք կատարելապէս անոր չի կրնար նմանցուիլ . բայց կենաց ամէն օրն անոր մէյմէկ նոր առաքինութեանցը նմանելու պէտք է գործածել :

Բայց որովհետեւ Յիսուսի չենք կրնար

<sup>1</sup> Յովհ. ԺԴ. 6 :

նմանիլ առանց նոյն իսկ Յիսուսին շնորհացը, անոր համար ամէն օր պէտք է նոյն շնորհքը խնդրել:

Գ Լ ՈՒ Խ ԻԶ.

Աստուծոյ ընդանեաց իւր շնորհութեան վրայ:

Ա. Երբեք չտեսնուի մեր էր այն սուրբ ընտանիքը Նազարեթի մէջ, ուր Յիսուս՝ Մարիամայ ու Յովսէփայ հետ կը բնակէր:

Ի՞նչ խաղաղութիւն ու միաբանութիւն էր հոն, որ առաքինութեանց բնակարան էր ու կիրքերու անկարգութիւնը հոնկէ բոլորովին հեռու էր:

Յիսուսին «հասակաւ ու իմաստութեամբ Աստուծոյ ու մարդկան առջեւ զարգացած ատեն», Մարիամայ աչքը շարունակ զանիկա կը նկատէր, անոր օրինակին նմանելու համար:

Յովսէփ ալ անկէ քիչ չէր ջանար, Մօր ու Որդւոյ տուած օրինակներուն հետեւելու:

Բ. Հոն ամէն բան առ Աստուած կը հայէր, ու ամէն բան Աստուծոյ համար կ'ըլլար: Յիսուսին մինակ ներկայութիւնը սրտերն ուրախութեամբ կը լեցընէր: Իր աստուածային խօսակցութիւնները զանոնք կը բորբոքէր:

Յիսուսին հպատակութիւնն ու հնազանդութիւնը զՄարիամ ու զՅովսէփ

սաստիկ զարմացրնելով, անոնց առիթ  
կու տային Աստուծոյ առջեւ խոնարհե-  
լու եւ իրենք զիրենք ոչինչ համարելու :

Գ. Ո՛վ Աստուած սրբութեան, դուն  
ան բնակութեան մէջ հոգւով ու ճշմար-  
տութեամբ կը պաշտուէիր : Ո՛րչափ հա-  
ճելի էին քեզի ան մեծարանքն ու ծա-  
ռայութիւնները զորոնք հոն կ'ընդունիր :

Մարդ չի կրնար աս երջանիկ ընտանեաց  
պատկերը ստորագրել, առանց անոր ե-  
րանութեանը նախանձելու : Ի՛նչչափ  
բաղձալի բան է որ ամէն քրիստոնէից  
ընտանիք աս սքանչելի դպրոցին նմանին :

Ո՛հ, թէ որ անոնց մէջ Աստուծոյ  
սէրը տիրէր, ինչպէս ան ցանկալի յար-  
կին տակ կը տիրէր, որուն տակ Յիսուս,  
Մարիամ ու Յովսէփ կը բնակէին, ան  
ատեն անոր հետ՝ կարգ, խաղաղու-  
թիւն ու միութիւն կը տեսնուէր :

Դ. Փետան ու հարսն ան ատեն ա-  
մուսնական միութեան քաղցր ուրախու-  
թիւնը կը վայելէին : Չաւկներն Աստուծոյ  
երկիւղին մէջ կը կրթուէին : Ծառաներն  
առաքինութեան օրինակներ կ'առնէին :

Նախանձի ու տարաձայնութեան սո-  
վորաբար յառաջ բերած չարաչար դործ-  
քերը հոն չէին տեսնուեր : Հիմակուան  
Ժամանակս անանկ յաճախ եղած դայ-  
թակիղութիւնները հոնկէ չէին ելլեր :

Հարստութիւններն ամբարտաւան ու



տնաւեր ցոյցերու չէին դործածուեր, այլ անոնց քաղցր ազդեցութիւնն աղքատները կը վայելէին: Նոյն հարստութեանց վրայ օրհնութիւն կու գար, թէ շնորհակալութեան ու թէ քրիստոնէական չափաւորութեան ձեռքով:

Իմաստուն խնայողութիւն մը ամենէն աւելի մեծ գանձ մը կ'ըլլար, զորն որ բարի շահերու կը դործածէին: Թէ ամօթալի ազահութիւնն ու վաշխը եւ թէ զարդուց եւ ունայնութեանց զետեղութիւնը հեռու կ'ըլլար:

Ե. Վժբախտութեան ու թշուառութեան մէջ նախախնամութեան դէմ ո՛չ տրտունջ ու ո՛չ քրթմնջիւն կ'ընէին: ԶԱստուած հաւասարապէս կ'օրհնէին կարօտութեան ու չափաւորութեան, ինչպէս առատութեան ու բարձրագոյն աստիճանի մէջ:

Անանկ բնտանեաց մը դուռին իր իշխանութիւնը կը վարէր առանց տիրապետութեան ու ամբարտաւանութեան: Հարսն իր փեսային դիտաւորութեանցն օգնելով, իր ծառային վրայ կը հսկէր: Երկուքն ալ կը մխիթարուէին տեսնելով իրենց սղոցն ուսմամբ ու կրթութեամբ ածիլը, որոնք պզտիկ հասակներնուն մէջ բարեպաշտութեան կը վարժէին:

Զ. Ի՞նչչափ բարիք յառաջ կու գային

անկէ՛ բոլոր հաւատացելոց ընկերու-  
թեան, ինչչափ բարուց սիրալիր քաղ-  
ցրութիւն, ինչչափ սրբութիւն ու ան-  
մեղութիւն, ինչչափ միութիւն ու սէր,  
ինչչափ շինութիւն ու սրբութեան սքան-  
չելի պատուհներ :

Ինչչափ հանգստութեան մէջ կ'ան-  
ցրնէին իրենց օրերն ու մահուան ժա-  
մանակը հասած ատեն՝ այնչափ աւելի  
յօժարութեամբ իրենց կենաց զոհը կ'ը-  
նէին, նրչափ որ իրենք իրենց վրայ ար-  
դարութեամբ ու Աստուծոյ սիրոյն մէջ  
ապրած բլլալու մխիթարական վկայու-  
թիւն կրնային տալ :

Գ Լ Ո Ի Խ Ի Է .

Աղօթի զօրութեան վրայ :

Ա . ԿԱՆԱՅ հարսանեաց հանդիսին  
մէջ, ուր կը գտնուէր Մարիամ՝ Յիսուսի  
ու անոր աշակերտացը հետ, գինին պակ-  
սեցաւ : Մարիամ հարսին ու փեսային  
կրած ամօթէն շարժելով ու իր որդւոյն  
կարողութեանը վրայ լի վստահութիւն  
ունենալով, անոնց պիտոյքն անոր առ-  
ջելը դրաւ :

Աստուած իր շնորհքը միշտ աղօթքի  
հետ կապած է : Ամէն ատեն պատրաստ  
բլլալով իր շնորհքը բաշխելու՝ զմեզ կը  
հրաւիրէ որ նոյնը խնդրենք . բայց կ'ու-  
ղէ որ վստահութեամբ խնդրենք .

Աստահութեան պակասութիւնը հասարակօրէն տկար հաւատքի մը նշան է : Անոր համար այնչափ պարապու առանց պտղոյ աղօթքներ կ'ըլլան :

Բ. Մեր շրթանց տուրքն Աստուծոյ մատուցանելու համար հարկաւոր չէ պատեհ ժամանակի սպասել : Մեր Աստուածը միշտ պատրաստ է մեզի լսելու : Անդադար մեզի կը զըուցէ, «Դնդրեցէք ու կ'առնէք : Ով որ կը խնդրէ, կ'առնէ», :

Արդ, որովհետեւ անանկ Աստուծոյ մը կը ծառայենք, որն որ այնչափ բարի է որ մէկը չիմերժեր ու այնչափ հարուստ է որ ամենուն կու տայ, ի՞նչպէս կրնանք այսչափ անհոգ ըլլալ իր շնորհքը խնդրելու կամ մեզի եւ կամ՝ Մարիամայ օրինակին համեմատ, ուրիշներուն համար :

Գ. Մարիամայ աղօթքը կարճ էր : Աստուած, որ մարդիկներէն խիստ տարբեր է, մեզմէ երկայն ատեն մտածուած, փնտռուած ու սեթեւեթեալ աղօթք չ'ուզեր : Իրեն հետ խօսակցելու համար բարակութեան ու ճարտասանութեան պէտք չկայ :

Ինք կը հաճի ու կը հաւնի պարզութեամբ եղած աղօթքի մը, որուն մէջ կը խնդրենք մինակ անիկայ, ինչ որ գիտենք թէ իր փառացն ու մեր սրբութեան յարմար է եւ կամ գոնէ ո՛չ մէկուն ու ո՛չ մէկալին հակառակ է :

Մանաւանդ թէ սրտին զգածումն է որ  
անոր շնորհքը կ'ընդունի, ոչ թէ շըր-  
թանց խօսքերը:

Սամուէլին մօրը սրտին քանի մը հա-  
ւաչանքները՝ ոչ թէ իր խնդրած որդին,  
հապա անանկ որդի մ'ընդունեցան՝ որ  
մարդարէ ու դատաւոր եղաւ Իսրայելա-  
ցւոց: Աննա իր սրտին մէջ կը խօսէր<sup>1</sup>:

Գ. Յիսուս անանկ պատասխան տը-  
ւաւ Մարիամայ, որ կարծես թէ, յոյսը  
պարապի հանեց: Բայց Մարիամ՝ յոյսը  
չկարեց ու իր բաղձացածն ընդունեցաւ:

Խիստ քիչ կը հանդիպի որ յարատե-  
ւութեամբ աղաչուի ու լսելի չըլլուի:  
Թախանձանքը զմարդիկ կը նեղեն ու կը  
յողնեցընեն: Բայց դուն մի՛ յողնիր Աս-  
տուծոյ աղաչելէն, ինքն ալ չիյողնիր քե-  
զի լսելէն:

Որչափ եռանդագին ալ ըլլայ ա-  
ղօթքդ, կարծես թէ Յիսուս քեզի կ'ըսէ,  
ինչպէս Մարիամայ ըսաւ, թէ ժամա-  
նակս չէ հասած<sup>2</sup>: Բայց թէ որ քու  
վստահութիւնդ միշտ հաստատ կ'ըլլայ,  
այն ժամանակը կը հասնի:

Ե. Մենք զմեզ անարժան կ'ընենք  
Աստուծոյ բարերարութեանը, թէ որ  
կ'ուզենք ատեն սրոշել, որ նոյն բարե-  
րարութեան զօրութիւնը մեզի զգացընէ:

<sup>1</sup> Ա. Թագ. Ա. 13:

<sup>2</sup> Յովհ. Բ. 4:

Բայց ստոյգ է որ ստէպ թախանձանքէն ետքն ալ, երբեմն Աստուած մեր ուզածը չի շնորհեր. բայց ան ատեն ալ անանկ բան մը կու տայ, որն որ մեր խնդրածէն աւելի մեզի հարկաւոր է:

Ս. Պօղոս առաքեալ խնդրեց փորձու թենէ մը ազատիլ, այսու ամենայնիւ նոյնէն միշտ յարձակում կրեց: Բայց որովհետեւ ազաչած էր, Աստուած իրեն անանկ շնորհք տուաւ, որուն օգնութեամբը մեծամեծ արդիւնք վաստրկեցաւ: Արդ չանցան աղօթքը:

Երկայն տարիներէ վեր մարմնաւոր հիւանդութենէ մը ազատելու համար աղօթք կ'ընես: Աստուած զքեզ անկէ չ'ազատեր: Բայց նոյն հիւանդութիւնը տանելու մէջ ունեցած մեծ համբերութիւնդ քու աղօթիցդ պտուղն է, որով աղօթքդ լսելի եղած է:

Զ. Շատ անգամ մեզի աղէկ երեւցած ու մեր Աստուծմէ խնդրած բանը մեզի գէշ կ'ըլլար, թէ որ տալու ըլլար: Աստուած զմեզ սիրելուն համար նոյնը մեզի չիտար:

Պէտք ենք փրկութեան ու սրբութեան շնորհքն աւելի մեծ համարիլ, քան թէ զուս ժամանակաւոր շնորհքը: Աստուած վերջինն իր ամենամեծ թշնամեաց ալ կու տայ, իսկ առջինն իր ընտրելոցը կը պահէ:

Գ Լ Ո Ի Խ Ի Ը .

Առաջին հիմնական շրջանի պարբերական վայելչության հետևանքով անհրաժեշտ է :

Ա. ՄԻՆԱԿ ընկերին սերն էր որ յորդորեց զՄարիամ, ինչպէս նաեւ իր որդին, Կանայ հարսանեաց հանդիսին ներկայ ըլլալու :

Անշուշտ իրեն աւելի սիրելի էր Նազարէթ իր տունընստիլ ու հոն հանդարտիկ մտաւոր նկատութեանց քաղցրութիւնը վայելել, բայց չուզեց իր հրաժարելովը տրամեցընել նոր ամուսինները, որոնք զինք հրաւիրած էին :

Անանկ է նէ առաքինութիւնը վայելչութեան հետ անմիասնական չէ : Ասոր հակառակ առաքինութիւնը կ'ուզէ որ պատշաճ վայելչութիւնը պահուի, մանաւանդ թէ ինքն է որ նոյնը սրբութեամբ պահել կու տայ :

Բ. Բայց, ամէն բանի մէջ Մարիամայ նմանելու համար, աչքիդ առջեւը բերան եղանակը, որով նոյն դէպքին մէջ Մարիամ վարուեցաւ : Ի՛նչ զգուշութիւն ունէր իր խօսքերուն մէջ ու ի՛նչ պարկեշտութիւն նայուածքին մէջ :

Իր վարմանցն իմաստութիւնը քեզի կը սովորեցընէ թէ նոյն իսկ պատուաւոր ու անմեղ զբօսանաց մէջ պէտք է վայելչութիւն ու զգաստութիւն պահել :



Պէտք է մեծ խտիրընել ընկերութեան օրինաց ու աշխարհքին օրինաց մէջ: Առաքինութիւնն աշխարհքին օրէնքները կը ճանչնայ մինակ անոնց դէմ կռուելու համար, իսկ ընկերութեան օրէնքները կըցածին չափ կը պահէ, ինչու որ Եստուծոյ օրինացը դէմ չեն:

Գ. Արեւոյ մը բարեպաշտութեան վիշտ հասցուցած կ'ըլլանք, թէ որ ամէն զուարճութիւններէ հրաժարինք: Ինչու որ ասով այն սխալ նախապաշարմունքը հաստատած կ'ըլլանք թէ առաքինութիւնը մարդը կը վայրենացրնէ:

Չէ, ճշմարիտ բարեպաշտութիւնը մարդը չիվայրենացրներ:

Արնայ մարդ՝ առանց բարեպաշտ ըլլալէն դողրելու, ինքզինք քաղաքավարութեան օրինաց յարմարցրնել:

Բայց ճշմարիտ բարեպաշտութիւնն իր դրած վախճանովն ու ան պատճառով որով որ գործելու կը շարժի, իրեն՝ ըստ ինքեան բոլորովին անտարբեր գործքերն ալ կ'ազնուացրնէ:

Դ. Արբէք ինք զինքդ բոլորովին զօսանքի մը մի տար, կ'ըսէ մեզի առաքինութիւնը, սրչափ որ անմեղ զբօսանք ալ ըլլայ. հապա մինակ փոխ տուր ինք զինքդ:

Ան զբօսանաց մէջ, ուր որ վայելութիւնը կը պահանջէ որ գտնուիս, չափէն

աւելի ցրումէ խորշելու համար, ջանաւատեն ատեն Աստուծոյ ներկայութիւնը միտքդ բերելու :

Անանկ պարկեշտութեամբ ու անանկ զգուշութեամբ վարուէ՛ նոյն տեղը, ինչպէս կը վարուէիր՝ թէ որ Յիսուս ու Մարիամ քեզի հետ հոն գտնուէին :

Ե. Տովբիթի հրեշտակին պէս անանկ ցուցուր որ ուրիշներուն պէս կը վարուիս, բաւական որ ուրիշներուն բրածն անկարգ չըլլայ, բայց միանգամայն նոյն հրեշտակին պէս ունեցիր աներեւոյթ կերակուր մը<sup>1</sup>, որն որ քու հոգիդ զմայլեցրնէ :

Խորհուրդներդ երկինք վերացուր : Մտածէ այն անպատում զուարճութիւնները, զորոնք հոն սուրբերը կը վայելեն. այն զուարճութիւնները, որոնք վարձք են այն անտարբերութեան, զորն որ հոս երկրաւոր զուարճութեանց նկատմամբ ունեցած էին :

Զ. Քու միտքդ ու սիրտդ առ Աստուած բարձրացուր, ցուցրնելով որ աշխարհքիս ամէն զուարճութիւնները երբէք չեն մոռցրներ քեզի այն սուրբ զուարճութիւնները, որոնք իր ծառայութեանը մէջ կը զգացուին :

Ըսէ իրեն՝ թէ իր շնորհացն օգնակալութեամբն՝ իր սիրոյն մինակ մէկ աստիճանին համար յօժարութեամբ կ'ուզես

<sup>1</sup> Տովբ. ԺԲ. 19 :

զոհել ան ամէն բան, որն որ կրնայ աս կեանքիս մէջ քեզի աւելի հաճութիւն տալ :

Գ Լ Ո Ի Խ ԻԹ .

Թե՛ սրբաբ Գաղար է Յիսուսի յայնչ լսել սրբաբ անց ին Գոյն պիտի աւելնայ անոր իրար ներն ընդհանրելու :

Ա . ՄԱՐԻԱՄ՝ ան երեսուն տարւան մէջ որ Յիսուսի հետ Նազարէթ անցուց, անոր ներկայութիւնն ու խօսակցութեանցը քաղցրութիւնը վայելած էր :

Անանկ կ'երեւար որ ալ լուսութեամբ իր միայնարանին մէջ նստած մինչեւ նոյն ատեն ընդունած վարդապետութիւնները պիտի նկատէր, առանց հարկաւոր սեպելու՝ Յիսուսին առաքելական կենացն ատեն, անոր ետեւէն զանազան տեղեր երթալու :

Բայց Ս . Յովհաննէս մեզի կ'ըսէ թէ Քանի մ'որ Յիսուսի հետ Ասիառնաում կեցաւ<sup>1</sup>, անշուշտ իրեն վարդապետութիւններէն բան չահելու համար :

Բ . Մէկալ աւետարանիչները մեզի կ'իմացընեն թէ ուրիշ առթի մը մէջ, Յիսուսի վարդապետութիւնը լսելու համար, քովը շուրջ պատող բազմութեան պատճառաւ, անոր քով չկրնալով եր-

<sup>1</sup> Յովհ. Բ . 12 :

Թալ<sup>1</sup>, ուզեց զանիկա տեսնել ու հետը  
խօսիլ :

Ուրիշ մէկը իրմէ աղէկ չէր ճանչնար  
անոր աստուածային վարդապետու-  
թեանցը յարդն : ու անոր խօսակցու-  
թեանց յափշտակիչ քաղցրութեանը  
ճաշակը ոչ ոք կրնար իրմէ աւելի առնել :

Գ. Իրօք ալ, ինչ քաղցր բան է մէկու  
մը, որն որ Յիսուսի ու մարդկան ձայնն  
իրարմէ ընտրելը գիտէ, անոր բերնէն  
ելած կենդանութեան խօսքերը լսել :

Մէյ մը զՅիսուս ճաշակող հոգի մը,  
սլ առանց Յիսուսի չիկրնար ապրիլ :  
Արդէն հազար առթի մէջ անոր ձայնը  
լսած ալ որ ըլլայ, տակաւին հազար  
անգամ կուզէ նոյնը լսել :

Իրեն անհաճոյ է ան ամէն բնակու-  
թիւն, ուր սիրելին չիգտներ : Անոր ձայ-  
նէն զատ ուրիշ ամէն ձայն զինքը կը նեղէ :

Ո՛հ, որչափ անհաճոյ կու գան իրեն  
մարդկան խօսակցութիւնները : Ար տեսնէ  
թէ ուրիշ բաներու վրայ չեն խօսիր, բայց  
եթէ ընդունայն բաներու վրայ<sup>2</sup> : Մինակ  
Յիսուսի խօսքերը իրեն համար հոգի են  
ու կեանք<sup>3</sup> :

Յիսուսի խօսելը լսածին պէս ուրիշ  
ամէն խորհուրդները կը մերժէ, իր բոլոր

<sup>1</sup> Մատթ. ԺԲ. 46 : Մարկ. Գ. 31 : Ղուկ. Ը. 20 :

<sup>2</sup> Սաղմ. ԾԺԸ. 85 :

<sup>3</sup> Յովհ. 2. 64 :

ուշն անոր աստուածային խօսքերուն տարով, ինչու որ նոյն խօսքերը՝ երկրիս վրայ լուսելու ամենէն յափշտակիչ խօսքերէն աւելի իրեն հաճելի են :

Գ. Չկայ ուրիշ բան մը, զորն որ աւելի ուրախութեամբ լսէ, աւելի հաւատարմութեամբ պահէ եւ աւելի մտադրութեամբ մտածէ : Քայց միանգամայն չկայ ուրիշ բան մը, որն որ աւելի առատութեամբ իր վրայ պտուղ բերէ :

Քնանալու որ ըլլայ՝ Երգոց երգոյն հարսին պէս, փեսային ամենամեղմ ձայննալ լսելուն պէս կ'արթըննայ : Ո՛հ, կ'ըսէ, իմ սիրելւոյս ձայնը կը լսեմ, ահա հաւաստիկ կու գայ<sup>1</sup> :

Անոր ձայնն ուրիշի մը ձայնին հետ չհիշփոթեր : Երբոր մէկը Յիսուսէն ուրիշ մէկը չհոսիրեր, շուտ մը կ'իմանայ թէ Յիսուս է խօսողը :

Ե. Աշխարհք, ընդունայնութիւնք ու յղփութիւնք բոլորովին տարբեր խօսք մ'ունին, զորն որ Յիսուսի սիրովը զգածեալ ոգին սրտնեղութեամբ կը լսէ, ու մինակ անկէ խորշելու համար կը ձանձնայ :

Մագդաղենացւոյն աշուրները զՅիսուս չձանչցան, երբ յարութենէն ետեւ անոր երեւցաւ . բայց երբոր Յիսուս բերանը բացաւ որ խօսի, շուտ մը սիրտն զգաց թէ Յիսուս է :

<sup>1</sup> Երգ. Բ. 8 :

Զ. Ո՛վ Յիսուս, ո՛վ Տէր իմ, հեռա-  
ցուր ինձմէ օտար ձայները, որոնք շա-  
անդամ կը ջանան արգելել իմ մտադրու-  
թիւնս քու աստուածային խօսքիդ :  
Ասիէ ետքը մինակ քեզի կ'ուզեմ լսել :

Ընդունայն զբօսանքներ, չնչին նիւ-  
թեր, որ այնչափ անդամ զիս խափա-  
նեցիք Յիսուսի ձայնը լսելէն, ա՛լ չեմ  
ճանչնար զձեզ : Զիս անոր հետ մինակ  
թողուցէք :

Է. Վառ խօսքերդ լսելու համար,  
ուր որ կ'երթաս՝ կ'ուզեմ քու ետե-  
ւէդ գալ, աստուածային Տէր<sup>1</sup> : Թէ որ  
Նազարեթի մէջ ա՛լ քու ձայնդ չեմ  
լսեր, կափառնաում ու Երուսաղէմ  
կ'երթամ զանիկա լսելու համար :

Բայց ո՛ւր որ ըլլամ՝ կրնամ իմ փրն-  
տը ած երանութիւնս վայելել : Խօսէ,  
Տէր, անդադար խօսէ սրտիս : Կ'ուզեմ  
մտադրութեամբ լսել, ինչ որ Տէր սրտիս  
մէջ կը խօսի<sup>2</sup> :

Ը. Արանի՛ անոր, որուն դուն կը սո-  
վըեցընես ու զորն որ քու օրինացդ գի-  
տութեանը մէջ կը հրահանդես<sup>3</sup> : Անի-  
կա կրնայ անոնցմով տառապանաց ա-  
տեն իր վշտերը քաղցրացընել :

Քու ծառաներդ շատ անդամ քու

<sup>1</sup> Մատթ. Թ. 19 :

<sup>2</sup> Սաղմ. 27. 9 :

<sup>3</sup> Սաղմ. 127. 12 :



կողմանէդ ինծի կը խօսին : Շատ գրքեր ,  
զորոնք հաճութեամբ կը կարդամ քու  
վրայ կը խօսին , բայց թէ որ նոյն ատեն  
քու ձայնդ չես լսեցրներ , ինչ ազդեցու-  
թիւն կրնան ընել նոյն խօսքերն իմ վրաս :

Ստոյգ է խօսածնին , շարժիչ է ըսած-  
նին : Բայց եթէ շնորհքդ անոնց խօսքին  
հետ չիմիանար՝ ճշմարտութիւնը մտաց  
մէջ չիքանդակուիր ու սիրաբ չիշարժիր :

Թ. Արդ լսեցուր ինծի քու ձայնդ ,  
հոգւոյս երկնային փեսան , որպէս զի ես  
ալ իմինս քեզի լսեցրնեմ : Խօսէ սրտիս ,  
որպէս զի ան ալ քու սրտիդ խօսի :

Քու ձայնդ մէկ վայրկենի մէջ աշխարհ-  
քիս գիտնոցը դպրոցին շատ տարիներու  
մէջ սովըեցուցածէն աւելի կը սովըեցրնէ :

Քու քովդ ստացած ծանօթութիւն-  
ներով կրցան ըստ աշխարհի պարզամիտ  
մարդիկ՝ յափշտակիչ կերպով մը աս-  
տուածային սիրոյ վրայ խօսիլ ու նաեւ  
բարձրագոյն կերպով մը քու ամենամեծ  
խորհուրդներուդ վրայ ճառել :

Գ Լ Ո Ի Խ Լ .

Պերտ չէ փորել աշխարհիս փորտն ու մարդ-  
իան համարումը :

Ծառան : Ա . Ո՛վ Մարիամ , ո՛վ եր-  
ջանիկ մայր , անշուշտ կ'ուրախանայիր  
այն մեծարանաց վրայ , զորն որ մարդիկ

<sup>1</sup> Երդ . Բ . 14 :

քու Որդւոյդ կը ցուցընէին, անոր քարոզութեան ատեն զանազան առիթներու մէջ, բայց մինակ անոր փառաւորութիւնն համար կ'ուրախանայիր՝ առանց քու անձինդ նկատմունք մ'ունենալու :

Երբեք չուզեցիր ցուցընել քու այն արտօնութիւնդ, զորն որ ունէիր Աստուծմէ ընտրուած ըլլալովդ ծնանելու զանիկա, որուն վրայ իր հրաշքներուն ու վարդապետութեանցը բարձրութեան համար ամէն ժողովուրդ կը զարմանար,

Բ. Խիստ տարբեր ուրիշ մայրերէն: որոնք բացայայտ իրենց որդւոցը արդիւնքովը կը պարծին ու անոնց փառացը կ'ուզեն հաղորդ ըլլալ, զանազան տեղեր Յիսուսի ետեւէն դացած ատենդ վախճանդ էր իր խրատներն ընդունիլ ու անով քու հոգիդ անուցանել եւ ոչ թէ ան փառքն ընդունելու համար, զորն որ իրեն տրուած գովեստներն ու օրհնութիւնները կրնային բերել :

Միշտ քու խոնարհ զգածմունքդ պահեցիր, նաեւ անանկ բաներու մէջ, որոնք խիստ յարմար էին ուրիշներուն աչքն ու մեծարանքը քու վրայ ձգելու :

Ասանկով կը դատապարտէիր աս աշխարհքիս փառախնդրութիւնը, մարդկային համարման սէրը, որն որ մեր բոլոր գործքերն ապականող դժնդակ թոյն է :

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, Աստուծոյ  
շնորհքովը ես զիս միշտ կը պահէի անկէ,  
զորն որ իրաւամբ դժնդակ թոյն կը կոչես:

Մինակ Աստուծոյ փառք կը վայլէ:  
Արարածն ինչ բանի վրայ կրնայ պար-  
ծիլ, զորն որ Աստուծմէ առած չըլլայ:

Աստուած զիս արդէն պատուած էր  
Մեսիայի մայր ընտրելով: Արնայի՞ անկէ  
ետքը աշխարհքիս պատիւները փնտուել:

Դ. Ով որ մինակ զԱստուած կը փրն-  
տըռէ, Աստուծմէ ուրիշ մեծ բան մը  
չիտեսներ, աս աշխարհքիս ընդունայն  
պատիւներն ու ան ամէն բաները զորոնք  
մարդիկ մեծ կը համարին, փուճ ու դա-  
տարկ բաներ են իր աչքին առջեւ:

Ո՛րդեակ, խորհուրդ հարցուր քու  
հաւատքիդ, խորհուրդ հարցուր նաեւ  
քու մտայդ, անկէ ետքը գովութեանց  
ու պատուոյ ցանկացող չես ըլլար:

Ան ատեն, քու փառասիրութիւնդ  
իր առարկան փոխելով, կը սկսի մինակ  
ան փառքին բաղձալ, զորն որ Աստուած  
իր սրբոցը պահած է:

Երբոր զքեզ մուացութեան մէջ կը  
թողուն ու բանի տեղ չեն դներ, չէ թէ  
միայն չես տրամիր, հապա նաեւ կ'ու-  
րախանաս, ինչու որ երկնից մէջ մեծ  
բարձրութեան հասնելու համար՝ կրօնի  
հոգւով ընդունուած նուատութենէն  
ուրիշ ապահով ճամբայ չկայ:

Ե. Անանկ է նէ աշխարհատէրներուն թող տուր ան ամէն ընդունայն անուններն ու պատիւները, որոնցմով կը պարծին: Ինք զինքդ աւելի հաստատուն ու իրական փառաց պահէ:

Ստէպ խնդրէ Աստուծմէ, Գաւթին պէս, որ քու աչքդ պահէ, որ երկրային բաներուն ընդունայնութեանցը չերթան<sup>1</sup>:

Շատերը կորսուեցան աշխարհքն իրենց կուռքն ընելով: Մ'աւելցրներ ան յիմարներուն թիւը, որոնք ամէն օր նոյն կուռքին խունկ կը մատուցանեն:

Ծարան: Զ. Սուրբ Աոյս, կ'ուզեմ քու օրինակէդ ու վարդապետութենէդ օգտիլ: Չեմ ուզեր ուրիշ փառք՝ բաց ի այն փառքէն, զորն որ քու առաքինութեանդ նմանողութիւնը կու տայ:

Բայց որովհետեւ իմ սիրտս տկար է ու դիւրաւ յառաջադրութենէն կը հեռանայ, քու օգնութիւնդ կը խնդրեմ: Ընդունէ ինծի հոգւոյ հաստատութիւն, որուն պէտք ունիմ աշխարհքիս անարդանայն ու նենգաւոր փաղաքշանացը յաղթելու համար:

<sup>1</sup> Սաղմ. ՃԺԸ. 37:

Պէտք է ընկերին համբերել «երայ» — «ազգայն»  
 թեան հոգով:

Ա. Ո՛վ կոյս, որ քաղցրութեան մէջ  
 ամէն սոսկ արարածները կը գերազան-  
 ցես, քու ան ապերախտներուն նկատ-  
 մամբ ցուցրցած ընթացքովդ, որոնց  
 Յիսուս իր երկնային վարդապետու-  
 թիւնը կը սովորեցընէր ու որոնց հա-  
 մար մեծամեծ հրաշքներ կ'ընէր, սո-  
 վրեցուր ինծի թէ ինչպէս պէտք եմ իմ  
 ընկերիս պակասութեանցը տանիլ:

Վասն զի եթէ երբեմն Յիսուս անոնց-  
 մէ գովութիւն ու օրհնութիւն ալ կ'ըն-  
 դունէր նէ, քանի քանի հեղ հարկա-  
 դրեցաւ սատոիկ հակառակութիւն կրել:

Նախանձը շարունակ թշնամիներ՝ կը  
 յարուցանէր, որոնք անոր վարդապե-  
 տութիւնը կ'ազարատէին, հրաշքնե-  
 րը սատանայական խարդախութիւն կը  
 կանչէին ու նոյն իսկ զինքն ատելի ու  
 դարշելի գոյներով կը ստորագրէին:

Բ. Վրանի քանի անգամ դուն ալ  
 անձամբ աս անպիտանութեանց ներկայ  
 եղար ու քու աստուածեղէն Որդւոյդ  
 օրինակին համեմատ, անոր թշնամեաց  
 վրայ մինակ խաղաղութեան խորհուրդ<sup>1</sup>  
 ու զգածում ունեցար: Մեղքէն կը

<sup>1</sup> Երեմ. Իթ. 11:

տարտափէիր, բայց մեղաւորը միշտ կը սիրէիր :

Մինակ Աստուծոյ վշտանալը քեզից աւ կու տար, իսկ անկէ զատ նոյն անգգայ սրտերուն դէմ բողոք մը չէիր ըներ : Մանաւանդ թէ անոնց համար Յիսուսի քով կը բարեխօսէիր :

Գ. Ո՛հ, անանկ կը վարուէիր անոնց նկատմամբ, ինչպէս որ այնչափ տարւրնէ վեր իմ նկատմամբս կը վարուիս :

Ես քու ծառայիցդ ամենէն անհաւատարիմն ու ամենէն ապերախտն եմ, ու դուն ինձի մարդասիրութեամբ կը համբերես, ամէն ատեն ինձի համար Աստուծմէ նորանոր շնորհքներ կ'ընդունիս :

Ո՛վ մայր, որ խաղաղութեան Աստուածը ծնար, ինձի համար շնորհք առ որ երբեք մէկը նեղացուցիչ խօսքով չվշտացընեմ <sup>1</sup> :

Դուն, որ քու անուամբդ իսկ ու պատկերներովդ հոգւոյն մէջ քաղցրութեան զգածում կը բերես, ընդունէ ինձի այն քաղցրութեան առաքինութիւնը, այն խաղաղութեան հոգին, որով Աստուծոյ որդի <sup>2</sup> կանչուելու արժանի կ'ըլլամ :

Մարէաս : Գ. Ո՛րդեակ, բարեխօս կ'ըլլամ քեզի համար, բայց դուն ալ քու

<sup>1</sup> Սիր. ժԸ. 15 :

<sup>2</sup> Մատթ. Ե. 45 :



կողմանէդ համապատասխանէ քեզի ընդունելու շնորհացս : Շնորհքը դժուարութիւնները չի վերցընէր, հապակ'օգնէ անոնց յաղթելու :

Գիտեմ որ քու ընկերդ շատ անգամ քեզի ծանրութիւն կու տայ իր յեղձեղուկ բնութեամբը, անճոռնի գաղափարներովը ու տեսակ մը վարմամբը, բայց շնորհքը, բաւական որ անոր անասս, քեզի կը սովբեցընէ թէ ինչպէս պիտի յաղթես քու ամէն ընդդիմութեանցդ, արդիւնք վաստակելու համար :

Առաքինութեան դիւցազնական դործքեր ընելու առիթներն ամէն օր չէին հանդիպեր սրբոց . բայց ամէն օր ընկերին պակասութեանցը համբերութեամբ տանելով իրենց պասկը կը զարդարէին :

Ե . Վրիստոնէին կեանքը զո՛հ ու մահացուցում ընելու կեանք մըն է . ընկերն իր պակասութիւններովը գրեթէ անդադար առիթ կու տայ նոյն զոհերը բազմացընելու :

Ամէն մարդ կը մեղանչէ բազմապատիկ կերպով <sup>1</sup> : Անոր համար իր մեղքերը քաւելու միջոցները պէտք չէ ձեռքէն փախցընել : Արդ, ապաշխարանաց հողւով ընկերին համբերելը, նոյն միջոցներուն ամենէն զօրաւորներէն մէկն է :

Բաց ասկէ, որդեակ, ամէն մարդ պակ-

<sup>1</sup> Յակոբ . Գ . 2 :

սութեան տէր է : Ամենէն կատարեալն  
անիկայ է , որն որ ուրիշներէն աւելի  
քիչ պակասութիւն ունի :

Զ . Վառն քու եղբարցդ վրայ պակ-  
սութիւն կը դանես , քու եղբարքդ ալ  
քու վրադ կը դանեն . ինչու որ դուն ան  
մարդիկներէն չես , որոնք իրենք զիրենք  
առանց պակասութեան մը կ'երեւակայեն  
ու նոյն իսկ ասով ամենամեծ պակաս-  
ութիւնն ունին :

Քու եղբարքդ քեզի կը համբերեն ,  
դուն ալ քու եղբարցդ համբերէ :

Այն համբերութիւնը , զորն որ հար-  
կաւորութիւն կ'ունենաս ցուցնելու քու  
վրադ , այն պակասութիւններուդ համար ,  
զորոնք ստիպուած ես վրադ տեսնելու ,  
ընկերիդ պակասութեանցը տանելու գոր-  
ծած է :

Երկայն ատեն է որ քու վրադ տեսած  
պակասութիւններդ ուղղելու կ'աշխատիս  
ու աշխատանքդ խիստ քիչ պտուղ ու-  
նեցած է , հապա ի՞նչպէս գլուխ կրնաս  
ելլել ուրիշները քու հաճոյիցդ համե-  
մատ ուղղելու ջանքիդ մէջ :

Է . Ան ամէն տրտունջները , զորոնք  
քանի մը՝ քեզի անհաճոյ եղող անձանց  
կողմանէ քաշած վշտերուդ վրայ կ'ընես ,  
զանոնք չեն ուղղեր ու բանի մը չեն օգտեր :

Աս տեսակ վշտաց մէջ քու ընելիքդ  
միայն է՝ խնդրել Յիսուսէն որ նոյն վշտե-

րէն քեզի օգուտ հանես, անոնցմով  
զքեզ ուղղես ու առաքինութեան մէջ  
հաստատես :

Գ Լ Ո Ի Խ ԼԲ .

Թե պէտք է ամեն բանի մէջ Աստուծոյ խաճացը  
հասանիլ, նոյն իսկ անանի բանի մէջ, որն որ սե-  
փական պատասխանի ԳԼԻԲ է :

Ծառան : Ա . Ո՛վ մայր Յիսուսի, ինչ  
մեծ ցաւ էր քեզի, տեսնելդ թէ ինչպէս  
քիչ օգուտ կը հանեն շրեայք Յիսուսի  
քարոզութիւններէն :

Իր զուտ երկնային վարդապետութիւ-  
նը, զորն որ յայտնի ու բացայայտ սքանչե-  
լիքներով կը հաստատէր, չէր դարձնէր  
հազարաւոր յամառեալ մտքերը, որոնք  
իրենք զիրենք կուրցընել կ'ուզէին :

Զիրենք բժշկել ուզող ձեռքը եւ  
մղող հիւանդներու պէս, նոյն անհաւատ-  
ներն իրենց մատուցուած փրկութիւնը  
կը մերժէին :

Ինչ զգածմունք ունէիր ան ատեն :  
Ար հեծէիր նոյն անզգամ մարդկան կու-  
րութեան ու յամառութեան վրայ, բայց  
խաղաղութեամբ կը հեծէիր ու չէիր դա-  
դրեր Աստուծոյ իրենց դարձը խնդրելէն :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ, ես ամենէն ա-  
ւելի կը բաղձայի որ Յիսուս ուրիշներէն  
ճանչցուի : Այն եռանդը, զորն որ անոր  
փառացը համար ունէի՝ ինձի աւելի ազ-

դու կերպով կը զգացընէր Հրէից խրատասարտութիւնը: Բայց ի՞նչու հողւոյս խաղաղութիւնը կորսընցընէի:

Գիտէի թէ Աստուած շատ անգամ չարերն իր դիտաւորութեանցը գործադրութեան կը ծառայեցընէ եւ թէ շատ անգամ չարէն բարի կը հանէ ու լուութեամբ կ'երկրպագանէի այն անբաւ իմաստութեան, որն որ երբեմն կը թողու որ անօրէնութիւնն յաղթանակէ:

Ծարտան: Գ. Սնորբ Աոյս, աս համբերութիւնդ ինձի օրինակ պիտի ըլլայ իմ կենացս ամէն դիպուածներուն մէջ, բայց մասնաւորապէս ան դէպքերու ատեն, որոնց մէջ հաւատքս կը յողդողդի:

Մարիամ: Գ. Այո՛, որդեակ իմ, երբ որ կը տեսնես որ ամօթալի յանցանքը բարձրիզլուխ կը շրջի ու անմեղութիւնը կը նախատէ, ինք ղինքդ մի տար զչարող ու զայրացող դառն նախանձախրնդրութեան շարժմանցը: Արօնքն ասիկա քեզի կ'արգելէ:

Ի՞նչու դուն պիտի չհամբերես անոր, որուն որ Աստուած կը համբերէ: Ինք կրնայ արգելել ան բանը, որն որ քեզի դուցէ զայթակղութեան նիւթ է: Բայց չ'արգելէր: Նոյնը թոյլ տալովը դիտաւորութիւն մ'ունի. դուն երկրպագութիւն ըրէ նոյն դիտաւորութեան:

Ե. Աշխարհքիս վրայ բան մը չկա-

տա՛հիր առանց անոր թոյլտուութեանը :  
Ի՞նչպէս բարին , անանկ ալ չարն իր նա-  
խախնամութեան նպատակին կը ծա-  
ռայէ : Նոյն նպատակը հիմա դուն չես  
կրնար բմբռնել : Օր մը անոր արդարու-  
թիւնն ու իմաստութիւնը կը ճանչնաս :

Ստոյգ է , պէտք չես անզգայ ըլլալ  
կրօնքի դէմ՝ եղած չարեաց վրայ , իրա-  
ւունք ունիս անոր վրայ վշտանալու եւ  
նաեւ թոյլ տրուած է քեզի անոր վրայ  
սիրալիր տրտունջ ընելու Աստուծոյ :

Բայց թէ որ այն աստիճանի դայթա-  
կղիս որ հաւատքդ ու խաղաղութիւնդ  
վնասի , ան ատեն ըրածդ նախանձա-  
խնդրութիւն չ'ըլլար , հապա անոր զեղ-  
ծումն ու չափազանցութիւնը :

Զ. Առաքինութիւն մը ուրիշ առա-  
քինութիւն չ'եղծաներ : Աստուծոյ թոյլ  
տուած բանին միտքը հնազանդեցրնելը  
կրնայ միաբանիլ Աստուծոյ փառաց  
ճշմարիտ նախանձախնդրութեանը հետ :

Կան չարիք , որոնք քու արցունքդ ու  
հեծութիւնդ կը պահանջեն , բայց անանկ  
արցունք որ Աստուծոյ ստքը հեղուս ու  
անանկ հեծութիւն , որ անոր գիրիը  
թափես :

Յայտնէ իրեն քու վիշտդ : Խնդրէ  
իրմէ որ վերջ տայ զքեզ տառապեցը-  
նող բանին : Ըսէ նաեւ իրեն սուրբ հա-  
մարձակութեամբ մը , որուն չիվշտանար :

Է. Ա՛Ն, Տէր: Ինչո՞ւ իբրեւ քուն ե-  
ղած կ'երեւաս: Ինչո՞ւ քու աչքդ մեր  
վրայէն կը դարձնես: Ինչո՞ւ կը մոռնաս  
զմեզ մեր տառապանացը մէջ<sup>1</sup>:

Նոյն իսկ քեզի դէմ է պատերազմը:  
Քու անունդ է, զորն որ կը նախատեն.  
Քու կրօնքդ, զորն որ կը հայհոյեն. քու  
զործքդ, զորն որ կ'ուզեն ապականել:

Չե՞ք առ քու դատդ: Ա՛Ն մի համ-  
բերեր որ անօրէնութիւնը պարծի: Քու  
պատիւդ ալ նոյնը կը պահանջէ:

Ասանկով, սրդեակ, Աստուծոյ փա-  
ռաց ու կրօնքին քեզմէ պահանջած նա-  
խանձախնդրութիւնը կատարած կ'ըլ-  
լաս. անկէ ետեւ հանգիստ սպասէ, որ  
Աստուած գայ զքեզ մխիթարէ:

### Գ Լ Ո Ի Խ ԼԳ.

Ճշմարիտ սրբա-թեան նշաններուն վրայ:

Ա. Օր մը կնտջ մէկը Փրկչին առջեւը  
գոչեց ըսելով, Երանի ան որովայնին,  
որն որ զքեզ կրեց ու ստեանց, որոնք  
զքեզ դիեցուցին<sup>1</sup>:

Յիսուս պատասխան տուաւ թէ Ե-  
րանի, ըսէ, անոնց, որոնք Աստուծոյ  
խօսքը կը լսեն ու զանիկա կը գործադրեն:

Աս խօսքով Յիսուս ուզեց իմացընել  
որ աստուածամայրութեան պատիւը չէ՛

<sup>1</sup> Սաղմ. ԽԳ. 23—26:



որ զՄարիամ երեւելի կ'ընէ, հապա  
կրօնքի ամէն պարտականութեանց մէջ  
ունեցած հաստատ հաւատարմութիւնն  
է՝ որ զինք աւելի երեւելի ըրած է :

Իր արդիւնքը յառաջ չի դար իր մայ-  
րութեանն արտօնութենէն, զորն որ  
զուտ Աստուծմէ ընդունած է, հապա  
այն սրբութենէն, զորն որ, Աստուծմէ  
եաքը, իր անոր շնորհացը ցուցրցած հա-  
ւատարմութեամբն ունեցաւ :

Բ. Աստուծոյ մեզի համար ըրածը չէ  
յատկապէս մեզի վարձք բերողը, հապա  
մեր Աստուծոյ համար ըրածը :

Աւետարանին մէջ խօսուած բարի  
ծառային արդիւնքը հինգ քանքար առ-  
նելուն վրայ չէր, հապա զանոնք բանե-  
ցընելուն վրայ էր :

Իրաւամբ կը պարծիս մկրտութեամբ  
Աստուծոյ որդի ըլլալուդ համար : Բայց  
մտածէ որ աս յատկութիւնդ սրբոց մէջ  
քեզի տեղ մը չի տար, թէ որ զանիկա  
քու կենացդ սրբութեամբը չես պահեր :

Սրբոց մէջ յափշտակուողներ ու տե-  
սիլներ տեսնողներ եղան. ո՛չ թէ աս բա-  
ներուս համար անոնց պիտի նախանձիս :

Նոյն սուրբերը հաւատարիմ ու սեր-  
տիւ հաւատարիմ էին Աստուծոյ կամա-  
ցը. ասոր պիտի ջանաս նմանելու :

Գ. Սուրբ վիճակ մ'ալ քեզի ընտ-

<sup>1</sup> Ղուկ. ԺԱ. 27 :

րած որ ըլլաս, նոյն վիճակին սրբու-  
թիւնը պիտի չըլլայ զքեզ ապահովը-  
նողը, հապա անոր պարտքերը կատա-  
րելու աշարջութիւնդ ու ճշդութիւնդ:

Հատ հաւանական է որ Յուդա հը-  
րաշք ըրած է, բայց դատապարտուե-  
ցաւ: Չենք կարդար որ Յովհաննէս Մկր-  
տիչ հրաշք ըրած ըլլայ, բայց Աւետա-  
բանին մէջ Աստուծոյ Որդին անոր վրայ  
մեծ ու սքանչելի գովեստներ խօսեցաւ:

Մարդկան համարման մէջ կրնայ մէկը  
բան մ'ըլլալ առանց վարուց սրբու-  
թեան, բայց Աստուծոյ համարման մէջ  
ան ատեն մէկը բանի տեղ կը դրուի,  
երբ որ սուրբ է:

Իսկ սուրբ ան ատենը կ'ըլլայ մէկը,  
երբ սուրբ գործքեր կը գործէ: Աս է,  
ինչպէս էր նաեւ Մարիամոյ քով, մեր  
յաւիտենական փառաց ճշմարիտ հիմք:

Գ. Ասկէ պէտք ես իմանալ որ Աս-  
տուած քու փրկութիւնդ բնութեան  
կամ շնորհաց արտաքոյ կարգի ձիւքե-  
րուն վրայ չէ դրած, հապա իբրեւ թէ  
զքեզ տեք ըրաւ քու փրկութեանդ, զա-  
նիկա՛իրմէ ետքը, քեզմէ կախած ըլլալով:

Ո՛վ Աստուած իմ, Անիկայ է արժա-  
նի մանելու քու յաւիտենական յարկդ,  
որն որ սուրբ ու անմեղ կեանք կ'անցընէ  
ու քու կամքդ կը կատարէ<sup>1</sup>:

<sup>1</sup> Սաղմ. ԺԴ. 2:



Ծառան: Բ. Քայց, ազնիւ Աոյս, մինակ շարշարանաց մէջ կրնայ մէկն իր Յիսուսին ունեցած սէրը ցուցնել: Չկրնար հանդարտութեան ու խաղաղութեան մէջ նոյնը ցուցնել:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, հանդարտութեան ու խաղաղութեան ատեն սէրը ցուցնելը դիւրին է, բայց փոթորկի ատեն աղէկ կը տեսնուի հաստատութիւնը:

Յիսուս ըսաւ, Ով որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս շիղար, չիկրնար իմ աշակերտս ըլլալ<sup>1</sup>:

Անոր համար քու երջանիկ օրերդ պիտի համարիս ան օրերը, որոնց մէջ առիթ կ'ունենաս անոր սիրոյն համար բան մը կրելու:

Դ. Վրիստոնեաներէն շատերն ատուածային բարերարը մինակ իր բարերարութեանցը համար կը սիրեն, ու աշխարհքիս բարեկամներուն կը նմանին, որոնք երբեք ձրի չեն սիրեր:

Ա՛րսեն թէ բոլոր սրտանց զՅիսուս կը սիրենք, բայց պարտիզին մէջ իր ճգնաժամուն ատեն ժամ մ'ալ արթուն կենալու չափ<sup>2</sup> քաջութիւն չունին:

Ար խոստանան թէ ամէն տեղ, նոյն իսկ մինչեւ ի մահ իր ետեւէն կ'եր-

<sup>1</sup> Ղուկ. ԺԴ. 27:

<sup>2</sup> Մատթ. ԻԶ. 40:

Թան, բայց չարչարանաց երկիւղը շուտ մը իրենց սէրը կը տկարցընէ ու մինակ «հեռուանց», կը սկսին Յիսուսին ետեւէն երթալ :

Իսկ դուն, սրդեակ, թէ որ զՅիսուս կը սիրես, սիրէ իր խաչը, եւ թէ որ բոլոր սրտանց կը սիրես, բոլոր սրտանց դըրկէ զանազան խաչերը, զորոնք ինք քեզի կը խաւրէ :

Ե. Ճմարտապէս կը սիրէ զՅիսուս անիկա, զորն որ հարկ չկայ Սիմոն Աիւրենացւոյն պէս ստիպել Յիսուսի խաչը տանելու, ու որն որ կամովին հաղորդակից կ'ըլլայ ան լեզւոյն դառնութեան, զորն որ Գողգոթա իրեն մատուցին :

Նեղութեան կրակը՝ սիրոյ ոսկին կը փորձէ <sup>1</sup>, կը մաքրէ ու կը կատարելագործէ :

Յիսուս արտասուաց մէջ կեանք անցուց. դուն կրնան յուսալ ու կրնան միաքդ դնել զուարճութեանց մէջ կեանք անցընել :

Ճմարիտ քրիստոնեան՝ չարչարուող, մեռնող ու միանգամայն խաչին վրայ մեռնող Յիսուսին օրինակին վրայ ձեւուած պիտի ըլլայ <sup>2</sup> :

Զ. Ինչպէս սիրելի կը գտնես զՅիսուս, երբ որ կը մտածես ան չարչարանքները,

<sup>1</sup> Սիր. Բ. 5 :

<sup>2</sup> Փիլիպ. Գ. 10 :

զորոնք քու սիրոյդ համար կրեց : Ո՛հ,  
նրչափ սիրելու ես ան բաները, որոնք  
զՅիսուս քու սիրոյդ արժանի կ'ընեն,  
այսինքն չարչարանքները. եւ Յիսուս  
անոր համար կ'ուզէ զքեզ անոնց հա-  
զորդ ընել, վասն զի զքեզ կը սիրէ :

Մարդիկ, որ խաչով գնուած են,  
պէտք է որ զխաչն իբրեւ իրենց բաժինն  
ու փառքը մտածեն :

Յիսուս չարչարանաց ճամբով իր  
փառքը մտաւ <sup>1</sup> : Ինձի ու սուրբերուն ալ  
անկէ ուրիշ ճամբայ չեղաւ : Հարկ է որ  
դուն ալ նոյն ճամբէն երթաս, թէ որ  
նոյն նպատակին կ'ուզես հասնիլ :

Ծառան : Է. Ո՛վ կոյս մայր Աստու-  
ծոյ, քու այնչափ չարչարանաց համբե-  
րելդ ու անոնց վրայ մեծ համարում ու  
նենալդ անկէ էր որ դուն ամէն մարտի-  
րոսներէն ու բոլոր սուրբերը բովանդակ  
առնելով՝ ամենէն աւելի զԱստուած կը  
սիրէիր :

Քու բարեխօսութեամբդ օգնէ ինձի  
որ իմ փափկութեանս, դիւրագգածու-  
թեանս ու խաչէն ունեցած բնական  
վախիս յաղթեմ, որպէս զի սիրտս,  
միտքս ու ամէն բանս Աստուծոյ ցուցնէ  
թէ զինքը կը սիրեմ :

Ը. Դուն ամէն կոյսերէ սուրբ եղար,  
բայց ամենէն աւելի ալ տառապանք

<sup>1</sup> Ղուկ. ԻԳ. 26 :



քաշեցիր: Ա՛ռ զեմ՝ քու շարձարանացդ  
հաղորդ ըլլալ, քու սիրոյդ ալ հաղորդ  
ըլլալու համար:

Տո՛ւր որ սիրեմ Յիսուսի խաչն ու իմ  
զուարճութիւնս խաչին վրայ դնեմ, որ-  
պէս զի մահուանս ատեն, խաչելեալ  
Յիսուսն իմ զօրութիւնս ու մխիթա-  
բութիւնս ըլլայ:

Մարեթ: Թ. 1<sup>o</sup> նշապէս կրնաս մահուա-  
նըդ ատեն վատահութեամբ խաչելու-  
թեան փաթթուիլ, թէ որ իբրեւ թշնա-  
մի խաչին<sup>1</sup> կեանք անցուցած ես:

Մահուան ատեն՝ մարդ ոչ միայն իր  
շատանգամ խաչուելուն վրայ շնորհա-  
բիր, հապա նաեւ կը բաղձայ որ իր բոլոր  
կենացը մէջ նոյնին բեւեռած ըլլար, ին-  
չու որ ան ատեն շարունակ Յիսուսի  
նմանած ըլլալուն երանութիւնը կ'ունե-  
նայ, որ նմանութիւնը Յիսուս ամենէն  
աւելի կ'ուզէ որ իրեն հետ ունենանք:

Ժ. Ո՛րդեակ, թէ որ նախատանայ,  
բիրտ վարմանց ու արիւնահեղ հալա-  
ծանաց տակ իյնալով, զատնք հնազան-  
դութեամբ, համբերութեամբ ու հաս-  
տատութեամբ կրելու ըլլաս, ան ա-  
տեն վրայ Յիսուսի սքանչելի պատկերը  
կը տեսնեմ:

Մինչեւ նոյն ատեն քեզի ունեցած  
սէրէս ալ աւելի զքեզ կը սիրեմ, ինչու

<sup>1</sup> Փիլիպ. Գ. 18:

որ Յիսուսին աւելի նմանելով քու մօրդ  
աւելի արժանաւոր որդի կ'ըլլաս :

Ծառան : ԺԱ . Ո՛վ մայր իմ , ասկէ  
ետքը ինծի սիրտ առող ու իմ ամէն  
վշտացս մէջ զիս մխիթարող շարժա-  
ռիթը պիտի ըլլայ մտածել՝ թէ իմ  
խաչս Յիսուսի հետ ու Յիսուսի համար  
կը կրեմ . բայց միանգամայն ինչ երա-  
նութիւն է ինծի՝ մտածելը՝ թէ իմ վի-  
ճակս ու տրամադրութիւնս առանձին  
կերպով մը քու պաշտպանութիւնդ ու  
սէրդ վրաս կը ձգէ :

Գ Լ Ո Ի Խ Բ .

Վշտաց ՎԷ Աստուծոյ խոսոյք հետ փոփանե-  
լու լրաց :

Ծառան : Ա . ԻՄ գտնուած խեղճ  
վիճակիս մէջ քեզի կը դիմեմ , մխիթա-  
րիչ վշտացելոց :

Սովբեցուր ինծի թէ ինչ զգածում  
պիտ'որ ունենամ գլխաւորաբար իմ  
կրած ու աչքիս առջեւ վերահաս եղող  
նեղութեանց մէջ :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ , պէտք ես Աս-  
տուծոյ կամացը հետ՝ լի , ամբողջ ու կա-  
տարեալ համակերպութեան զգած-  
մունք ունենալ , ինչու որ Աստուած է որ  
իր փառացն ու քու փրկութեանդ հա-  
մար ամէն բան կը սահմանէ ու կ'օրի-  
նադրէ :

Երբոր վիշտ մը քեզի կը մօտենայ, երբոր կը հասնի, երբ կը շարունակի, կ'աւելնայ, երբ ուրիշ վիշտ մ'ալ ետեւէն կը հասնի, ըսէ ու կրկնէ յաճախ, Աստուած իմ, քու կամքդ ըլլայ:

Գ. Աս աստուածային կամաց խորհուրդը զիս զօրացուց ու մխիթարեց Երուսաղեմայ տաճարին մէջ, երբ Սիմոն դուշակեց թէ Յիսուս հակառակութեանց նպատակ պիտի ըլլայ եւ իմ սիրտս ալ ցաւոց սուր մը պիտի խոցէ:

Նոյնը զիս աւելի զօրացուց ու մխիթարեց Գողգոթա լերան վրայ, երբ զՅիսուս խաչին բեւեռած ու դժնդակ շարշարանաց մէջ անոր վերջին շունչը տալը տեսայ:

Ինչպէս որ Յիսուսին ունեցած սէրս չափ շունէր, ասանկ ալ ցաւս անչափ էր. բայց իմ Աստուծոյ կամացը հետ ունեցած միաբանութիւնս իմ ցաւէս ու սէրէս նուազ չէր:

Գ. Արդ, քու ձախորդութեանցդ մէջ ուրիշ ամէն մտածմունք մերժէ քու սրբտէղ ու մինակ ան մտածութիւնն ունեցիր, որն որ աս կարճ խօսքին մէջ բովանդակուած է թէ Աստուած ասանկ կ'ուզէ:

Ասկէ ուրիշ ամէն մտածմունք ցաւն աւելի եւս կը դառնացընէ ու թշուառութիւնն աւելի խիստ զգացընել կու տայ:

Ո՛րդեակ, երբ որ մտածելու ըլլաս թէ Աստուած է որ քեզի աս վիշտը կը խաւրէ, կրնաս յանդդնիլ ըսելու թէ Չեմ ուզեր :

Ե . Եթէ մարդ մը, որ իմաստութիւնն իրեն առաջնորդ առած է, չիկրնար բան մ'ուզել որ բարի չըլլայ, ինչ պիտի մտածես Աստուծոյ վրայ, որն որ անսահման իմաստուն է :

Ստոյգ է, Աստուած չ'ուզեր ան մեղքը, որն որ քու վշտիդ պատճառ կ'ըլլայ, բայց նոյն վիշտը կրելով քու ցուցրցած համբերութենէդ կ'ուզէ իրեն փառք հանել :

Քու թշնամւոյդ մեղաց թոյլ կու տայ, իսկ անկէ հետեւածը կ'ուզէ, զքեզ սուրբ ընելու համար :

Զ . Վառիթ՝ Սեմէին զինքնախատած ատեն՝ չմտածեց որ իր հպատակը զինք կը նախատէ, հապա մտածեց թէ արդար Աստուածն է, որ աս անարդ գործիքը կը գործածէ զինք խոնարհեցընելու եւ իր մեղքերը քաւել տալու համար :

Նոյն իսկ Յիսուս առաքելոցը հետ իր չարչարանաց բաժակին վրայ խօսած ատեն, չէր խօսեր Հրէից ապերախտութեան վրայ, որոնք նոյն բաժակն իրեն կը պատրաստէին, հապա իր Հօրը կամաց վրայ, որն որ այնպէս կարգադրած էր :

Զիթենեաց պարտիզին մէջ ինչ ըսաւ  
Պետրոսին, որն որ դեռ չէր հասկըցած  
թէ չարչարանաց մէջ եղող, նեղուող  
ու հալածուող քրիստոնեան, համբե-  
րութեան ու հնազանդութեան զէնքէն  
ուրիշ զէնք պիտի չգործածէ: Ինչ, ը-  
սաւ, իմ Հօրս ինծի տուած բաժակը  
պիտի չխմեմ<sup>1</sup>:

Է. Չեմ ըսեր թէ չես կրնար խըն-  
դրել Աստուծոյ որ քու վշտերէդ ազատ  
ըլլաս. բայց եթէ անանկով ալ Աս-  
տուած կ'ուզէ որ բաժակն ըմպես, ըսէ,  
Հայր իմ, ըլլայ, ս'չ թէ ինչպէս ես կ'ու-  
զեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես<sup>2</sup>:

Տէր, իմ վիշտ քաշելու արտաքոյ կար-  
գի ընդդիմութեանս այնչափ միայն նայէ,  
ս'րչափ որ քու փառքդ ու դիտաւորու-  
թեանցդ գործադրութիւնը կը ներեն:

Ը. Եթէ վշտերդ փոխանակ նուա-  
զելու, կ'աւելնան ու կը կրկնապատկուին,  
ըսէ. Այո, Հայր իմ, ինք զինքս աս նոր  
վշտաց տակ ալ կը դնեմ, վասն զի քեզի  
ասանկ հաճոյ եղաւ<sup>3</sup>:

Գուն կ'ուզես, ես ալ կ'ուզեմ: Գուն  
կը հրամայես, ես կը հաւանիմ: Պիտի  
ընկճիմ, կ'ընկճիմ. պիտի մեռնիմ, կը  
մեռնիմ:

<sup>1</sup> Յովհ. ԺԸ. 11:

<sup>2</sup> Մատթ. ԻԶ. 39:

<sup>3</sup> Մատթ. ԺԱ. 26:

Երանի թէ ան խտու թիւնը, որով  
քու ձեռքդ զիս կը պատուհասէ, կամ  
թէ պատուհասել կու տայ, ան բուսէն  
մերձեցրնէին, որուն մէջ դամ քու  
ներկայութեանդ ու սիրոյդ յախտնա-  
կան քաղցրութիւնները վայելելու :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Հասիւրս-իտն իբայ :

Ա . Ի՛նչ մեծ վիշտ էր մարմնացեալ  
Բանին մօրը, երբ տեսաւ զանիկա մարդ  
ցաւոց եղած, խաւարային իշխանու-  
թեանց մասնուած, ատեաններու առ-  
ջեւ քաշկուտած, եւ թէ հետը մոլորե-  
ցուցչի պէս կը վարուին ու լիրբ ու ան-  
արգ զինուորէ մը ապտակ կ'ընդունի ,

Երբոր տեսաւ անոր սաստիկ ձաղկու-  
մը, փշերով պսակուիլը, Բարաբբայէն  
աւելի յանցաւոր համարուիլը, մահուան  
դատապարտուիլը, իր շարշարանաց գոր-  
ծիքը վրան առնելն ու անոր ծանրու-  
թեանը տակ իյնալը ,

Երբոր ան մրձի հարուածները կը  
լսէր, որոնք իր սիրելի որդւոյն ոտուընե-  
րուն ու ձեռքերուն դամբերը խորունկ կը  
խոթէին, երբ տեսաւ զինքը խաշին վրայ՝  
երկու աւազակներու մէջտեղը բարձրա-  
ցած ու անոր մահուանը վրայ ցնծումը-  
նող թշնամիներէն նախատուած, որոնք



անոր ծարաւը յազեցընելու համար լե-  
զւով խառնուած գինի մատուցին ,

Աերջապէս երբոր տեսաւ խաչին վրայ  
անոր վերջի հառաչանքն հանելն ու ա-  
նոր մահուանը վրայ ապահով ըլլալու  
համար՝ զինուորի մը տիգի հարուածով  
անոր կողը բանալը :

Բ. Աս դժնդակ վշտաց մէջ, Մարիամ  
ամենէն աւելի դիւցազնական հեմքերու-  
թիւն ցուցուց : Բերնէն ամենափոքր  
տրտունջ մը չլսուեցաւ :

Գողգոթայի վրայ՝ Յիսուսի քահա-  
նայապետին տունը պահած լուծեանը  
կը հետեւէր : Յիսուս հոն սուտ ամբաս-  
տանողներէ պաշարուած՝ խօսք մ'ալ չէր  
զրուցեր<sup>1</sup>, ինչու որ իր պաշտպանու-  
թեանը համար խօսիլն անօգուտ էր, եւ  
մէկալ կողմանէ ալ չէր ուզեր դարձը-  
նել մահուան վճիռը, վտան զի մեր սի-  
րոյն համար ինք զինք մահուան նուի-  
րած էր :

Գ. Ո՛վ անձն, որ վշտերու մէջ ես, ա-  
հաւասիկ քեզի օրինակ առ : Թէ որ քու  
վշտացդ մէջ խօսելու հարկ ըլլայ, խօսէ,  
բայց քաղցրութեամբ ու խաղաղութեան  
հոգւով : Թէ որ քեզի մտիկ չեն ըներ,  
լուծեամբ համբերէ ու անիրաւու-  
թեան դիմացը մինակ համբերութիւն  
ցուցուր :

<sup>1</sup> Մատթ. ԻԶ. 63 :

Բայց ի՞նչ համբերութիւն: Քրիստոնէական համբերութիւն, որն որ կրօնական հոգիէ յառաջ կու գայ ունչ թէ մարդկային համբերութիւն, որն որ երբեմն քաղաքավարութենէ ու բնութեան խառնուածէն յառաջ կու գայ:

Գ. Որոնք որ Աստուծոյ ձեռաց տակ կը խոնարհին, որոնք որ իրենց վրայ եկած հարուածներուն մէջ՝ անոր արդարութեանը կամ ողորմութեանը երկրպագութիւն կ'ընեն, որոնք որ Յիսուսի ու Մարիամայ համբերութիւնն իրենց օրինակ կ'առնեն, անոնք իբրեւ ճշմարիտ քրիստոնէայ կը համբերեն ու դուն ալ աս կերպ պէտք է որ համբերես:

Քու խաչերդ անհամբերութեամբ որ տանիս, զանոնք աւելի կը ծանրացընես ու քաշած վշտացդ վրայ անօրէնութիւն կ'աւելցընես:

Խաչին ճամբան, երկնից ճամբայ է: Բոլոր սուրբերն անկից անցած են: Երկրիս վրայ եղող ամէն արդարները՝ անկէ կ'անցնին, ու շատ նեղութիւններ կը կրեն, ինչու որ Աստուած անոնց համբերութեան դիմացը ծանրագին պատակ կը պատրաստէ:

Ե. Այն ան քրիստոնէից, որոնք իրենց փրկութեանը ծառայելու բանն իրենց կորստեանը կը ծառայեցընեն:

<sup>1</sup> Սաղմ. ԼԳ. 20:

Կը նմանին ան յանցաւորին, որն որ Գողգոթա Փրկչին քովը մեռաւ, խաչին վրայ հայհոյելով, ու որն որ նոյն իսկ Գողգոթայէն դժոխք իջաւ :

Մեր վշտացը մէջ, թէպէտ եւ Աստուծոյ դէմ չելենք, սակայն եթէ իր խաւրած խաչերուն վրայ արտունջ ընելու ըլլանք, արժանի կ'ըլլանք որ Աստուած՝ զմեզ պատժելու համար, աս զմեզ սուրբ ընելու զօրաւոր միջոցները վրաներնէս վերցնէ :

Գէթ շատ անգամ երկինք կը թախանձենք մեր խաչերէն ազատելու համար ու չենք դիտեր ինչ կը խնդրենք<sup>1</sup> : Աս խաչերը մեզի համար առատ արդեանց աղբիւր մըն են :

Զ. Ո՛ր երբէք Գողգոթա լերան վրայ խաչին շաքին տակ տեսնուածէն աւելի սրբութեան պտուղներ ու սքանչելի առաքինութիւններ երեւցան :

Համբերութիւնը քիչ օրուան մէջ աւելի արդիւնք ստանալ կու տայ, քան որչափ շատ տարիներով հանդարտ բարեպաշտութեան մը կրթութեանց նուիրուած կենաց մէջ կարելի է ստանալ :

Քանի քանի հեղ կը պատահի որ բարեպաշտութեան գործքերու մէջ անձնասիրութիւն կը մտնէ :

Բայց վշտալից կենաց մը մէջ, այնչափ

<sup>1</sup> Մատթ. Ի. 22 :

աւելի արդիւնք կը ստանայ մարդ, որչափ որ հոն բնութիւնը պակաս կը գտնուի ու ամէն բան Աստուծոյ համար կ'ըլլայ :

Է. Նաեւ մէկ խաչի տեղ ուրիշ խաչ չի սնդրենք : Չըսենք, թէ Եսասիկա մէկայլէն աւելի կ'ուզեմ, ասիկա աւելի համբերութեամբ կը կրեմ :

Ո՛վ քրիստոնեայ, քու կրած խաչէդ ուրիշ խաչ մը չկայ, որ քեզի աւելի յարմար ըլլայ : Աստուած քեզմէ աւելի աղէկ դիտէ, քեզի ինչ պէտք ըլլալը :

Թէ որ խաչն ընտրելը քու ձեռքդ ըլլար, ընտրութեանդ մէջ կը խաբուէիր :

Աստուած՝ իր մեզի կրել տուած խաչերը՝ մեր հարկաւորութեան, զօրութեան ու իր մեր վրայ ունեցած դիտաւորութեանցը համեմատ կը տրամադրէ :

### Գ Լ Ո Ի Խ Գ .

Թէ Աստուծոյ շարժումներն անհրաժեշտ են ինչպէս ինչ որ անհրաժեշտ են մարդկանց համար :

Ա. Բաւական չէր, ո՛վ Աստուած իմ, Մարիամայ երեսուն՝ւերեք տարի իր մտայը մէջ իր որդւոյն կրելու չարչարանաց պատկերը տանիլը : Ի՞նչ, պէտք էր որ նաեւ անոր մահը տեսնէ :

Գուն չէիր պահանջած որ Սառան ալ ներկայ ըլլայ ան զոհին, զորն որ Աբրահամ քու հրամանաւդ պիտ'որ ընէր իր Իսահակ որդին զենլով :

Բայց դիտե՛մ, Տէր, պէտք էր որ Մարիամ, որ օր մը սրբոց [Թագուհի պիտի ըլլար, ուրիշ ամէն սուրբերէն աւելի սերտիւ՝ այն չարչարանաց ընկերութեան մէջ մտնէր, որուն վրայ քու առաքեալդ կը խօսի՝ ու զորն որ դուն Յիսուսի ու նախասահմանելոց մէջ հաստատած ես :

Բ. Անոր համար պէտք չե՛մ զարմանալ տեսնելով որ շատ արդարներու վշտերը՝ քու ծառայութեանդ մէջ իրենց ցուցրցած հաւատարմութեան հետ կ'աւելնան :

Իրենց՝ երբեմն կրած մեծամեծ չարչարանքները, իբրեւ քու իրենց ըրած մեծամեծ շնորհքներդ ու սիրոյ մեծամեծ նշաններդ պէտք է որ համարիմ :

Իրենց քեզի հաճոյանալու համար ըրածներուն դիմացը հատուցում՝ վշտեր կը խաւրես, որոնք զիրենք աւելի եւս նման կ'ընեն այն աստուածային օրինակին, զորն որ Գողգոթա անոնց կը ներկայացրնէ :

Այն անձինք, զորոնք դուն ամենէն աւելի կը սիրէիր, ու որոնք նաեւ ամենասաստիկ ու ամենաքաղցր սիրով զքեզ կը սիրէին, Գողգոթա լերան վրայ խաչին ամենէն աւելի մօտ դանուեցան :

Գ. Մեծ երջանկութիւն մըն է մասնաւոր կերպով մը Յիսուսի չարչա-

րանացը մասնակից, բլալու արժանա-  
նալ :

Կատարեալ կ'ըլայ աշկերտ մը, երբ  
որ իր վարդապետին պէս կ'ըլայ<sup>1</sup> : Յի-  
սուս մեր վարդապետը, որուն կատարե-  
լութեանը հասնելու պէտք ենք ջանքը-  
նել, ամենամեծ նեղութիւններէ անցաւ :

Գ. Քիչ անձինք կան բարձրագոյն  
առաքինութեան տէր եղած, որոնք քա-  
նի մը սաստիկ փորձերու տակ ինկած  
չըլան :

Երբոր սկսած են առաքինի բլալ՝ դուն  
շուտ մը անոնց դժուարութիւններ խաւ-  
րելով կատարեալ բլալու միջոց տուած  
ես :

“Որովհետեւ հաճոյ էիր Աստուծոյ, ը-  
սաւ հրեշտակը Տովբիթին, հարկ էր որ  
ձախորդութիւնն զքեզ փորձէր, ” :

Ե. Քեզի աւելի վեհանձն սէր կը ցու-  
ցուի կրաւորական առաքինութեանց  
կրթութեամբ, քան թէ ներդորձական  
առաքինութեանց կրթութեամբ :

Ի՞նչ մխիթարութիւն է, երբոր մարդ  
կրնայ Ս. Պետրոսի հետ իր վրայ վկայու-  
թիւն տալ թէ “Գիտես, Տէր, որ կը  
սիրեմ զքեզ, ” : Բայց մէկը չի գիտեր  
թէ ի՞նչ է զքեզ սիրել, թէ որ դեռ  
քեզի համար չարչարուիլ չէ սովորած :

Բայց, Աստուած իմ, երկրիս վրայ ե-

<sup>1</sup> Ղուկ. Զ. 40 :



զած քու սուրբերուդ ի հարկէ բաժինը  
չէ արիւնահէզ նախատինք, բանտ, եր-  
կայնժամանակեայ ու դժնդակ հիւան-  
դութիւն, հապա քու իմաստութիւնդ  
անոնց անանկ խաչեր ալ կը դտնէ, ու  
բոնք՝ անոնց պէս զարհուրելի երեւոյթ  
ալ չունին նէ, զիրենք մահացուցանելու  
աղէկ կը ծառայեն:

Զ. Ո՛վ կը ճանչնայ ան սաստիկ պա-  
տերազմները, զորոնք պէտք են կրել ան  
հողինները, զորոնք դուն կ'ուզես մաքրել  
ու բարձրագոյն սրբութեան մը կանչել:

Հաստ անգամ դրսէն հեշտ ու հան-  
դարտիկ խաղաղութեան մէջ կարծուած  
ատեննին, ներսերնին խիստ ու դժնդակ  
պատերազմ կ'ունենան:

Թէ որ մարդկային չարութիւնն ու  
տարրները քու հաւատարիմ ծառա-  
ներուդ դէմ չես զիներ ալ նէ, դժո-  
խոց թոյլ կու տաս անոնց դէմ յար-  
ձակելու:

Բայց նոյն թոյլտուութիւնն ալ անոնց  
սրբութեանը համար կ'ընես: Ա՛րչափ  
պատերազմ կ'ունենան, այնչափ իրենց  
առաքինութիւնը կը զտուի ու կը կա-  
տարելագործուի:

Է. Իրենց հաւատքը կը զօրանայ ու  
կ'աճի քու աստուածային ու միշտ սուրբ  
կամքդ կատարեալ հպատակութեամբ  
պաշտելով ու զքեզ իբրեւ այն իմաս-

տուն հայրը ճանչնալով, որն որ իր որդիքը՝ սիրելուն համար, կը պատժէ <sup>1</sup> :

Յոյսերնին երթալով աւելի կենդանի կ'ըլլայ : Ճանչնալով քու անբաւ մարդասիրութիւնդ, վստահ կ'ըլլան որ ոչ միայն զիրենք իրենց թշնամեացը կատաղութեանը չես թողուր, հապա նաեւ իրենց օգնութեան կը հասնիս ու պատերազմի մէջ կը քաջալերուին, մտածելով որ ներկայ վշտերը փառաց յաւիտենական կշիռք յառաջ կը բերեն <sup>2</sup> :

Ը. Իրենց սէրն ալ աւելի եռանդագին կ'ըլլայ : Հետզհետէ արարածներէն աւելի եւս հեռանալով, մինակ անոր համար կ'ապրին, որն որ իրենց սրտին Աստուածն ու իրենց մշտնջենաւոր բաժինն է <sup>3</sup> :

Նոյն ատեն ուրիշ ամէն ժամանակներէ աւելի իրենց հաւատարմութիւնն զքեզ կը պատուէ : Մխիթարութեանց մէջ, շատ անգամ շահու համար քեզի ծառայութիւն կ'ըլլայ, իսկ վշտի ատեն, երբ որ սիրտը դառնութեան մէջ է, քեզի հաւատարիմ մնալը հաստատ ու անդրդուելի սիրոյ նշան է :

Ո՛վ Աստուած իմ, քանի մը հեզ իմ

<sup>1</sup> Եփբ. ԺԲ. 6 :

<sup>2</sup> Բ. Կոր. Դ. 17 :

<sup>3</sup> Սաղմ. ՀԲ. 26 :

վշտացս մէջ ըսի թէ Կ'երեւայ որ զիս  
չես սիրեր . բայց ասկէ ետքը պիտի ըսեմ ,  
Հնորհակալ եմ Աստուծոյ , վասն զի  
աս ձախորդութիւնը իր սիրոյն մէկ պար-  
գեւն է :

Իր հաւատարիմ ծառաները , բարե-  
կամներն ու սուրբերն իմիններէս շատ  
աւելի մեծամեծ վշտեր քաշեցին , վասն  
զի իրենք ինծմէ աւելի արժանի էին իր  
հաճութեանն ու շնորհացը :

Կրենք սրբոց համբերութեամբն ու  
համակամութեամբը , որպէս զի աւելի  
եւս կրելու շնորհք ընդունինք :

### Գ Լ Ո Ւ Խ Ե .

Պե՞տք չ'ենք Վշտանալ ու շարժանալ Վշտոց  
որե՞մ մեր ունեցած հախորդութեանց վրայ :

Ծարաան : Ա . ՍՈՒՐԲ Կոյս , քեզի կը  
դիմեմ ան խռովութեանս մէջ , զորն որ  
խաչը տեսնելուս կը զգամ : Արաս սաս-  
տիկ ընդդիմութիւն մը կը զգամ վիշտ  
քաշելու : Աս արամադրութիւնը զիս  
կ'այլայլէ :

Մարիամ : Բ . Ո՛րդեակ , բնական ընդ-  
դիմութիւնը Աստուծոյ առջեւ յանցանք  
մը չէ , մանաւանդ թէ քեզի նոր առիթ  
մըն է արդիւնք վաստակելու , թէ որ ա-  
նանկով ալ իր կամացը հնազանդ կը  
մնաս :

Երբ որ կ'ըսուի թէ սուրբերը չարչա-

բանք կը սիրէին, չինչանակեր թէ բնականապէս կը սիրէին :

Իբրեւ մարդ կը հեծէին, սակայն իբրեւ քրիստոնէաց կ'ուրախանային : Բընութիւնը կ'ընդդիմանար, բայց քրիստոնէութիւնը բնութեան կը յաղթէր :

Գ. Ար կարծես որ ես Գողգոթայի վրայ սաստիկ չկրեցի : Թէ որ ամէն մայր իր որդւոյն քաշած վշտերը կը զգայ, 'որչափ աւելի ցաւ զգացած պիտի ըլլայ Յիսուսին մայրը, զանիկա չարչարանաց ու նախատանաց տակ ընկճած տեսնելով :

Պէտք է մէկը զՅիսուս իմ սիրածիս պէս սիրել, որպէս զի իմանայ թէ ինչչափ սաստիկ եղաւ նոյն ատեն իմ ցաւս :

Ինքն իսկ Յիսուս Չիթենեաց պարտիզին մէջ թոյլ տուաւ որ իր սրտին վրայ չարչարանաց ու մահուան երկիւղն ազդեցութիւն ընէ :

Չուզեց որ իր աստուածութիւնը, որն որ իր չարչարանացն անսահման յարգկաւ տար, իր վրայ նոյն չարչարանաց զգացումն արգելէ :

Դ. Արդեակ, քու վշտացդ մէջ, բաւական որ անկեղծութեամբ Աստուծոյ ուղածն ուզես, մ'այլայլիւր ան զգածմունքներէն, զորոնք ակամայ կը զգաս :

Նոյն իսկ եթէ բնական զգածումէդ

յաղթուելու ալ ըլլաս, մի վճատիր, վասն զի ան ատեն անհամբերութեան վրայ ուրիշ նոր պակասութիւն մ'ալ աւելցուցած կ'ըլլաս :

Քաղտնի հպարտութիւն է, կատարեալ չըլլալուն վրայ խռովիլ : Տկար ես ու Աստուած քու տկարութիւնդ կը ճանչնայ : Մարդ ես ու ոչ թէ հրեշտակ :

Ե. Մարդ չիկրնար իր կեանքն անցընել, առանց գէթ քանի մը թեթեւ պակասութեանց, թէպէտ եւ ի մասնաւորի չկայ պակասութիւն մը, որմէ չկարենայ ու պարտական չըլլայ խորշելու :

Գուն ինծի պէս անմեղութեան մէջ չես ծնած եւ ոչ ալ հետեւապէս ազատ եղած ես ամէն շար հակամիտութենէ ու մարդկութեան յատուկ եղած ամէն տկարութիւններէ :

Երբ որ բերնէդ տրտունջ մը կը փախչի, շուտ մը Աստուծմէ թողութիւն խնդրէ : Յառաջադրէ աւելի եւս վրադ զգուշութիւն ընելու : Ասոր համար իր շնորհացն օգնութիւնը խնդրէ ու քու խաղաղութեանդ մէջ մտիր, քու վրադ ունեցած հակողութիւնդ կրկնապատկելով :

Զ. Ի՛նչպիսի եւ իցէ պակասութեան ամենէն լաւ դարմանն անկէ խոնարհութիւն հանելն է :

Ո՛րդեակ, երբոր երկինք ու սրբոց ընկերութեան մէջ կ'ըլլաս, ան առեն անմեղանչականութիւն կ'ունենաս:

Ծառան: Է. Ո՛վ թագուհի սրբոց, երբ պիտի՞ գայ ան երանելի վայրկեանը. երբ պիտի ազատիմ՝ զԱստուած վշտացնելու վախէն, որն որ շատ խիստ է՝ զանիկա սիրող սրտի մը համար:

Գոնէ եկուր ձեռնտու եղիր քու ծառայիդ, շնորհաց ու ողորմութեան մայր:

Քու հզօր պաշտպանութիւնդ վահան բրէ իմ փրկութեանս թշնամեաց դիմացը:

### Գ Լ ՈՒ Խ Զ.

Խալէլէալ Յիսուսը նիւրիւն զօրութեան իսրայ վերբը + անութեամբ ու հասարակութեամբ իրելու:

Ծառան: Ա. ՅԻՍՈՒՍԻՆ մահուանը առեն երկիրը կը սարսի, արեւը կը խաւարի, քարերը կը պատռին, բովանդակ բնութիւնը տակնուվրայ կ'ըլլայ: Բայց աս ամէն զարմանալիքներէն աւելի զիս ուրիշ բան մը կը սքանչացրնէ:

Գուն զիս կը զարմացրնես, ո՛վ Մարիամ, ո՛վ առաքինի մայր, որ խաչին քով կանգուն կը կենաս, ամէն ըսպէ նորէն նորէն նորոգելով ան զոհը, զորն որ կ'ընես առ Հայրն յաւիտենական,



քու սիրելի Յիսուս որդիդ անոր մատուցանելով :

Ի նչպէս կրցար անանկ տեսարանի մը դիմանալ : Ո՛ւսկից ունեցար այն հաստատ քաջասրտութիւնը : Սովրեցուր նոյնն անանկ անձի մը , զորն որ քիչ մը մեծկակ ձախողութիւնը կը Լքուցանէ :

Մարիամ : Բ . Այս իմ աչքիս առջեւը զօրաւոր օրինակ մ' ունէի խաչելեալ Յիսուսը , որն որ մինակ խաղաղութեան խօսքեր կը հանէր բերնէն , իր Հօրը կամացը հպատակելով կը չարչարուէր ու անկէ իր արեանը արդեամբն իրեն դահճացը վրկութիւնը կը խնդրէր :

Աչուքներս նոյն աստուածային օրինակին վրայ սեւեռած էի . անոր սիրտը կը մտնէի ու կը ջանայի անոր զգածումներն ինձի առնելու :

Տեսնելով որ անիկա վեհանձնութեամբ իր կեանքը մարդկան համար ամենէն խիստ տանջանքներով կը զոհէ , ես ալ կը սովրէի մատուցանել Աստուծոյ զանիկա , որն որ աշխարհքիս վրայ ինձի ամէն բանէ աւելի սիրելի էր , այսինքն՝ զնոյն ինքն Յիսուս :

Գ . Որդեակ , դուն ալ ինձի պէս խաչին ոտքը՝ քու վշտացդ պատասպարան , քու վհատութեանդ մէջ զօրութիւն , ու Աստուծոյ քեզմէ ուզած զոհիցը մէջ

քաջասիրտ ու հաստատ համակամու-  
թիւնն կը դանեն :

Վշտաց մէջ եղած ատենդ մարդիկ-  
ներէ մխիթարութիւնն կը մուրաս, բայց  
քիչ ատենուան մէջ կ'իմանաս, որ իրենց  
վշտակցութիւնը լմբնցեր է :

Իսկզբան քեզի վշտակցելու կը սկսին  
ու ետքը քու վշտացդ պատմութենէն  
ու նոյն իսկ քու ներկայութենէդ ձան-  
ձրանալով կը լմբնցընեն :

Ան ատեն թէ որ դուն քեզի ու քու  
յատուկ խորհրդոցդ դառնաս, քու վըշ-  
տերդ առաւել եւս աւելցած կը դդաս .  
եւ շատ անգամ ալ զքեզ նեղացընող  
խայթը հանելու համար բրած ճիգովդ,  
նոյնն աւելի կը խորունկցընես :

Գ. Բայց, սրգեակ, անանկ պատե-  
րազմի ատեն, խաչելեալ Յիսուսին  
պատկերովը զննուէ, ու խաչելութիւնն  
անանկ խաւարին ու փոթորկալից ժա-  
մանակ քու առջի օգնութիւնդ բլայ :

Որչափ որ սիրտդ վհատած ալ բլայ,  
անով կը զօրանաս, որչափ որ սրտիդ  
դառնութիւնը խորունկ ալ բլայ, անով  
մխիթարութիւնն կը ստանաս :

Ե. Մարդիկներուն կողմանէ վեշտ կը  
քաշես, նայէ խաչելութեան վրայ . հայր՝  
ամէն հայրերէ աւելի վշտացած, տէր՝  
ամէն տէրերէ աւելի նախատուած, բա-  
րեկամ՝ ամէն բարեկամներէ աւելի թող

տրուած ու արդար՝ ամէն արդարներէ  
աւելի հալածուած :

ԳԺսխբի՞ կողմանէ վիշտ կը քաշես,  
տես զՅիսուս խաչելութեան վրայ անոր  
բոլոր կատաղութեանը մատնուած :

Արնաս՞ տրանջել որ Աստուած քեզի  
հետ շատ խստութեամբ կը վարուի,  
երբոր մտածելու քլաս ան խստութիւնը,  
զորն որ երկնաւոր Հայրն իր սիրելի Ար-  
դւոյն վրայ բանեցուց :

Զ. Աստուած քու մեղացդ պատժոյն  
համար ժամանակաւոր վշտելի կը խաւրէ  
քեզի . ինչ են անոնք թէ որ բազդատես  
ան վշտերուն հետ, զորոնք Յիսուս զքեզ  
յաւիտենական տանջանքներէ ազատե-  
լու համար կրեց :

Յիսուսի խաչը նկատելով ըսէ, Աս-  
տուծոյ մը սաստիկ չարչարանքներովը  
դնուեցայ : Ա՛հ, իրաւունք է որ ասանկ  
գնուած հոգի մը չարչարանք քաշելով  
նմանութիւն մ'ունենայ իր Փրկչին :

Է. Արշեակ, այնչափ քիչ կը նմա-  
նիս Յիսուսին առաքինութեամբ՝ որ քու  
խաչեցեալդ կ'ըսէ թէ իրեն մխիթարու-  
թիւն է քու դոնէ քիչ մը ցաւով իրեն  
ու նմանիլդ :

Քու ամէն վշտացդ, տրտմութեանցդ  
ու փորձութեանցդ մէջ անոր դիմէ :

Համբուրէնաեւ զանիկա սիրով : Թրջէ  
քու արցունքովդ, ու սրտիդ վրայ պնդէ :

Ը. Միտքդ անանկ գիր որ Գողգոթայի վրայ ես ու կարող եղեր ես քու բազմատանջ ու մեռնելու վրայ եղող Աստուծոյդ ստուըները գրիել:

Ըսէ իրեն առջեւը քու վշտե ըդ անոր վշտացը հետ միացընելով ու սփոփութիւն խնդրէ:

Պաղատէ ողորմած Տիրոջ, որ իր խաչէն քանի մը մխիթարութեան խօսքեր քեզի լսեցընէ, որոնցմով քու խաչիդ խստութեանը կարենաս դիմանալ:

Ըսէ իրեն թէ թող չեմ իտար զքեզ, մինչեւ որ իմ հողւոյս հանգիստ ու խաղաղութիւն տաս ու քու շնորհացդ օծութեամբը զօրացընես:

Թ. Թէ որ աս սուրբ կրթութեան մէջ հաստատուն կը կենաս, արցունքներդ կը սրբուին, խաղաղութիւն կ'ընդունիս, տկարութեանդ տեղ քաջասրտութիւն կու գայ, խաչն ալ քեզի այնչափ դառն չիգար, նոյն իսկ դառնութիւնն ալ քաղցրութեան կը դառնայ:

Կամ եթէ կրելու ալ բան ունենաս՝ համբերութեամբ, սիրով ու համակամութեամբ կը կրես, որոնցմով առաքեալը կ'ըսէր. Հաճեալ եմ իմ Քրիստոսի համար ունեցած տկարութեանս, թշնամանացս, վշտացս, հալածանացս ու նեղութեանցս վրայ<sup>1</sup>:

<sup>1</sup> Բ. Կոր. ԺԲ. 10:

Ի՞նչ գիտե՞ս՝ ունե՞նալու էնք մեր լեզուսերաց վրայ :

Ա. ՄԱՐԻԱՄ փարիսեցիներէն ու Հրեաներէն աւելի մեծ թշնամի չէր կրնար ունենալ, որոնք միաբանած էին իր որդւոյն դէմ, ու զանիկա մահուան գատապարտած էին :

Բայց միացած՝ Յիսուսի զգածմանցը հետ, որն որ իր թշնամիներն՝ իրենց փրկութեանը համար կեանքը տալու չափ կը սիրէր, անոր օրինակին նման, անկեղծութեամբ կ'ըսէր. Տէր Աստուած թողութիւն տուր իրենց :

Ար տեսնէր Յիսուսին նոյն անողորբելի թշնամիները, որ մեծապէս կ'ուրախանային իրենց յանցանացը յաջողութեան վրայ : Ար լսէր անոնց Յիսուսին դէմ տուած անէծքներն ու ժայթքած հայհոյութիւնները :

Ի՞նչ մայր որ ըլլար Յիսուսի մօրմէն զատ՝ աս ամպարշտութեանց ու սրբապղծութեանց դէմ Աստուծոյ վրէժը կը կանչէր. բայց Մարիամ խաղաղութեան Աստուծոյն դպրոցը կը թուած ըլլալով խիստ տարբեր հոգւոյ տէր էր :

Բ. Յիսուս իր խաչին վրայ իր հալածչացը ու սպանչացը համար մինակ ողորմութեան աղաղակ կը բառնար, Մարիամ ալ, խաչին ոտքն անոնց համար

իր մատուցած պաշտելի զոհին արիւնը  
կ'ընծայէր :

Ո՛հ, թէ որ Հրեայք կարող եղած  
ըլլային կարգալ Յիսուսի ու Մարիամայ  
սրտին մէջ այն սիրոյ ու քաղցրութեան  
զգած մունքները, զորոնք երկուքն ալ  
իրենց վրայ ունէին, պէտք կ'ըլլար ար-  
դեօք աւելի բան մը իրենց յանցաւոր ու  
ահրելի տրամադրութիւնը փոխելու :

Գ . Օ իրենք դառնութեամբ լեցրնող  
անձանց վրայ այնչափ սէր ունեցող՝ աս  
երկու սրտերէն պէտք ենք սովորիլ թշնա-  
մեաց վրայ ունենալու այն սիրոյ ու խա-  
ղաղութեան հոգին, զորն որ Աւետա-  
բանը կը պատուիրէ :

Յիսուս ու Մարիամ իրենց փառք հա-  
մարեցան, վշտացուցմանց ներել ու թո-  
ղութիւն տալ : Ար սխալէին նոյնը ճշմա-  
րիտ փառք դատելով : Միթէ ցածու-  
թիւն է ամենէն փառաւոր օրինակնե-  
րու հետեւիլ :

Գ . Ի՛նչ վիշտ ալ որ մեզի հասնի,  
կրնայ մի Փրկչին ու անոր սուրբ մօրը  
հասած վշտաց հաւասարիլ :

Մարիամ՝ Յիսուսէն ետեւ, աստուա-  
ծային հաճութեան ամենէն աւելի սի-  
րելի առարկան էր : Յիսուսի դէմ եղած  
վշտացուցումն անբաւ էր, Մարիամայ  
դէմ եղած վշտացուցումն Աստուծոյ  
վշտացուցումէն ետեւ ամենէն մեծ էր :



Սակայն ինչպիսի սիրով Յիսուս իր արիւնը կը թափէ ու անոր գինն իր Հօրը կ'ընծայէ, յանցաւորաց շնորհքը ընդունելու համար : Ինչպիսի սիրով Մարիամ կը պաղատի Հօր, որ յանցաւորաց համար իր Որդւոյն աղաչանքն ու ձայնը լսէ :

Ե. Պէտք չէ՞ մի որ ամենէն սաստիկ ատելութիւնն ալ վերնայ ու անհետ ըլլայ առ խաչին ոտքը, ուր կը տեսնենք որ Յիսուս ու Մարիամ ասանկ սրտաշարժ կերպով, նոյն խաչը կանգնողներուն բարւոյն ետեւէն կ'ըլլան :

Աս խաչը, մեր փրկութեան պատուական գործիքը, մեզի դատապարտութիւն կը կարգայ թէ որ սրտերնուս մէջ յիսակալութիւն ունենալով անոր մօտենալու կը յանդգնինք :

Զ. Ո՛վ Աստուած իմ, թշնամին սիրելը մինակ քու հօր շնորհքովդ կ'ըլլայ, զորն որ քեզմէ կը խնդրեմ Յիսուսին արդեանցն ու Մարիամայ բարեխօսութեանը ձեռքով, որոնց սիրտն անանկ քաղցր էր ամենէն մեծ ապերախտներու ու գթած՝ ամենէն աւելի անդութ հալածչաց վրայ :

Երկրպագելի սիրտ Յիսուսի, սիրելի սիրտ Մարիամայ, ս՛վ սիրտք, որ առատացած էիք գթութեամբ՝ անոնց վրայ, որոնք ձեզի խոր ցաւ պատճառեցին,

լեցուցէք իմ սիրտս ալ ձեր զգածմանց մեծանձնութիւնը :

Է. Ո՛հ, ասկից ետքը երբոր կը զգամ թէ իմ ներսս վրէժխնդրութեան զգածում մը կը յառնէ, կ'ուզեմ շուտ մը մտօք իմ սիրտս նոյն սուրբ սրտերուն հետ միացընել :

Եւ ասանկ միաւորութենէ չեմ ուզեր զանիկա բաժնել, մինչեւ որ չընդունի այն բարութեան, այն սիրոյ ու այն քաղցրութեան տպաւորութիւնը, որով նոյն սրտերը լեցուն են :

### Գ Լ Ո Ի Խ Ը .

Ի՞նչ զգածմանս պէտք էն՝ սանեակ, երբոր ինքնինն ինչ մեր ազգայինն սփարեկամերը լիշտ ինչ իրեն :

Ա. ԼՍՏՈՒԱԾ երբեմն մեզի նեղութիւն կը խաւրէ՝ յանձն մեր ազգականաց ու բարեկամաց : Ան յարումը, զորն որ իրենց ունինք, անոնց վիշտը մեզի սաստիկ զգալ կու տայ :

Ի՞նչ տրտմութիւն է մօր մը իր որդին ցաւոց անկողնի մէջ տեսնել, կամ բարեկամի մը՝ իր բարեկամին քաշած սաստիկ չարչարանքն աչքին առջեւը տեսնել, առանց ձեռքէն գալու անոր դարման մ'ընել :

Ասանկ մէկ տրտմութիւն մը արդարացի է ու յանցանք մը չունի, բաւական

որ Աստուծոյ կամացը հպատակ ըլլայ . սակայն կշտամբելի կ'ըլլայ, երբոր Աստուծոյ կամացը հպատակ ըլլալէն կը դադրի, ու կը սկսի աստուածային նախախնամութեան դէմ տրտունջ ընել:

Բ. Ո՞վ տառապեցաւ Մարիամէն աւելի իր որդւոյն չարչարանաց ատեն, անանկ որդւոյ մը, կ'ըսեմ, որմէ ինք այնչափ առանձին ու մտերիմ սիրոյ ցոյցեր ընդունած էր:

Քանի քանի անգամ իր սրտին մէջ ըսած է, Որդեակ իմ, որդեակ իմ սիրելի, ինչպէս ես քու տեղդ չեմ չարչարուիր ու մեռնիր<sup>1</sup>:

Գ. Թէ որ Սիոնի դատերըը Յիսուսին՝ չարչարանաց գործիքը շալկած անցնիլը տեսնելով, վրան արցունք կը թափէին, ինչ դառնութեան օվկիանոսի մէջ ընկղմած պիտի չըլլայ Մարիամայ սիրտը, երբոր տեսաւ զանիկա տարածուած ան զոհի սեղանին վրայ, ուր հողին պիտի աւանդէր:

Ո՛հ, եթէ կարող ըլլար գոնէ իր որդւոյն տառապանացը սփոխութիւն մ'ընել, ցաւոց բեռան տակ ընկճած գլուխը վեր բռնել ու յագեցընել ան ծարաւը, որուն համար կը տրանջէր:

Բայց չէ, չէ թէ միայն չիկրնար յուսալ որ հանդիսատեսներուն մէջէն մէ-

<sup>1</sup> Բ. Թագ. ԺԸ. 33:

կը կարեկցելով իրեն միջոց ու առիթ տայ Յիսուսին սփոփութիւն մ'ընելու, հապա նաեւ ամէն կողմանէ ամպարիչ տ բերաններ կը լսէ, որոնք Յիսուսի կարողութիւնն ու աստուածութիւնն ալ կը ծաղրեն:

Գ. Արնայ մարդ իր սիրելւոյն համար քաշած նեղութեան մէջ քաղցրութիւն մը գտնել, բայց ինչ խիստ բան է երբոր կը տեսնէ որ իր սիրելին վելտ կը քաշէ ու չի կրնար անոր սփոփութիւն ընել:

Արդ ինչ ընէ Մարիամ ասանկ նուազեցուցիչ վիճակի մէջ: Աս տեսարանին զարհուրելութեանը մինչեւ վերջը պիտի դիմանայ, կամ պիտի հեռանայ շարժարանաց մէջ իր որդւոյն հոգին աւանդելը տեսնելուն ցաւը չունենալու համար:

Բողոքովին տարբեր Իսմայելին մօրմէն, որն որ լաւագոյն սեպեց իր որդին թող տալ, որպէս զի անոր մահը չտեսնէ, Մարիամ խաչին քով կեցաւ, հանդարտութեամբ հնազանդելով յաւիտենական Հօր հրամանացը, ու ընծայելով անոր՝ Յիսուսին շարժարանքը, աշխարհքիս փրկութեան համար:

Հոն կը կենայ, վասն զի Աստուած կ'ուզէ որ ինք հոն կենայ: Հոն կը կենայ մինչեւ զոհին կատարուիլը:

Իր հաւատքը, հնազանդութիւնն ու աստուածային սէրը, զինքը երկրորդ մէկ

զոհ մը կ'ընէին, որուն Աստուած հաճեցաւ եւ ընդունեցաւ յանձն Փրկչին մարդկան իրեն մատուցուած զոհին հետ մէկտեղ :

Ե. Ասկէ սովրէ, սով որ եսնէ, զթած հայր կամ հաւատարիմ բարեկամ, որդի կամ փեսայ, որ եթէ երկրիս վրայ քու մխիթարութիւնդ կորսնցընելու ըլլաս քու ցաւիգ ու արտամութեանդ յաղթես :

Մտածէ որ նոյն իսկ երկրիս վրայ շատ բան կորսնցընելէն վախնալովդ առիթ ունիս երկնից համար շատ բան շահելու :

Արօնքը չի պարսաւեր քու արցունքդ ու ցաւդ, բայց թէ որ անոր ձայնին լսես, քեզի կը սովրեցընէ զանոնք չափաւորել ու սուրբ ընել :

Զ. Արօնքը կ'արդելէ որ շտաա ինք զինքդ այն մահացու եւ ամէն մխիթարութիւն մերժող տխրութեան, ու քու առջեւդ կը դնէ Աստուծոյ կամայք կատարումն, իբրեւ յատուկ ու բաւական պատճառ զքեզ մխիթարելու :

Արդ միշտ մխիթարէ քու սիրտդ լացքով, հառաչանքով ու հեծութեամբ : Բայց դարձիր միանգամայն Աստուծոյ, երկրպագէ անոր զիտաւորութեանցը, ու խոնարհութեամբ անոնց հպատակէ :

Է. Չանա, Աստուած քեզի հրաման կու տայ, Չանա քեզի հոգ տուող

անձին աղէտքը քիչցրնելու համար միջոցներ գտնելու: Աստուած քեզի թոյլ կու տայ նաեւ որ անոր առողջութիւնը խնդրես իրմէ, բայց միայն ասիկա անանկ հպատակութեամբ մ'ընես, որ ամէն բան իր ձեռքը թողուս:

Արնաս ըսել իրեն, Տէր, դուն գիտես ինչ որ քու բարութենէդ կը յուսամ, կը տեսնես իմ արցունքս. սիրտս մեծ նեղութեան մէջ է<sup>1</sup>:

Տէր Աստուած իմ, իմ յոյսս քու վրադ դրած եմ, կը յուսամ որ կ'ընդունիս իմ աղօթքս, զորն որ քեզի կը մատուցանեմ<sup>2</sup>, որպէս զի առողջութիւն տաս այս անձին, որուն համար քեզի կ'աղաչեմ:

Այսու ամենայնիւ պատրաստ եմ ամէն բանի, զորն որ ինձմէ կը պահանջես: Ի՛նչ որ դուն կ'ուզես, Աստուած իմ, ես ալ կ'ուզեմ<sup>3</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Ի՞նչպիսի հոգեւոր պէտք է որ հասփերին՝ մեզի տիրելի եղող անձինք խորընցընելնս իրայ:

Ա. ՅԻՍՈՒՍ մեռած էր: Ո՛հ, ինչչափ երկայն եղաւ Մարիամայ համար այն ժամանակը, որն որ Յիսուսի մահուան ու յարութեանը մէջ անցաւ.

<sup>1</sup> Սաղմ. ԼԷ. 9, 10:  
<sup>2</sup> Սաղմ. ԼԷ. 16.  
<sup>3</sup> Սաղմ. ԼԹ. 9:



Յիսուս մեռած էր : Մարիամ կորսըն-  
ցուցած էր իր ամենաբաղըր ու ամե-  
նասիրելի որդին :

Գաւթին Աբեսողոմայ մահուանը վրայ  
ունեցած տրամութիւնն ու Հռաքելին  
իր որդւոցը վրայ լալով ըրած հեծու-  
թիւնները, մինակ տկար պատկերներ  
էին Մարիամայ այն ցաւոցը, զորն որ ու-  
նեցաւ, երբոր զՅիսուս ալ չտեսաւ ու  
անոր ձայնն ալ չլսեց :

Բ. Բայց աս ամէն մայրերէ աւելի ա-  
մենասուրբ ու ամենաբարեպաշտ մայրը  
զՅիսուս կորսընցընելուն իր առաքինու-  
թենէն բան մը չէր կորսընցուցած :

Իր որդւոյն ապագայ ու շուտ յարու-  
թեան վրայ ունեցած հաւատքն ու Աս-  
տուծոյ՝ իր փառացն ու աշխարհքիս  
փրկութեան համար տուած հրամանին  
համակամութիւնն, իրեն նեցուկն ու  
մխիթարութիւնն եղան :

Գ. Ո՛վ անձն, որ Աստուած քեզի  
ծանր նեղութիւն մը խաւրեր է, քեզմէ  
յափշտակելով զանիկա, որուն վրայ կը  
դողայիր որ չկորսընցընես, անմխիթար  
մայր միակ ու սիրելի որդւոյ, արտա-  
սուալից հարս, որ ինք զինքդ տարա-  
ժամ տխուր պրիութեան մը մատնը-  
լած կը տեսնես, մի կորսընցընէր աչքիդ  
առջեւէն աս օրինակը, որն որ հոս քու  
առջեւդ գրուեցաւ :

Իրաւացի է թափած արցունքդ : Յովսէփ ալ իր հօրը Յակովբայ գերեզմանին վրայ լացաւ , Օգոստինոս ալ իր Մոնիկա մօրը մահուանը վրայ :

Բայց Մարիամէն սովրէ քու տրամու թիւնդ Աստուծոյ նուիրել ու անոր համբերութեամբ տանիլ :

Դ. Մահը՝ աննահանջելի կերպով քակեց ան կապերը , որոնք զքեզ աշխարհքիս վրայ կը կապէին այն անձին հետ , որուն վրայ կու լաս : Բայց չունի՞ս ամենեւին յոյս մը նորէն անոր հետ ըլլալու : Գուն միշտ աս աշխարհքիս մէջ պիտի ըլլաս :

Քու հաւատքդ քեզի չհասկնացրներ , որ ճշմարիտ հաւատացեալներն իրարու հետ պիտի միանան Աստուծոյ գիրկը շատ աւելի կատարեալ կերպով , քան որչափ երկրիս վրայ կրնային միանալ :

Ե. “Մենք ամէնքս ալ օր մը յարութիւն պիտ'որ առնենք ,” : Առաքեալն աս քաղցր ու պատուական յոյսը յառաջուան քրիստոնէից առջեւը կը դնէր , իբրեւ բաւական պատճառ անոնց արցունքը որբելու եւ խաղաղութեամբ համբերել տալու իրենց եղբարցը կորստեան :

Անանկ է նէ , զձեզ տրամութեան միտաք , ուրիշ մարդիկներու պէս , որոնք առանց յուսոյ են <sup>1</sup> :

<sup>1</sup> Ա. Թեսաղ. Դ. 12 :

Բայց լացիր իբրև թրիտոնեայ լի  
հաւատով, անանկ որ բնական սիրոյն  
պարտքը լեցընելէն ետև շուտ մը նոյն  
բնական սիրոյդ վրայ տիրես :

Չ. Մինակ մեր դաւանած սուրբ ու  
աստուածային կրօնքն է, որ կրնայ մեզի  
մխիթարութեան ասանկ հաստատուն  
պատճառներ տալ :

Գարձեալ քու սիրած անձդ, զորն որ  
մահը քեզմէ կը բառնայ, միթէ քու  
բոլոր բովանդակ երջանկութիւնդ էր եր-  
կրիս վրայ :

Ձանիկա Աստուծմէ աւելի՞ կը սիրէիր,  
որն որ թոյլ տուաւ որ աս անջատումն  
ըլլայ անանկ պատճառներու համար,  
որոնց պարտական ես երկրպագութիւն  
ընելու :

Է. Նոյն անձը քեզի սիրելի էր, բայց  
Աստուծոյ կամքը քեզի աւելի սիրելի  
պիտի ըլլայ :

Գուցէ քու անոր ունեցած սէրդ կար-  
գաւորեալ չէր ու չափէն աւելի անոր  
յարած էիր : Ասոր նշան մըն է քու դառն  
արցունքդ, որ բնաւ չիչորնար :

Գուցէ անիկա մեծ արդեւք մըն էր  
քու կատարելութեանդ կամ նաեւ քու  
փրկութեանդ : Աստուած՝ զանիկա քեզ-  
մէ բաժնելով, քեզի ողորմութիւն ըրաւ :

Ը. Աս վշտեդ ան օգուտն հանէ, որ  
ասկէ ետքը քու սիրտդ արարչագործեալ

էակի մը չյարես: Մինակ անոր յարէ, որուն տարիները չիլմըննար<sup>1</sup>:

Կամ եթէ Աստուծոյ հետ ուրիշ մ'ալ կը սիրես, անոր համար սիրէ՝ որ Աստուած կը ներէ կամ մանաւանդ կ'ուզէ որ սիրես: Չըլայ որ անով փնաս հասնի Աստուծոյ պարտական եղած սիրոյդ:

Թ. Երբոր մարդ ասանկ կը սիրէ, որ չափ որ ընդդիմութիւն ու բնական զգածմունք ալ կ'ունենայ նէ, միշտ պատրաստ կ'ըլայ բաժնուելու իրեն սիրոյն օրինաւոր առարկայէն, երբոր Աստուած կը հրամայէ:

Ստոյգ է որ զոհի օրը սիրտը կը հեծէ ու աչուրներն արցունք կը թափեն: Սակայն մարդս՝ Աստուծոյ ուզածը կ'ուզէ, նոյն աստուածային կամաց կատարմանը մտածմունքն՝ արցունքն ու հեծութիւնները կը մեղմէ:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ.

Ինչպէս պէտք է մարդ ինչ զինչ զօրացնել հասարոյ սոյնս, երբոր անանկ պարագաներս մեջ ինչ փորձուի, որուն աս առաքինութեանց իխար հախարակ կ'երեւան:

Ա. ԼՌԱՔԵԱԼՆԵՐԸ զՅիսուս ճանչցած էին Որդի Աստուծոյ կենդանւոյ, բայց անոր չարչարանացը ժամանակ, իրենց հաւատոյն խոստովանութեանը

<sup>1</sup> Եփր. Ա. 12:

անհաւատարիմ ըլլալով, հաւատքնին  
ծածկեցին ու փախան <sup>1</sup> :

Մարիամ ասանկ չըբաւ. Յիսուսին  
ետեւէն գնաց մինչեւ Գողգոթա լեռը,  
ուր որ զանիկա իր Փրկիչը ճանչցաւ,  
հաստատութեամբ սպասելով անոր յա-  
րութեանը, ինչու որ ինք ըսած էր թէ  
պիտի յառնէ :

Բ. Յիսուսին մահուրնէն ետեւ, ա-  
շակերտները, գոնէ երկուքը, սրոնց վրայ  
Ղուկաս կը խօսի, <sup>2</sup> յուսոյ մինակ մնացորդ  
մ'ունէին Յիսուսին նախապատմա-  
ներուն կատարումը տեսնելու :

Բայց Մարիամ, առանց փոքր մէկ  
այլայլութիւն մը կրելու, հաստատու-  
թեամբ յարատեւեց իր հաւատոյն ու  
յուսոյն մէջ, որ Յիսուս՝ որուն արհամար-  
հանաց մէջ մեռնիլը տեսաւ, պիտի յառ-  
նէ փառօք ու աշխարհք իր Աւետա-  
րանին պիտի հնազանդեցընէ :

Գ. Քու հաւատքիդ կանոն ըլլայ Մա-  
րիամայ աս հաւատքը, որն որ՝ իր սկզբ-  
բանը, այսինքն՝ նոյն իսկ Աստուծոյ ճշմար-  
տախօսութեան վրայ հաստատուն ըլլա-  
լով, նոյն փորձերուն մէջ անխախտ մնաց :

Շատ անգամ ամպարիշտները, ու-  
րոնցմով աշխարհք լեցուն է, քու հա-  
ւատքիդ վրան կը ծիծաղին եւ եթէ չեն

<sup>1</sup> Մատթ. ԻԶ. 56 :

<sup>2</sup> Ղուկ. ԻԴ. 21 :

կրնար նէ ալ քեզմէ հաւատքդ յա-  
փրշտակել, դէժ փրկութեան թշնամին  
կը ջանայ անոնց հետ քու հաւատքդ  
խախտելու՝ յայտնուած ճշմարտու-  
թեանց վրայ միտքդ երկբայութիւններ  
բերելով :

Հաւատքիդ մէջ պինդ ու հաստատ  
ըլլալով դէմ կեցիր<sup>1</sup> քաջութեամբ,  
առանց քննելու անոր թելադրութիւն-  
ները, ու ան ատեն քեզմէ հեռու կը  
փախչի<sup>2</sup> :

Ի՞նչ երկբայութիւն որ միտքդ կու գայ  
շուտ մը մերժէ ճշմարիտ Աստուծոյ  
առջեւ : Որովհետեւ ասանկ շուտ, մեծ-  
անձն ու անկեղծ մերժմամբ հաւատքը  
ի քեզ կ'աւելնայ ու կը զօրանայ :

Գ. Ի՞նչ ամենէն աւելի մեծամեծ  
ձախորդութեանց մէջ սատանան կը  
ջանայ քու միտքդ խաւարեցընել, ու  
քեզի վիշտ խաւրող Աստուծոյն մարդա-  
սիրութեանը, կարողութեանը, իմաս-  
տութեանն ու արդարութեանը վրայ  
զքեզ երկբայեցընել :

Ան ատեն միտքդ բեր ի՞նչ որ բաւ է  
Աստուած իր սուրբ Գրոցը մէջ՝ չար-  
չարանաց հարկաւորութեան, անոնց ե-  
տեւէն եկող փառաց, իր՝ մարդկան ու  
նոյն իսկ ամենէն հաւատարիմ ծառայիցը

<sup>1</sup> Ա. Պետր. Ե. 9 :

<sup>2</sup> Յակոբ. Գ. 7 :



միշտ խաւրած ատեն ունեցած զխաւ-  
ւորութեանցը վրայ :

Ե. «Աստուած բնաւ չիփոխուիր» :  
Ըսածը միշտ ճշմարիտ է : Իր խօսքն ա-  
նանկ անփոփոխ է , ինչպէս նոյն իսկ ինք :

Նոյնպէս ինչ փորձութեան , ցաւոց ,  
դառնութեան , ցամաքութեան , ու տա-  
ռապանաց միճակի մէջ ալ որ ինկած  
ըլլաս , առջեւդ կանոնն առ Մարիամայ  
մեծանձն յոյսն ու յարատեւութիւնը :

Քու հոգիդ փոխանակ ընկճելու եւ  
վճատելու , ամուր կենայ այս առաքի-  
նութեամբ , որուն հիմն է Աստուծոյ՝ իր  
խոստմանը մէջ հաւատարմութիւնը :

Զ. Յուսահայ նոյն իսկ յուսոյ դէմ <sup>1</sup> ,  
ինչպէս ատեն մը Աբրահամ յուսաց ,  
կատարեալ համոզմամբ , որ ինչ որ Աս-  
տուած խոստացաւ՝ կրնայ ընել <sup>2</sup> :

Ինք քու արարիչդ է ու ինք յայտնեց  
որ իր ձեռքին դորձքը պիտի չլծողու եւ  
աչքը քու վրայդ պիտի ունենայ :

Ինք վերին տէր է բոլոր բնութեան:Քան  
մ՝ իրեն անկարելի չէ , ո՛չ ալ դժուարին :

Աստուած իր ծառայից ապաւէնն է :  
Չեն կրնար երկբայիլ ասոր վրայ , որչափ  
որ անոր ուխտին խոստմանը վրայ քիչ  
ալ խորհին <sup>3</sup> :

<sup>1</sup> Հռոմ. Գ. 18 :

<sup>2</sup> Հռոմ. Գ. 21 :

<sup>3</sup> Սաղմ. ԻԳ. 15 :

Է. Ո՛րչափ ծանր ու ցաւագին ալ ըլլայ .քու դիրքդ ու վիճակդ, կրնայ մի .քու յոյսդ անսահման զօրութենէ, բարութենէ ու նախասնամութենէ աւելի աղէկ հիման մը վրայ հիմնած ըլլալ:

Ո՛րչափ անգամ զքեզ կ'ապահովցընէ իր մարդարեիցն ու առաքելոց բերնովը, թէ «կը լսէ, կ'օգնէ, կը պաշտպանէ, կը մխիթարէ ու կը փրկէ իրեն յուսացողը»:

Արդ, խնդրէ անոր օգնութիւնը վրստահութեամբ, ամենեւին շերկբայելով որ իր ողորմութիւնը զքեզ .քու տխուր վիճակէդ կը հանէ, կամ մինչեւ վերջը քեզի կ'օգնէ ու կը պաշտպանէ իր փառացն ու քու փրկութեանդ համար:

Ը. Աստուած երբեմն թոյլ կու տայ որ մարդ զարհուրելի խեղճութեան մինչեւ յետին սահմանը հասնի, որպէս զի աւելի յայտնապէս ցուցընէ թէ ինչ կրնայ ընել կենդանի յոյս մը, զորն որ մարդ իրեն վրայ կը գնէ, եւ որպէս զի իր մեր վրայ ունեցած հայրական սիրոյն ցոյց տայ:

Սաստիկ փորձութեանց տակ ինկած առաքինութիւն մը, սիրապատար ջերմեռանդութենէ աղէկ Աստուծոյ սիրտը կը շահի:

Թի նեղս-նենի երե- միինարո-նեան խ- գայ,  
Բայց պէտք է որանց միինարո-նեան շարշա-  
րանաց համբերել գիրնալ:

Ծարան: Ա. «ՈՒՐԱԽԱՅԻՐ, թա-  
գուհի երկնից, որ քու արգանդդ կրելու  
արժանի եղող որդիդ», որուն մահը  
քեզմէ այնչափ արցունք վազցուց, «յա-  
րութիւն առաւ, ինչպէս որ խոստացած  
էր»:

Ուրախացիր քու անոր հետ՝ մինչեւ եր-  
կինք վերանալու օրը՝ ունեցած քաղցր ու  
նեղքին հաղորդակցութեանդ վրայ:

Իրաւունք էր որ դուն ուրիշ ամենէն  
աւելի անոր յարութեան բարերարու-  
թեանը հաղորդակից ըլլայիր, ինչու որ  
դուն ուրիշ ամենէն աւելի անոր շար-  
շարանաց նախատանացը հաղորդակից  
եղած էիր:

Ի՛նչ ուրախութիւն էր քեզի, ի՛նչ  
անպատում միսիթարութիւն, երբոր  
զանիկա տեսար իր աստուածութեանը  
բովանդակ պայծառութեան ու փա-  
ռացը մէջ:

Ան ատեն քու արցունքդ չորցաւ,  
սրտիդ խորունկ վերքը դոցուեցաւ, վըշ-  
տերդ անցան:

Մարիամ: Բ. Ո՛րդեակ, Աստուած իր  
բարեկամներուն հետ է նեղութեան ա-

տեն<sup>1</sup>, իր շնորհացն օծութեամբը զանոնք կը զօրացնէ ու երբոր կը հաճի, ցաւոց տեղ՝ մխիթարութիւն ու դառնութեան տեղ՝ քաղցրութիւն կը բերէ :

Ասոր փորձն առաւ թագաւոր մարգարէն : Աստուած, կ'ըսէ, ինձի խաւրած վշտաց համեմատ, սրտիս մէջ մխիթարութիւն սփռեց<sup>2</sup> :

Գարձեալ կ'ըսէ, թէ որ Աստուած երբեմն արդարը փոթորկի մէջ կը ձգէ, նորէն խաղաղութիւն կը պարգեւէ<sup>3</sup> :

Ծառան : Գ. Այս սուրբ, գիտես իմ երկայն ատենէ վեր կրած վշտերս, բայց ես միշտ ինք զինքս առանց մխիթարութեան կը տեսնեմ :

Մարիամ : Գ. Ո'րդեակ, զգալի մխիթարութիւն չունենալուդ համար, բոլոր մխիթարութենէ զուրկ չես :

Մեծ մխիթարութիւն մը չէ՞ քեզի աս մտածմունքը՝ թէ նեղութիւնները զքեզ Յիսուսի կը նմանցնեն ու երկնից ճամբուն վրայ կը դնեն :

Աստուած իմաստուն ու փրկաւէտ դիտաւորութիւններ ունի, երբոր կը ձգէ որ իր ծառաները չարչարուին՝ առանց անոնց ճաշակել տալու քու ըսած մխիթարութիւններդ :

<sup>1</sup> Սաղմ. Զ. 15 :

<sup>2</sup> Սաղմ. ԶԳ. 19 :

<sup>3</sup> Սաղմ. ԾԴ. 23 :

Կան սուրբեր, որոնք սատարիկ չոր ա-  
նապաւաններէ անցան, առ ցօղէն առանց  
կաթիլ մը ընդունելու :

Ե. Յիսուսի բարեկամները պէտք չէ  
որ նմանին երկրիս բարեկամներուն, ո-  
րոնք այնչափ մինակ իրենց բարեկամացը  
համար աշխատութիւն յանձն կ'առ-  
նեն, որչափ որ կը յուսան թէ շուտ մը  
նոյնին հատուցումը կ'առնեն :

Նախախնամութեան յանձնէ ինք  
զինքդ : Թէ որ քեզի մխիթարութիւն  
հարկաւոր՝ կամ նաեւ օգտակար ըլլայ  
նէ, կ'ընդունիս :

Քու չարչարանացդ մէջ Յիսուսի  
չնորհքն ունիս որ զքեզ կը բռնէ ու իր  
չնորհքը քեզի բաւական է<sup>1</sup> :

Զ. Ըն սուրբերը, որոնց Աստուած  
թողլ կու տար որ վիշտ կրեն առանց  
զգալի մխիթարութեան, մխիթարու-  
թիւն չունենալնուն վրայ կը մխիթա-  
րուէին, ինչու որ գիտէին թէ իրենց  
սէրն աւելի զուտ ու անշահասէր կ'ըլլայ :

Սպասէ քիչ մ'ալ ատեն, սպասէ  
Յիսուսին՝ վիշտ քաշողներուն ըրած  
խոստմանը արդիւնքն ընդունելու :

Յիսուս երկինքը քեզի՝ ամէն քաղ-  
ցրութեանց ու ամէն բարութեանց ա-  
ռատութիւն կը պատրաստէ :

Բայց ասկէ զատ, որդեակ, քեզի պէս

<sup>1</sup> Բ. Կոր. ԺԲ. 9 :

մեղաւոր մը ինչպէս կրնայ Աստուծոյ քաղցր մխիթարութիւնը խնդրել :

Ապաշխարող մեղաւորի մը մխիթարութիւն պէտք է ըլլալ մտածելը՝ որ առանց մխիթարութեան վիշտ կրելով աւելի ապահովապէս կը քաւէ իր մեղքերը :

### Գ Լ Ո Ւ Խ ԺԲ .

Թէ մեր ցանկաւորները պէտք էն երկինք 3 ֆուտ :

Ա. ՓԻՐՎԻՉ իմ, քու երկրէս բաժնուելէդ ետքը քու սուրբ մօրդ խորհուրդները, նայուածքը, իղձերն ու հառանչանքը միշտ երկինք կը ձգուէին :

Կը նախանձէր հրեշտակաց ու սրբոց բախտին, որոնք իր սիրելւոյն ներկայութեամբ կը վայելէին, ու անոնցմէ կը հայցէր որ քեզի յայանեն թէ որչափ կը հիւժի ու կը մաշի քու հեռաւորութեանդ համար<sup>1</sup> :

Ի՞նչ կրնար աշխարհք անոր առջեւ հանել, որ իրեն հաճելի ըլլար : Երբոր մէկը Յիսուսէն զատ ուրիշ բան չիսիրեր, Յիսուսէն զատ ուրիշ բան չ'ուզեր :

Բ. Ո՛վ որ երկրիս վրայ իր դանձնըրած է քու շնորհքդ ու քու բարեկամութիւնդ, առ ճշմարիտ տրամութիւնը մինակ կրնայ ունենալ որ դեռ քու ներ-

<sup>1</sup> Երգ. Ե. 8 :



կայութենէդ ու աստուածային գրկա-  
խառնութենէդ զուրկ է :

Մէկ կողմանէ սպասելով մահուան ,  
որն որ մինակ կրնայ զիս իմ փափաքա-  
նացս նպատակը հասցընել , ո՞վ Յիսուս  
իմ , Մարիամայ օրինակին պէս , շարու-  
նակ քեզի հառաչանքներ կը հանեմ ա-  
նանկ սրտէ մը , որն որ քեզի կը բաղձայ ,  
զքեզ կը կանչէ եւ երբ ալ որ զքեզ  
գտնէ , միշտ ուշ կը համարի :

Ո՞վ կրնար ինձի թեւ տալ աղաւնւոյ  
պէս , որ թռիչս առնէի ու գայի հանգ-  
չէի քու քովդ <sup>1</sup> :

Գ . Գեռ ո՞րչափ պիտ'որ ուշանայ  
ինձի աս երջանկութիւնը : Գեռ պիտի  
յամենայ իմ հոգւոյս փեսան ըսելու ,  
Ահա կու գամ վերջ տալ քու տա-  
ռապանացդ <sup>2</sup> :

Հարսը կ'ըսէ , Եկ՛ուր : Իր հեծու-  
թիւնքն ու հառաչանքը կ'ըսեն անգա-  
դար , Այո՛ , եկ՛ուր , Տէր Յիսուս <sup>3</sup> :

Սիրաս քեզի կը խօսի , աչուրներս  
զքեզ կը փնտռեն . քու երեսդ տեսնե-  
լու կը փափաքիմ <sup>4</sup> :

Դ . Ա'իմանամ որ ես մեծ բանի մը  
համար ստեղծուած եմ , սակայն եր-

<sup>1</sup> Սաղմ. ԾԳ. 7 :

<sup>2</sup> Յայտ. ԻԲ. 12 :

<sup>3</sup> Յայտ. ԻԲ. 17, 20 :

<sup>4</sup> Սաղմ. ԻԶ. 13 :

կրիս վրայ կը յարիմ: Ո՛վ Յիսուս, ես քեզի համար ու զքեզ յաւիտեան ստանալու համար եղած եմ:

Ո՛վ անսպառ հարստութիւն, սէր որ դուն կը պակսիս, ամէն բան կը պակսի: Ո՛վ յաւիտենական լոյս, սէր որ դուն չկաս, ամէն բան խաւար կ'երեւայ:

Ամէն ստեղծագործեալ բարիք ձեռք բերած ալ որ ըլլամ, աղքատ ու խեղճ ըլլալէն չեմ դադրիր, թէ որ չեմ կրնար ըսել թէ՛ Յիսուս իմ ամէն բանս է:

Ե. «Ո՛վ Յիսուս՝ իմ ամէն բանս», Աս խօսքն ամէն բան կը յայանէ ու կը պարունակէ, զորն որ կրնայ մինակ աշիկա աղէկ հասկընալ, ով որ զՅիսուս ամէն բանէ վեր կը սիրէ:

Անանկ է նէ, քու շնորհքէդ յառաջ չեկած ուրիշ ամէն սէր հեռու ըլլայ սրտէս:

Ո՛վ Յիսուսի շնորհքը, անդադար տաքցուր զիս քու սուրբ սիրոյդ հրովը: Երանի՛ թէ աս ատուածային հուրը վառեր սպառեր զիս:

Թէ որ զքեզ, Փրկիչ իմ, շուտ չեմ կրնար տեսնել, գոնէ զքեզ սիրելով, անոր տեղ կը լեցրնեմ:

Իմ սէրս, որն որ ինձի արդար յոյս կու տայ օր մը զքեզ ստանալու, բոլոր իմ պանդխտութեանս ատեն իմ մխիթարութիւնս կ'ըլլայ:

Թե՛ ինչ պէտք էն՝ ընել Հոգին սուրբ՝ մեր Հրոյ  
Բերելն համար :

Ա . ՅԻՍՈՒՍ՝ իր աշկերտներուն խոստացած էր որ Հոգին սուրբ իրենց կը խաւրէ : Մարիամ՝ զանիկա ընդունելու համար՝ վերնատուն քաշուեցաւ առաքելոց , Յիսուսի ազգականներուն ու անոր բրած ճամբորդութեանց մէջ ետեւէն գացող սուրբ կանանց հետ :

Միայնական լութեամբ ու աղօթքով պատրաստուեցան սրբարար Հոգին ընդունելու :

Ամէնքը մէկտեղ ժողված , սրտով ու կամօք միացած եռանդազին իղձեր կը հանէին Հոգին սուրբ իրենց վրայ ձգելու համար :

Բ . Իրաւցընէ սքանչելի պատրաստութիւն՝ ընդունելու աստուածային ու եղբայրական սիրոյ Աստուածը , որն որ կ'ուզէ ինք զինք անանկ եռանդազին հոգիներու հաղորդել , որոնք աղմկէ ու խռովութենէ հեռու զինքը կը փրնտրուեն , ու որոնք իրեն եռանդազին ու անկեղծ իղձեր կ'ամբառնան :

Ո՛հ , մանաւանդ Մարիամ՝ որչափ կը փութացընէր նոյն աստուածային Հոգւոյն գալուստը , իր եռանդուն աղօթք-

ներովը, իր բաղձանաց սրբութեամբն ու իր սիրոյն սաստկութեամբը:

Նոյն տեղը Հոգւոյն սրբոյ սպասողներն ամէնքն ալ մեծապէս հոգի կ'առնէին նոյն կուսին ներկայութենէն ու օրինակէն:

Գ. Արդէն «լի էր շնորհօք», բայց Հոգին սուրբ ուղելով իր հարսն իրեն պարզեւներովն աւելի զարդարել, Մարիամ ալ մեծ հաւատարմութեամբ ջանաց ինք զինքն անոր պատրաստելու:

Մէկու մը հոգին սրչափ որ Հոգւոյն սրբոյ շնորհաց շատ պարզեւներն ու տուրքերն ալ ունենայ, միշտ կրնայ անոնց վրայ ուրիշ նորանոր պարզեւներ ընդունիլ:

Թէ որ հաւատարիմ կ'ըլլայ, շատ շնորհքներ կ'ընդունի: Եւ թէ որ իր հաւատարմութեանը մէջ կը յարատեւէ, Աստուած ալ անոր շատ աւելի շնորհքներ կու տայ: Աստուծոյ պարզեւացը գանձը երբեք չ'սպառիր:

Դ. Ո՛վ որ՝ Մարիամայ պէս՝ աս պարզեւաց պատուականութիւնը կը ճանչնայ, ալ երկրիս վրայ բանի մը համարում չ'ունենար: Իր բոլոր բաղձանքները մինակ նոյն պարզեւաց վրայ կը ձգուին:

Ո՛հ, ի՞նչ պէտք ենք ըսել՝ ասոր մէջ քրիստոնէից մեծ մասին ցուցրցած անտարբերութեան ու ասանկ իրենց

փառախնդրութեան ամէն բանէ աւելի  
արժանի եղող բանի մը այսչափ ցուրտ  
բլլալնուն վրայ :

Արդեօք նոյնպէս անտարբեր են աշ-  
խարհային պարզեւաց նկատմամբ : Ա՛հ,  
ամենեւին դժուարութենէ չեն խորշիր  
ու ամէն միջոց ի գործ կը դնեն զանոնք  
ձեռք բերելու համար :

Երկրաւոր ընչից կարօտութիւնը նա-  
խատինք կը սեպեն, իսկ իրենց հոգեւոր  
կարօտութեան վրայ չեն ամբշնար :

Ե. Ղանչոյսը ինծի իմ կարօտու-  
թիւնս, ո՞վ աստուածային Հոգի, ամէն  
կատարեալ պարզեւաց ու ամէն շնոր-  
հաց սկիզբը, դուն միայն կրնաս տալ  
ինծի ճշմարիտ հարստութիւններ :

Մեծ ցաւով կը տեսնեմ որ քու ազ-  
դեցութեանդ ցուցրցած ընդդիմու-  
թիւնս քու բարերարութեանցդ բոլո-  
րովին անարժան կ'ընեն զիս :

Բայց այսօր կը միացընեմ Մարիանայ  
վերնատունն բրած աղօթքին հետ իմ  
աղօթքս, զորն որ քեզի կը մատուցա-  
նեմ, որպէս զի նոյն բարիքներն ինծի  
պարգեւեն : Աս կերպով իմ աղօթքս  
քեզի հաճելի կ'ըլլայ ու զքեզ կը հաշ-  
տեցընէ :

Նոյն ինքը՝ սուրբ Աշոտ կը կանչեմ  
ինծի օգնութեան, որն որ քու քովդ  
այնչափ զօրաւոր է. կ'աղաչեմ զանիկա

որ ինծի համար իր բարեխօսութիւնն ի գործ դնէ :

Զ. Ո՛վ կոյս, հարոն Հոգւոյն սրբոյ, խնդրէ ինծի համար հոգի իմաստութեան, որով երկնաւոր բարեաց ճաշակն առնելով աս աշխարհքիս ամէն ընդունայն առաւելութիւններն ու սուտ բարիքն ինծի անհամարն :

Խնդրէ հոգի հանձարոյ եւ լուսաւորութեան, որով լուսաւորուելով աս մութ դաւառին մէջ ճանչնամ Աստուծոյ ճամբաներն ու սովորիմ յաւիտենական ճշմարտութիւնները :

Խնդրէ հոգի ընտրողութեան ու խորհրդոյ, որով իմանամ ու վախճիմ անորոգայթներէն, զորոնք կրնան լարել իմ փրկութեանս ու կատարելութեանս թշնամիները :

Է. Խնդրէ հոգի զօրութեան ու քաջասրտութեան, որով իմ տկարութեանէս ելլեմ, կիրքերս նուաճեմ, չար օրինակներու յորձանացը դէմ դնեմ, մարդկային նկատման յողթեմ, աշխարհքիս փառաւորութիւններն օտքի տակ առնեմ ու իմ սրտիս անհաստատութեանը դէմ ամրանամ :

Խնդրէ հոգի աստուածպաշտութեան ու երկիրդի, որմէ առաջնորդիմ ու զօրանամ Աստուծոյ ծառայութեան, անոր օրինացը պահպանութեան ու այն



պաշտաման մէջ, զորն որ իրեն պիտի մատուցանեմ իբրեւ իմ արարիչս, իմ հայրս, իմ տէրս ու դատաւորս :

Գ Լ Ո Ի Խ ԺԴ .

Թի ասին մարդ, իր վիճակին համեմատ, Աստուծոյ փառացն ու հոգւոց փրկութեան նախանձանքի որի պէտք ուր ըլլայ :

Ծառասն : Ա . ԻՅԻՍՏ ուրախութեամբ կը տեսնեմ զքեզ, կոյս սուրբ, ան ջերմեռանդ հաւատացելոց պզտիկ խմբին մէջ, որոնք Յիսուսին Համբարձմանէն ու Հոգւոյն սրբոյ իջնալէն ետեւ առաքելոց քարոզութեամբն ու ջանքովը դարձան :

Գուն իրենց սիրելի ու եռանդնոտ մայր էիր : Ո՛վ կրնայ ըսել, թէ որչափ օգտակար եղար դուն Երուսաղեմայ նորածին եկեղեցւոյն :

Եւ երբոր առաքեալք իրարմէ բաժնուեցան ու դացին՝ տիեզերք Յիսուսին դարձրնելու համար, ամէն տեղ քու իղձերդ ու աղօթքներդ անոնց կ'ընկերանային ու կ'օգնէին իրենց աշխատանացը մէջ տոկալու եւ ամէն վտանգի ու արգելքի յաղթելու :

Բ . Այն հաւատացեալները, որոնց մէջ դուն կ'ապրէիր, հաւատքի ու առաքինութեան մէջ պահելու համար, քու եռանդդ կը ջանար, ամէն բանէ յառաջ, անոնց վստահութիւնը վաստակիլ : Եւ

միթէ կարելի՞ էր որ շուտ մը անոնց վատահումութիւնը չշահէիր, որոնք քեզի մօտենալու բարեբախտութիւն կ'ունենային :

Չէին կրնար բաւականապէս զարմանալ քու անոնց ցուցրցած սիրոյդ, իրենց համարձակ ու դիւրաւ քեզի մօտենալ կրկնալնուն եւ քու անոնց ցուցրցած յարգութեանդ վրայ :

Գ. Ի՞նչպէս որ քու պատուոյդ բարձրութիւնը, առաքինութիւններդ ու Աստուծոյ քու հողւոյդ շնորհած զարմանալի ներքին լոյսն ամենուն յարգութիւնը վրագ կը շարժէր, նոյնպէս քու սրտիդ բարութիւնն ալ ամենուն սիրտը քեզի կը վաստակէր :

Մէկ տառապեալ անձի մը վրայ՝ քու նետած մէկ նայուածքդ բաւական էր անոր ամէն խեղճութիւնները քաղցրացընելու :

Քու աստուածային հրով վառած ու երկնաւոր զօրութեամբ ճոխացած խօսքերդ, ամենէն անզգաներն իրեն կը յանկուցանէր, ամենէն գաղջերը կը բորբոքէր, ամենէն վախկոտները կը քաջալերէր, ու եռանդնոտներուն ալ նոր բորբոք մը կու տար :

Անտարակոյս որչափ հիւանդներու՝ մարմնոյ առողջութեան հետ՝ հողւոյ առողջութիւն տուած ես :

Գ. Թէպէտ եւ քու նախանձախնդիր եռանդովդ Երուսաղեմայ մէջ քրիստոնէից կրած հալածանաց վրայ վշտացար, սակայն մխիթարուեցար նաեւ առաքելաց հեթանոսաց մէջ ըրած պտուղներուն վրայ, մանաւանդ քու աչքիդ տակ Եփեսոսի մէջ Ս. Յովհաննէսին ըրածներուն վրայ, ուր ստիպուած էիր քանի մը տարի անոր հետ փախած կենալու:

Քու ատնց վրայ ունեցած ուրախութիւնդ իմանալու համար, պէտք է մինակ միտք բերել որ ինչ յատուկ հոգ ունէիր Աստուծոյ արքայութեանը յառաջացման վերաբերութիւն ունեցող ամէն բանի վրայ:

Թագուհի առաքելաց, ընդունէ ինձի կայծ մը այն Յիսուսին փառացը համար քու ունեցած սուրբ կրակէդ, որն որ զքեզ կը սպառէր ու ընդունէ ինձի նաեւ շնորհք՝ որ ես ալ զանիկա ուրիշներուն փառաւորել ու սիրել տամ:

Մարիամ: Ե. Ո՛րդեակ, շատ կ'ախորժեմ քու այս բաղձանքդ: Աստուծոյ փառացը համար փոյթ ու նախանձ ունենալ՝ քրիստոնէի մը անհրաժեշտ պարտքն է:

Ասիկա քրիստոնէին անանկ մէկ պարտքն է, ինչպէս եղբայրսիրութիւնը, որմէ նոյն ինքն հարկաւ յառաջ կու գայ:

Շատերը զատիկա մինակ իբրեւ առաքելական մարդու յատուկ գործք մը կը սեպեն: Բայց ամէն վիճակի համար է:

Զ. Չկայ վիճակ մը, որուն մէջ մարդ կարող ու պարտական չլլայ Աստուծոյ փառացը համար ունեցած փոյթնի գործ դնելու՝ բարի օրինակներով, պատեհ տեղը խորհուրդ տալով, տառապելոց մխիթարական խօսքեր խօսելով ու ամենէն աւելի աղօթքով:

Երբեմն մեղաւորի մը դարձը աշխարհքիս մէջ եռանդնօտ ու անձանօթ անձի մը իր միայնարանին մէջ մատուցած հառաչանացը պտուղն է:

Է. Արբեմն եռանդդ բորբոքած ատեն, կ'ուզես կուսպաշտներու մէջ դանուած ըլլալ ու անոնց դարձին աշխատիլ: Սուրբ, սակայն անպտուղ փափաք. քու մօտդ եղածը՝ հեռուն կը փնտռես:

Ազքատներն ու հիւանդները սփոփել, տղէաները սովեցընել, տղաքատուած պաշտութեան մէջ կրթել, ծառաներն իրենց պարտուցը մէջ բռնել, բարերարական գործքերով քաղքին շինութիւն տալ, ասոնք են, որոնց մէջ ընտանեաց Հայրը կ'ուզէ որ դուն իր պատուոյն համար աշխատիս:

Ա՛յլ կրնայ ընկերին փրկութեանը վրայ անտարբեր ըլլալ, երբոր մտածէ թէ

Յիսուս իր արիւնն ու կեանքն անոր համար տուաւ :

Ը. Եւստ քրիստոնէաներ պիտի պատժուին, իրենց ձեռքէն եկած բարիքն ընելու դանդաղելնուն համար : Պիտի պատժուին ուրիշներուն այն մեղացը համար, զորոնք կրնային ու պարտական էին արգելել :

Ո՛րդեակ, թէ որ զԱստուած կը սիրես, կրնաս մի քու սէրդ՝ զինքը օրհնել ու սիրցնել տալէն աւելի լաւագոյն գործքով մը իրեն ցուցնել :

Աստուծոյ առաքիւնի ծառաները խիստ քիչ են : Չինքն ուրախացուր, ոչ միայն ի քեզ փառաւորելով, հապա նաեւ ցուցնելով, որ քու վիճակիդ քեզի մատուցած ամէն միջոցները՝ ուրիշներուն ալ զինքը փառաւորել տալու կը գործածես :

### Գ Լ ՈՒ Խ Ժ Ե .

Թէ ո՛ր պիտի փնտրէ քրիստոնէան իր միեխարսնիւնը՝ առաքիւնաւիտան համար իրո՞ք շարժարանացն ու իր երկրաւոր քարափրոսնիտան յերկրաւիտէնէն պարճարած վշտացը մե՛ղ :

Ծառան : Ա. Ո՛վ սուրբ Մայր Աստուծոյ, ինչ էր քու մխիթարութիւնդ նորածին եկեղեցւոյ կրած հալածանաց ատեն, որոնցմէ նոյն իսկ դուն ալ ազատ չէիր :

Մարիամ : Բ. Ո՛րդեակ, ես՝ ինչպէս նաեւ ամէն հալածմունք կրող հաւատացեալք, իմ մխիթարութիւնս Յիսուսի չարչարանաց յիշատակաւր կ'ունենայի, զորոնք իմ մտքէս չկրցաւ հանել անոր յարութեան ու համբարձման փառքն ու փառաւորութիւնը :

Այցելութիւն կ'ընէի սուրբ տեղեաց, ուր փրկութեան խորհուրդները կատարուած էին. մանաւանդ Գողգոթայ լերան, ուր կը մտածէի Յիսուսին առաքինութեանցն ու բարերարութեանցը՝ եւ մարդուն անզգայութեան ու ապերախութեանը վրայ, որ զանիկա խաչին վրայ մեռցուց :

Յիսուսին մայրը՝ մարդիկներուն Յիսուսին հետ բռնած դժնդակ վարմունքը մտածելէն ետեւ, կարելի էր որ հանգիստ ու հանդարտ կեանք մը յուսար : Արնայր մի նոյն իսկ ասոր բաղձալ :

Գ. Գուն ալ մտածէ, որդեակ, յաճախ մտածէ ան վարմունքը, զորն որ աշխարհք քու Փրկչիդ նկատմամբ ունեցաւ : Աս մտածմունքներէն օգնութիւն կը գտնես քու այն վշտացդ մէջ, զորոնք՝ Աստուծոյ հաւատարիմ բլլալուդ համար՝ աշխարհքին կողմանէ կը կրես :

Յիսուսքու սիրոյդ համար՝ ինչ դժուարին ճամբայ դնաց առանց խտորելու. ուր ամէն բան արհամարհութիւն, ամօթ



ու հալածանք էր: Չքեզ իր ետեւէն կանչելով քեզի իմացուց որ իրեն սիրոյն համար կրելու բան ունիս:

Գ. Ասինալու է, որ աշխարհքին կողմանէ ամենեւին հակառակութիւն ու ընդդիմութիւն չկրող առաքինութիւնը՝ չըլլայ թէ ճշմարիտ առաքինութիւն չըլլայ:

Աստուծոյ ծառայիցը բաժինն է, սիրելի ըլլալ երկնից, ու ատելի ըլլալ աշխարհքին:

Բայց ինչ աղբիւր է համբերութեան ու նաեւ մխիթարութեան ան խօսքը թէ Աշակերտն իր վարպետէն վեր չէ: Թէ որ զՅիսուս հալածեցին, զիս ալ պիտի հալածեն<sup>1</sup>:

Ես Յիսուսի պէս ու Յիսուսի հետ կը կրեմ՝ վիշտս: Ինք ինչպէս իմ օրինակս է, անանկ ալ իմ զօրութիւնս ու իմ վարձքս կ'ըլլայ:

Ծարան: Ե. Ա՛յլ թագուհի սրբոց, քեզի՝ ուրիշ սուրբերէն աւելի նոր տեսակ շարչարանք ալ պահուած է եղեր: Ի՛նչ կարօտալից հառաչանաց մէջ չէր ձգեր զքեզ երկնից մէջ քու որդւոյդ հետ միանալու սուրբ անհամբերութիւնդ:

Յիսուս փառաց մէջ կը թագաւորէր ու իր մայրը տակաւին պանդխտութեան մէջ էր: Քեզի համար շարունակ մահ էր

<sup>1</sup> Յովհ. ԺԵ. 20:

չմեռնին ու անանկով քու սիրոյդ ար-  
դար, անուշակ ու միակ առարկայէն  
բաժնուած ըլլալ :

Բայց քեզի առատ մխիթարութեան  
աղբիւր մըն էր, ամէն օր Հաղորդու-  
թեամբ զՅիսուս քու ներսդ ընդունելու  
երջանկութիւնը :

Որովհետեւ Ս. Ղուկաս կ'ըսէ թէ  
Հաւատացեալները Հանապազորդ մէկ-  
տեղ կը Հաղորդէին բեկանելոյ հացին<sup>1</sup>,  
ամենեւին չենք տարակուսիր, որ դուն  
Յիսուսի սիրոյն մէջ ամենէն դերազանց  
ըլլալովդ անոր երկրպագելի մարմինն ու  
արիւնն ամէն օր կ'ընդունէիր :

Մարիամ : Զ. Այո՛, որդեակ, ես ամէն  
օր Հաղորդութիւն ընդունելով՝ նոր  
զօրութիւն կ'առնէի իմ պանդխտու-  
թեանս երկայնութեանն ու տխրու-  
թեանը համբերելու :

Ի՞նչ երջանիկ ժամեր էին այն ժամե-  
րը, որոնց մէջ նորէն իմ ներսս կ'ունե-  
նայի զանիկա, զորն որ ինն ամիս կրած  
էի, ու այնչափ տարի հետն ապրելու եր-  
ջանկութիւնն ունեցեր էի :

Նոյն ատեն եռանդագին կը խնդրէի  
իմ հոգւոյս սիրելիէն, որ ինձի ցուցընէ  
իր հանդստեանն ու յաղթութեանցը  
տեղը<sup>2</sup> :

<sup>1</sup> Գործ. Բ. 46 :

<sup>2</sup> Երգ. Ա. 6 :

Ար խնդրէի որ շուտով հասցընէ այն վայրկեանը, որուն մէջ զինք առանց քու ղե կամ ծածկութի ստանալով, բոլոր յաւիտենականութեան ատեն անոր ներկայութիւնը վայելեմ:

Է. Աստուծոյ կամքը կը պաշտէի, անոր կատարումն իմ բաղձանացս կատարումէն վեր կը դատէի. բայց Հաղորդութիւնն իմ շարունակ ունեցած պատե, բազմացս մէջ իմ մխիթարութիւնս եւ զօրութիւնս էր:

Ինչու որ, երբոր սրտիս մէջ անդադար դէպ ի երկինք սաստիկ բերում մը կը զգայի, պէտք էր որ իմ հնազանդութիւնս նոյն ատեն իմ յափշտակութեանս սաստիկութիւնը զսպէր ու չափաւորէր:

Ո՛րդեակ, ի՞նչ սէր է այն սէրը, որն որ իր սիրեցեալ առարկային հեռաւորութեան ատեն հանդիսա կ'ըլլայ, որն որ Աստուծմէ ամէն օր կը խնդրէ որ անոր «արքայութիւնը դայ», սակայն նոյնին հասնելուն բաղձանք մը չունի:

Ը. Օ՛Յիսուս բովանդակ սրտէ սիրող քրիստոնեան անիկա է, որն որ որչափ եւ բնական սարսափ ալ ունենայ մահուրնէ, սակայն աշխարհքիս մէջ իրեն ամենէն սիրելի բանն ալ յօժարամիակու տայ երթալու եւ երկնից մէջ Յիսուսի հետ միանալու համար:

Աստուծոյ հետ ու գտնուելուն, կը նուազի ու կը հեծէ: Ան ատեն մինակ կը հանգչի, երբոր անոր փառքը կը տեսնէ<sup>1</sup>:

Ո՛հ, կը պոռայ մարգարէին հետ իր սիրոյն եռանդմանէն, երբ պիտի հասնի ան վայրկեանը, որուն մէջ իմ պըսորանքէս ետքը, անոր առջեւը երեւնամ<sup>2</sup>:

Նոյն յապաղումը խիստ ծանր է ճշմարիտ քրիստոնէի մը համար: Իր կրած ամէն փորձերէն խիստ է ու աս վշտացն ուրիշ բանով մխիթարութիւն չի գտներ, բայց եթէ հնազանդութեամբ ու Քրիստոսի մարմինն ու արիւնն այնչափ յաճախ ընդունելով, սրչափ որ իրեն կը ներէ անիկայ, որն որ հոս իրեն նկատմամբ Աստուծոյ տեղը կը փոխէ ու իր տրամադրութիւնները գիտէ:

Իր սիրելին՝ Հաղորդութեան վարագուրին տակ երկնից մէջ եղածին պէս իրական ներկայութեամբ՝ անոր այցելութեան կու գայ ու հետը կը խօսի: Իրենց երկու սրտերը բոլորովին սերտիւ իրարու հետ կը միանան:

Քիչ մը ատեն ալ անցնելէն ետեւ քողը կամ վարագոյրը կը վերնայ ու Յիսուս ինք զինք կ'երեւցընէ, ինչպէս որ է<sup>3</sup>:

<sup>1</sup> Սաղմ. ԺԶ. 17:

<sup>2</sup> Սաղմ. ԽԱ. 3:

<sup>3</sup> Ա. Յովհ. Գ. 2:

Գ Լ Ո Ի Խ Ժ Զ .

Մահոսան պարտապանին լրաց :

Ա . ՍՈՒՐԲ Կուսին բոլոր կեանքը շա-  
բունակ մահուան պատրաստութիւն էր :

Ի՞նչչափ արդիւնք չվատրկեցաւ վաթ-  
սուն ու ալ աւելի տարւան կենացը մէջ ,  
զորն որ ամբողջ աստուածային սիրոյ  
կրթութեանց մէջ անցուց : Իր առ Աս-  
տուած ունեցած սէրն ամէն վայրկեան  
կ'աւելնար , ու իր մահուանը ատեն ինք  
զինքն անանկ կատարեալ գտաւ , որ ա-  
ւելի իր սաստիկ եռանդէն մեռաւ , քան  
թէ բնութեան նուազելէն :

Նմանէ աս Կուսին , նուիրելով Աստու-  
ծոյ քու կենացդ ամէն վայրկեանները ,  
զորն որ քեզի երկրիս վրայ հարուստ բլ-  
լալու , պատիւ , համարում ու գովու-  
թիւն գտնելու համար չէ տուած , հա-  
պա իրեն ծառայելու եւ իր ծառայու-  
թեանը մէջ անմահութեան պսակն ըն-  
դունելու համար :

Բ . Աս աշխարհքիս ամէն հարստու-  
թիւններն ալ ստացած որ բլլաս , տիեզե-  
րաց բոլոր ժողովրդոցը վրայ տիրելու ալ որ  
բլլաս , ի՞նչ կը մնայ ձեռքդ մահուանդ ա-  
տեն : Հարկաւ ամէն բան պիտի թողուս  
ու ամէն բան ալ զքեզ պիտի թողու :  
Մահուան ատեն մարդուն ուրիշ բան  
չիմնար , բայց եթէ ի՞նչ որ կենացը մէջ  
Աստուծոյ համար բրած է :

Գ. Իմաստուն եղիբ այնչափ քրիստոնէից վնասովը, որոնք մինակ կեանքերնուն վերջը մահուան վրայ կը մտածեն ու ցաւով կը մաշին իրենց փրկութեան մեծ գործքին՝ որուն համար բոլոր կենաց մէջ աշխատիլը քիչ է, մինակ քանի մը օր եւ կամ գուցէ քանի մը ժամ տալերնուն համար:

Անմտաց թիւն անբաւ է, կ'ըսէ սուրբ Գիւրքը<sup>1</sup>: Մարդկան մեծ մասը կը նմանի անոր, որն որ ճամբորդութեանը պատրաստութեան վրայ՝ ճամբայ ելլելու ժամանակը հասնելէն ետեւ կը մտածէ:

Ար նմանի յանցաւորի մը, որն որ իր դատաւորը կը նախատէ ու կ'անարգէ, անոր իր վրայ վճիռ տալու վրայ եղածատեն, կամ կախաղան տարուելու ատեն, միտքը զբօսանքներ ընելու խորհուրդներ կը դնէ:

Գ. Աեանքդ անանկ անցուր, որ միշտ միտքդ ըլլայ թէ աս կեանքդ պիտի լմրննայ ու քու սիրտդ աս կենաց հետ մի կապեր: Թէ որ կեանքդ՝ ետեւէ գալու յաւիտենականութեան վրայ մտածելով կ'անցընես, ան ատեն քրիստոնէաբար կ'անցընես:

Հատերը մահուան վրայ մտածելէն հետո կը կենան, անկէ վախնալով. բայց

<sup>1</sup> Ժողով. Ա. 15:



չվախնալու միջոցը յաճախ անոր վրայ  
մտածելն ու շարունակ անոր պատրաս-  
տուիլն է :

Ե . Սուրբ կեանք մը մահուան մտած-  
մունքը կ'անուշցրնէ . իսկ մահուան  
մտածմունքը կենաց սրբութեան շատ  
կ'օգնէ :

Զգոյշ եղեր , որ չըլլայ թէ ի՞նչ որ  
այսօր զքեզ կը զուարճացրնէ նէ՛ մա-  
հուանդ ատեն զքեզ տրամեցրնէ : Արպէս  
զի մահուանդ ատեն մխիթարութիւն  
ունենաս , առաքինութիւնը քու կենացդ  
զբօսանքն ըրէ :

Թէ որ այսօր կամ վաղը հարկ ըլլար  
մեռնիլ , պատրաստ էիր քու դատաւո-  
րիդ առջեւն երեւնալու : Ի՞նչ ապաշ-  
խարութիւն ըրած ես : Ի՞նչ արդիւնք  
ստացած ես :

Արդ , սրչափօր որ ունիս նէ աղէկ գոր-  
ծածէ : Անցած ժամանակը չես կրնար  
ետ կանչել , սակայն կրնաս անոր տեղ  
լեցրնել : Աստուած ասոր համար միայն  
քեզի կենաց երկայնութիւն կու տայ :

Զ . Թէ արդեօք դեռ երկայն պիտի  
ապրիս , թէ քանի մը օրէն պիտի մեռ-  
նիս , չես գիտեր : Գոնէ գիտցիր , որ Քրիս-  
տոսի ըսածին պէս , քու չմտածած ա-  
տենդ պիտի մեռնիս :

Թէ որ ամէն ժամ մարդ կրնայ մեռ-  
նիլ , ամէն ժամ պէտք է պատրաստ ըլ-

լալ, միշտ մտածելով թէ մահը յաւիտենականութեան մը որոշիչ վայրկեանն է :

Է. Խնդրէ երկնից թագուհիէն, որ քու կողմանէդ Աստուծոյ շնորհակալ ըլլայ, քեզի պատրաստութեան ժամանակ տալուն համար, ու աղաչէ միանգամայն իրեն որ քեզի շնորհք ընդունի նոյն տրուած ժամանակը սրբութեամբ դործածելու :

Նոյն ժամանակը սրբութեամբ կը դործածես, թէ որ քու բոլոր գործքերդ անանկ կ'ընես, իբրեւ թէ անոնց ամէն մէկը քու կենացդ ամենէն վերջին գործքն ըլլար :

Ը. Սրբութեամբ մեռնելու համար, պէտք է հաւատքի, յուսոյ եւ սիրոյ մէջ մեռնիլ : Քու կենացդ մէջ ասոնց ներգործութիւնն յաճախ ըրէ եւ ասիկա ըլլայ քու մահուան գլխաւոր պատրաստութիւնդ :

Գիտցիր որ մահուան ատեն չիկրնար մէկն առաքինութեան ներգործութիւն ընել, երբ որ իր կենացը մէջ անոր չէ վարժած :

Գ Լ ՈՒ Խ Խ ԺԷ .

Արդարաց ճանաչանք բազմաբնակչաց :

Ծառան : Ա . Ո՞վ Մարիամ , պէտք է մարդ ճանչնալ Յիսուսին քեզի ունեցած սէրը , որպէս զի կարենայ դադափար ունենալ այն անպատում քաղցրութեանց , որոնցմով անիկա մահուանդ ատեն քու սիրտդ լեցուց :

Պէտք է մարդ ճանչնալ թէ որչափ դուն զՅիսուս կը սիրէիր , որպէս զի կարենայ դադափար ունենալ այն սուրբ ու կենդանի փափաքանաց , որն որ քու հոգւոյդ մէջ կ'եռար՝ քու սիրոյդ միակ առարկային հետ միանալու երջանիկ վայրկեանը մերձեցած ատեն :

Քու ամենէն վերջի շունչդ անանկ հանդարտութեամբ տուիր , որ իբրեւ թէ անոյշ քուն մը մտած ըլլայիր :

Բ . Ի՞նչ բանէ կրնար վախնալ իր մահուանը ատեն Աոյս մը , որն որ միշտ Աստուծոյ էր ու մինակ աստուածային բաներն իր աչքին բան կ'երեւային :

Ի՞նչ բանէ պիտի վախնար Աոյս մը , որն որ երկրիս վրայ մինակ յԱստուած երջանկութիւն փնտռած էր ու որուն բոլոր ջանքն անոր հաճոյանալ էր :

Մարիամ : Գ . Ո՞րդեակ , թէ որ աս աշխարհքս թող տալու օրդ կ'ուզես իմ մահուանս երանութեան ու քաղցրութեան հաղորդ ըլլալ , քու երջանկու-

Թիւնդ աս աշխարհքիս բարեացը վրայ մի դներ :

Ո՛հ թէ արդարոց մահուամբը մեռնէի<sup>1</sup> : Ասանկ կ'աղօթէ ամէն քրիստոնեայ : Բայց քիչերն ունին այն անջատումն աշխարհքիս բարիքներէն ու անոնց արհամարհութիւնը, զորն որ արդարք ունէին :

Հասերը՝ որչափ որ երկնից համար ալ ստեղծուած են նէ, մինակ երկրաւոր բաներու վրայ կը մտածեն . ինչ յոյս կրնան ունենալ ասանկներն երկինք երթալու :

Յիսուս մինակ զանոնք իր երջանկութեանը մասնակից կ'ընէ, որոնք որ իրենց կենաց մէջ, անոր սէրն իրենց երջանկութիւնը սեպած են :

Գ. Խիստ մխիթարական է արդարի մը վիճակը, որն որ իր փորձութիւններով ու շարչարանքով լեցուն ասպարեղին ծայրը հասնելով, խաղաղ խղճի մը վկայութիւնը կը վայելէ :

Ուր որ մեղաւոր մը իր մահուան ատեն զՅիսուս իբրեւ անողորբելի դատաւոր մը կը տեսնէ, արդարը զանիկա իբրեւ բարերար հայր կը նկատէ :

Արդարը՝ թէպէտ մեղանշած է իր կենացը մէջ, եւ դուցէ ալ շատ անգամ ու ծանրապէս, սակայն ասպաշխարու-

<sup>1</sup> Թիւք ԻԳ. 10 :

Թեան համար մահուան ժամանակին չէ սպասած :

Ասկէ զատ մեծանձնութեամբ՝ իր կեանքը զոհելով ու նոյն զոհը մտքին մէջ խաչին զոհին հետ միացընելով մեծ համարձակութիւն ունեցած է Աստուծոյ ողորմութեանը յուսալու :

Ինք զինք բոլորովին Աստուծոյ նուիրելէն ետեւ, իրեն պարտական եղած հաւատարմութիւնը պահելու համար հաստատութեամբ պատերազմած է : Ի՞նչ բանի կրնայ սպասել, բայց եթէ արդարութեան պահկին :

Ե . Որդեակ, ինչ քաղցր է քեզի, երբոր մահուանդ մօտենալը տեսնելով Յիսուսին պէս կարենաս ըսել, Ար թողում զաշխարհ ու Հօրս կ'երթամ<sup>1</sup> : Ա'երթամ՝ անոր ինծի պատրաստած ժառանգութիւնն առնելու :

Հայր իմ, ես զքեզ փառաւորեցի երկրի վրայ, կատարեցի քուկին ինծի ընելու համար տուած գործքդ, արդ հիմա փառաւորէ զիս<sup>2</sup> : Տուր ինծի փառաց ան բաժինը, զորն որ ինծի խոտանալու բարեհաճեցար :

Զ . Այրբոր մէկը լապտերը միշտ պատրաստ կը պահէ, չի վախնար այն ձայնէն թէ «Ահա եկաւ փեսան, առջեւը ելէք» :

<sup>1</sup> Յովհ. Ժ. 2. 28 :

<sup>2</sup> Յովհ. Ժ. 1. 4 եւ 5 :

Չէի կրնար կարծել, կ'ըսէր սուրբ մը իր մահուանը ատեն, որ մեռնիլն այսչափ քաղցր ըլլայ :

Յիսուս՝ իր սրչափ սիրելի ըլլալը մասնաւորապէս մահուան ատեն կ'իմացընէ անոնց, որոնք որ զինքը կը սիրեն :

Թէ որ սիրտ մը կենդանութեան ատեն զՅիսուս սերտ սիրով սիրած է, Յիսուս զանիկա չիթողուր որ մահուան ատեն առ սէրէն լքանի :

Մանաւանդ թէ իր շնորհքովը կը նմանցընէ զանիկա ջահի մը, որն որ մարելու ատեն աւելի սաստիկ բոց կու տայ :

Արդ անկեղծ սիրով կեանք անցուր, ան ատեն եռանդագին սիրով կը մեռնիս :

Ծառան : Է. Ո՛վ մայր իմ, ամենէն պատուական շնորհքը, զորն որ կրնամ բաղձալ եւ ընդունիլ Աստուծոյ բարերարութենէն, է մեռնիլ քու զգածմանցդ նման զգածմունքներով :

Սիրոյ մէջ, սիրով ու սիրոյ համար ապրելէն ետեւ, ի սիրոյ մեռնիլն իրաւցընէ անանկ մահ մըն է, որ արդարոց սիրտը նախանձկը ձ դէ :

Ասիկա իմ ամենէն մեծ բաղձանքս է : Բայց կրնայ մի ինծի պէս մեղաւոր մը ասանկ բարձր բանի մը բաղձալու համարձակիլ :

Ար խնդրեմ քեզմէ որ գոնէ Յիսուսէն, որն որ զիս սաստիկ կը սիրէ,



Հնորհ.ք ընդունիս, որպէս զի աս սիրոյ  
մահուան քիչ մը մասնակից ըլլամ:

Ը. Ո՛վ երանութիւն, ան ամէն ե-  
րանութիւններէն վեր, որոնք կրնան  
սիրան ուրախացընել: Մեռնի՛լ սիրելով  
զՅիսուս, անանկ որ կենաց վերջին շունչը  
սիրոյ շունչ ըլլայ:

Ո՛վ Յիսուս իմ, Տէր իմ, Աստուած  
իմ, տուր ինձի աս մեծ Հնորհ.քը: Ասի-  
կա կը խնդրեմ քեզմէ, այն անսահման  
սիրոյն ձեռքով, որով քու երկրպագելի  
սիրտդ զիս կը սիրէ ու այն անչափ սի-  
րոյն ձեռքով, որով սիրեց զքեզ քու  
սուրբ մօրդ սիրտը:

Գ Լ Ո Ւ Խ ԺԸ .

Մահուան սուրբ խոփոք մոռնելու լրաց:

Ծարան: Ա. ՍՈՒՐԲ Կոյս, Յիսուսի  
համբարձմանէն ետեւ քու երկրիս վրայ  
սպրած բոլոր ժամանակդ հառաչա-  
նաց ժամանակ մըն էր:

Աստուածային սիրոյ ամենասուրբ բո-  
ցերուն մէջ շարունակ կը մաշէիր ու կը  
սպառէիր, այսու ամենայնիւ խիստ կա-  
մաց կ'երեւար քեզի նոյն մաշումը:

Բ. Ո՛հ, ես երկրիս շատ յարած ըլ-  
լալու համար չեմ կրնար աղէկ երե-  
ւակայել այն սուրբ նուաղման վիճակը,  
որուն մէջ գանուեցար մինչեւ քու կե-  
նացդ վերջին վայրկեանը:

Եթէ դժուարութիւն կը քաշեմ ըմբռնելու Գաւթին փափաքը, երբոր իր պանդխտութիւնը կ'երկրննար, ու առաքելոյն փափաքը, երբոր անանկ սաստիկ կը բաղձար իր մարմնէն բաժնուիլ, ինչպէս կրնամ ըմբռնել քու փափաքդ :

Գ. Թէ որ իմ սիրտս զքեզ վառող սիրոյն այն բոցերուն մէկ մասովը բորբոքէր, ինչպէս անարգ կ'երեւար ինձի աշխարհք ու ինչ եռանդազին հառաչանքներ չէի ըներ երկինք նայած առանս :

Յիսուսին սիրովը լեցուած սիրտ մը՝ կրնայ մի երկրիս վրայ զՅիսուս ստանալէն զատ ուրիշ բանի մը բաղձալ :

Աս աշխարհքիս ամէն բարիքներն ալ երբոր իմ առջեւ ելլէին՝ զիս ամէն մարդիկներէ աւելի երջանիկ ընելու համար, պէտք չէի՞ ըսել թէ ինձի ամենէն ազէկ է մեռնիլ ու Յիսուսի հետ ըլլալ<sup>1</sup> :

Ի՞նչ են ան ամէն բարիքները զՅիսուս սիրողին համար : Յիսուս ամենէն կատարեալ ու բարձրագոյն բարիք է . Յիսուս միայն իրեն հետ ունի ամէն բարիք :

Դ. Ի՞նչ քաղցր է Յիսուսի հետ ըլլալ, անոր պէս բարի Հօր, քաղցր Բարեկամի, առատաբաշխ Տիրոջ ու սիրելի Փրկչի հետ :

Յիսուսի հետ ըլլալ, անոր ներկայու-

<sup>1</sup> Փիլիպ. Ա. 23 :

Թիւնը վայելել, բոլոր սրտէ ու ընդ միշտ զանիկասիրել: Ո՛վ Թագուհի երկնից, կրնայ աշխարհք ու երկիրս ինձի սնանկ բարիք ընծայել, որ ասոնց հետ կարենան համեմատուիլ:

Ե. Երանի Թէ բացուէր շուտով իմ բաղձանացս առջեւ այն երանելի բնակարանն, ուր որ ինք կը բնակի: Մինակ Յիսուս կրնայ կատարելապէս իմ փափաքս յազեցընել:

Ստոյգ է որ, սրչափ որ մէկ կողմանէ մահուան կը բաղձամ Յիսուսի հետ միանալու համար, մէկալ կողմանէ կը վախնամ իմ դատաւորիս ատենինն առջեւն ելլելու:

Բայց կը յուսամ իմ Փրկչիս ողորմութեանը վրայ, ու կը յուսամ քու բարեխօսութեանդ վրայ, ո՛վ քաղցր մայր իմ:

Մարիամ: Զ. Այո՛, սրդեակ, յուսա՛, յուսա՛ հաստատութեամբ: Ո՛րչափ որ Յիսուս ահրելի դատաւոր մ'ալ է նէ, միանգամայն բարերար Փրկիչ է:

Իր դատաստանին վախն ունեցիր, սակայն յոյսն ու սէրը վախին յաղթեն:

Վախցիր, բայց աւելի սիրէ. եւ չես կրնար քու սէրդ Յիսուսին աւելի աղէկ ցուցընել, բայց եթէ բաղձալով որ շուտ մը զինքն իր մեծ փառաւորութեանցը մէջ տեսնես ու Թողուս աս երկիրս, ուր

անանկ դիւրին է մարդուն իրեն պարտաւորեալ հաւատարմութենէն խտտորիլ :

Է. Թէ որ աս զգածումներով լեցուած ես, ապահով եղիր, սրգեակ, որ Աստուած մահուանդ ատեն քու թշնամեացդ դէմ զքեզ կը պաշտպանէ :

Ես ալ ան ատեն քեզի համար օգնութիւն կը խնդրեմ. ինչու որ թէպէտ ամէն ատեն իմ որդւոցս վրայ կը հսկեմ, բայց աւելի անոնց մահուան ատեն :

Գ Լ Ո Ի Խ ԺԹ.

Աստուծոյ սիրոյն վրայ :

Ծանօն : Ա. Արդ, ո՛վ կոյս մայր, դուն մեռար իբրեւ զո՛հ աստուածային սիրոյ : Աստուածային սէրը վերջապէս վերջին բոցով մը սպառեց ան զո՛հը, զորն որ այնչափ դարերէ վեր պատրաստած էր :

Ասանկ Աստուծոյ առջեւ մեծանձն, անոր կամացը հնազանդ, հաւատարիմ եւ սուրբ հոգի մը, աս կերպով մինակ կրնար իր մարմնէն բաժնուիլ :

Չեմ զարմանար քու սիրոյ զօրութեամբ հոգիդ աւանդելուդ վրայ, հապա անոր կը զարմանամ որ քու սիրոյդ շարունակ ու սաստիկ բորբոքը քու կեանքդ աւելի շուտ չվերջացուց :

Բ. Արարչին ձեռքէն սուրբ ու անա-

րատ ելլելով, զինքը ճանչցածիդ պէս, անոր աստուածային սէրը քու միակ վախճանդ բրիր ու քու սիրտդ միշտ անոր բոցերուն բորբոքմամբ ապրեցաւ ու սնաւ :

Քու բոլոր կենացդ մէջ մինակ աս սէրն ունէիր : Քու խորհուրդդ, զգածմունքդ, խօսքդ, գործքդ, վախդ, յոյսդ, ուրախութիւնդ, տրամութիւնդ ու ամէն բանդ անկէ յառաջ կու գար :

Ո՛րչափ որ մէկն Աստուծոյ անբաւ մեծութիւններն ու կատարելութիւնները կը ճանչնայ, նոյնչափ աւելի զանիկա կը սիրէ : Բայց սոսկ արարածոց մէջ քեզմէ աւելի լաւ ո՞վ ճանչցաւ զանիկա :

Գ. Սրբոց սիրան աս սիրով լեցուն էր, սակայն քու սիրտդ սիրոյ նոյն խակ լրումն ունեցաւ : Սաստիկ սիրով կը սիրեն սերովբէք, սակայն քու կրակիդ քով անոնց սէրը մինակ կայծ մըն է :

Ո՛վ մայր գեղեցիկ սիրոյ<sup>1</sup>, պէտք է մէկը քեզի պէս սիրած ըլլալ ու սիրել, որպէս զի կարենայ ըսել ու բացատրել թէ դուն որչափ կը սիրէիր :

Դուն ի սիրոյ մեռար, բայց մենք եւ ոչ անով կ'ապրինք ու չենք ջանար գոնէ սիրոյ մէջ մեռնելու երանութիւնն ունենալ :

Մարիամ : Գ. Ի՞նչ բանի կը զբաղիս,

<sup>1</sup> Սիր. ԻԳ. 24 :

որդեակ, աս աշխարհքիս մէջ, թէ որ այն միակ բանին չես զբաղիր, որուն համար աշխարհք եկած ես: Աստուած զքեզ ստեղծած է որ զինքը սիրես:

Մարդիկներուն մեծ յիմարութիւնն է, որ իրենց յաւիտենական ու ժամանակաւոր երանութիւն տալու միակ սէրը թողուցած, իրենց սիրտն ուրիշ սէրերու կու տան:

Ե. Որդեակ, քանի որ դեռ քիչ քայլ առած ես նէ, ետ կեցիր այն եղկելի մեղկութենէն, որն որ զքեզ կը խափանէ աստուածային սիրոյ ճամբուն մէջ:

Կը վախնաս որ անոր համար զոհեր պիտի ընես, բայց սիրել չ'ըլլար առանց բան մը զոհելու: Խիստ կասկածելի է այն սէրը, որն որ մինակ ան ատեն կը ցուցուի, երբոր սիրելւոյն համար քաշելու վիշտ մը չկայ:

Զ. Մեծանձնութեամբ ու քաջասրբտութեամբ սիրէ, պատրաստ ըլլալով աւելի ուրիշ ամէն բարիք կորսընցընելու քան թէ Աստուծոյ շնորհքը. պատրաստ ըլլալով աւելի ամենայն վշտաց տակ իյնալու, քան թէ փոքր մեղք մ'ընելու:

Թէ որ անգամ մը քու կամքդ աս սիրով կը զմայլի, անկէ ետեւ բան մը քեզի անկարելի չ'երեւար: Սէրը մահուան պէս



գորաւոր է<sup>1</sup>, ամենեւին դժուարութիւն  
չիճանչնար:

Ուղղելու պակասութիւններ ու նուա-  
ճելու զգայարանքներ ունիս: Սիրէ, ու  
սէրը նոյն գործքերը գլուխ կը հանէ, նոյն  
խիւսքիչ ժամանակուան մէջ:

Է. Ան բանը միայն սիրէ, ինչ որ Աս-  
տուած կը սիրէ: Երբոր անոր հետ ու-  
րիշ բան մ'ալ կը սիրես, անանկ սիրէ  
զաննիկա, ինչպէս ինք կ'ուզէ որ սիրես:  
Ինչ բանի վրայ որ կը հաճիս պէտք է որ  
յայնմ՝ միայն Աստուծոյ հաճիս:

Ճշմարիտ սէրը կայացած է կատա-  
րեալ անտարբերութեան վրայ ան ամէն  
բանի նկատմամբ, ինչ որ Աստուած չէ:  
Անանկ սէրը մինակ զԱստուած կը խնդրէ  
ու ամէն բանի մէջ անոր կը բաղձայ:

Ո՛րդեակ, երջանիկ կ'ըլլաս նոյն սի-  
րով: Ո՛րչափ որ անոր մէջ կ'ապրիս,  
այնչափ աւելի անոր մէջ կ'ուզես ա-  
պրիլ: Ստոյգ է անոր շղթաներուն տակ  
կը շարշարուիս, սակայն քեզի ցաւ կ'ըլ-  
լար թէ որ անոր գերին չըլլայիր:

Աս սէրը քու գանձդ ըլլայ: Աս աշ-  
խարհքիս բարեացն ամենէն մեծ կա-  
րօտութեան մէջ ալ, կը տեսնես որ  
նոյն սէրն ամէն բարեաց տեղ կը  
բռնէ:

Ը. Մանաւանդ մահուան ատեն մարդ

<sup>1</sup> Երգ. Ը. 6:

կ'իմանայ թէ ինչ երջանկութիւն է ինք  
զինք սիրոյ ազդեցութեանցը թողուլ :

Մահը, որն որ առ հասարակ մարդ-  
կան համար, շփոթի ու աղմկի ժա-  
մանակ է, այս սիրով լեցուած քրիստո-  
նէի մը համար, մխիթարութեան ու  
խիստ քաղցր խաղաղութեան ժամա-  
նակ է :

Արդ, ինք զինքդ աստուածային սիրոյ  
տուր ու անոր առաջնորդութեանը ձգէ :  
Ասիկա քու խթանդ ու քու տարրդ ըլ-  
լայ : Զանա՛ ամէն բան ի սիրոյ ընելու :

Ծարտան : Թ. Ո՛վ մեծապայծառ կոյս,  
քու խօսքերդ մտիկ ընելով, ներսս սաս-  
տիկ փափաք մը կը զգամ՝ ասկէ ետեւ  
աստուածային սէրէն ուրիշ առաջնորդ  
չունենալու :

Որովհետեւ իմ սիրտս դեռ կրնայ գոհ  
ընել զԱստուած, ու մինակ աս սիրտը  
կրնայ զանիկա գոհ ընել, ա՛լ նոյնն իմն  
չէ եւ ոչ ալ արարածոց, բոլորովին  
Աստուծոյ կու տամ ու կը նուիրեմ :

Աս փափաքը քու կին իրմէ՛ ինծի հա-  
մար ընդունած շնորհացդ մէկ գործքն  
է, որովհետեւ առանց իրեն ու առանց  
իր օգնութեանը չեմ կրնար զանիկա  
սիրել :

Ժ. Առանց աս օգնութեան չեմ  
կրնար, պէտք եղածին պէս, զա-  
նիկա սիրել ու չեմ կրնար նոյն սիրոյ

մէջ յարատեւել : Ո՛հ, անդադար աղօթէ որ նոյն սէրն անդադար ինձի հետ ըլլայ :

Սակայն կը վախնամ, իմ անհաստատութիւնս ճանչնալով : Բայց դուն՝ որ իմ աս անհաստատութիւնս կը ճանչնաս ու անոր համար իրաւամբ զիս կը յանդիմանես, քու պաշտպանութեամբդ ինձի թիկունք ու նեցուկ եղիր :

ԺԱ. Սորսուեցէք աշխարհքիս անարդ ու կորստական առարկաները, դուք իմ սրտիս մահն էք : Սիրտս պէտք է որ ապրի, բայց, Տէր Աստուած, առանց քու սիրոյդ ապրիլը, միթէ ապրի՞լ է :

Թող արարածք տրանջեն որ զիրենք կը թողում. ծառայութեան կերպարանքով իմ ճշմարիտ երջանկութիւնս յափշտակեցին : Քամահեղով զանոնք պիտի վռնտեմ, մինչեւ որ իմ սէրս խռովելէն դադրին :

ԺԲ. Ո՛վ Աոյս, կատարեալ օրինակ սիրոյ, ասկէ ետքը երկինք մը պիտի դառնայ սիրտս, ուր քու՝ աշխարհքիս վրայ ու հիմակ սրբոց հետ անցուցած կենացդ նմանելով՝ պիտի սիրեմ միայն իմ Աստուածս, անոր սիրոյն մէջ մեռնելու եւ յաւիտեան զանիկա սիրելու արդար յուսով :

Թե երկնից գառնն իբրեւ շարժի Խոսարացուած է  
 Բելի :

Ծառան : Ա . ԱՈ՛ՅՍ սուրբ , ահաւասիկ  
 մտար այն փառաց մէջ , զորն որ բար-  
 ձրեալ Պարզեւատուն քու առաքինու-  
 թեանցդ ու արդեանցդ համար պատ-  
 րաստած էր :

Ո՛հ , երբ պիտի կարենամ նոյն փառ-  
 քը տեսնել , սրբոց հետ զանիկա նկա-  
 տել ու անոր պայծառութեանը վրայ  
 զարմանալ :

Ե՞րբ պիտի կարենամ սրբոց սքանչա-  
 ցուցիչ դաշնակցութեանը հետ միանա-  
 լով քու արդեանցդ ուրախութիւնը  
 խմբել ու քեզի պէտք եղած գովասան-  
 քը տալ :

Բ . Վաւկին երկնից մէջ բռնած բարձր  
 կարգդ զուտ շնորհ կամ պարգեւ մը չէ ,  
 զորն որ Յիսուս քեզի իբրեւ իր մօրը  
 տուած ըլլայ . հասցա իբրեւ պատկա-  
 նաւոր հատուցում քու ան ամէն գոր-  
 ծոցդ , զորնք Աստուծոյ ընտրութեան  
 ու դիտաւորութեանցը համեմատ գըտ-  
 նուելու համար ըրիր :

Չէ , դուն նոյն կարգը չէիր ելլեր , թէ  
 որ աստուածային մայրութիւնն ան-  
 պատու տխուրս կամ անուն մ'ըլլար  
 վրագ , թէ որ քու աստուածային որ-  
 դույդ առաքինութեանցը ճշդիւ հետե-

ւելլով, անոր ամենակատարեալ նմա-  
նութիւնը չունենայիր:

Քու կենացդ սրբութիւնը, քու գրե-  
խաւոր արդիւնքդ եղաւ՝ ամենայն սրբ-  
ութեան Աստուծոյն աչացն առջեւ:

Մարիամ: Գ. Ո՛րդեակ, չիկրնար մէկն  
երկինք մտնել, առանց երկրիս վրայ  
սուրբ ըլլալու:

Աստուած՝ ո՛չ պատուոյ, ո՛չ հարրս-  
տութեանց ու ո՛չ ձրից նայելով երա-  
նութեան բնակութիւնը կրխոթէ, հա-  
պա կենաց մէջ գործուած սուրբ գործոց  
ու վաստակուած արժանեաց ու արդեանց  
նայելով:

Աստուծոյ քով աս կամ ան անձի  
ակնառութիւն չկայ<sup>1</sup>: Իւրաքանչիւրոց  
գործոցը համեմատ կը հատուցանէ<sup>2</sup>:

Արքայութեան մէջ ամենէն աւելի  
բարձրացեալ անձինք՝ երկրիս վրայ ամե-  
նէն աւելի առաքինի ու կատարեալ ե-  
ղողներն են:

Գ. Աստուած մարդիկներէն խիստ  
տարբեր կը դատէ: Մարդիկ հասարա-  
կօրէն արտաքնոյն ու երեւութին կը նա-  
յին: Մինակ Աստուած արդեանց ու ա-  
ռաքինութեան արդար զինը կը ճանչ-  
նայ:

Քեզի մեծամեծ հատուցմունք կը պա-

<sup>1</sup> Եփեսո 2. 9:

<sup>2</sup> Հռոմ. Բ. 6:

տրաստէ, բայց կ'ուզէ որ արդիւնաւորիս :  
Եւ որպէս զի արդիւնաւորիս, քեզի  
շնորհք ու օգնութիւն կու տայ. [Թէ որ  
աղէկ կը գործածես, իր խոստումը կը  
գործադրէ :

Ստոյգ է որ զքեզ վարձատրելով իր  
պարգեւները կը պսակէ. սակայն անով  
քու առաքինութիւններուդ եւ բարի  
գործքերուդ ալ հատուցում կ'ընէ :

Իրեն համար եղած ամէն բանին ճիշդ  
հաշիւը կը բռնէ : Թէպէտ դաւաթ մը  
պաղ ջուր տրուած ըլլայ իրեն անուանը  
համար, նոյն դաւաթ մը պաղ ջուրն իր  
վարձքը կ'ունենայ :

Ե. Ի՞նչ մխիթարութիւն է քեզի,  
նրդեակ, որ ասանկ բարի, առատածեռն  
ու սքանչելի Տիրոջ մը կը ծառայես :

Աշխարհք, որուն որ այնչափ կը ջա-  
նան մարդիկ հաճոյ ըլլալու, իր ծառա-  
յիցը գէշ հատուցում կ'ընէ : Բայց դուն  
կրնաս ըսել, Գիտեմ, որուն որ յուսա-  
ցած եմ. եւ վստահ ու ապահով եմ որ  
իմ արդեանցս աւանդը չիկորսուիր իմ  
Տիրոջս ձեռքը, որուն որ կը ծա-  
ռայեմ<sup>1</sup> :

Անոր ողորմութենէն յաւիտենական  
պսակ մը կը յուսամ, անանկ պսակ մը,  
որն որ այնչափ պայծառ ու փառաւոր  
կ'ըլլայ, նրչափ իմ անոր հաճոյանալու

<sup>1</sup> Բ. Տիմ. Ա. 12 :



Համար ունեցած հաւատարմութիւնս ծիշդ ու հաստատուն կ'ըլլայ :

Զ. Արդ, քննէ ինքզինքդ եւ տես թէ ինչ կ'ընես առջեւդ դրուած վարձքը վաստրկելու համար :

Ո՛ւր են քու յաղթութիւններդ . ուրո՞նք են բարի գործքերդ, ի՞նչ առաքինութիւններ կը գործես, կամ որ նոյն է, ի՞նչ արդիւնք պիտի հանես Աստուծոյ ատեանին առջեւ :

Ծարտան : Է . Ո՛հ, չեմ կրնար առանց մեծ ամօթոյ՝ միտքս բերել թէ ինչ քիչ բան բրած եմ մինչեւ հիմակ, որն որ Աստուծոյ վարձուցն արդիւնաւորի :

Մարիամ : Ը . Ո՛րդեակ, մի յուսահատիր, դեռ ձեռքդ է նոյն վարձքերն ընդունիլ : Շնորհքը քեզի կը խօսի, զքեզ կը դրդէ, հաւատարիմ եղիւր անոր ձայնին :


Աղօթէ, լացիր, աշխատէ, վիշտ կրէ, մահացուցում ըրէ, սրբոց ճամբան դնա ու անոնց պէս երանութեան վախճանը կը հատնիս :

Ծարտան : Թ . Ա՛հա, քու պաշտպանութեամբդ, կ'ելլեմ այն անգործութեան վիճակէն, որուն մէջ մինչեւ հիմակ ապրեցայ : Արդ, քու օգնականութեամբդ կ'ուզեմ ասկէ ետեւ ջանալ իմ եռանդովս՝ լալու արժանի անպտուղ տարիներուս տեղը լեցընել :

Ո՛հ, սրչափ առատութեամբ վարձա-  
տրուած ու մեծապէս հատուցում գտած  
կ'ըլլան ամենայն տքնութիւն, արցունք,  
խոնարհութիւն, մահացուցում ու նե-  
ղութիւն կրելու մէջ համբերութիւն՝ մի  
միայն քանի մը վայրկեան վայելելով  
այն երանութիւնը, զորն որ սուրբերը  
յաւիտեան Աստուծոյ հետ կը վայելեն:

Բայց միանգամայն սրչափ ըստ ինքեան  
արժանի է իմ ծառայելու տէրս, որ ես  
իրեն հաճոյանալու ետեւէ ըլլամ:

Այո՛, կ'ուզեմ անոր ծառայել. կ'ու-  
զեմ ճգնիլ անոր հաճոյ ըլլալու՝ աւելի  
նոյն իսկ իրեն համար, քան թէ իմ հա-  
ւատարմութեանս դիմացը պատրաստած  
անբաւ բարիքներուն համար:



# Գ Ի Բ Գ Զ Ո Ր Ր Ո Ր Գ

ՈՐՈՒՆ ՄԷՋ ԿԸ ԽՕՍՈՒԻ ՄԵՐ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ  
ԿՈՒՍԻՆ ՎՐԱՅ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԵԾԱՐՈՅ, ՅԱՐ-  
ԳԱԿԱՆ, ԵՌԱՆԴԱԳԻՆ, ՍԻՐԱԼԻՐ, ՔԱՂՅՐ ԵՒ  
ՅՈՒՍԱԼԻՅ ԶԳԱԾՄԱՆՅ ՎՐԱՅ:



## Գ Լ Ո Ւ Խ Ա .

Սուրբ Աստուծոյ մեծամեծ արարչն ու  
հոգեւոր զօրն:

Ծարան: Ա. ՍՈՒՐԲ ԿՊԿ, քու վրադ  
ինչ զգածում ալ որ ունենանք, երբեք  
չիկրնար քու մեծութեանդ ու բարձրու-  
թեանդ հասնիլ, որն որ մեր ըմբռնելու  
զաղափարներէն միշտ վեր է:

Քու վրադ արժանապէս խօսելու հա-  
մար, պէտք էր խելք հասցրնել այն բա-  
նին, որն որ Աստուծմէ ետքը ամէն բանէ  
մեծ ու ըստ շնորհաց, ըստ կատարելու-  
թեան, ըստ զօրութեան ու ըստ փա-  
ռաց ամէն բանէ աւելի զարմանալի է:

“Քեզմէ ծնած է Յիսուս”, Աւետա-  
րանը, որն որ աս ճշմարտութիւնը մեզի  
կը սովորեցրնէ, անոր համար քեզի ուրիշ  
գովութիւն տալու չ'աշխատիր, որովհե-  
տեւ նոյն խօսքը մինակ բաւական է հաս-  
տատ հիմ դնելու ան ամէն գովութեանց,  
որոնք կրնան քեզի արուիլ:

Բ. Վրու աստուածամայրութեանդ պատիւը տեսակ մը ազգականութիւն է ծայրագոյն էակին հետ. ինչու որ մի եւ նոյն անձը երկուքներնուդ ալ որդին է : Քու ամենասուրբ մայրութիւնդ այնչափ աստուածութեան մօտեցած է, որչափ որ զուտ արարած մը կրնայ մօտենալ :

Աս պատիւը քու եւ Աստուծոյ մէջ զարմանալի կապ ու դաշն մը դրած է, որուն զօրութեամբ դուն դուստր եղար Հօր, մայր՝ Որդւոյ, ու հարս՝ Հոգւոյն սրբոյ, անանկ սքանչելի եղանակաւ մը, որն որ մինակ քեզի յատուկ է :

Միանգամայն այս յարաբերութեան զօրութեամբ՝ ճշմարտապէս տիեզերաց ու երկնից թագուհի ես :

“Յիսուս Մարիամէն ծնաւ,, ըսելը՝ Մարիամ իրմէ վեր մինակ զԱստուած կը ճանչնայ ըսել է :

Գ. Ո՛վ սուրբ Աոյս, հրեշտակներուն մէջ այն հրեշտակն ալ, որն որ իր շնորհքովն ու կատարելութեամբը՝ մէկալ հրեշտակներէն աւելի գերազանց է, քու ծառայիցդ կարգը կրնայ սեպուիլ. այնչափ տարբերութիւն կայ քու եւ անոր մէջ :

Քու մեծութիւնդ կը չափեմ քու որդւոյդ մեծութենէն, որմէ ի հարկէ նոյնը քեզի ցոլացած է : Որդւոյն ազնուութենէն մայրը կը ճանչցուի :

Գ. Վիւրաւ կ'ըմբռնեմ որ Յիսուսին մայրութեան բարձրագատիւ աստիճանը սկիզբ ու աղբիւր է ան շնորհաց, որոնցմով Աստուած հաճեցաւ զքեզ լեցրնել, եւ ան ամէն արտօնութեանց ու առանձնաշնորհութեանց, որոնցմով ուզեց զքեզ ուրիշներէն վեր ընել:

Ասով ունիս միանգամայն տեսակ մը իշխանութիւն ան ամէն շնորհաց գանձուցը վրայ, որոնց տէր է Յիսուս, եւ ունիս միանգամայն անոր քով բացարձակ կարողութիւն բարեխօսութեան:

Ե. Վարձեալ դիւրաւ կ'ըմբռնեմ որ քանի մը ընդհանուր օրէնքներ, որոնք սկզբնական մեղաց պատիժներն են, չէին վերաբերեր Աստուծոյ մօրը, ինչու որ այս անուշակ ու սիրելի մայրը յաւիտենական ընտրութեամբ որոշուած էր որ զԱստուած ծնանի:

Դուն, ո՛վ Մարիամ, տալով Աստուծոյ այն կեանքը, որով զմեզ գնեց, արժանի ես միջնորդ փրկութեան կանչուելու, բայց առանց կորզելու միակ միջնորդին պատիւը, որն որ, ըստ յատուկ մտաց, մինակ քու որդւոյդ կը պատշաճի:

Բայց ո՛վ կրնայ քու պատուոյդ բովանդակ բարձրութեան խեղճ հասցրնել: Աստուածամօր վրայ ամէն բան անանկ բարձր է, որ նոյն իսկ սերովբէները մինակ զարմանալ կրնան:

Զ. Գուն քու սուրբ ազգականիդ՝  
Եղիսաբեթին առջեւ՝ Աստուծոյ քեզի  
բոլոր բրածները մինակ այս բառերուն  
մէջ բովանդակեցիր. «Հզօրն ինձի մեծա-  
մեծ բաներ բրաւ,»:

Եկեղեցին ալ, որչափ որ քեզի սէր ու-  
նի եւ քու փառացդ նախանձախնդիր է,  
կը հարկադրի խոստովանելու՝ որ երբ-  
որ կը մտածէ թէ Գուն քու արգան-  
դրդ կրեցիր զանիկա, զորն որ երկինք  
չէր կրնար բովանդակել, չիզիտեր թէ  
ինչ գովութիւն տայ քեզի:

Ո՛վ զարմանալի մայր Աստուծոյ, քու  
առջեւդ սրտիս մինչեւ խորը սաստիկ ու  
քաղցր զարմանքով կը լեցուիմ:

Քու մեծութիւնդ ու բարձրութիւնդ  
տեսնելով զիս անանկ սուրբ երկիւղ ու  
յարգութիւն մը կը պատէ, որ ինք զինքս  
կորսընցուցածի պէս քու ոտքդ ինկած կը  
մնամ:

Գ Լ Ո Ի Խ Բ .

Յիսուսի ու Մարիամոյ մէջ եղած նմանութեան  
նկարագրիչներուն վրայ:

Ծառան: Ա. Ո՛վ Մարիամ, երբոր կը  
մտածեմ քու ծնունդդ, կեանքդ, մահդ  
ու երկնից մէջ ունեցած փառքդ, Յիսուսի  
եւ քու մէջդ անանկ նմանութեան նկա-  
րագիրներ կը տեսնեմ, որ կը սքանչանամ:

Գուն քու որդւոյդ հետ կապուած



էիր նախախնամութեան յաւիտենական վճռոցը մէջ: Տէր ստացաւ զիւ իր ճամբուն սկիզբը, կ'ըսէ յաւիտենական Իմաստութիւնը սուրբ Գրքին մէջ<sup>1</sup>: Ես առանձնապէս նախասահմանուած էի ի յաւիտենից: Երբոր Աստուած տիեզերաց հիմը կը դնէր, ես անոր դիտաւորութեանցն ու տեսութեանց մէջ էի: Ասխօսքերը յատկապէս Քրիստոսի կը վերաբերին, սակայն եկեղեցին քեզի կը մերձեցընէ:

Բ. Աին օրինաց մէջ որչափ խոստումներ ու պատգամներ, օրինակներ ու նշաններ ղՅիսուս նախապատմելով զքեզ կը նախապատմէին:

Յիսուս անմեղանչական էր իր բնութեամբը, իսկ դուն անոր շնորհքովը սկզբնական մեղքէն ազատ ըլլալով, ազատ եղար նաեւ ամէն՝ նոյն իսկ ամենաթեթեւ ներգործական մեղքէ:

Բանն Աստուած քու կուտական արգանդիդ մէջ փակուած ինը ամսուան մէջ իբրեւ թէ քեզի հետ բոլորովին նոյնացած էր:

Գ. Տղայութեան ատենը, զանիկա կը սնուցանէիր քու յատուկ գոյութեամբդ, որն որ անոր գոյութեանը կը դառնար: Իր ծածուկ կենացը մէջ երեսուն տարի քեզի հետ անցուց, բնակու-

<sup>1</sup> Առակ. Ը. 22:

Թիւննիդ նոյն էր, ունեցածնիդ նոյն,  
կրթութիւննիդ նոյն ու զգած մուկքնիդ  
նոյն :

Անոր քարոզութեան կենացը մէջ՝ սր-  
չափ որ կրցար նէ՝ անոր աշխատութեանը  
մասնակից եղար ու չարչարանացը մէջ  
հաղորդ եղար անոր նախատանացն ու  
արհամարհանացը :

Յիսուս ամէն մարդիկներէ խոնարհ,  
քաղցր, գթած ու համբերող էր, դուն ալ  
ամէն կիներէ համբերող, գթած, քաղցր  
ու խոնարհ եղար :

Գ. Յիսուսի վրայ ամէն աստուա-  
ծային ու անստեղծ կատարելութեանց  
հաւաքումը կայ. քու վրադ ալ ամէն  
ստեղծեալ կատարելութեանց հաւա-  
քումը կայ, բայց անանկ սքանչելի եղա-  
նակաւ որ հրեշտակաց ու սրբոց ամէն  
կատարելութիւնները քու կիներուդ  
առջեւ բան մը չ'երեւար :

Յիսուս զքեզ անանկ իրեն նմանցու-  
ցած է բարձր առաքինութիւններով, որ  
զքեզ իր կենդանի պատկերն ըրած է :

Յիսուսի պէս, դուն ալ գերեզմանին  
մէջ անապական եղար : Անիկա իր յա-  
տուկ զօրութեամբը յարութիւն առաւ,  
դուն ալ անկէ ընդունած մասնաւոր ար-  
տօնութեամբդ յարութիւն առիր :

Անոր պէս՝ դուն ալ մարմնով ու հոգ-  
ւով երկինք ելար : Անիկա Հօր աջ

կողմը նստած է, դուն ալ անոր աջ  
կողմը նստած ես :

Յիսուս ինք իրմէ ամենազօր է, դուն  
ամենազօր ես քու որդւովդ, որն որ զքեզ  
իր գանձուցը մատակարար դրաւ : Ինք  
երկնի ու երկրի տէր է, դուն ալ հրեշ-  
տակաց ու մարդկան թագուհին ես :

Ե . Ըմէն տեղ, սւր որ Յիսուս եր-  
կրրպագութիւն կ'ընդունի, դուն ալ կը  
պատուիս : Չկայ սիրտ մը որ անոր սի-  
րոյն նուիրուած ըլլայ ու ինք զինք բողո-  
բովին քու ծառայութեանդ տուած  
չըլլայ : Չկայ անոր փառացը համար  
կանգնուած տաճար մը, ուր քու փա-  
ռացդ համար կանգնուած յիշատա-  
կարան մը չըլլայ :

Մարիամայ քաղցր անունը՝ Յիսուսի  
քաղցր անունէն անբաժանելի է ճշմարիտ  
հաւատացելոց բերնին ու սրտին մէջ :

Սուրբ եկեղեցին իր սուրբ պաշտա-  
մանցը մէջ, գրեթէ միշտ Յիսուսին գո-  
փութեանցը հետ քու գովութիւններդ  
ալ կը խառնէ : Ինչպէս Յիսուսին, անանկ  
ալ քու կենացդ խորհուրդները կը տօնէ :

Յիսուս է թագաւոր յաւիտենից,  
սկիզբ շնորհաց, Հօր քով մեր փաստա-  
բանը, Աստուած ողորմութեանց, Աս-  
տուած ամենայն մխիթարութեան ու  
լոյս աշխարհի : Չքեզ ալ սուրբ եկե-  
ղեցւոյ հետ կը կանչենք՝ թագուհի աշ-

խարհի, թագուհի երկնից, մեր փաստաբանը, շնորհաց մայր, ողորմութեան մայր, մխիթարիչ վշտացելոց ու փութորկի ատեն փրկութեան նաւահանգիստը տանող աստղ :

Զ. Անուպառ գոհութիւն Յիսուսին որ քեզի շնորհեց ան ամէն շնորհքներն ու արտօնութիւնները, զորոնք կը վայլէր որ անանկ որդի մը՝ ասանկ մօր շնորհէ :

Ո՛հ, սուրբ Աղյս, քու ներկայութեանդ առջեւ բրած աս խորհրդածութիւններս, որչափ որ քեզի փառաւոր են, նոյնչափ իմ սրտիս ու նաեւ զքեզ սիրող ամէն սրտերու քաղցր է :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Երբեք չե՛լ Մարիամայ առնեցա՞ծ քառաց լրաց :

Ծառան : Ա . ԹԱԳԱՒՈՐԷ՛, սուրբ Աղյս, թագաւորէ՛ ամէն ատեն երկնից մէջ նահապետներէ վեր, որոնց հաւատարմութիւնը գերազանցեցիր :

Թագաւորէ՛ մարտիրոսներէն վեր, որոնց հաստատութիւնը գերազանցեցիր . կոյսերէն վեր, որոնց մաքրութիւնը գերազանցեցիր .

Ամէն արդարներէ վեր, որոնց խոնարհութիւնը գերազանցեցիր . ամէն հրեշտակներէ վեր, որոնց հնազանդութիւնը գերազանցեցիր . ամէն սերովբէներէ վեր, որոնց սէրը գերազանցեցիր :

Բ. Ար քրանչանամ ու կը պատուեմ զքեզ քու նստած մեծապայծառ զահիզ վրան, ուր քու՝ Աստուծոյ քով ունեցած կարողութեամբդ մեղաւորաց ապաստանարան ես, արդարոց նեցուկ, տառապելոց յոյս ու մեղաւորաց օգնական:

Վ'օրհնեմ զԱստուած՝ զքեզ անանկ անբաւ փառաց հասցընելուն եւ ընդհանուր յարութեան օրէն յառաջ, քու մարմինդ նոյն փառաց հաղորդ ընել հաճելուն համար:

Ար վայլէր որ անանկ սուրբ մարմին մը, ուր որ Աստուած մարդացաւ, գերեզմանին ապականութենէն ազատ ըլլար:

Գ. Բայց ո՞վ կրնայ խելք հասցընել նոյն փառաց: Թէ որ Աչք չէ տեսած, ականջ չէ լսած եւ մարդուն սիրտը չէ ինկած ինչ որ Աստուած զինք սիրողներուն համար պատրաստած է<sup>1</sup>, կրնա՞նք խելք հասցընել քեզի պատրաստածին. քեզի՝ որ հաւաքապէս բոլոր սուրբերէն աւելի սիրեցիր զանիկա:

Քու վայելած փառքդ ոչ միայն քու պատուոյդ մեծութեանը, այլ նաեւ քու արդեանցդ մեծութեանը համեմատ է:

Դ. Այս փառաց բարձրութիւնն ըմբռնելու համար, բաւական է մինակ մտածել՝ որ իր մայրն է, զորն որ Աստուած փառաւորած է:

<sup>1</sup> Ա. Կոր. Բ. 9:

Բայց ինչպէս սուրբերուն փառաց չափն՝ իրենց արդեանցը չափէն կ'առնուի, անանկ ալ քու փառացդ բարձրութիւնն աւելի քու առաքինութեանցդ բարձրութենէն կ'առնուի :

Յատուկ կարգ մը ունիս դուն երկինքը . բոլորովին յատուկ ու առանձին աստիճան մը կը կացուցանես, որն որ թէպէտեւ անսահմանաբար Աստուծմէ վար է, բայց Աստուծմէ զատ ուրիշ ամէն բաներէ խիստ վեր է :

Ե. Այելուչ էր որ անիկա, որուն Յիսուս իշխանութիւն տուաւ իրեն Տրամայելու, իրաւունք ունենայ Տրամայելու հրեշտակաց ու սրբոց :

Ո՛հ, ինչ եռանդամա՞ք ու իրարու հետ մրցելով՝ անոնք քեզի պատկանած պատիւն ու հնազանդութիւնը կը մատուցանեն :

Խիստ ուրախացած քու իրենց վրայ ունեցած իշխանութեանդ, անանկ սիրով կը ծառայեն քեզի, որ Աստուած ալ հաճութիւն կը դաննէ :

Անդադար կ'որհնեն զԱստուած, քեզի տուած բարեմասնութեանց ու շնորհաց համար ու անդադար կ'որհնեն զանիկա այն բարձր ու պատուական փառաց առաւելութիւններուն համար, որոնցմով զքեզ կը պատուէ :

Զ. Ի՛նչ ուրախութիւն ու ցնձու-



Թիւն կը յայտնեն իրենց՝ նոյն իսկ քեզի տուած օրհնութեանց մէջ: Ի՛նչ քաղցր սիրով կը սիրեն զքեզ:

Ո՛հ, ինչչափ կը փափաքին որ անանկ կատարելապէս ճանչնան զքեզ մարդիկ երկրիս վրայ, ինչպէս որ իրենք երկիրքը կը ճանչնան, որպէս զի ամէն մարդկան սրտերը քուկդ ըլլան ու ամէն տեղ զքեզ պատուեն:

Երկնաւոր Սիոնին սիրուն թագուհին, պիտի ունենամ սուրբերուն հետ քու որդւոյդ եւ քու գովութիւններդ երգելու երանութիւնը: Պիտի ըլլամ օր մը մասնակից քու բաժինդ եղող անպատում փափկութեանց:

Մարիամ: Է. Ո՛րդեակ, քու երջանկութեանդ գէժ կեցող ամէն արգելքները յաղթելու համար տալու պատերազմներուդ մէջ հոգի առնելու եւ հաստատուն կենալու համար, շատ անգամ միտքդ բեր այն յաւիտենական բարիքները, զորոնք Աստուած քու քաջասրտութեանդ ու հաստատութեանդ կը պատրաստէ:

Յաճախ մտածէ, որ ընդունելիքդ անանկ փառք մըն է, որ կրած ամէն նախատանացդ տեղ անսահմանաբար կը լեցընէ. անանկ գանձ մըն է, որ կրած ամէն խեղճութեանցդ տեղ անսահմանաբար կը լեցընէ.

Անանկ հանգիստ մըն է, որ կրած

բորոր աշխատանացդ տեղ անսահմանաբար կը լեցընէ ու անանկ մխիթարութիւն մըն է, որ կրած բորոր չարչարանացդ տեղ անսահմանաբար կը լեցընէ:

Ինչպէս որ մինակ Աստուած է մեծ, անանկ ալ մինակ Աստուած կրնայ մեծ ու ճշմարիտ վարձք տալ: Գժոխքին մէջ իբրեւ Աստուած կը պատժէ ու երկնից մէջ իբրեւ Աստուած կը վարձատրէ:

Ը. Ո՛րդեակ, թէ որ քու փրկութեանդ գործքն երանաբար դլուխ կը հանես, զԱստուած կը տեսնես, կը ստանաս ու կը սիրես, ու երբեք չես ձանձրանար զանիկա տեսնելէն, ստանալէն ու սիրելէն, ինչու որ Աստուած՝ թէպէտ եւ իր նկատմամբ միշտ նոյն է, սակայն երանելեաց նկատմամբ միշտ նոր է:

Երկնից զմայլելի բնակութեան մէջ յաւիտենական զուարճութիւն կայ առանց ցաւոց, խնդութիւն՝ առանց տրտմութեան, հանգիստ՝ առանց նեղութեան, խաղաղութիւն՝ առանց վախի ու վայելք՝ առանց ձանձրութեան:

Հոն Աստուծոյ կամքէն զատ ուրիշ կամք եւ ուրիշ յօժարութիւն չկայ, ամէն բանի մէջ Աստուած ամէն բան է: Երանելիներն ամէն բան ի նմա կը գտնեն: Անոր հետ ու անոր պէս հարուստ, զօրաւոր ու երջանիկ են:

Աշխատէ, ո՛րդեակ, անդադար աշ-

խատէ, որպէս զի այս երջանկութիւնն  
ընդունիս: Մ'ըսեր թէ Այսչափ եր-  
կայն ատեն է որ կը պատերազմիմ, ար-  
դէն շատ յաղթութիւններ ըրի, բաւա-  
կան չէ: Մինակ անիկա կը փրկուի, ով  
որ ի սպառ կը համբերէ<sup>1</sup>:

Ծառան: Թ. Ո՛վ կոյս, որ Յիսուսէն  
ետքն իմ յոյս ու իմ կեանքս ես, խըն-  
դրէ ինձի համար հաստատութիւն Աս-  
տուծոյ ծառայութեան մէջ եւ աս աք-  
սորանքէս ետքը ցուցուր ինձի քու որ-  
դիդ զՅիսուս:

Թէ որ իր շնորհաց օծութիւնը մինակ  
կանխաճաշակ մըն է երկնից, որով հո-  
գին անոր քաղցրութեան ճաշակը  
կ'առնէ, հապա ինչ պիտ'որ ըլլայ զա-  
նիկա տեսնելն ու ստանալը:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Յովհաննոս-Իրանոս-Թեանը վրայ, որուն Յիսուս  
մայր գոտաւ յՄարիամ, որ Իրանոս-Թեան մաս-  
նակից էն ասին շրիստոսիայ:

Ծառան: Ա. Ո՛վ մայր Աստուծոյ ի-  
մոյ, ինչ երանութիւն էր Յովհաննոս,  
երբոր՝ Յիսուս իր մեռնելու ատեն, զա-  
նիկա ընտրեց, որպէս զի քու քովդ նոյն  
իսկ իր տեղը բռնէ:

Անիկա քու որդիդ եղաւ, դուն ալ  
անոր մայրն եղար: Ո՛հ, իրաւամբ աւե-

<sup>1</sup> Մատթ. ժ. 22:

տարանին մէջ, Յիսուսին սիրած աշակերտը կը կանչուի :

Իր Յիսուսի յարուսն ու քեզի հետ մինչեւ Գողգոթա անոր ետեւէն երթալու անյողող հաստատութիւնը, զինք ասանկ մեծ շնորհաց մը արժանի ըրին :

Արնա՞ր իր աստուածային վարդապետն իր մեռնելու ատեն անոր աւելի պատուական ժառանգութիւն մը ձգել : Բայց միանգամայն ինչ շնորհակալութեամբ ինքն ալ նոյնն ընդունեցաւ :

Բ. Ինչ խորին մեծարանք, ինչ կատարեալ հպատակութիւն քու կամացդ եւ ինչ յարատեւ ջանք կը ցուցնէր, Յիսուսին՝ իրեն ըրած շնորհաց համեմատ գանուելու համար :

Գուն ալ որչափ մտրդասիրութեան ու որչափ սիրոյ նշաններ կը ցուցնէիր իրեն : Ամէն ժամ փորձով կ'իմանար թէ ինչ երջանկութիւն է քեզի հետ ըլլալ :

Ո՛վ երանելի աշակերտ Յիսուսի, երանելի որդի ամենասիրելի ու ամենասուրբ մօր, քու երանութիւնդ ձեռք բերելու համար պատրաստ եմ ամէն ճախորդութիւն քաշելու, քու փառքդ ձեռք բերելու համար ամէն արհամարհանք կրելու, եւ քու գանձդ ձեռք բերելու համար ամէն երկրաւոր թաղերը կորսնցրնելու :

Մարիամ: Գ. Յիսուս՝ իր մահուան ա-  
տեն մինակ իր սիրելի աշակերտը չտը-  
աւ ինձի որդի: Երբոր Յիսուս իրեն ը-  
սաւ. Ահա քու մայրդ, ու ինձի ըսաւ.  
Ահա քու որդիդ, անիկա՝ զքեզ ու ա-  
մէն քրիստոնէաները կը ներկայացընէր:

Իրօք ալ, սրբեակ, իմ սրտիս մէջ քու  
վրադ անանկ սիրոյ զգածումներ ունիմ,  
ինչպէս ճշմարիտ մայր մը իրեն սիրելի  
տղուն վրայ կրնայ ունենալ:

Արդ, ջանա՛ սիրելի աշակերտին պէս,  
աղէկ որդւոյ մը պարտքերը կատարել  
ու յարատեւ հաւատարմութեամբ ինձի  
հետ միացիր:

Մանաւանդ ջանա՛ որ արժանի ըլլաս  
քու մօրդ սիրոյն, անանկ անմեղ ու  
սուրբ վարքով մը, որն որ իրեն պատիւ  
ըլլայ:

Ծառան: Գ. Ո՛վ մայր իմ, թէ որ  
զքեզ երբեք կը մոռնամ, աջ ձեռքս  
ինձի անպիտան ըլլայ: Թէ որ միշտ  
զքեզ իմ մտքիս մէջ ներկայ չեմ ու-  
նենար, լեզուս քմացս կպչի<sup>1</sup>:

Ի՛նչ պատիւ է ինձի որ Յիսուսին  
մայրն իմ մայրս ալ ըլլալու կը զիջանի:  
Մեծ երանութիւն էր ինձի, թէ որ  
քու ամենէն պզտիկ ծառայիցդ մէջ զիս  
յանձն առնէիր ընդունիլ:

Բայց որովհետեւ դուն մարդասի-

<sup>1</sup> Սաղմ. ՃԼԶ. 5. 6:

լուծեամբ ինծի մայր կ'ուզես կոչուիլ,  
ես ալ սաստիկ սրտի ուրախութեամբ  
ու սաստիկ շնորհակալութեան զգած-  
մամբ կ'ընդունիմ քու որդիդ կոչուիլ:

Ե. Ի՞նչ մեծ փառք է Մարիամայ  
որդի կոչուիլ: Այս փառաւոր անունը՝  
մարդիկնեւուն մէջ ամենէն ընտիր եղած  
պատուանուններէն աւելի կ'ընտրեմ:

Գուն իմ մայրս ես: Ի՞նչ անհամեմատ  
բարիքներ կը բերէ ինծի այս երջանիկ  
որդեգրութիւնը, որով ահրելի կ'ըլլամ  
դժոխոց:

Այնչափ երկայն ատեն Աստուծոյ ա-  
պերախտ ըլլալու համար ամէն պատ-  
ժոյց արժանի եմ. կը խոստովանիմ որ  
ոչ թողութեան ու ոչ շնորհաց արժա-  
նի եմ. սակայն անոր ողորմութենէն ա-  
մէն բան կը յուսամ, երբոր կը մտածեմ  
որ դուն իմ մայրս ես:

Գուն իմ մայրս ըլլալդ ցուցրցիր, ինչ-  
պէս կը կարծեմ՝ անկեղծութեամբ Աս-  
տուծոյ ծառայութեանը դառնալու  
համար ինծի շնորհք ընդունելով: Պսակէ  
քու մայրենի սէրդ յարատեւութեան  
շնորհք ալ ընդունելով:

Զ. Արաս մօր սիրտ ունեցիր, որն  
որ իր որդւոյն վրայ՝ նոյն իսկ արժա-  
նի չեղած ատեն սիրոյ զգածումներ  
կ'ունենայ:

Մայր իմ, նոյն իսկ դուն քեզի մխի-



Թարութիւն տուր, ասկէ ետքը զիս ա-  
նանկ որդւոյ մը պէս տեսնելով, որն որ  
Յիսուսի ու քեզի ունեցած հաւատար-  
մութեամբը քուկին իրեն վրայ ունեցած  
մայրենի սիրոյն անարժան չըլլայ:

Գ Լ Ո Ի Խ Ե .

Մեր Մարիամայ սիրոյն վրայ:

Ա . ԱՍՏՈՒԾՈՅ՝ բանի մը վրայ ունե-  
ցած յարգական համարումը միակ կա-  
նոն է, որուն նայելով կրնանք մենք ալ  
նոյն բանն ապահովութեամբ յարգել:

Որպէս զի միտք առնես, թէ ինչ գա-  
ղափար պիտի ունենաս Մարիամայ վրայ,  
եւ մինչեւ ինչ աստիճան զանիկա պիտի  
սիրես, նայէ Աստուծոյ անոր վրայ ու-  
նեցած համարման ու անոր ցուցրցած  
սիրոյ նշաններուն:

Իմ հարսերուս բազմութիւնն անթիւ  
է, կ'ըսէ Հոգին սուրբ<sup>1</sup>: Բայց մէջերնէն  
մէկը կայ, զորն որ մէկալներէն աւելի  
ամէն առաքինութիւններով լեցուցի:

Արդ, ասանկ առանձին կերպով սի-  
րուած հարսը, պէտք է որ մեր սրտերուն  
մէջ Աստուծմէ ետքը բացարձակ տիրէ  
ու անոնց ամէն զգածումները գրաւէ:

Ինչպէս որ Աստուծոյ անոր վրայ ունե-  
ցած սէրը զինք շարժեց այն արտօնու-  
թիւնները տալու, որոնցմով ուրիշներէն

<sup>1</sup> Երգ . Զ . 7, 8:

մեծ եղաւ, անանկ ալ մեր անոր վրայ ունեցած սէրը՝ պէտք է որ զանիկա Աստուծմէ ետքը մեր սիրոյն նպատակներուն ամենէն մեծն ընէ:

Բ. Աստուած զանիկա այնչափ սիրեց որ իրմէ ետքը առաջին կարգը տուաւ անոր երկրիս ու երկնից մէջ: Թէ երկինքն ու թէ երկրիս վրայ Աստուծմէ ետքը մեր յարգանացն ու մեր սիրոյն աւելի արժանաւոր բան մը չկայ:

Անոր համար բոլոր արդարները միշտ իրենց սրտին մէջ, Յիսուսէն ետքը, առաջին տեղը տուին անոր:

Գ. Սուրբ հարք կ'ըսեն թէ պարապ տեղ մէկն՝ Որդին կը սիրեմ, կ'ըսէ, թէ որ մայրը չսիրէ, եւ թէ այս երկու սէրերն իրարմէ չեն բաժնուիր:

Ս. Աստուածածնայ սէրն իբրեւ նախասահմանութեան ապահով նշան ու շնորհաց ամենէն պատուական պարգեւներէն մէկը կը մտածեն:

Դ. Բայց նոյն իսկ Մարիամայ մեղի ունեցած սէրը, մեր սիրաւ չնյորդորեր անդադար զանիկա սիրելու:

Մարիամ մեր պիտոյիցը միտ կը դնէ, մեր վիշտերը կը զգայ, մեր խնդիրքը կը լսէ, մեր պակասութեանց կը համբերէ ու մեր ապերախտութիւնը կը մոռնայ: Ի՞նչ ջանք պէտք ենք ունենալ անոր փոխադարձ սիրոյ նշան ցուցնելու համար:

Ջանանք՝ իրեն հաճոյ ըլլալու առիթ-  
ները ձեռքէ չփախցընել : անոր ծառա-  
յութեան մէջ բան մը մեզի պզտիկ չերե-  
ւայ : Աստուծոյ մօրն ու աշխարհքիս  
թագուհւոյն ծառայութեանը վերաբե-  
րած ամէն բան մեծ է :

Ե . Ե ուտ ու արագ ըլլանք անոր  
ջերմեռանդութեան ու նաեւ ան ամէն  
բաներու մէջ, որոնք կրնան օժանդակել  
որ ուրիշները զանիկա պատուեն ու սիրեն :

Ամէն օր ճշդիւ մատուցանենք անոր  
մեր շրթանց տուրքն ու սրտից մեծա-  
րանքն ու մեզի փառք սեպենք անոր ծա-  
նօթ ծառայիցը մէջ ըլլալը :

Զ . Յաճախ մեր սիրտն ու միտքն  
անոր աթոռը վերացընենք, կամ անոր  
մեծութեանց ու կատարելութեանց վրայ  
զմայլելու համար եւ կամ անոր պաշտ-  
պանութիւնը հայցելու համար :

Անոր առաքինութեանց նմանելով՝  
զանիկա պատուելու մտք ողորմութիւն  
եւ ուրիշ եղբայրսիրութեան գործքեր  
ընենք ու պահք եւ ուրիշ մահացուց-  
ման կրթութիւններ կատարենք :

Անոր տօնի օրերն աւելի սրբութեամբ  
կատարելու համար՝ Հաղորդութեան  
մերձենանք, եւ երբեմն, եթէ ձեռքեր-  
նէս կու գայ, եկեղեցին պատարագ մա-  
տուցանել տանք Աստուծոյ՝ անոր բրած  
շնորհացը շնորհակալութեան համար :

Հատ անդամ յաճախենք՝ անոր պատուոյն համար Աստուծոյ կանգնուած եկեղեցեաց . իր պատկերքն ու իրեննուիրուած տեղերն ու անձինքը յարգենք :

Է. Չեռքերնէս եկածին չափ յաճախ ներկայ գտնուինք անոր բարեպաշտութեան համար եղած հասարակաց կրթութեանց ու այն քարոզներուն , որոնց մէջ կը գովուին անոր առաքինութիւնները , առանձնաշնորհութիւններն ու ջերմեռանդութիւնը , որով պէտք է լեցուն ըլլալ ամէն քրիստոնէի սիրտ :

Ասով՝ Մարիամայ որդին իր սէրն անոր կը ցուցնէ ու անոր սէրը կը շահի :

Ը. Ո՛վ Մարիամ , մարդկան հզօր պաշտպանն ու մայրը , կը տեսնես ահա իմ սրտիս մէջ ունեցած անկեղծ յառաջադրութիւնս՝ այս սուրբ կրթութիւններն ու գործքերը ճշդութեամբ ու հաւատարմութեամբ կատարելու :

Շնորհակալ եմ Աստուծոյ , քու վրայինձի շնչած սիրոյ զգածումներուն համար : Նոյն զգածումնիքն ինձի շնչելը՝ նշան մըն է իրեն ինձի ունեցած սիրոյն :

Քու հաւատարիմ ծառայութեանդ մէջ՝ կ'ուզեմ քու եռանդնուտ ծառաներուդ ու որդւոցդ հետ մրցիլ :

Երանի թէ կարենայի ասոր մէջ նոյն իսկ հրեշտակաց հետ մրցիլ , սակայն այս երանութիւնը մինակ երկինքը կ'ըլլայ :

Մարիամայ սրբառոյն՝ իր մօրն արատելաբեանցն  
 և փարայը համար սանինալու նախանշախըն-  
 որոնբեան վրայ :

Մարիամ : Ա . ՈՐԴԵԱԿ , ես քու մայրդ  
 եմ ու իմ մայրութեանս ցոյցը հանա-  
 պազօրեայ փորձերով քեզի կու տամ :

Գուն իմ որդիս ես , ու ըստ այսմ  
 ինձի մեծարանք կը մատուցանես . քու  
 փորձութեանցդ ու վշտացդ մէջ զիս  
 օգնութեան կը կանչես ու իմ Յիսուսի  
 քով ունեցած կարողութեանս վրայ կը  
 յուսաս :

Բայց քու սէրդ ինձի յայտնելու մի-  
 ջոցներուդ մէջ՝ կայ մէկ միջոց մը , որուն  
 վրայ խիստ անփոյթ ես :

Ծարասն : Բ . Սիրելի մայր , ճանչցօւր  
 ինձի նոյն միջոցը : Ա՛ռ զեմ ջանալ իմ  
 քեզի ունեցած ամէն պարտքերս լեցը-  
 նելու :

Մարիամ : Գ . Ըստ բաւականին ետե-  
 ւէ չես ըլլար իմ պատիւս ու փառքս  
 յառաջ տանելու : Մանաւանդ թէ եր-  
 բեմն կ'երեւայ որ կը դժուարիս իմ հա-  
 կառակօրդներուս դէմ ինձի ջատագով  
 ըլլալու :

Իմ քեզի համար ունեցած նախան-  
 ճախնդրութիւնս քեզի օրինակ սն քու  
 մօրդ շահը եռանդեամբ պաշտպանելու

եւ զանիկա փառաւորել, պատուել ու սիրել տալու համար:

Բաւական չէ՝ Յիսուսէն ետքը՝ քու սիրադ ինձի տալդ, թէ որ ուրիշներուն սիրտն ալ ինձի շահելու պատեհ առիթներն ալ աղէկ չես գործածեր ու վաստակիր:

Ո՛րդեակ, չես տեսներ հերետիկոսութեան իմ պաշտօնս ջնջելու եւ կամ նուազցրնելու համար թէ յառաջ ու թէ հիմակ շարունակ բրած ջանքը:

Արդ քեզի կը վայլէ՝ այս նախատինքները ձեռքէդ եկածին չափ շիտկել:

Ծարան: Գ. Ստոյգ է, սուրբ Այս, դժոխքն իսկզբանէ քեզի գէժ՝ կը գոռար: Մարիամայ անունը, այն բոլոր հաւատացելոց համար պատուական ու քաղցր անունը, միշտ ատելի էր դժոխոց:

Գուն այն կիինն ես, որուն համար Աստուած՝ աշխարհքիս սկիզբէն կ'ըսէր թէ որ մը պիտի ջախջախէ օձին գլուխը<sup>1</sup>:

Այս է ահաւասիկ դիւաց քեզի գէժ ունեցած ատելութեան սկզբնապատճառը:

Որովհետեւ կը բաղձան ամէն մարդ դատապարտութեան ձգել, կ'ուզեն որ ամենեւին մէկը քեզի չգիմէ. ու թէ որ ձեռքերնէն դար, մեր քու վրադ եւ մահաւանդ քու ծայրագոյն Տիրոջ քով ու-

<sup>1</sup> Ծնն. Գ. 15:



նեցած կարողութեանդ վրայ ըմբռնած բարձր գաղափարը մեր սրտէն կը ջնջէին :

Ե. Մեծ փառք է Մարիամայ, որ մինակ հերետիկոսներն իրեն դէմ կ'ելլեն ու անոնք մինակ իր թշնամիներն, որոնք որ Յիսուսին ալ թշնամիներն են :

Աշտարակ դաւթեան, որմէ հազար վահան կախուած է<sup>1</sup>, քու թշնամեացդ խորտակած զէնքերը, միշտ իբրեւ քու յաղթութեան նշաններդ կը փայլին :

Նաեւ Աստուած միշտ եռանդնոտ ջատագովներ ու պաշտպաններ կը հանէ քու փառացդ : «Չէ, դժօխքի դռներն երբեք զքեզ պիտի չյաղթահարեն», :

Զ. Ի՛նչ շնորհակալութիւն պէտք է որ ընեմ Աստուծոյ, որ ինձի ճշմարիտ եկեղեցւոյ ծոցը ծնանել տուաւ, որուն մէջ զքեզ ճանչնալու եւ սիրելու երանութիւնն ունիմ :

Բայց, մայր իմ, թէ որ զքեզ կը սիրեմ, պէտք է որ շահիդ պաշտպան կենամ ու քեզի փառք աւելցրնելու առիթներն աղէկ գործածեմ :

Արդ, ասկէ ետքը, ձեռքէս եկածին չափ, եռանդեամբ պիտի ջանամ քու ծառայիցդ թիւն աւելցրնելու :

Է. Առիթ պատահած ատեն՝ իմ ազգականներս, բարեկամներս ու ճան-

<sup>1</sup> Երգ. Գ. 4 :

չուորներս պիտի յորդորեմք քու պատուոյդ համար ջերմեռանդական գործքեր ընելու եւ անոնց հետ քու վրադ խօսիլն իմ զուարճութիւնս պիտի ընեմ :

Թէ որ իմ խօսքերովս չեմ կրնար, դոնէ օրինակովս պիտի ջանամ անոնց հեղգ սրտին մէջ քեզի վայլած սէրը բորբոքելու :

Բայց ամենէն աւելի պիտի չլծողում երբէք որ իմ ներկայութեանս առջեւ զքեզ անարդէն : Ա՛հ, ո՛վ որ զքեզ չիճանչնար, ճանչցուելու արժանի չէ : Չեմ ուզեր բնաւ անանկ բարեկամ մ'ունենալ, որն որ զքեզ չսիրէ :

Ը . Ա՛ղօթեմ Աստուծոյ որ ամէն մարդկան սիրտն իր շնորհքը սփռէ, որպէս զի ամէնն ալ Քրիստոսի Տեառն ծանօթութեան ու սիրոյն հասնելով, ճանչնան ու սիրեն նաեւ իրենց ընդհանուր մայրը :

Արնան մարդիկ սէր ու մեծարանք չունենալ այն անձին վրայ, որն որ ի յաւիտենից Աստուծոյ հաճութեանը նիւթ եղած է :

### Գ Լ Ո Ի Խ Է .

Սուրբ Աստուծոյ Աստուծոյ քով՝ մարդկան նկարմամբ անեցած խորհուրեան վրայ :

Ա . ՍՄԱՐԻԱՄ յաւիտենական Հօր սիրելի դուստրն է, Որդւոյն մայրն ու

Հողւոյն սրբոյ հարսն է: Թէ որ աս խօս-  
քերուն իմաստն ըմբռնես, անանկ դա-  
ղափար մը կ'ունենաս անոր կարողու-  
թեան վրայ, որ վրան աւելի բան մը չի-  
կրնար աւելցուիլ:

Երկնաւոր Հօր անարատ դուստրը ու  
անոր առջեւն՝ ամբողջապէս առնուած  
ամէն արարածներէն կատարեալ ըլ-  
լալով՝ ինչ աղղեցութիւն չիկրնար ընել  
անոր վրայ:

Աստուած՝ երկնից մէջ անոր անանկ  
կարողութիւն մը տուաւ, որ իր յառա-  
ջագոյն երկրիս վրայ անոր տուած շնոր-  
հաց լրութեան հաւասարեցաւ:

Բ. Մարիամ անանկ ճշմարտապէս  
մայր ըլլալէն ետեւ մարդացեալ Աս-  
տուծոյ, ինչպէս որ մեր մայրն են պն  
կանայք, որոնք զմեզ աշխարհք բերին,  
ինչպէս կրնայ իր որդին իրեն չլսել:

Ինք կրնայ իր աղօթքովն ան ամէն  
բան, ինչ որ որդին ինք իրմէ կրնայ.  
ասիկա սրբոց հարց միաբան վճիռն է:

Տարակուսիլը՝ թէ արդեօք կրնայ Մա-  
րիամ Աստուծմէ մեզի պէտք եղած  
շնորհքներն ընդունիլ, է տարակուսիլ՝  
թէ արդեօք որդին իր մայրը կը պատուէ:

Գ. Սողոմոն Բերսաբէին ըսաւ, թէ  
կը վայլէ որ քեզի լսեմ, վասն զի իմ  
մայրս ես<sup>1</sup>: Մարիամ՝ մեզի համար ա-

<sup>1</sup> Գ. Թագ. Բ. 20:

ղաչած ատեն, կրնայ մի այլազգ պատասխան մ'ընդունիլ անանկ ատեանի մը առջեւ, ուր ինք բիւր անգամ աւելի սուրբ ու արժող իրաւունք ունի :

Երբոր սրբոց բարեխօսութեամբ բան մը կը խնդրենք, անոնց՝ Աստուծոյ ունեցած սէրն ու մեր անոնց վրայ ունեցած վստահութիւնը զԱստուած կը շարժեն մեր աղաչանաց քաղցրութեամբ լսելու : Բայց երբոր Մարիամայ բարեխօսութեամբ կը խնդրենք, նոյն իսկ իր աստիճանն ու աստուածամայրութեան պատիւը մեզի համար կը բարեխօսեն :

Գ. Մտածէ, որ նոյն իսկ Աստուած մ'ուզեց երկրիս վրայ անոր հնազանդ ըլլալ : Արդ, հիմայ նուա՞զ յարգութիւն կը ցուցնէ իրեն, երբ երկնից արքայութեան մէջ իրեն հետ կ'իշխէ :

Չանիկա իր ամէն շնորհաց վրայ դրաւ, զորոնք անոր ձեռքովը մեզի կը բաշխէ :

Սրտալիր սիրով սիրուած հարսի մը յատուկ է, որ իր փեսային քով ամէն բանի կարող ըլլայ : Մարիամ ալ, որ Հոգւոյն սրբոյ սիրելի հարսն է, կրնայ զանիկա մեզի զիջեցնել ու անկէ մեզի համար մեծամեծ շնորհքներ ընդունիլ :

Ե. Գարձեալ, Աստուած զինքը երկնից ու երկրի թագուհի դրած ըլլալով, այս պատուոյն համեմատ իրեն կարողութիւն ալ տուած է :

Թագուհի մը, [Թագուհւոյ՝ դատարկ  
անուն կ'ունենայ, [Թէ որ ողորմելիներու  
չիկրնար օգնել ու [Թշուառները չիկրնար  
երջանկացրնել :

Աստուած, որ ատեն ատեն սուրբերու  
աղօթքովը մեծամեծ հրաշքներ ըրած  
է, աւելի դիւրաւ կ'ընէ նոյներն անոնց  
[Թագուհւոյն աղօթքովը :

Զ. Հրեշտակներէն ու մարդիկներէն  
փառաւորուած Աոյս, որովհետեւ գիտեմ  
քու Աստուծոյ քով ունեցած կարողու-  
թիւնդ, զինքս բոլորովին քու պաշտ-  
պանութեանդ տակը կը դնեմ,

Որն որ անանկ պաշտպանութիւն մըն  
է, որ երբէք չիպակսիր, ամենակարող  
է, ամէն արդեւքներու կը յաղթէ ու  
անանկ ընդհանուր է, որ մէկը անկէ ի  
բաց չ'առնուիր :

Իմ Հօրս դէմ յանցաւոր ու ինք զինքս  
անարժան ըրած ըլլալովս՝ որ Աստուած  
ինծի լսէ, զքեզ ինծի միջնորդ կ'ըն-  
տրեմ անոր քով :

Է. Իմ Աստուծոյս մայրը, հակէ իմ  
վարմանցս վրայ, իմ ընթացքս ամէն  
ատեն ու ամէն տեղ ուղղէ, վասն զի  
ամէն վտանգներ, [Թէ մարմնաւոր եղեր  
են եւ [Թէ հոգեւոր, ամէն տեղ կը  
գտնուին :

Մասնաւորապէս քու պաշտպանու-  
թիւնդ կը խնդրեմ այն որոշիչ օրուան

Համար, որմէ ետքը՝ ալ ժամանակ չկայ  
ու յոյս չկայ շնորհաց, այն ճգնական ու  
որոշիչ ժամուն համար, որն որ իմ ըն-  
թացքս պիտի կատարէ ու յաւիտենա-  
կանութիւնս պիտի սկսի :

Ար խնդրեմ քու պաշտպանութիւնդ,  
չէ թէ քու վրայ կենդանի յոյս ունե-  
նալով՝ ասկից ետքը յանցաւոր դատար-  
կութեան մէջ քնանալու համար, վասն  
զի ասիկա քու ծառայիցդ հոգին չէ,

Հապա, որպէս զի՝ Յիսուսին շնորհաց  
օգնութեամբը, զորն որ կ'աղաչեմ որ  
ինձի ընդունիս, քու խնամոցդ գործակից  
ըլլամ ու քեզի հետ միաբան գործեմ ու  
կարենամ հասնիլ այն յաւիտենական  
երջանկութեան բնակարանը, ուր կ'ու-  
զես դուն տանիլ անամէնքը, որոնք քեզի  
կը ծառայեն :

### Գ Լ Ո Ի Խ Ը .

Ամենա...-րէ կո...-ին մեր վրայ...-նեցած քեա-  
սիրո-թեան վրայ :

Ծառան : Ա . ԲԱԻԱԿԱՆ է, սուրբ  
կոյս, բաւական է որ մենք քու առջեւ  
դնենք մեր խեղճութիւններն ու կարօ-  
տութիւնները ու դուն շուտ մը կը ջա-  
նաս Յիսուսէն մեզի սփոփութիւն ըն-  
դունելու :

Ի՞նչպէս հոգ չունենաս մեր վրայ, երբ  
կը մտածես թէ մեզի համար էր որ Աս-



տուժոյ Որդին քու արգանդիդ մէջ՝ մեր  
մարմնոյն նման մարմին առաւ :

Յիսուսին մայրն ըլլալով, չես մոռ-  
նար Յիսուսին եղբարքը, անդամներն ու  
ժառանգակիցները :

Բ. Ինչ տխուր ու խեղճ վիճակի մէջ  
ալ որ գտնուինք, դուն միշտ մեր օգ-  
նութիւնն ես, ինչու որ քու սէրդ ամե-  
նուն վրայ կը տարածուի :

Եկեղեցւոյ տարեգրութիւններն ան-  
համար վկայութիւններ կու տան քու  
թէ հզօր կարողութեանդ ու թէ մտա-  
դիր կարեկցութեանդ վրայ :

Քաղաք Աստուծոյ<sup>1</sup>, ամէն տեղ քու  
գովեստդ կը հնչէ՝ այնչափ շնորհաց  
համար՝ զորոնք մարդկութիւնը քու ձեռ-  
քովդ ընդունեցաւ : «Քու վրագ զար-  
մանալիքներ կը պատմուին» :

Գ. Ո՛հ, մեր կրած շատ խեղճու-  
թեանց վրայ կը տրանջենք, բայց շատ  
անգամ կրած խեղճութիւններնէս խիստ  
աւելի մեծերը կը կրէինք, թէ որ քու  
աղաչանքովդ Աստուծոյ արդարութիւնը  
բռնած չըլլայիր :

Մեր շատ գժբախտութիւնն ալ անկից  
է, որ չենք մտածեր Աստուծոյ քով քու  
օգնութիւնդ խնդրելու :

Ասիկա չենք մտածեր, սակայն եկե-  
ղեցին մեր մանկութենէ մեզի սովորեցու-

<sup>1</sup> Սաղմ. 22. 3 :

ցած է զքեզ Մմխիթարիչ վշտացելոց  
ու Օգնական քրիստոնէից կանչելու :

Իրօք ալ անանկ ես : Ո՞վ կրնայ այն-  
չափ ապերախտ ըլլալ, որ համարձակի  
ըսելու թէ զքեզ օգնութեան կանչած  
ըլլայ ու դուն իրեն լաճ չըլլաս :

Գ. Թէ որ քու միջնորդութիւնդ  
մեր խնդրած շնորհքն ամէն ատեն Աս-  
տուծմէ չ'ընդունիր՝ անանկ պատճառ-  
ներու համար, զորոնք մենք հասկընալու  
ետեւէ պիտի չըլլանք, դոնէ մեզի կ'ընդ-  
ունի ամէն ատեն շնորհք համբերու-  
թեան, հնազանդութեան ու Աստուծոյ  
կամայը համակերպութեան :

Աստուած զքեզ ստեղծելու ատեն,  
որոշեց որ դուն մեր փաստաբանը, մեր  
ապաւէնը, մեր մխիթարութիւնն ու մեր  
մայրն ըլլաս : Անոր համար քեզի մեծ  
հակում տուաւ ողորմութեան ու խիստ  
մեծ ողորմութեան :

Ե. Յիսուս քու ծոցդ ըրած երկայն-  
ժամանակեայ բնակութիւնն՝ առանց իր  
սրտին նկարագիրը քու սրտիդ հաղոր-  
դելու չըրաւ :

Գուն՝ որ ան աստուածային օրինակին  
քաղցրութեան ու մարդասիրութեան  
պատկերն ես, զորն որ երեսուն՝ւերէք  
տարի աչքիդ առջեւն ունեցար, իրեն  
պէս կ'ախորժես բարիք ընել<sup>1</sup> :

<sup>1</sup> Գործ. Ժ. 38 :

Այն փառաց դահին վրայ, ուր բարձրացուցած է զքեզ երկնից մէջ՝ Բարձրեալը, անոր գթութեանը կը նմանիս որն որ խիստ շատ անգամ պատժոյ տեղ, շնորհք կ'իջեցընէ մարդկան ու նոյն իսկ ամենէն ապերախտ մարդկան վրայ :

Զ. Ո՛հ, սուրբ կոյս, քու սրտիդ բարերարութեանը վրայ դատաստան ընելու համար, բաւական է որ իմ սրտիս նայիմ ու զննեմ այն զգածմունքը, զորոնք անոր վրայ տպաւորած են քու շարունակ ըրած բարերարութիւններդ :

Հաւատացելոց սրտին զգածմունքն՝ ամէն պատճառներէ աւելի զօրաւոր կերպով կը ցուցընեն քու բարութիւնդ :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ԶՄարիամ՝ օգնութեան խնդրու Վրայ :

Մարիամ : Ա . Ո՛րդեակ, ինչպիսի ճախող վիճակի մէջ ալ որ գտնուիս, զիս օգնութեան կանչէ ու ես քեզի համար կը բարեխօսեմ :

Ի՛նչ որ կը բաղձաս, բաւական որ բաղձացածդ Աստուծոյ փառացն ու քու փրկութեանդ հակառակ բան չըլլայ, ես Աստուծոյ կը խնդրեմ ու կ'ընդունիմ :

Ի՛նչ որ ինծոյ կը խնդրես միշտ անբաղձանքով խնդրէ՛ որ Աստուծոյ կամքը կատարուի : Ասանկ տրամադրութեամբ ինծի ըրած աղօթքդ անպտուղ չիմնար :

Կան քրիստոնեայք, որոնք կ'աղա-  
չեն ինձի, որ անանկ բան մ'ընդունիմ,  
որն որ՝ գիտեն թէ Աստուծոյ կամացք  
համեմատ չէ: Ի՞նչպէս կրնան ասանկները  
յուսալ որ իրենց աղօթքը լսուի:

Բ. Ոմանք ալ մինակ երկրաւոր բա-  
րեաց հարկաւորութիւն ունեցած ատեն-  
նին զիս օգնութեան կը կանչեն, իսկ  
չնորհաց բարիքներուն նկատմամբ բոլո-  
րովին անտարբեր են:

Իրենց համար Աստուծոյ առջեւ կ'ա-  
ղօթեմ նէ, չէ թէ խնդրածնին՝ որն որ  
իրենց վնասակար է՝ ընդունելու համար  
կ'աղօթեմ, հապա անանկ բան մը անոնց  
ընդունելու համար, զորն որ մտքերնէն  
չեն անցըներ որ խնդրեն, սակայն իրենց  
օգտակար է:

Անոնց համար վիշտ ու տառապանք  
կը խնդրեմ, որպէս զի ասոնցմով երկրէն  
բաժնուին ու երկնից վրայ խոկան:

Ամէն բանէ յառաջ պէտք է որ մէկն  
ինձմէ շնորհք խնդրէ դարձի ու փրկու-  
թեան, շնորհք առաքինութեան ու  
արդեանց մէջ աճելու: Ասանկ խնդիրք-  
ներ խիստ օժարութեամբ կը լսեմ:

Գ. Օ՛հ օգնութեան կանչողներուն  
համար՝ մինակ ան ատեն ժամանակաւոր  
բարիք կը խնդրեմ, երբոր կը տեսնեմ  
թէ նոյնն իրենց ճշմարիտ օգուտ պիտի  
պատճառէ: Գատի մը յաղթութիւն

կամ առատ հունձք մը երբեմն խիստ դէշ հետեւութիւն կը բերէ այն անձին, որն որ ինձի կ'աղաչէ որ նոյներն իրեն ընդունիմ: Երբոր մէկն յաջողութեան մէջ է, յաւիտենականութեան վրայ չի մտածեր:

Շատ հիւանդներ ինձմէ կը խնդրեն որ բժշկութիւն ընդունիմ, բայց ես իրենց համար միայն այն շնորհքները կը հայցեմ, որոնք հարկաւոր են հիւանդութեան ժամանակ:

Գ. Աս անանկ մայրերէն չեմ, որոնց սէրը զիրենք կը կուրցընէ ու կ'արդելէ, որ իրենց որդւոցը ճշմարիտ բարիքը չհոգան: Որդեակ, իմ քու վրադ ունեցած սէրս զիս չիկրնար մոլորեցընել:

Ես Յիսուսին քով մինակ ան բաները քեզի ընդունելու համար կը բարեխօսեմ, որոնք քեզի ամենէն օգտակարներն են թէ աս աշխարհքիս ու թէ անդիի աշխարհքին մէջ:

Ե. Աս համոզմամբ՝ վստահութեամբ իմ պաշտպանութեանս դիմէ: Դիմէ քու ամէն սր եւ իցէ վշտացդ մէջ:

Եւ սրով հետեւ այս վիշտերը խիստ յաճախ ու շարունակ են, անոր համար Յիսուսին անունէն ետքը, իմ անունս անդադար քու շրթանցդ վրայ ըլլայ: Յիսուսին անունէն ետքը, իմ անունս սրտիդ վրայ խորունկ քանդակուած ըլլայ:

Ծարաան : Զ . Մարիամ : Ինչ նուիրա-  
կան ու ինչպէս սիրելի ու քաղցր է աս  
անունը , զորն որ չիկրնար մէկը վստա-  
հութեամբ արտաբերել առանց օգուտ  
մ'ունենալու :

Երանի անոր , ով որ նոյնը շատ ան-  
գամ սիրով կը յիշէ , ջերմեռանդու-  
թեամբ կ'ողջունէ , անկեղծութեամբ  
կը պատուէ ու յաճախ օգնութեան կը  
կանչէ :

Յիսուսին անունէն ետքը , որն որ ա-  
մէն անուններէն վեր է , հաւատացելոյ  
համար ուրիշ յարգի , քաղցր ու սիրելի  
անուն մը չկայ :

Է . Աս անուան կոչմամբը՝ մեղաւորը՝  
ողորմութեան յուսով կը լեցուի , ար-  
դարն՝ աւելի եւս մեծ սէր , փորձու-  
թեանց մէջ եղողն՝ իր կրիցը վրայ յաղ-  
թութիւն ու վշտաց մէջ եղողը՝ համբե-  
րութիւն ու մխիթարութիւն կ'ընդունի :

Այս սուրբ անունը , Յիսուսին անու-  
նէն ետքը , իմ վշտացս մէջ՝ օգնու-  
թիւն , տարակուսանացս մէջ՝ խորհր-  
դատու , պատերազմներուս մէջ՝ զօրու-  
թիւն ու իմ ամէն քայլիս առաջնորդ  
ըլլայ :



Մարիամայ՝ ճանապարհս Ասորոյնս դարանալ ու  
 իողանիւն ընդունիլ ուղղ Ֆրանսոսոց ու  
 նիւալա Վարահոսիւն Վրայ :

Մարիամ : Ա . Ո՛րդեակ , դուն իմ վրաս  
 կատարեալ վստահութիւն չունիս : Եր-  
 բեմն քու հարկաւորութեանդ մէջ զիս  
 օգնութեան կանչելու կը յապաղես :  
 Երբեմն ալ անանկ կ'երեւայ որ կը կաս-  
 կածիս իմ քու վրագ ունեցած բարի  
 կամացս :

Կ'ուզեմ որ անանկ վստահութիւն  
 ունենաս վրաս , ինչպէս տղաք ունին ի-  
 րենց մօրը վրայ , որոնց սէրն ու բարու-  
 թիւնը կը ճանչնան :

Կ'ուզեմ որ ինծի դիմես ամէն ատեն ,  
 ամէն տեղ , ամէն հոգեւոր ու ժամանա-  
 կաւոր , հոգւոյդ ու մարմնոյդ , ծնողացդ  
 ու բարեկամացդ հարկաւորութեան ա-  
 տեն :

Ինծի կատարեալ վստահութիւնս ցու-  
 ցընել է , քանի մը քրիստոնէից բրածին  
 պէս , մինակ երբեմն երբեմն , իմ տօնիս  
 օրերն , աւելի ծանրակշիռ գործքերու  
 մէջ ու խիստ ստիպիչ հարկաւորութեան  
 ատեն իմ բարեխօսութեանս դիմել :

Բ . Մանկ՝ եկեղեցւոյ , որն որ գրե-  
 թէ Աստուծմէ բան մը չիխնդրեր առանց  
 իմ միջնորդութիւնս գործածելու :

Ամէն տեսակ շնորհաց համար ինծի  
կը դիմէ, ճանչնալով զիս իբրեւ անանկ  
մէկը, որուն ձեռքովն Աստուած նոյն  
շնորհքներն իր որդւոցը կու տայ:

Անոր վարմունքը միշտ Աստուծոյ  
հոգւոյն համեմատ է, նոյն վարմունքը  
քեզի կանոն ըլլայ: Անոր օրինակին  
պէս իմ վրաս մշտնջենաւոր, ընդհանուր,  
եռանդնոտ, քաղցր ու սիրալիւր վստա-  
հութիւն ունեցիր:

Աստուծոյ գնա Յիսուսով, բայց Յի-  
սուսին գնա անոր մօրը ձեռքով: Ես  
մէկ ապահով ճամբայ մըն եմ Յիսուսին  
երթալու, զանիկա դանելու եւ անկէ  
բարեկամաբար ընդունուելու:

Ծարձան: Գ. Թաղուհի երկնից, կը  
ճանչնամ քու կարողութիւնդ, կը ճանչ-  
նամ քու մարդասիրութիւնդ: Բայց  
ինչպէս նախատինք չես համարիր՝ ինծի  
պէս մեղաւորի մը վրայ այսչափ հոգ ու-  
նենալ:

Արնայ մի առանկ սուրբ, Աստուծոյ  
պատուոյն նախանձախնդիր ու կատա-  
րեալ Ադամ մը իմ վրաս քաղցր հայե-  
ցուած ընել:

Մարիամ: Գ. Որդեակ, ես «մեղաւո-  
րաց ապաստան», չեմ: Ես կը բարեխօսեմ  
ամենուն համար, որոնք ուզելով Աստու-  
ծոյ ծառայութեանը դառնալ, վստա-  
հութեամբ զիս օգնութեան կը կանչեն:

Աստուած՝ իմ անոնց հաշտութեանը համար ունեցած հոգէս շարժելով, երբէք իմ բարեխօսութեանս բան մը չէ զլացած :

Մանաւանդ թէ շատ մեղաւորներուն՝ աստուածային բարեկամութեան մէջ մտնելու համար՝ Աստուծոյ տուած միակ օգնութիւնն ու միակ միջոցն էս մնացած եմ :

Ե . Ո՛րչափ քրիստոնէից յանցանապը , որչափ որ մեծ ալ էին , թողութիւն ընդունեցայ : Ինծմէ խնդրեցին որ իմ պաշտպանութեամբս զանոնք ծածկեմ Աստուծոյ արդարութենէն , ես ալ զանոնք պաշտպանեցի , մինչեւ որ զանոնք իրենց դատաւորին հետ հաշտեցուցի :

Կայ մեղաւոր , որ միտքը դրած է մեղաց մէջ ապրիլ՝ վստահելով որ ես իրեն շնորհք կ'ընդունիմ մեղաց մէջ չմեռնելու : Ասանկ վստահութիւն՝ յանդուգն է ու ասանկ պահանջում մը ինծի նախատինք կը բերէ :

Բայց կայ մեղաւոր ալ , որ իր շղթայից ծանրութեան տակ կը հեծէ ու կ'ուզէ խորտակել . եւ որովհետեւ իր տկարութիւնը կը ճանչնայ , վստահութիւնն իմ վրաս կը դնէ : Ար յուսայ որ իմ բարեխօսութեամբս՝ զօրութեան շնորհք ու թողութիւն կ'ընդունի : Ասանկ մեղաւոր մը չվախնայ , թող դայ , մերձենայ

ինծի, շեմ մերժեր, հապա սիրով կ'ընդ-  
ունիմ :

Ծառան : Զ. Իմ Տիրոջ մայրը, երբ  
որ քու ձայնդ ականջս հասաւ<sup>1</sup>, իմ  
խռովութիւնս փարատեցաւ ու քու վրադ  
ունեցած վստահութիւնս ամէն ատեն  
ներէ աւելի զօրացաւ :

Իմ առջեւ այն աղանւոյն կը նմա-  
նիս, որն որ ջրհեղեղէն ետքը ճիթենւոյ  
ճիւղով, այսինքն՝ խաղաղութեան նշա-  
նով երեւցաւ :

Քու փրկաւէտ պաշտպանութեանդ  
տակն ա՛ն՝ սիրտը շարժած, ամչցած ու  
ստրջացած մեղաւոր մը, որն որ իր կե-  
նաց անառակութիւնները կ'ուզէ իր  
արեամբը ջնջել :

Ընդունէ՛ ինծի շնորհք՝ իմ բրած մե-  
ղացս վրայ դառնապէս լալու եւ աւելի  
մեռնելու, քան թէ այն մեղքերը դոր-  
ծելու, զորոնք կ'ատեմ :

Քու աշխարհք բերած պտղովդ մար-  
դկան ու Աստուծոյ մէջ խաղաղութիւն  
ըրիր : Իմ ու իմ խղճմտանացս, իմ ու իմ  
Աստուծոյս մէջ ալ խաղաղութիւն ըրէ :

Ո՛վ հզօր ու գթած Աոյս, որչափ շնոր-  
հակալութիւն պէտք ենք քեզի մատու-  
ցանել՝ այնչափ բարերարութեանց հա-  
մար, զորոնք քու միջնորդութեամբդ  
Աստուծմէ կ'ընդունինք :

<sup>1</sup> Ղուկ. Ա, 43, 44 :

Է. Ամենուն սիրտն՝ ամէն ատեն Քեզի նուիրուած ըլլայ. ամենուն բերանները բացուին ու Քեզի գովաբանութիւն Քարոզեն ու կատարեն:

Երկինքն երկրիս անդադար ըսէ, Սէր ու փառք Մարիամայ, երկիրն ալ անդադար երկնից պատասխանէ, Փառք ու սէր Մարիամայ յաւիտեանս եւ առ յապայ<sup>1</sup>:

Գ. Լ Ո Ի Խ ԺԱ.

Հրէշտակային ողջանորդութեան լրաց:

Ա. ԱՄԷՆ օր աս աղօթքը կ'ըսես ամենասուրբ Աոյսը օգնութեան կանչելու համար: Բայց միտ կը դնես թէ նոյն աղօթքն անորինչ փառք բերող ու Քեզի ալ ինչ մխիթարական ու խրատական բաներ կը պարունակէ:

Երբեմն խորաններու առջեւ քու մտածութեանդ նիւթ ըրէ նոյն աղօթքը, որպէս զի զանիկա ըսած ատենդ, անոր պահանջած յարգութեամբն ու մտադրութեամբն ըսես:

Բ. Ա'ողջունես զՄարիամ իրրեւ «Աի շնորհօք», : Ա'իմանաս թէ ինչչափ մեծութիւն կը ցուցնեն այս կարճ խօսքերը: Ասիկա ըսել է՝ թէ Մարիամ սրբարար ու գործունեայ շնորհք, գերբնական առաքինութիւններ ու Հոգւոյն սրբոյ բողբ պարգեւներն ունեցաւ:

<sup>1</sup> Մէք. Գ. 5:

Նոյն խօսքերն ըսած ատենդ, ուրախացիր անոր ունեցած պարզեւաց լրութեան վրայ, ու աղաչէ որ զքեզ մասնակից ընէ իր հարուստ դանձին:

Գ. Ղարձեալ կ'ըսես, "Տէր ընդ քեզ", Իրօք ալ Աստուած ուրիշ ամէն էակներէ ու նոյն իսկ արդարներէն վեր առանձին կերպով մը Մարիամայ հետ էր, բողբոլին յատուկ պաշտպանութեամբ ու անոր հոգւոյն ամէն կարողութիւններուն առաջնորդելով:

Նոյն խօսքերն ըսած ատենդ, եռանդագին ու անկեղծ բաղձանաց ներդործութիւն ըրէ՝ այս Առսին անհամեմատ երջանկութեանը մասնակից ըլլալու:

Ո՛հ, երբոր մէկը Տէրն իրեն հետ ունի, ալ աւելի ի՞նչ բանի կրնայ բաղձալ: Ի՞նչ բանի կրնայ յոյս չունենալ: Ի՞նչ բան կրնայ զանիկա տառապեցընել:

Դ. Ա՛ողջունես զՄարիամ իբրեւ ամէն "կանանց մէջ օրհնեալ", այսինքն անանկ առանձնաշնորհութիւններ ունեցող, զորոնք Աստուած ուրիշ մէկուն չէ տուած:

Ներքին զգածմամբ մը յայտնէ իրեն այն ուրախութիւնդ, զորն որ ունիս Աստուծոյ անոր ցուցրցած սիրոյն ու թէ երկրիս վրայ ու թէ երկինքն իրեն տրուած օրհնութեանց համար:

Ե. Ղարձեալ, սուրբ Եղիսաբէթին հետ կ'ըսես, "Օրհնեալ է պատու որո-



վայնի քո», : Մարիամայ Որդին իրօք օրհնեալ, երկրպագեալ ու փառաւորեալ է բոլոր տիեզերաց մէջ :

Վայրկեան մը ճաշակէ այն քաղցրութիւնը, զորն որ ասանկ մտածութիւն մը զՅիսուս սիրող հոգւոյն մէջ յառաջ կը բերէ :

Զ. Վարձեալ, սուրբ եկեղեցին կը սովորեցընէ, որ ամենասուրբ Աուսին աղօթես [Թէ «Բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորաց», : Եկեղեցին ասով կ'ուզէ քեզի սովորեցընել, [Թէ այնչափ մեղք դործելէդ ետեւ՝ արժանի չես որ աղօթքդ ընդունելի ըլլայ, բայց Մարիամայ աղօթքն ընդունելի կ'ըլլայ, [Թէ որ քեզի համար աղաչէ :

Այս, Աստուած անոր աղօթքը կ'ընդունի, վասն զի իր մայրն է : Անոր համար սուրբ եկեղեցին զանիկա քեզի նոյն անուամբ կանչել կու տայ, որն որ իրեն այնչափ սիրելի ու փառաւոր է :

Ասով՝ իբրեւ [Թէ կ'ըսես, «Սրբուհի Մարիամ», դուն «մայր Աստուծոյ», ես քու որդւոյդ քով ունեցած կարողութիւնդ անչափ է, ու այս կարողութիւնդ քու բարեբարութեանդ հետ միացած՝ իմ քու վրայ ունեցած յուսոյս հիմն է :

Է. Հունկ յետոյ, կ'աղօթես սուրբ Աուսին, «Բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորաց», այժմ եւ ի ժամու մահուան մե-

րոյ, : Բոլոր կենացդ մէջ շարունակ  
փրկութեան վտանգներ կը հանդիպին :  
Անոր համար շարունակ ասանկ հզօր  
պաշտպանութեան մը կարօտութիւն  
ունիս :

Բայց քու մահուանդ ատեն, երբ բո-  
լոր քու թշնամիներդ իրենց ամէն ճիգը  
կը թափեն զքեզ ի կորուստ մատնելու  
համար, աւելի եւս հարկաւոր է քեզի  
այս պաշտպանութիւնը :

Ստոյգ է ահրելի ժամանակ է մա-  
հուան ժամանակը. բայց Մարիամայ  
ճշմարիտ ծառայ եղողն երբեք իբրեւ  
անարգեալ չէ մեռած :

### Գ Լ ՈՒԽ ԺԲ .

Կենդանութեան արեւ Մարիամայ վրայ ասե-  
նալու վարահատութեան գիտժամաց վրայ :

Ծարաան : Ա . ՍՈՒՐԲ Կոյս, իմ փրկու-  
թեանս թշնամիները զիս պատած են,  
կը ջանան Աստուծոյ շնորհքն ու բարե-  
կամութիւնն ինձմէ վերցընել : Պաշտ-  
պանէ զիս անոնց յարձակմանց դէմ,  
ինձի յաղթութիւն ընդունէ :

Գնուստը Աստուծոյ զօրութեանց, թէ  
որ քու զօրութիւնդ իմ հակառակոր-  
դացս կը ցուցընես, շուտ մը իմ առջեւէս  
կը փախչին :

Հովերու եւ մրրկաց հրաման տուու-  
ղին մայրը, ինձի համար մինակ մէկ

խօսք մ'ալ որ անոր զրուցես՝ իմ սիրտս  
խաղաղութիւն կը դռնէ :

Լուսոյ ու զօրութեան Հոգւոյն հարսը,  
ընդունէ ինձի, որ ասանկ զարհուրելի  
թշնամեաց յաղթելու միջոցները տես-  
նեմ ու ձեռք առնեմ :

Բ. Իմ սրտիս ծանր նեղութեան մէջ  
քու գիրկդ կը մտնեմ, ինչպէս տղայ մը  
վախցած ատեն իր մօրը գիրկը կը դիմէ :

Ո՛րչափ մեղաւոր ու ողորմելի ալ ըլ-  
լամ, Յիսուս կ'ուզէ որ զիս իբրեւ քու  
որդիդ նայիս : Հիմակ ատենն է ցուցը-  
նելու՝ որ վրաս մայրական զգածում  
ունիս :

Աս շնորհքը քեզմէ կը խնդրեմ, չէ  
թէ իմ սիրոյս համար, որն որ քու խնա-  
մոցդ ամենեւին արժանի չէ, հապաքու  
Յիսուս որդւոյդ ունեցած սիրոյդ համար :

Գ. Աղքատներն իրենց կարօտու-  
թեան մէջ հարուստներուն կը դիմեն :  
Թաղուհի երկնից ու երկրի, կրնա՞ն քու  
բարերարութիւններդ հայցող կարօտե-  
լոյն աղօթքն առանց պտղոյ թողուլ :

Բայց երբոր ինձի համար կ'աղօթես՝  
որ իմ վրկութեանս թշնամւոյն որո-  
գայթիցը մէջ չեյնամ, միանգամայն  
աղօթէ, ս՛վ Աոյս, որ իմ անցած կենացս  
անօրէնութիւնները դառնապէս լամ ու  
թողութիւն ընդունիմ :

Դ. Ընդունէ ինձի թէ Յիսուսէն

ուրիշ տիրոջ մը երբէք չճառայելու բաղ-  
ձանացս կատարումն ու թէ անոր ան-  
հաշտ թշնամւոյն, այսինքն՝ աշխարհքին  
ճառայելով գործած մեղացս վրայ սաս-  
տիկ ցաւ մը :

Ես ըստ ինքեան ու իմ մեղքերովս  
ինչ ըլլալուս մի նայիր, հապա զիս գնող  
արեան գնովն իմ ինչ արժեւա նայէ :

Աստուած ուղեց որ Գողգոթա լեռան  
վրայ Յիսուսի մահուանն ականատես  
ըլլաս, որպէս զի անոր՝ մեղաւորներուն  
վրայ ունեցած զգածումը ժառանգելով,  
անոնց համար ողորմութիւն խնդրես :

Ե. Արբոր քու սիրտդ խաչելեալ  
Յիսուսին ցաւոցն ու անարգանացը վըշ-  
տակից կ'ըլլար, անիկա զքեզ ինծի  
մայր տուաւ, որպէս զի քու սիրտդ  
վշտակից ըլլայ որ մը նաեւ իմ ողորմե-  
լութեանցս ու կարօտութեանցս :

Հատ մեղաւորներ, որոնք այսօրուան  
օրս փառաց մէջ կը վայելեն, դժոխոց  
յաւիտենական աւար կ'ըլլային, թէ որ  
անոնց համար դուն բարեխօսած չըլլայիր :  
Ինծի ալ պիտի ապաշխարութեան շնորհքն  
ընդունէ, զորն որ անոնց ընդունեցար :

Աստուած բան չէ որ դուն չուզած ըլ-  
լաս լսել անանկ մեղաւորի մը աղօթքը,  
որն որ իր ըրած յանցանաց մեծու-  
թիւնը ճանչնալով քեզի դիմած ըլլայ՝  
թողութիւն դտնելու համար :

Ո՛վ Մարիամ, ինչ փառք է քեզի՝ որ  
Աստուած գրեթէ քեզմէ կախած է  
այնչափ յանցաւորներու թողութիւնը :

Քու բարեխօսութեամբդ ընդունել  
բաղձացած թողութիւնս ալ, թէ որ  
ընդունիմ, նոյն փառքդ պիտ'որ ա-  
ւելցրնէ :

Զ. Սուրբ Աղյս, ինծի համար շնորհք  
խնդրէ Աստուծոյ երկիւղին ու սիրոյն  
մէջ յարատեւելու :

Նոյն իսկ ամենամեծ առաքինու-  
թիւնները չեն կրնար նոյն յարատեւու-  
թիւնն արդիւնաւորիլ : Անանկ է նէ ինչ  
վախ պէտք է որ ունենամ ես, որ նոյն  
իսկ տկարութիւն ու անհաստատու-  
թիւն եմ :

Քու՝ Մարիամ անունդ անանկ անուն  
մըն է, որուն զօրութեամբ Աստուծոյ  
բարեկամութեան խիստ երեւելի ցոյ-  
ցերը կրնան յուսացուիլ :

Միտքդ բեր, ո՛վ երանելի Աղյս, որ  
էթէ Յիսուսի վախին ու սիրոյն մէջ մեռ-  
նելու երանութիւնն ունենամ, երջանիկ  
յաւիտենականութեան մէջ մէկ հոգի  
մ'ալ աւելի զանիկա քեզի հետ պիտ'որ  
օրհնէ, գովէ ու սիրէ :

Մահանան Տօրինալու արին Մարիամայ վրայ  
անինալու վարահանինան զբաժնանց վրայ :

Ա . ԻՄ Փրկչիս Մայրը Մարիամ , եր-  
թալով իմ վերջին ժամս կը հասնիմ ,  
ամէն ժամանակէն աւելի թախանձա-  
նօք քու օգնութիւնդ կը խնդրեմ :

Ինքզինքս իբրեւ արքայութեան ու  
դժոխոց մէջտեղը կը աւսնեմ : Ո՛հ , ինչ  
կ'ըլլայ իմ վիճակս թէ որ ինձի համար  
քու Յիսուսի քով ունեցած կարողու-  
թիւնդ չգործածես :

Ինք քու ձեռքդ տուաւ ամենէն պա-  
տուական շնորհքները , որպէս զի մարդ-  
կան վրայ տարածես : Տարածէ նաեւ  
իմ վրաս ալ . ամէն ատենւրնէ աւելի  
հիմակ հարկաւոր են ինձի :

Բ . Իմ կենացս վրայ համար տալու  
ատեանը կը սկսի բացուիլ : Բարեխօսէ  
ինձի համար դեռ նոյն ատեանին առ-  
ջեւ չելած : Իմ դատաւորիս Մայրն ինձի  
նպաստաւոր վճիռ կ'ընդունի :

Աստղ ծովու , իմ առաջնորդս եղիր  
զիս մերձաւոր նաւաբեկութենէն վախ-  
ցընող մրրկին մէջ ու զիս փրկութեան  
նաւահանգիստը հասցուր :

Գուն որ երկնաւոր լոյս ես փարատէ  
այն ամպերը , զորոնք խաւարային հողին  
իմ հողւոյս վրայ կը ձգէ : Իմ անցած  
կենացս մեղքերը մտածելու ատեն զգա-



ցած խռովութիւնս փարատէ : Անդանի  
ու անկեղծ զեղջ մ'ընդունէ ինծի :

Գուն՝ որ ամէն առաքինութեանց օ-  
րինակ ես , խնդրէ ինծի համար որ հա-  
ւատքս ամուր բլլայ , յոյսս զօրաւոր ու  
սէրս կատարեալ :

Գ. Շնորհակալ եմ այն մարդասի-  
րութեան վրայ , զորն որ իմ բովանդակ  
կենացս մէջ ու նոյն իսկ խիստ անարժան  
եղած ատենս՝ ինծի ցուցրցիր :

Բայց կրնաս քու խնամքդ զլանալ  
այսօր , որ իմ կարօտութեանս հետ քու  
վրադ ունեցած վստահութիւնս ալ  
կ'աւելնայ :

Ձէ , սիրելի Մայր , որ ամէն մայրերէ  
աւելի դժած ես , չես մեկնիր դուն քու  
որդիէդ , որն որ մեռնելու վրայ է : Գուն  
քովը կը կենաս մինչեւ վերջի շունչը :

Գ. Հպատակութեամբ կը մեռնիմ ,  
ինչու որ Յիսուս հրամայած է իմ մահս :  
Բայց որչափ որ բնականապէս մահուրնէ  
սարսափ ալ կ'ունենամ նէ , քու պաշտ-  
պանութեանդ տակ մեռնելուս համար  
հաճութեամբ կը մեռնիմ :

Ար յուսամ որ քիչ մ'ետքը պիտի  
նկատեմ քու մեծութիւններդ , կա-  
տարելութիւններդ , երեւելի յատկու-  
թիւններդ , Յիսուսի յաղթանակներն  
ու քիչ մ'ետքը զքեզ պիտի տեսնեմ  
քու փառացդ պայծառ դահին վրայ :

Ե. Հողեվարքս կը մերձենայ. իմ շրթունքս քու ընթերակայութիւնդ պիտի չիկրնայ հայցել, բայց իմ սիրտս միշտ քեզի պիտի խօսի :

Բիւր անգամ որտիս մէջ Յիսուսի ու Մարիամայ անունները պիտի կրկնեմ : Ար խնդրեմ քեզմէ, Յիսուս, որ իմ հողեվարքիս ատենը սրտիս ամէն հառաչանքներն ու շարժումներն իբրեւ քու եւ քու սուրբ Մօրդ սիրոյն մէջ մէկ ներգործութիւններն ընդունիս :

Զ. Տէրողորմէ ինձի, չեմ համարձակիր ըսելու, «վասն զի ծառայ եմ»,<sup>1</sup> : Ո՛հ, մեծ մեղաւոր էի ու չեմ գիտեր, որ արդեօք քու արդարութիւնդ հաշտեցրնելու երանութիւնն ունեցայ : Բայց ողորմէ ինձի «վասն զի քու աղախնոյդ օրդին եմ»,<sup>2</sup> :

Գուն ինձի շնորհք տուիր որ բոլոր իմ կենացս մէջ Մարիամայ վրայ մեծ վստահութիւն ունենամ : Շնորհակալ եմ որ իմ անոր վրայ ունեցած վստահութեանս զգածումները՝ իմ փրկութեանս այս օրոշիչ ժամուն մէջ՝ քու շնորհքովդ կը կրկնապատկին :

Աստուած իմ, Աստուած ողորմութեանց, նոր շնորհք մըն է որ ինձի կուտաս, կ'ուզես փրկել զիս այս Առսին

<sup>1</sup> Սաղմ. ՃԺԵ. 16 :

<sup>2</sup> Սաղմ. 2Ե. 16, եւ ՃԺԵ. 16 :

աղօթքովը, զորն որ քու Եկեղեցիդ մեզի  
ամէն ատեն, բայց աւելի «մեր մահուան  
ժամը», օգնութեան կանչել կու տայ:

### Գ Լ Ո Ի Խ ԺԴ.

Սուրբ Յովնէփայ՝ ամենասուրբ կոստին փե-  
ային անինալու Չերմեանդուխեան վրայ:

Ա. ՍՈՒՐԲ ԿՈՍՏԻՆ ՏԱԾՈՅ ՈՒ ԱՎԱ-  
ՍՈՒՆԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՆՆԱՆ ՄԵ ԿՐ ԳՈՒԿՐՆՆՆՔ,  
ԵՐՔ ՈՐ ԱՅՆ ՉԵՐՄԵԱՆԴՈՒԹԵՆՆԷ ԵՄԵԼ,  
ՈՐՈՎ ԱՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՎՈՒԱԾ  
ՈՒՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՆՔ, ԱՆՈՐ ՓԵՏԱՅԻՆ՝ ՕՐՐ-  
ՔՈՅՆ ՅՈՎՆԵՓԱՅ ՉԵՐՄԵԱՆԴՈՒԹԵԱՆ Ե-  
ՄԵԼԷ ԿՐԸՆՆՔ:

Ի՛նչ մեծ յարգ ու համարում պէտք  
է որ ունենանք աս սրբոյն վրայ, զորն որ  
Աստուած ընտրեց իր մարմնացեալ Բա-  
նին աղայութեանը յանձանձիչ ու անոր  
մօրը կուսութեան վկայ ու պաշտպան  
ըլլալու:

Ինք Իսրայելի ճշմարիտ տապանակին  
վրայ պահպանութիւն ըրաւ: Ինք տա-  
րաւ ու բերաւ ժամանակին պարադա-  
ներուն համեմատ՝ նոր ուխտին տապանը:  
Մարդկան փրկութեան զինը իբրեւ ա-  
ւանդ պահեց:

Բ. Ի՛նչ մեծ փառք է՝ աս կենաց մէջ  
օրինաւոր իշխանութիւն ունենալ երկնի  
ու երկրի Թագուհւոյն, եւ նոյն իսկ  
յաւիտենից Թագաւորին ու միակ Ան-

մահին վրայ, որուն կը պատկանի ամենայն փառք:

Իր բարձր արդեանց վրայ զազափար մ'ունենալու համար, բաւական է որ մարդ մտածէ թէ Մարիամայ փեսան է: Մէկուն առաքինութիւնները՝ մէկալին առաքինութիւնները կ'իմացընէ: Աստուած Մարիամայ արժանաւոր փեսայ մը տուաւ:

Գ. Բայց ամենէն աւելի, մտածէ որ մանուկ Յիսուսը բիւրանգամ իր զիրկը հանդչած է: Ի՛նչ երկնաւոր ազդեցութիւն չէր ըներ անոր սրտին վրայ այս մանուկ Աստուածը:

Յովսէփ կ'ապրէր անանկ մէկու մը հետ, որն որ շնորհաց աղբիւր ու իբրեւ թէ զանոնք բաշխելու խողովակ մըն է: Ի՛նչ հոգեւոր հարստութիւններ անկէ չընդունեցաւ:

Համբերութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, ընկերսիրութիւն, աստուածսիրութիւն ու ամէն առաքինութիւններ իր վրայ կը փայլէին ու իրենց բարձրագոյն աստիճանները հասած էին:

Դ. Ո՛վ քրիստոնեայ, որ կ'ուզես ինք զինքդ ներքին ու ջերմեռանդ կենաց գործքերու տալ, ասոր շնորհք ընդունելու համար՝ վստահութեամբ դիմէ այն սրբոյն բարեխօսութեանը, որն որ

խիստ կատարեալ եղանակաւ նոյները  
գործադրեց :

Եկեղեցին տաճարներ կանգնած է  
Աստուծոյ՝ անոր պատուոյն համար : Ա-  
նոր ասնախմբութեան օր հաստատած  
է ու կը յորդորէ զմեզ՝ իր որդիքը՝ անոր  
համար հաստատած ջերմեռանդութեան  
գործքերով՝ զանիկայ մեր Աստուծոյ  
քով ունեցած ամենէն զօրաւոր պաշտ-  
պաններէն մէկը սեպելու :

Ե. Իրօք ալ Յովսեփայ անունը խիստ  
մասնաւոր կերպով մը օգնութեան կը  
կանչեն ամէն հաւատացեալք, ու շատ  
անգամ Յիսուսի ու Մարիամայ անուն-  
ներուն քով կը գնեն :

Թէ որ Յիսուսի ու Մարիամայ՝ Նազա-  
րէթ կեցած ատեն, անոնցմէ շնորհք  
մ՝ ուզէինք ընդունիլ, անոնց քով սուրբ  
Յովսեփէն աւելի զօրաւոր միջնորդ մը  
կրնայինք գտնել : Իսկ արդ, միթէ հի-  
մայ նուա՞զ վարկ ունի :

Զ. Անանկ է նէ «Գնա Յովսեփին»,<sup>1</sup>,  
որպէս զի ինք քեզի համար բարեխօսէ :  
Ի՛նչ շնորհք ալ որ ըլլայ խնդրածդ,  
Աստուած անոր բարեխօսութեամբը  
քեզի կու տայ :

Բայց ալ աւելի : Ի՛նչ վիճակէ որ ըլ-  
լաս, ի՛նչ յարաբերութեան մէջ որ  
գտնուիս, նոյն իսկ քու այն վիճակդ ու

<sup>1</sup> Ծնն. Դ. 55 :

յարաբերութիւնդ առիթ ու պատճառ  
կու տայ քեզի առանձին կերպով մը  
սուրբ Յովսէփայ ապաւինելու :

Ազնուականներն ու հարուստներն ա-  
նոր աղօթած ատեն պէտք են մտածել,  
որ Սուրբ Յովսէփ նահապետաց ու թա-  
ղաւորաց թոռ է : Աղքատները՝ պէտք  
են մտածել թէ ինք անոնց նուաստու-  
թիւնը չ'արհամարհեր, ինչու որ ինքն  
ալ անոնց պէս կարօտութեան մէջ ա-  
պրեցաւ ու բոլոր կեանքն արուեստի մէջ  
անցուց :

Առասանք՝ պէտք են մտածել, որ անի-  
կայ ամենակատարեալ կուսութիւն պա-  
հեց : Արդուած անձինք պէտք են մտա-  
ծել, որ անանկ բարձր ընտանեաց մը  
զլուխ եղաւ սուրբ Յովսէփ, որուն նմանը  
չ'իկրնար ըլլալ :

Տղաք՝ պէտք են մտածել, որ անիկայ  
Յիսուսին սնուցիչն ու անոր տղայու-  
թեան պահապանն ու կառավարն էր :

Քահանայք՝ պէտք են մտածել, որ  
ինք շատ անգամ զՅիսուս իր բազկացը  
վրայ տարաւ, եւ թէ նաեւ Յիսուսի ա-  
րեան երախայրիքն, անոր թլփատու-  
թեան օրը յաւիտենական Հօր նուի-  
րեց :

Արճնաւորք՝ պէտք են մտածել, որ  
Նազարեթի մէջ բոլորովին աշխարհքէ  
հեռանալով եւ Յիսուսի ու անոր մօրը



Հետ ներքին կենսակցութեան մէջ սուրբ առանձնութեան կեանք անցուց :

Վերջապէս բարեպաշտ ու ջերմեռանդ անձինք՝ պէտք են մտածել, որ Մարիամայ սրտէն ետքը Յովսէփայ սրտէն աւելի զՅիսուս եռանդազին սիրող սիրտ չէ եղած :

Է. Իսկայց ամենէն աւելի «Գնահ Յովսէփայ», բարի մահուան շնորհք ընդունելու համար : Այն հասարակաց կարծիքը, թէ Յովսէփ Յիսուսի ու Մարիամայ բազկացը մէջ մեռած է, պատճառ տուած է հաւատացելոց մեծ վստահութիւն ունենալու, որ անոր բարեխօսութեամբն՝ իրեն պէս երջանիկ ու մխիթարական՝ վախճան մը կ'ունենան :

Իրօք ալ, ընդհանրապէս տեսնուած է, որ իրենց կենացը մէջ աս մեծ սրբոյն ջերմեռանդ եղողներն՝ առանձինն մահուան ատեն իրենց ջերմեռանդութեան պտուղը կը վայելեն :



Աղօթքս սուրբ Աստուածածնայ պաշտպանու-  
թիան ասպանիելու :

Յիշէ՛, ս'վ ամենագութ Աղյս Մա-  
րիամ, որ երբեք լսուած բան չէ որ մէկը  
քու պաշտպանութեանդ դիմած, քու  
օգնութիւնդ խնդրած ու քու բարե-  
խօսութիւնդ հայցած ըլլայ ու երեսէ  
ձգուած կամ մերժուած ըլլայ : Արդ ,  
աս վստահութեամբ քեզի կը դիմեմ ու  
քեզի կու դամ, ս'վ Աղյս ու Մայր կու-  
սանայ . հեծելով իմ մեղքերուս բե-  
ռան տակ քու ոտքդ կ'իյնամ : Ո՛վ իմ  
Փրկչիս՝ Յիսուսին Մայրը, մ'անարգեր  
իմ աղօթքս , այլ լսէ քաղցրութեամբ  
ու անանկ ըրէ որ Աստուած քու բարե-  
խօսութեամբդ ինծի լսէ ու իմ յանցա-  
նացս թողութիւն տայ . Ամէն :

Հերիւստալ պաշտի աղօթքը շնորհաց վեճակի մեջ  
շրայուղը հարիւր օրուան ներողութեան ! Ընդ-  
անի :

Միշտ օրհնեալ ըլլայ՝ ամենեւին մա-  
քուր, ամենեւին սուրբ ու ամենեւին  
անարատ Յղութիւն փառաւորեալ կու-  
սին Մարիամն Աստուածածնի :



Ա Ղ Օ Թ Բ Ն Ե Ր

Մի գլխի բը Վան շնալու հասար լուսաւորութիւն  
 Ին դրբի լուսաւորութիւն :

Ո՛հ , ո՞վ կրնայ ինք զինքը ճանչնալ ,  
 Թէ որ դուն , Աստուած իմ , անոր իմա-  
 ցութիւն չտաս : Արդ , լուսաւորէ իմ  
 միտքս ու բորբոքէ սիրտս քու շնորհքովդ :

Օր մը՝ քու դատաստանիդ մէջ՝ ինչ-  
 պէս որ իրօք եմ նէ՛ ինք զինքո ինծի  
 պիտ'որ ճանչցընես : Ո՛հ , քու ան բար-  
 կութեանդ օրը չհասած , այսօր ինք  
 զինքս ինծի անանկ ճանչցուր , ինչպէս  
 որ ան օրը պիտ'որ ճանչնամ եւ ան օրն  
 իմ յանցանացս վրայ ունենալու ամօթս ,  
 զղջումս եւ ցաւս հիմակուընէ իմ սիրտս  
 դիր :

Ո՛վ աստուածային Հոգի , որուն առ-  
 ջեւը բաց են ամէն սրտեր եւ որուն աչ-  
 քէն չի կրնար ծածկուած ըլլալ խղճմտա-  
 նաց ամենէն խորունկ խորշերը , արձակէ  
 վրաս քու անսխալ լուսոյդ մէկ ճառա-  
 դայթը , որ իմ մտացս ու սրտիս ամե-  
 նէն ծածուկ խորշերն ալ առջեւս լու-  
 սաւորէ :

Երանի թէ ամենեւին մեղք գործած չըլլայի, բայց, ս՛հ, գործած գտնուեցայ ու դեռ վրաս են: Երանի թէ կարենայի իմ բոլոր արեամբս զանոնք ջնջել: Իմ բոլոր կարողութեամբս զանոնք կը մերժեմ ու անոնցմէ կը դարչիմ:

Ի՞նչպէս կրցայ հաճութիւն ունենալ ան բաներէն, զորոնք դուն ինձի կ'արգելէիր, Տէր: Ի՞նչպէս զարհուրելի ու ատելի կ'երեւան անոնք հիմակ ինձի: Ար զարհուրիմ ու ընդ միշտ կը հրաժարիմ անոնցմէ:

Իմ տկարութիւնս, փոփոխամտութիւնս ու անհաստատութիւնս զիս կը դողացընեն: Բայց, քու զօրացուցիչ շնորհքովդ ամէն բան կրնամ ընել: Իմ վրաս չեմ վստահիր, հապա քու վրադ կը վստահիմ, ս՛վ Աստուած զօրութեանց: Յոյսս չիխաբուիր, որովհետեւ քու շնորհքդ ընդունելէս ետեւ՝ զանիկա գործունեաց ընելու համար իմ ձեռքէս եկածը պիտ'որ ընեմ:

Ի՞նչ յանդգնութիւն ըրի որ ամենազօր Աստուծոյ մը բարկութեան դէմ զինեցայ ու ինք զինքս յաւիտենական տանջանաց տակ ձգեցի: Չեմ ուզեր մէյ մ'ալ ինք զինքս սյուպիսի տանջանաց ու դժոխոց արժանի ընել:

Ի՞նչ անմիտ էի որ անսահման բարիք մը, այսինքն՝ նոյն իսկ զԱստուած չուզեցի ստանալ: Գիտէի՞ արդեօք թէ ի՞նչ է զԱստուած ստանալ: Չեմ ուզեր մէյ՞ծ՝ ալ ինք զինքս՝ զանիկա կորսնցընելու վտանգի մէջ դնել:

Ի՞նչ ապերախտութիւն էր որ ըրի, ո՞վ Աստուած իմ, ու զքեզ՝ որ ինծի այնչափ բարիքներ ըրած էիր՝ վշտացուցի: Գուն տուած ես ինծի իմ կեանքս ու դուն կը պահպանես զանիկա. նաեւ բովանդակ գոյութիւնս, ի՞նչ որ եմ ու ի՞նչ որ ունիմ ամէնն ալ քեզմէ է:

Նայէ, ո՞վ մեղաւոր, նայէ Յիսուսի խաչելութեանը. երկայն ատեն դիտէ անոր վէրքերը: Առջեւի տեսածդ քու գործքդ է: Ո՞վ մեղք, որ զԱստուած խաչ հանեցիր ու դեռ ամէն օր կը հանես ու անոր բոլոր շարժարանքները կը նորոգես, ասկէ ետեւ չեմ կրնար սիրել զքեզ:

Բոլոր սրտանց կը ցաւիմ, ո՞վ Աստուած իմ, չէ թէ իմ մեղքերովս դժօխքի յաւիտենական պատժոց արժանի ըլլալու համար, հապա անոնցմով զքեզ՝ որ անսահման բարութիւն ես՝ վշտացրնելու համար: Հաստատուն դիտաւորութեամբ յաւաջագրութիւն կը դնեմ բիւր անգամ մեռնելու, քան թէ մէկ անգամ՝ նոյն իսկ թեթեւ մեղքով մը

զքեզ վշտացընելու: Գուն, ամենասուրբ Մարիամ, հաստատէ իմ ասյառաջադրութիւնս ու ինձի համար հաւատարմութեան շնորհք ընդունէ:

Ազօն+ Խոսրովանս-Բեռնէ յարաւ:

Ո՛վ քաղցրագութ Տէր իմ Յիսուս Քրիստոս, կ'աղաչեմ որ հիմայ քու առջեւդ ընելու խոստովանութիւնս ընդունիս եւ ճշմարիտ ու կատարեալ զղջում տաս՝ որ իմ ամէն մեղքերուս վրայ սրբտանց լամ: Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, քու ճշմարտութեանդ լոյսն արձակէ իմ մտացս ու հոգւոյս մէջ, որ ինձի առաջնորդէ ու կարողութիւն տայ աս ապաշխարութեան մեծ խորհրդոյն կատարեալ սիրով ու ջերմեռանդութեամբ մօտենալու եւ յանցանքներս մէկիկ մէկիկ պատմելու, որպէս զի քու ամենասուրբ չարչարանացդ արդեամբն իմ ամէն մեղքերուս թողութիւն ընդունիմ ու արժանի ըլլամ քու սուրբ անունդ յաւիտեան փառաւորելու. Ամէն:

Ազօն+ Խոսրովանս-Բեռնէ Եր+ը:

Ո՛վ սիրելի Յիսուս, ինչչափ շնորհակալութեան պարտականութիւն ունիմ քեզի: Ար յուսամ որ քու արեանդ արդեամբն այսօր իմ մեղացս թողութիւն ընդունեցայ: Շնորհակալ եմ քե-



զի բոլոր սրտանց : Ար յուսամ որ օր մը  
 երկինք պիտ'որ դամ ու հոն քու ողոր-  
 մութիւնդ պիտ'որ գովեմ : Աստուած  
 իմ, սրչափ որ մինչեւ հիմակ շատ ան-  
 դամ զքեզ կորսնցուցի նէ ալ, ասկէ  
 ետեւ ալ չեմ ուզեր երբեք կորանցը-  
 նել : Այսօրուքնէ սկսած կ'ուզեմ ան-  
 կեղծ կերպով կեանքս ուղղել : Գուն  
 արժանի ես իմ բովանդակ սիրոյս, ես  
 ալ կ'ուզեմ ճշմարտապէս սիրել զքեզ  
 ու երբեք քեզմէ չբաժնուիլ : Արդէն  
 խոստացայ, բայց դարձեալ խոստումս  
 կը կրկնեմ, թէ կ'ուզեմ աւելի մեռնիլ  
 քան թէ զքեզ վշտացընել : Գարձեալ,  
 կը խոստանամ մեղաց ամէն առիթներէ  
 փախչելու : Բայց, Յիսուս իմ, դուն կը  
 ճանչնաս իմ տկարութիւնս : Ինձի զօ-  
 րութիւն տուր, որ մինչեւ մահ քեզի հա-  
 ւատարիմ մնամ : Ո՛վ Մարիամ, ողոր-  
 մութեան մայր, ինձի օգնական եղիւր,  
 որովհետեւ իմ յոյսս՝ Աստուծմէ ետքը  
 քու վրագ դրած եմ :

Հաղորդութիւնն յարազ ընելու աղօթիքեր :

Ա.՝ Արքեպիսկոպոս-Սեբեոս հասարոյ : «Ահա-  
 ւասիկ կու գայ լեռներ ու բլուրներ  
 անցնելով», (Երգ. Բ. 8) : Ո՛հ, սիրելի  
 Փրկիչ իմ, սրչափ դժուարին ու խիստ  
 լեռներ անցնելու պարտաւորեցար, որ-  
 պէս զի գաս եւ աս սուրբ Հաղորդու-

Թեան ձեռքով ինձի հետ միանաս :  
Աստուած էիր, հարկադրեցար մարդ ըլ-  
լալ. անչափ էիր, մանուկ եղար. Տէր  
էիր, ծառայ եղար. յաւիտենական Հօր  
ծոցէն՝ Առսի մը ծոց եկար, երկնքէն՝  
ախոռ իջար, փառայ դահէն՝ արդարու-  
թեան կախազան խոնարհեցար, եւ աս  
առտու ալ քու երկնաւոր աթոռէդ  
պիտ'որ իջնաս ու գաս իմ սրտիս մէջ  
պիտ'որ բնակիս :

“Ահաւասիկ պատին մէկալ դին կը  
կենայ ու պատուհանէն երկնցած վան-  
դակապատէն կը նայի,» (Երդ. Բ. 9) :  
Ահա իմ սիրելիս Յիսուս, այն սիրով  
բորբոքած, որով որ ինձի համար խաչին  
վրայ մեռաւ, հիմակ Ս. Հաղորդութեան  
տեսակներուն տակ ծածկուած կեցեր է  
ու «վանդակապատէն կը նայի,» : Իմ  
սիրովս բորբոքած՝ կ'ուզէ որ ես ալ զինքը  
սիրեմ. նշխարքի կերպարանաց տակէն՝  
իբրեւ զոցուած վանդակի մը ետեւէն  
ինձի կը նայի, բայց ես իրեն չեմ նայիր :  
Ահա կեցեր զիս կը դիտէ, որ աս առտու  
անոր աստուածային մարմինը պիտ'որ  
ճաշակեմ. կը դիտէ թէ ինչ կը մտածեմ,  
ինչ կը սիրեմ, ինչ կը բաղձամ, ինչ կը  
փնտռեմ ու ինչ ընծաներ կը տանիմ  
իրեն մատուցանելու :

Ո՛վ անձն իմ, պատրաստուէ զՅիսուս  
ընդունելու՝ նախ հաւատքով ու ըսէ .

Ո՛վ սիրելի Փրկիչս, քանի մը վայրկենէ  
դուն իմ ներսս պիտ'որ գաս: Ո՛վ Աս-  
տուած ծածկեալ ու մարդիկներու մեծ  
մասին անձանօթ, Ս. Հաղորդութեան  
մէջ զքեզ իբրեւ իմ Տէրս ու Փրկիչս  
կը հաւատամ, կը խոստովանիմ ու քե-  
զի երկրպագութիւն կ'ընեմ, եւ աս  
ճշմարտութիւնը խոստովանելու համար  
յօժարութեամբ կ'ուզեմ կեանքս տալ:  
Կու գաս զիս, քու շնորհքներովդ հարրստ-  
ցընելու եւ բողբովին ինձի հետ միանա-  
լու: արդ, ինչչափ յոյս ու վստահու-  
թիւն պէտք է որ ունենամ քու աս  
սիրալիր եկաւորութեանդ վրայ:

Բ. Սերգործութիւն յոսոյ: Անձն իմ,  
սիրտդ ընդարձակէ. քու Յիսուսդ կրնայ  
ամէն բարիք քեզի տալ ու զքեզ սաս-  
տիկ կը սիրէ: Մեծ բաներ յուսա քու  
աս Տիրոջմէդ. որն որ ի սիրոյ շարժած  
ու բողբովին քու սիրովդ բորբոքած քե-  
զի կու գայ: Այո՛, սիրելի Յիսուս, իմ  
բովանդակ յոյսս, քու բարութեանդ  
վստահացած կը յուսամ որ աս առտու  
զքեզ ինձի տալով, իմ ողորմելի սրբ-  
տիս մէջ քու սուրբ սիրոյդ ու քու հա-  
ճոյքդ ընելու գեղեցիկ բոցը պիտ'որ վա-  
ռեսս, անանկ որ աս օրէս ետեւ քու ու-  
ղածէդ ուրիշ բան մը չուզեմ:

Գ. Սերգործութիւն սիրոյ: Ո՛հ, Աս-  
տուած իմ, իմ հոգւոյս ճշմարիտ ու մի-

ակ սէրը, ինչ աւելի բան կրնայիր ընել  
ինձմէ սիրուելու համար: Բաւական չե-  
ղաւ քեզի, Տէր իմ, ինձի համար մեռ-  
նիլդ. ուզեցիր աս մեծ խորհուրդն ալ  
հաստատել, որպէս զի զքեզ բոլ-  
րովին ինձի տաս ու անանկով ինձի պէս  
անպիտան ու ապերախտ արարածի մը  
հետ սիրտ սրտի միանաս: Բայց ալ ա-  
ւելի, դուն անձամբ զիս կը հրաւիրես  
ու սաստիկ կը բաղձաս որ զքեզ ընդու-  
նիմ: Ո՛վ անչափ սէր, ո՛վ անըմբռնե-  
լի սէր, ո՛վ անսահման սէր: Աստուած  
մը կ'սուգէ ինք զինք բոլորովին ինձի  
տալ:

Ա՛նձն իմ, կը հաւատան ասոր: Ի՞նչ  
կ'ընես. Ի՞նչ կ'ըսես: Ո՛վ Աստուած,  
ո՛վ անսահման սիրելի Աստուած, որ մի  
միայն արժանի ես ամենայն սիրոյ, բոլոր  
սրտանց, ամէն բանէ վեր, ինձմէ ու իմ  
կեանքէս աւելի կը սիրեմ զքեզ: Ո՛հ,  
երանի թէ զքեզ ամենէն սիրուած  
տեսնէի: Ո՛հ, երանի թէ կարենայի քու  
արժանաւորութեանդ չափ՝ ամէն սր-  
տերու զքեզ սիրել տալ: Կը սիրեմ  
զքեզ, ո՛վ ամենասիրելի Աստուած, ու  
սիրելու մէջ իմ սիրտս կը միացընեմ  
սերովբէներու սրտին, սուրբ Աստուած-  
ածնայ սրտին եւ քու ամենասիրելի  
Որդւոյդ Յիսուսի սրտին հետ: Կը սի-  
րեմ զքեզ այն սիրով որով զքեզ

սուրբերը, Մարիամ ու Յիսուս սիրեցին :  
Ար սիրեմ զքեզ մի միայն անոր համար՝  
վասն զի արժանի ես ու որպէս զի քեզի  
հաճութիւն տամ : Ելէք սրտէս ամէն  
երկրաւոր յօժարութիւնք, որովհետեւ  
դուք Աստուծոյ համար չէք : Մայր գե-  
ղեցիկ սիրոյ, սուրբ Մարիամ, օգնէ ին-  
ծի որ սիրեմ այն Աստուածը, զորն որ՝  
դուն այնչափ կը բաղձաս սիրուած տես-  
նելու :

Գ. *Սերգործութիւն խոնարհութեան :*  
Անձն իմ, ահա կ'երթաս Յիսուսի  
Քրիստոսի ամենասուրբ մարմինը ճա-  
շակելու. միթէ արժանի ես : Աստուած  
իմ, ես ս'լ եմ ու դուն ս'լ ես : Ես ա-  
ղէկ գիտեմ ու կը խոստովանիմ թէ  
դուն ս'լ ես, որ ինք զինքդ ինծի կու  
տաս. բայց գիտես դուն թէ ես ս'լ եմ,  
որ կը մերձանամ զքեզ ընդունելու :

Կարելի բան է, ս'լ Յիսուս իմ, որ  
դուն անսահման սրբութիւն ըլլալով,  
բաղձաս իմ սրտիս մէջ բնակիլ, որն որ  
այնչափ անգամ քու թշնամեցդ բնա-  
կութիւն եղած ու այնչափ մեղքերով  
աղտոտած է : Ար ճանչնամ, Տէր իմ,  
քու մեծ վայելութիւնդ եւ իմ ողոր-  
մելութիւնս. կ'ամչնամ քու առջեւդ  
երեւնալու : Ա՛նգէի յարգութեան հա-  
մար քեզմէ հեռանալ : Բայց թէ որ  
քեզմէ հեռանալու ըլլամ, ս'լ կեանք

իմ, ո՞ւր երթամ, որո՞ւն դիմեմ ու իմ վիճակս ինչ կ'ըլլայ :

Չէ, չեմ ուզեր երբեք քեզմէ բաժնուիլ. մանաւանդ թէ կ'ուզեմ միշտ աւելի քեզի մօտենալ : Գուն յանձն կ'առնես, որ զքեզ կերակրոյ պէս առնեմ, մանաւանդ թէ կը հրաւիրես ալ զիս ասոր : Արդ, կու գամ, ս'ի սիրելի Փրկիչ իմ, կու գամ զքեզ ընդունելու աս առտու՝ բոլորովին խոնարհած ու ամչցած իմ պակասութեանցս համար, բայց կատարեալ վստահ ըլլալով քու ինծի ունեցած գթութեանդ ու սիրոյդ վրայ :

Ե. Աերբործութիւնն զգջման : Աստուած սրտի իմոյ, սրչափ կը ցաւիմ, որ մինչեւ հիմակ զքեզ չսիրեցի, մանաւանդ թէ՛ փոխանակ զքեզ սիրելու, իմ հաճութիւնս կատարելու համար քու անսահման բարութիւնդ վշտացուցի ու տհաճեցուցի, քեզմէ ետ կեցայ քու շնորհքդ ու բարեկամութիւնդ արհամարհեցի եւ մէկ խօսքով, ս'ի Աստուած իմ, ուզեցի կամօք զքեզ կորսնցընել : Տէր, կը զգջամ ու բոլոր սրտանց կը դարչիմ : Ա՛տուեմ՝ քեզի հացուցած թէ ծանր ու թէ թեթեւ վըշտացուցումներս իմ կրած ամէն նեղութիւններէս վեր, ինչու որ զքեզ վըշտացուցի, որ անսահման բարութիւն



ես : Ար յուսամ որ արդէն ինձի թողու-  
թիւն տուած ըլլաս . բայց թէ որ դեռ  
թողութիւն չես տուած , յառաջ քան  
զքեզ ընդունիլս թողութիւն տուր :  
Լուս իմ աս սիրտս , ուր քիչ մը ետ-  
քը պիտ'որ գաս ու բնակիս :

Զ. Սերբործո-Նիւն Կաթառնայ : Ա՛նձն  
իմ , ահա հասաւ այն երանելի ժամը ,  
որուն մէջ քու Յիսուսդ պիտ'որ գայ  
եւ քու սիրտդ բնակի : Ահա երկնից  
թագաւորը , ահա քու Փրկիչդ եւ Աս-  
տուածդ , որն որ քեզի գալու վրայ է .  
պատրաստուէ զանիկա սիրով ընդունե-  
լու : Գոչէ փափաքանօք . Եկ՛ուր , սով  
Յիսուս իմ , եկ՛ուր իմ հոգիս , որն որ  
քեզի կը բաղձայ : Գուն ինք զինքդ ին-  
ձի շտուած , կ'ուզեմ ես իմ ողորմելի  
սիրտս քեզի տալ ու կու տամ . ընդու-  
նէ զանիկա ու եկ՛ուր շուտ մը հոն բնա-  
կութիւնդ դիր :

Եկ՛ուր , Աստուած իմ , շուտով եկ՛ուր ,  
մ'ուշանար : Իմ միակ ու անասման  
բարիքս , իմ դանձո , իմ կեանքս , իմ  
դրախտս , իմ սէրս ու իմ ամէն բանս ,  
կ'ուզէի ընդունիլ զքեզ այն սիրով , ո-  
րով ընդունած են զքեզ ամենէն աւե-  
լի սուրբ ու զքեզ սիրող հոգիներ ու  
որով ընդունեցաւ զքեզ ամենասուրբ  
Մարիամ . անոնց Հաղորդութեանը հետ  
կը միացընեմ իմ աս Հաղորդութիւնս :

Ամենասուրբ Կոյս եւ մայր իմ Մարիամ, ահա կը մօտենամ ընդունելու քու Որդիդ: Կ'ուզէի քու սիրտդ ու ան սէրդ ունենալ, որով Հաղորդութիւն կ'ընդունէիր: Տ՛ուր ինձի աս առտու քու Յիսուսդ, ինչպէս որ տուիր զանիկա հովուաց ու սուրբ մօզերուն: Իբրեւ քու ամենասուրբ ձեռքէդ կ'ընդունիմ զանիկա: Ըսէ իրեն, թէ ես քու ծառայ ու ջերմեռանդդ եմ. ասանկով անիկա՝ հիմակ ինձի եկած ատեն, աւելի սիրալիբ աչքերով ինձի կը նայի ու աւելի սերտիւ զիս իրեն հետ կը միաւորէ:

Հաղորդութիւն իմ ընդունելու աղօթիւներ:

Ա. Երբորձութիւն հասարոյ: Ահա, եկաւ այցելութիւն ըրաւ ինձի իմ Աստուածս ու Փրկիչս ու հոգւոյս մէջ բնակեցաւ: Հիմակ իմ ներսս է Յիսուս: Եկաւ ինք զինքն իմս ընելու ու միանգամայն զիս իրեն ընելու համար: Անանկ է նէ, Յիսուս իմս է ու ես ալ Յիսուսին եմ. Յիսուս բոլորովին իմս է, ես ալ բոլորովին Յիսուսին եմ:

Ո՛վ անսահման բարութիւն: Ո՛վ անսահման ողորմութիւն: Ո՛վ անսահման սէր: Աստուած մը եկաւ ինձի հետ միանալու եւ ինք զինք բոլորովին իմս ընելու: Ա՛նձն իմ, որ հիմակ ասանկ

Յիսուսի հետ սերտիւ միացած ես  
 ու բոլորովին մէկ եղած ես, ի՞նչ կ'ը-  
 նես. բան մը չե՞ս խօսիր իրեն : Չե՞ս խօ-  
 սիր քու Աստուծոյդ հետ, որն որ քեզի  
 հետ է : Զօրացնւր նորէն քու հաւատքդ .  
 մտածէ որ հրեշտակները քու չորս դիդ  
 կեցած երկրպագութիւն կ'ընեն իրենց  
 Աստուծոյն, որն որ քու ներսդ կը կե-  
 նայ. դուն ալ քու ներսդ՝ քու Տիրոջդ  
 երկրպագութիւն բրէ : Գուն քեզի ժող-  
 վուէ եւ ուրիշ ամէն մտածմունքները  
 վաւրնտէ : Քու բոլոր յօժարութիւններդ  
 միացուր ու քու Աստուծոյդ հետ մէկ  
 եղած ըսէ .

Բ. 'Ա, երբ որ ծո- ի- ն ընդ ո- նել ո- ի- նեան :  
 Ո՛վ Յիսուս, իմ սէրս, իմ անսահման  
 բարիքս ու իմ ամէն բանս, կ'ողջունեմ  
 քու դալուստդ իմ սրտիս աղքատ ու  
 սղորմելի տունը : Ո՛հ, Տէր, ո՛ւր ես,  
 ո՛ւր հասար. իմ աս սրտիս մէջ, որն որ  
 ան ախտուէն ալ, որուն մէջ ծնար՝ գէշ  
 ու լեցուն է անձնասիրութեամբ ու ան-  
 կարգ բաղձանքներով : Ի՞նչպէս եկար  
 հոս բնակելու : Կ'ուզէի քեզի ըսել Ս .  
 Պետրոսին հետ. "Ինձ մէ հեռու կեցիր,  
 վասն զի ես մեղաւոր մարդ մըն եմ" :  
 Հեռու գնա ինձ մէ, Տէր, վասն զի խիստ  
 անարժան եմ անսահման բարի Աստու-  
 ծոյ մ'ընդունելութիւն ընելու. գնա՛  
 հանգչէ ան սուրբ հոգիներուն մէջ, ու

րոնք մեծ սիրով քեզի կը ծառայեն :  
Բայց չէ, Փրկիչ իմ, ի՞նչ կ'ըսեմ, մի  
բաժնուիր ինձմէ, վասն զի, թէ որ  
դուն կը հեռանաս, ես կորսուած եմ :  
Զքեզ կը գրկեմ, կեանք իմ, ու քեզի  
հետ սերտիւ կը միանամ : Մինչեւ հի-  
մայ շատ խենթ գտնուեցայ, որ արա-  
րածոց սիրոյն համար քեզմէ բաժնուե-  
ցայ ու ապերախտութեամբ զքեզ  
վաճնտեցի : Ասկէ ետեւ ալ չեմ ուզեր  
քեզմէ բաժնուիլ, ո՞վ իմ դանձաւ կ'ու-  
զեմ միշտ քեզի հետ միացած ապրիլ  
ու մեռնիլ :

Ամենասուրբ Մարիամ, սերովբէք ու  
դուք ամէն հոգիներ, որ սուրբ սիրով  
զԱստուած կը սիրէք, ձեր բարի յօժա-  
րութիւններն ու զգածումներն ինձի  
ընդունեցէք, որպէս զի իմ սիրելի Տի-  
րոջս հետ աղէկ ընկերութիւն ու կենսա-  
կցութիւն ընեմ :

Գ. Ներգործութիւն շնորհակալութեան :  
Իմ Աստուածս ու Տէրս, շնորհակալ  
եմ աս առտու իմ սիրտս գալով ու  
բնակելովդ ինձի ըրած շնորհացդ վրայ .  
կ'ուզէի քեզի՝ եւ կամ քու ըրած մեծ  
պարգեւիդ արժանի շնորհակալութիւն  
մ'ընել : Բայց ի՞նչ կ'ըսեմ, ի՞նչ արժա-  
նաւոր շնորհակալութիւն կ'ընամ ընել  
քեզի ես ողորմելիս :

Քու առաքինի ծառաներէդ մէկը

կ'ըսէր թէ Հազորդու թիւն ընդունող անձ մը ուրիշ բան չի կրնար ընել բայց եթէ «Աստուած մը ինձի եկեր է», ըսել ու զարմանալ: Գաւիթ կ'ըսէր: «Աստուծոյ ինձի տուած ամէն բաներուն փոխարէն ի՞նչ տամ», : Հապա ես ի՞նչ տամ քեզի, Յիսուս իմ, որ քու այնչափ բարիքներդ ինձի տալէդ ետեւ, աս առտու նոյն իսկ զքեզ ալ ինձի տուիր: Անանկ է նէ, անձն իմ, կրցածիդ չափ օրհնէ զԱստուած ու շնորհահակալ եղիր անոր: Իմ մայրս Մարիամ, պաշտպան սուրբերս, պահապան հրեշտակս ու դուք ամէն անձինք, որ Աստուծոյ սիրովը զմայլած էք, եկէք օրհնեցէք զԱստուած ու իմ տեղս շնորհակալ եղէք անոր՝ զարմանալով ու գովելով այն սաստիկ մեծ շնորհքները զորոնք ինձի ըրաւ:

Գ. Երգութո՞ւն ինչն նո՞ւրման: «Միբելիս ինձի ու ես անոր», • (Երգ. Բ. 6): Թէ որ թագաւոր մը դայ ու այցելութիւն ընէ ազքատ հովուի մը՝ անոր փարախին մէջ, ի՞նչ կրնայ հովիւն անոր ընծայել, բայց եթէ բոլոր իր փարախը: Արդ, իմ աստուածային թագաւորս Յիսուս, որովհետեւ եկար այցելութիւն ընելու իմ հոգւոյս ողորմելի տան, քեզի կը նուիրեմ ու կու տամ նոյն առնն ու բոլորովին ինք զինքս իմ ազատու-

Թեամքս ու կամքովս մէկտեղ . «Սիրելիս  
ինձի ու ես անոր», : Գուն զինքդ բոլորո-  
վինն ինձի տուիր, ես ալ զիս բոլորո-  
վինն քեզի կու տամ : Ո՛վ Յիսուս իմ,  
ասկէ ետեւ չեմ ուզեր իմս ըլլալ . կ'ու-  
զեմ քուկդ ու բոլորովին քուկդ ըլ-  
լալ : Իմ զգայարանքներս քուկդ ըլ-  
լան, որպէս զի մինակ քեզի հաճու-  
թիւն տալու համար ինձի ծառայեն : Իսկ  
քեզի հաճութիւն պատճառելէն աւելի  
ի՛նչ մեծ հաճութիւն կրնայ ունենալ  
մէկը, ո՛վ ամենասիրելի, ամենագութ  
ու ամենաբարերար Աստուած : Իմ բո-  
լոր կարողութիւններս մէկանց քեզի  
կու տամ ու կ'ուզեմ որ ամէնն ալ  
քուկդ ըլլայ : Ա՛նչեմ որ իմ յիշողու-  
թիւնս ինձի ուրիշ բանի չծառայէ,  
բայց եթէ քու բարերարութիւններդ ու  
սէրդ յիշելու, միտքս ուրիշ բանի չծա-  
ռայէ, բայց եթէ միայն քու վրայ  
մտածելու, որ միշտ իմ բարիքս կը  
մտածես, կամքս զքեզ՝ իմ Աստուածս  
ու ամէն բանս սիրելու միայն ծառայէ  
եւ մինակ ան բանն ուզելու, զորն որ  
դուն կ'ուզես :

Արդ, ո՛վ քաղցր Փրկիչ իմ, ահա  
աս առտու քեզի կը նուիրեմ ու քեզի  
կ'ընծայեմ ի՛նչ որ ունիմ ու ի՛նչ որ  
եմ, զգայարանքներս, խորհուրդներս,  
բաղձանքներս, յօժարութիւններս, հա-



ճութիւններս, միտութիւններս, ազատութիւնս ու մէկ խօսքով՝ բոլոր իմ մարմինս ու հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ:

Ո՛վ անասման փառաց Տէր, ընդունէ աս նուէրը, զորն որ՝ երկրիս վրայ գտնուող մեղաւորներէն մինչեւ հիմակ ամենէն ապերախտ եզոզ մեղաւորը՝ ինքզինք մատուցանելով կ'ընէ քեզի, ասկէ ետեւ ալ բոլորովին քուկդ ըլլալ ուզելով: Տէր, ըրէ ինձի ու տրամադրէ զիս, ինչպէս որ կը հաճիս: Եկէք, սով սպառիչ հօւր ու աստուածային սէր, եկէք սպառեցէք իմ ներսս ան ամէն բան, ինչ որ իմս է ու ձեր սուրբ աչքերուն աղէկ չ'երեւար, որպէս զի ասկէ ետեւ բոլորովին ես ձերն ըլլամ ու չէ թէ մինակ ձեր հրամաններուն ու խորհուրդներուն, հապա նաեւ ձեր ամէն սուրբ բաղձանաց ու ձեր հաճութեանց հետեւելու համար մինակ ապրիմ. Ամէն:

Ամենասուրբ Մարիամ, քու ձեռքովդ ամենասուրբ Երրորդութեան առջեւն հանէ իմ աս նուէրս ու բարեխօս եղիր, որ զասիկա ընդունի ու ինձի շնորհք տայ՝ մինչեւ մահաստոր մէջ հաւատարիմ մնալու. ամէն. ամէն. ամէն:

Ե. Երբորձո՞ւն աղաչանաց: Ա՛նձն իմ, ինչ կ'ընես ժամանակ կորսըն-

ցրներու չես, աս ժամանակը պատուական ժամանակ է, որուն մէջ կրնաս ընդունիլ ինչ շնորհք որ խընդրես: Չես տեսներ յաւիտենական Հայրը, որ սիրոյ նայուածքով կը նայի քեզի, քու ներսդ իր սիրելի Արդին տեսնելով, որն որ իր սիրոյն ամենէն պատուական առարկան է: Արդ, վաճառէ ուրիշ ամէն խորհուրդներդ, նորէն զօրացուր հաւատքդ, ընդարձակէ սիրտդ ու խնդրէ ինչ որ կ'ուզես:

Չես լսեր, որ նոյն իսկ Յիսուս քեզի կ'ըսէ. «Ինչ կ'ուզես՝ որ քեզի ընեմ», : Ըսէ, ինչ կ'ուզես: Ես եկած եմ զքեզ հարստցրներու եւ քու բաղձանքներդ լեցրներու. խնդրէ վստահութեամբ եւ ուզածդ կ'ընդունիս:

Ո՛հ, քաղցր Փրկիչս, որովհետեւ դուն եկած ես ինձի շնորհքներ ընելու եւ կը բաղձաս, որ ես զանոնք քեզմէ խնդրեմ, չեմ խնդրեր քեզմէ ոչ երկրաւոր բարիք, ոչ հարստութիւն, ոչ պատիւ, եւ ոչ զուարճութիւն. տո՛ւր ինձի, կ'աղաչեմ, քեզի պատճառած տհաճութեանցս վրայ մեծ ցաւ մը, տո՛ւր ինձի մեծ լոյս մը, որ աս աշխարհքիս ունայնութիւններն եւ քու սրճափ սիրոյ արժանի ըլլալդ ճանչնամ: Փոխէ իմ աս սիրտս, ամէն երկրաւոր յօժարութիւններէ բաժնէ, քու սուրբ

կամացդ բոլորովին համեմատ սիրտ մը  
տուր ինձի, որպէս զի ուրիշ բան չփրն-  
տուեմ, բայց եթէ քու մեծագոյն հա-  
ճութիւնդ եւ ուրիշ բանի չբաղձամ,  
բայց եթէ քու սուրբ սիրոյդ. «Չսիրտ  
սուրբ հաստեա յիս Աստուած», :

Ես ասոր արժանի չեմ. բայց դուն ար-  
ժանի ես, Յիսուս, որովհետեւ եկած  
ես իմ հազիս բնակելու : Ասիկա կը  
խնդրեմ քեզմէ՝ քու եւ քուկին ամե-  
նասուրբ մօրդ արդեանցը եւ յաւիտե-  
նական Հօր ունեցած սիրոյդ ձեռքով :

Հոս ինդրէ՛ Յիսուսն ինչի կամ ինչ  
ժերձանքներու հարկանք եղող մասնա-  
նոր շնորհք մը : Մեղանքներն ու քա-  
րանի մեջ եղող հոգիներն ալ մի՛ մոռնար :

Յաւիտենական Հայր, նոյն ինքն քու  
Որդիդ Յիսուս Քրիստոս մեզի ըսաւ.  
«Ամէն, ամէն, կ'ըսեմ ձեզի թէ ինչ որ  
իմ անուամբս Հօրմէ կը խնդրէք, ձեզի  
կու տայ», : Արդ, աս Որդւոյդ սիրոյն  
համար, որն որ հիմայ սրտիս մէջն է,  
լսէ իմ աղօթքիս ու խնդրածս տուր :

Իմ սէրս՝ Յիսուս եւ Մարիամ, ձեզի  
համար կ'ուզեմ շարշարուիլ ու մեռնիլ,  
կ'ուզեմ բոլորովին ձերն ըլլալ ու ամե-  
նեւին իմս չըլլալ : Միշտ օրհնութիւն  
ու շնորհակալութիւն ընդունի Հաղոր-  
դութեան ամենասուրբ Խորհուրդը :

Օրհնեալ ըլլայ սուրբ ու Անարատ յղու-  
թիւն երանելոյ Կուսին Մարիամայ :

Աղօթ+ ու+ մինասուրբ Կոյան, Հաղորդու-  
նի երեւ :

Անբաւ շնորհակալութիւն կը մատու-  
ցանեմ քեզի ո՛վ ամենօրհնեալ Կոյս  
Մարիամ, այն անչափ բարութեան հա-  
մար, զորն որ ինձի բրիր՝ քու սուրբ սր-  
վայնիդ ամենօրհնեալ ու քաղցր պտու-  
ղը՝ զՅիսուս՝ իմ Աստուածս ու Փր-  
կիչս ընդունելու շնորհք տալով : Կը խըն-  
դրեմ քեզմէ բոլոր սրտանց, ո՛վ Մայր  
գթութեան, քու եւ սիրելի Արդւոյդ  
ամէն արդիւնքներովը, որ իմ ամէն մեղ-  
քերուս թողութիւն ընդունիս, մոլու-  
թիւններս մաքրես ու բարւոյն մէջ՝ յա-  
ռաջադիմութիւն տաս, վշտաց մէջ՝  
համբերութիւն, ամէն փորձութեանց  
մէջ՝ յաղթութիւն, բարի յառաջա-  
դրութեանց մէջ՝ հաստատութիւն, աշ-  
խարհային ու զգայական բաներու՝ ա-  
տելութիւն ու զգուում, հոգեւոր բա-  
ներու՝ սէր ու բորբոք, եւ ամէն բանի  
մէջ քու սիրելի Արդւոյդ աստուածային  
կամացը կատարեալ համակերպութիւն :

Աս ամէն շնորհքը կը խնդրեմ քեզ-  
մէ, Յիսուս, քու ամենօրհնեալ Մօրդ  
ինն ամիս զքեզ իր արդանդին մէջ կրե-  
լովն ունեցած արդեանցը, զքեզ գիե-

ցուցած ու սնուցած կուսական կաթին  
եւ իր սուրբ ու ողջախոհ փեսային Ս.  
Յովսէփայ հետ՝ թէ իր կենացը մէջ՝  
ու թէ իր մահուան ատեն քեզի մա-  
տուցած հաճոյական ծառայութեանց  
համար, որպէս զի միշտ վրաս փա-  
ռաւորուի քու սուրբ անունդ. ամէն :

ՀԵՒԻՒԽԵԼ ԽՂՅԻՆ ԸՆՈՂԸ ԻՆՐՈՂՆԻՆԻՆ ԻՆՆԻ-  
ԴՆԻՆԻ :

Հողի Քրիստոսի, սրբէ զիս :  
Մարմին Քրիստոսի, պահէ զիս :  
Արիւն Քրիստոսի, արբեցնւր զիս :  
Զուր կողին Քրիստոսի, մաքրէ զիս :  
Չարչարանք Քրիստոսի, զօրացնւր զիս :  
Ո՛վ բարի Յիսուս, լսէ ինձի :  
Քու վիրացդ ասկ ծածկէ զիս,  
Ու մի թողուր զիս որ բաժնուիմ քեզմէ :  
Չար թշնամիէն պաշտպանէ զիս :  
Մահուանս ատեն կանչէ զիս,  
Ու հրամայէ որ դամ քեզի .  
Որպէս զի սրբոց ու հրեշտակաց հետ  
գովեմ զքեզ  
Անաստման յաւիտենականութեան մէջ .  
Ամէն :

Ո՛վ որ Հաղորդութենէ ետեւ առ ազօնեւ է՛նէ  
Լեւիտար ներողութենն իւր լաւութիւն:

Ո՛վ բարի Յիսուս, ահա քու մեծ-  
վայելըութեանդ առջին երեսի վրայ ին-  
կած, բոլոր սրտանց կ'ազաչեմ ու կը  
խնդրեմ քեզմէ, որ իմ սրտիս մէջ տպա-  
ւորես կենդանի հաւատք, յոյս ու սէր,  
եւ իմ մեղացս վրայ ճշմարիտ ցաւ մը եւ  
դարձեալ հաստատուն յառաջագրու-  
թիւն մը զքեզ ալ չբարկացնելու .  
ցաւագին սրտիւ քու հինգ վերքերդ կը  
մտածեմ Գաւիթ մարդարէին այն խօս-  
քը յիշելով թէ Չերուրներս ու ոտուր-  
ներս ծակեցին ու ոսկրներս համրեցին .  
(Սղմ. ԻԱ. 17—18):





## ԳԼԽԱԻՈՐ ՏՕՆԵՐԸ

ՍՐԲՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

«Ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել  
Տեառն», . Ղուկ Բ. 22:

Ո՛վ ամենախոնարհ Կոյս, Երուսա-  
ղէմ սրբուելու կու գաս, որպէս զի մէկը  
չմտածէ թէ դուն Աստուծոյ Մայրն ես,  
եւ որպէս զի ամէն մարդ անանկ կարծէ  
որ հասարակ մարդու պէս՝ մարդ աշ-  
խարհք բերիր: Ասանկ քու փառքդ  
անհետ ըլլալով՝ քու խոնարհութիւնդ  
կը փայլի, բայց երանելին Սիմէոն ի  
Հոգւոյն սրբոյ առաջնորդուած ըլլալով  
չէր կրնար խաբուիլ: Բաղձանացը հա-  
մեմատ՝ իր Փրկիչը տեսնելու երանու-  
թիւնն ունեցաւ, դիրկն առաւ ու զա-  
նիկա աշխարհքիս լոյսն ու իր ժողովըր-  
դեանը փառք ձանչցաւ:

Կոյս սուրբ, քու հոգիդ ասանկ հա-  
սարակ մարդիկներու հոգիէն տարբեր  
ու բոլորովին նման է քու սիրելի Ու-  
ղւոյդ Հոգւոյն: Մարդիկ մինակ բարձրու-  
թիւն կը փնտռեն, իսկ Յիսուս ու դուն  
մինակ խոնարհութիւն կը փնտռէք:  
Ինծի շնորհք ընդունէ, որ ես ալ իմ

Հոգիս՝ Յիսուսի Հոգւոյն նմանցընեմ՝  
միանգամայն իմ սիրտս ալ անոր ըն-  
ծայէ, որպէս զի զանիկա սրբէ ու որպէս  
զի ամէն գործքիս մէջ սուրբ զիտաւո-  
րութիւն ունենամ:

ԱՒԵՏՈՒՄ

“Ողջոյն քեզ, լի շնորհօք” Ղուկ. Ա. 28:

Ո՛վ անհամեմատ Աոյս, մի խուովիր:  
Աստուծոյ հրեշտակն է, որ կու գայ քե-  
զի իմացընելու թէ բոլոր երկրի ուրա-  
խութեան առիթ տուող, մինչեւ հիմայ  
քու փափաքանացդ նպատակն եղող ու  
քու խոնարհութիւնդ պասկող երջանիկ  
օրը հասաւ: Այս գայ քեզի ըսելու թէ  
Որդի մը պիտ'որ յղանաս՝ այնպիսի կա-  
տարեալ աստուածային զօրութեամբ  
ու ներգործութեամբ՝ որ ամենեւին քու  
ողջախոհութեան ուխտիդ վնաս մը չի-  
հասնիր, ու աս Որդին՝ զորն որ էմմա-  
նուէլ կամ Յիսուս պիտի անուանես,  
պիտ'որ քաւէ քու եւ իր ժողովուրդն անոր  
բոլոր անօրէնութիւններէն ու պիտ'որ  
հանէ սատանային գերութենէն, որուն  
մէջ գժբախտութեամբ՝ իր անհնազան-  
դութեամբն ինկած էր:

Աոյս սուրբ, այն աշխարհքէ քաշու-  
ած ու առանձին կեանքդ, զորն որ մար-  
դիկներու հաղորդութենէն հեռու կ'ան-

ցընէիր, զքեզ այս պատուական այցելութեան արժանի ըրաւ եւ պատրաստեց զքեզ քու մարութ արգանդդ ընդունելու ամենակալ Աստուծոյ Որդին զսիրուն Յիսուս: Ես ալ կ'ուզեմ աս ճամբով զՅիսուս իմ սիրտս բերել ու սրտիս մէջ պահել:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

“Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս,” : Ղուկ. Ա. 43 :

Ո՛վ բարերար Աոյս, ի՜նչպէս կարելի էր որ քու սիրելի ու խոնարհ ազգականդ չզարմանար ու չխռովէր տեսնելով՝ որ դուն՝ Աստուծո՛ւմէ այնչափ մեծամեծ առաւելութիւններ ու պատուական առանձնաշնորհութիւններ ընդունելէդ ետքը նոյն իսկ այն երկայն ու տարժանելի ճամբորդութեան ալ չնայելով՝ չես քաշուեր իրեն գալ:

Քու ներկայութիւնդ՝ ստուերի մը պէս քու վրագ իջած Հոգւոյն սրբոյ ազդեցութիւններն անոր զգացընել տալով՝ անպատում ուրախութիւն մը կը պատճառէ, որով կը ստիպուի դռչելու, թէ դուն ամէն Անանոց մէջ օրհնեալ ես. մի եւ նոյն ատեն անոր արգանդին մէջ յղացած որդին՝ իր մօրը հետ կ'ընդունի քու սուրբ արգանդիդ մէջ եղած Որ-

դւոյդ օրհնութիւնը : Ի՞նչ զարմանալի  
պրանչելիքներ չեղան աս պարզ ու ան-  
պաճոյճ այցելութեան ատեն :

Սուրբ Աոյս , իմ հոգիս քեզի հետ կը  
միանայ , որպէս զի մէկտեղ զԱստուած  
փառաւորէ . այցելութեան եկուր անոր  
եւ քու պաշտպանութեանդ տակն առ :  
Քու այսօր սուրբ Յովհաննէսին բրած  
սիրալիր շնորհքներուդ նմանելու հա-  
մար , ես ալ կ'ուզեմ այսօր աղքատ տղու  
մը ողորմութիւն տալ ու կը խոնարհիմ  
մինչեւ անոր ոտուքներն ու ձեռուքները  
պաղնելու եւ Աստուծոյ կ'աղօթեմ որ  
զանիկա սուրբ մ'ընէ :

#### ՎԵՐԱՓՈՒՈՒՄ

«Այսօր փոխեցեր , Տէր , զուրախութիւնդ  
երկնի եւ երկրի յանարաւմ ի կեանս» , Շար . :

Մի փառաւորեալ Աոյս , երբոր թա-  
ղուելով քու մարմինդ երկրի աւանդ  
տուիր , անանկ պատուական նշխարհք  
մը թողուցիր անոր , որ չէր կրնար կար-  
ծել թէ երկայն ատեն զքեզ պահելու  
երանութիւնն ունենայ : Այն սուրբ տա-  
պանակը , որուն մէջ մարմնացեալ Աս-  
տուածութիւնը բնակած էր , ուրիշ տեղ  
չէր կրնար հանգչիլ , բայց եթէ անոր  
սրբութեան յարկին մէջ : Ար վայլէր՝ որ  
այն մարմինը , որն որ քու հոգւոյդ կա-  
տարած այնչափ դուզնագիւտ ու անհա-

մար առաքինութեանց կրթութիւններուն ընկերացաւ ու անոնցմով նաեւ ինք որբեցաւ, իր երջանկութեանը հասնելու համար ընդհանուր յարութեան օրուան չտպասէ: Աս էր պատճառը, որուն համար քու մարմինդ երկայն ատեն իր փառքէն զուրկ չմնաց: Մահուրնէ՞դ երեք օր ետքը հրեշտակները քու մարմինդ վերցուցին ու անոյշ երգերով օդը թնդացրնելով՝ յաղթանակաւ երկնաւոր Սիոնը տարին, ուր բոլոր երանելեաց դասերուն առջեւ պսակուած դիտով ու Աստուծոյ մը երկնից ու երկրի թագուհւոյն պարզեւած փառքովն ու փառաւորութեամբը երեւցար եւ ուր մարմնով ու հոգւով՝ ամենէն բարձր հրեշտակներէն ալ վեր՝ քու աստուածային Որդւոյդ՝ Յիսուսին քով քեզի պատրաստուած աթոռը նստար ու հոն քու Որդւոյդ հետ յաւիտեան պիտ'որ թագաւորես:

Սուրբ կոյս, քու աս փառացդ վրայ՝ ինձի եղած փառքի պէս ու մանաւանդ թէ ալ աւելի կ'ուրախանամ: Ա՛նգէի քեզի վայլած գովեստներով աս փառքդ օրհնել: Ար բաղձայի որ քեզի ընծայելու արժանի եւ կամ իմ զգածումներս քեզի յայտնելու բաւական բան մ'ունենայի: Ընդունէ, կ'աղաչեմ, քու օրինակովդ ինձի սովորեցուցած առաքի-

նութեանց փունջ մը, զորն որ կ'ուզեմ  
 շինել Աստուծոյ սիրոյն, ընկերին սիրոյն  
 ու օգնականութեան, ապաշխարու-  
 թեան, մահացուցման, հնազանդու-  
 թեան, քաղցրութեան ու խոնարհու-  
 թեան ներդործութիւններով: Ինչչափ  
 երջանիկ կ'ըլլամ թէ որ ասով քու զօ-  
 րաւոր պաշտպանութեանդ արժանի  
 կ'ըլլամ: Ասիկա կը խնդրեմ քեզմէ՝  
 քու սիրոյդ եւ իմ ունեցած կարօտու-  
 թեանս ինծի ազդած բոլոր վստահու-  
 թեամբ: Մասնաւոր կերպով ինծի ու  
 ամէն արդարոց համար մշտնջենաւոր  
 յարատեւութիւն կը խնդրեմ ու թէ որ  
 աս շնորհքն ընդունելու ըլլանք, Աս-  
 տուծոյ անսահման ողորմութիւնները  
 կ'երգենք ու յաւիտենական շնորհակա-  
 լութիւն կը մատուցանենք:

ԾՆՈՒՆԻ

«Եդից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ  
 կնոջդ, նա սպասեսցէ քում գլխոյ», Ծնն.  
 Գ. 15:

Ո՛վ անհամեմատ Աոյս, հասաւ այն  
 ատենը, զորն որ Աստուած խոստացած  
 էր, մարդարէները պատմած էին ու որուն  
 նահապետներն ու բոլոր հեթանոսք կը  
 բաղձային: Գուն աշխարհք կու գաս ու  
 ծնանելու ատենդ իսկ իբրեւ պատերազմի  
 ճակատած բանակ մը զարհուրելի կ'ե-



րեւաս սատանաներու, իսկ ասոր հա-  
կառակ հորիզոնին վրայ ծագած գե-  
ղեցիկ առաւօտէն աւելի ուրախացուցիչ  
կ'երեւաս սրբոց: Իրօք ալ, ինչպէս որ  
այն առաւօտեան այգն արեգական ծա-  
ղերը կ'աւետէ, անանկ ալ դուն արդա-  
րութեան Արեգական ծագերը կ'աւետես:

Սուրբ Աղյս, ինչ կրնամ ընել ես, որն որ  
քու մարդկան վրայ ողորմութեան զգած-  
մամբ լի եղող իղձերուդ ու Աստուծոյ  
գիտաւորութեանցը համեմատ ըլլայ,  
բայց եթէ բաղձալ ու խնդրել որ  
ամէն մարդ իր երջանկութեան ու իր  
մեծագոյն փառացը համար՝ զԱստուած  
ճանչնայ, սիրէ ու պաշտէ:

ԸՆԾԱՅՈՒՄ

«Ընկալ զիս, Տէր, ըստ բանի քում»  
Սաղ. ճԺԸ:

Ո՛վ զարմանալի Աղյս, ինչ մեծ ուրա-  
խութիւն տաւիր Իսրայելի Աստուծոյն  
տաճարին մէջ բնակող հրեշտակաց,  
երբոր՝ առջի անգամ հոն մտար: Ո՛հ,  
ինչպէս կարելի էր որ հրեշտակներն իրենց  
թագուհին իրենց արարչին առջեւ մա-  
տուցուած ու բոլորովին անոր ծառայու-  
թեանը նուիրուած տեսնէին՝ առանց  
կենդանի ուրախութիւն մը յայտնելու  
եւ ասանկ նուերի մը հետ իրենց  
երկնաւոր ներդաշնակութիւնը միացը-

նելու : Ո՛հ, մտօք հոն կ'երթամ ու կը լսեմ որ անոնց քեզի տուած գովութիւնները տաճարը կը թնդացընեն, այնպիսի գովութիւններ, որոնց դուն միայն արժանի էիր :

Սուրբ Աոյս, ամենէն աւելի աս բանիս մէջ կ'ուզեմ քեզի նմանիլ ու քեզի պէս եւ քու միջնորդութեամբ կ'ուզեմ ինք զինքս բոլորովին անոր տալ, որմէ ամէն բան ընդունած եմ : Օգնէ ինձի, որպէս զի ինձի ամենեւին բան մը չպահեմ, ու անոր իմ վրաս ունեցած բոլոր դիտաւորութիւնները կարենամ կատարել, վստահութեամբ անցնելով ա՛ն ամէն վիճակներէն, որոնց մէջ ինք կը հաճի զիս դնել :

#### ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ

«Ամենեւին գեղեցիկ ես մերձաւոր իմ, եւ արատ ինչ ո՛չ գոյ ի քեզ», երգ. Դ. 7 :

Ո՛վ ամէն սուրբերէ աւելի սուրբ Աոյս . եկեղեցւոյ՝ մեր սուրբ Մօրը հետ կը խոստովանիմ որ դուն առանց մեղաց յղացար, քու բոլոր կենացդ մէջ քու սրբութիւնդ ու անմեղութիւնդ ո՛չ միայն շնտեմացաւ, այլեւ աւելցաւ ու զքեզ աւելի եւս արժանի ըրաւ Հոգւոյն սրբոյ, որն որ զքեզ հարս ընտրած էր : Այո՛, դուն իրմէ ունեցար այն երջանիկ պաղաբերութիւնը, որով աշխարհքին՝ իր Փրկիչը տուիր,

ու զանհիկա ծնանելէդ ետքն ալ՝ ամէն կոյսերէ աւելի սուրբ կոյս ըլլալու փառաւոր առաւելութիւնդ չկորսնցուցիր : Յաւիտեան օրհնեալ ըլլայ քու որովայնիդ երջանիկ պտուղը :

Սուրբ Աոյս, քեզի պէս ու քեզի հետ ինք զինքս բոլորովին բարերար Աստուծոյ կը նուիրեմ, որն որ զիս՝ իր փառացը համար՝ ոչընչէ հանեց եւ իր անբաւ բարերարութեան սաստկութեամբը կ'ուզէ նաեւ նոյն փառաց զիս ալ՝ որչափ որ անարժան ալ եմ նէ՝ մասնակից ընել : Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո՞վ Աստուած իմ, զքեզ իմ արարիչս ու մինակ փառաւորիչս կը ճանչնամ ու կ'ատեմ մեղքը, որն որ զքեզ կը վըշտացրնէ :

#### ԱՆՈՒՆ ՄԱՐԻԱՄԱՅ

“Իւզ անոյշ հեղեալ է անուն քո”, • Երգ. Ա. 2 :

Ո՞վ անարատ Աոյս, քու սուրբ անուանդ քաղցրութիւննուրիչ սուրբերուն սէրը քեզի քաշեց ու անոնց քու սէրդ բաղձալ ու փնտուել տուաւ : Քու անուանդ տարածած հոտը՝ զանոնք յորդորեց քու հետքիդ ետեւէն երթալու եւ կատարելու այն առաքինութիւնները, որոնց կատարեալ օրինակը տուիր դուն անոնց : Ո՞վ սուրբ անուն, մարդ

չիկրնար զքեզ ըստ բաւականին բար-  
ձրացընել, մեղքի պէս անոյշ ես բերնի  
մէջ, քաղցր ջերմեռանդութիւն կը  
ափուես սրտի մէջ ու անոր անպարտելի  
քաջութիւն մը կու տաս՝ թշնամւոյն  
հրապուրանացը դէմ կենալու, որուն  
վրայ առջի անգամ դուն յարձակեցար  
ու փառաւոր յաղթութիւն մ'ըրիր:

Սուրբ Աոյս, կ'ուզեմ ամէն ատեն քու  
սուրբ անուանդ մեծ յարգութիւն ու  
քաղցր սէր ունենալ, եւ ասիկա ցուցը-  
նելու համար կ'ուզեմ ամէն անգամ  
քու անունդ լսելուս դլուխս խոնարհե-  
ցընել: Բայց ամենէն աւելի, ո՞վ Աոյս  
սուրբ, շնորհք տուր ինձի որ իմ ամէն  
փորձութեանցս ու տառապանացս մէջ՝  
Յիսուսի անուանը հետ քու անունդ ալ  
կանչեմ: Յիսուս, Մարիամ: Աս երկու  
անուններն իմ հզօր վահանս ըլլան  
դժոխական թշնամեացս դիմացը:



Գ Ի Բ Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԳԼՈՒԽ Ա. Սուրբ Կուսին առաքինու- թեանցը նմանելու վրայ . . . . .	1
ԳԼՈՒԽ Բ. Թէ որչափ պէտք ենք մեծ համարիլ սրբարար շնորհքը . . . . .	5
ԳԼՈՒԽ Գ. Թէ ինչպէս պէտք ենք ջա- նալ սրբարար շնորհքը պահելու համար . . . . .	8
ԳԼՈՒԽ Դ. Թէ ինչ փոյթ պէտք ենք ունենալ շնորհաց ու կատարելու- թեան մէջ աճելու համար . . . . .	12
ԳԼՈՒԽ Ե. Թէ պէտք է ինք զինք կա- նուխ Աստուծոյ տալ . . . . .	16
ԳԼՈՒԽ Զ. Պէտք է ինք զինք բոլորովին ու ընդ միշտ Աստուծոյ տալ . . . . .	20
ԳԼՈՒԽ Է. Առանձնութեան օգուանե- րուն ու քաղցրութեանը վրայ . . . . .	23
ԳԼՈՒԽ Ը. Կենաց վիճակ մը ընտրելու վրայ . . . . .	27
ԳԼՈՒԽ Թ. Սրբութեան վրայ, եւ թէ որչափ նոյնը պէտք ենք յարգել . . . . .	31

ԳԼՈՒԽ Ժ. Սրբու[թ]իւնը պահելու հա- մար ընելու զգուշու[թ]եանց վրայ .	35
ԳԼՈՒԽ ԺԱ. Ճշմարիտ մեծու[թ]եան վրայ.	39
ԳԼՈՒԽ ԺԲ. Աստուծոյ շնորհքը խո- նարհաց կը տրուի . . . . .	43
ԳԼՈՒԽ ԺԳ. Ճշմարիտ փառքն աւելի քրիստոնէական խոնարհու[թ]եան մէջ կը գանուի . . . . .	47
ԳԼՈՒԽ ԺԴ. Խոնարհ անձ մը կը ջանայ ինք զինք մարդկան առջեւ այնպէս չցուցնելու, ինչպէս է Աստուծոյ առջեւ . . . . .	52
ԳԼՈՒԽ ԺԵ. Հաւատոյ խոհեմու[թ]եան վրայ . . . . .	55
ԳԼՈՒԽ ԺԶ. Հաւատքի հնազանդ քլա- լու վրայ. . . . .	59
ԳԼՈՒԽ ԺԷ. Թէ ինչպէս պիտի ջանայ ու փափաքի անձ մը զՅիսուս Հա- ղորդու[թ]եան մէջ ընդունելու . .	62
ԳԼՈՒԽ ԺԸ. Թէ ինչ զգած մամբ պէտք է լեցուիլ անձ մը, Հաղորդու[թ]եան խորհրդով Յիսուս անոր սրտին մէջ եղած ատեն . . . . .	66
ԳԼՈՒԽ ԺԹ. Ոմանց բարեպաշտական գործոց ու նաեւ սուրբ Հաղորդու- [թ]իւնն ընդունած ատեն զգացած ցամաքու[թ]եան վրայ . . . . .	69
ԳԼՈՒԽ Ի. Գործնական կենաց համար	



սուրբ Հաղորդութենէ քաղուելու պաղղն վրայ . . . . .	73
ԳԼՈՒԽ ԻԱ. Ընկերսիրութեան վրայ .	76
ԳԼՈՒԽ ԻԲ. Աստուծոյ մեծութեանց վրայ . . . . .	79
ԳԼՈՒԽ ԻԳ. Աստուծոյ ողորմութեան վրայ . . . . .	83
ԳԼՈՒԽ ԻԴ. Աստուծոյ բարերարու- թեանց համար՝ ցուցնելու շնոր- հակալութեան վրայ . . . . .	86
ԳԼՈՒԽ ԻԵ. Այցելութեան կամ տե- սութեան վրայ . . . . .	89
ԳԼՈՒԽ ԻԶ. Ընկերական խօսակցու- թեանց վրայ . . . . .	92
ԳԼՈՒԽ ԻԷ. Ճշմարիտ բարեկամու- թեան վրայ . . . . .	97
ԳԼՈՒԽ ԻԸ. Աստուծոյ վստահ ըլլալու եւ զինք անոր նախախնամութեան յանձնելու վրայ . . . . .	101
ԳԼՈՒԽ ԻԹ. Հնազանդութեան վրայ .	105



# Գ Ի Բ Ք Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ԳԼՈՒԽ Ա. Աղքատաց երջանկութեան վրայ . . . . .	109
ԳԼՈՒԽ Բ. Կամաւոր աղքատութեան վրայ . . . . .	112
ԳԼՈՒԽ Գ. Աղքատսիրութեան վրայ.	115
ԳԼՈՒԽ Դ. Մտածութեան հարկաւորութեան ու օգուաներուն վրայ .	119
ԳԼՈՒԽ Ե. Աստուծոյ օրինացը պահպանութեան վրայ . . . . .	123
ԳԼՈՒԽ Զ. Բարի օրինակ տալու վրայ.	127
ԳԼՈՒԽ Է. Խոնարհութիւնը սիրելու եւ յարգելու վրայ . . . . .	130
ԳԼՈՒԽ Ը. Թէ ինչպէս պիտ'որ ընենք Աստուծոյ այն զոհերը, զորոնք մեզ մէ կը պահանջէ . . . . .	133
ԳԼՈՒԽ Թ. Թէ ինչպիսի մտօք պիտի նկատենք մեր վրայ հասած վշտերը.	137
ԳԼՈՒԽ Ճ. Ինչպէս պիտի վարուի անձ մը, ու ինչ զգածմունք պիտի ունենայ, երբ որ Աստուած անոր նկատմամբ անանկ ընթացք մը կը բռնէ, որուն իր խելքը չի հասնիր .	142
ԳԼՈՒԽ ՃԱ. Նախախնամութեան արգարոց վրայ ցուցըցած խնամքը .	145
ԳԼՈՒԽ ՃԲ. Վիճակ մը ու կենաց դիրք մը չկայ, ուր կարող չըլանք Աս-	

տուճոյ ծառայել, բաւականոր Աստուած զմեզ հոն կոչած ըլլայ . . .	148
ԳԼՈՒԽ ԺԳ. Աստուճոյ ծառայութեան մէջ ունենալու եռանդեան վրայ . . .	152
ԳԼՈՒԽ ԺԴ. Թէ ինչչափ մեծ թշուառութիւն է զՅիսուս կորսընցընել . . .	156
ԳԼՈՒԽ ԺԵ. Թէ զՅիսուս կորսընցընելէն ետեւ, ինչպէս եւ ուր պէտք է զանիկա փնտռել . . . . .	161
ԳԼՈՒԽ ԺԶ. Թէ ինչպէս պէտք է վարուիլ զՅիսուս գտնելէն ետեւ . . .	163
ԳԼՈՒԽ ԺԷ. Հաւատարիմ՝ անձը պէտք չէ ցամաքութեան ատեն եւ երբոր Յիսուս իրմէ հեռացած կը կարծուի, վհատիլ . . . . .	168
ԳԼՈՒԽ ԺԸ. Քաշուած կամ ծածկուած կենաց վրայ . . . . .	172
ԳԼՈՒԽ ԺԹ. Ներքին կենաց վրայ . . .	175
ԳԼՈՒԽ Ի. Լռութեան վրայ . . . . .	181
ԳԼՈՒԽ ԻԱ. Հոգւոյն՝ Աստուճոյ հետ միանալուն վրայ . . . . .	186
ԳԼՈՒԽ ԻԲ. Վիճակի պարտուց վրայ . . .	190
ԳԼՈՒԽ ԻԳ. Թէ ինչպէս սուրբ ընելու է օրուան աշխատութիւնն ու զանազան զբաղմունքները . . . . .	194
ԳԼՈՒԽ ԻԴ. Մեր Յիսուսին ունենալու սիրոյն վրայ . . . . .	197

ԳԼՈՒԽ ԻԵ. Թէ պէտք է զՅիսուս օրինակ առնել ու անոր նմանիլ . . . . .	203
ԳԼՈՒԽ ԻԶ. Առաքինի ընտանեաց մը երջանկութեան վրայ . . . . .	207
ԳԼՈՒԽ ԻԷ. Աղօթքի զօրութեան վրայ . . . . .	210
ԳԼՈՒԽ ԻԸ. Առաքինութիւնը վիճակի պարտուց ու վայելչութեան հետ անմիասնական չէ . . . . .	214
ԳԼՈՒԽ ԻԹ. Թէ որչափ քաղցր է Յիսուսի ձայնը լսել ու որչափ անձ մը փոյթ պիտի ունենայ անոր խրատներն ընդունելու . . . . .	217
ԳԼՈՒԽ Լ. Պէտք չէ փնտռել աշխարհքիս փառքն ու մարդկան համարումը . . . . .	221
ԳԼՈՒԽ ԼԱ. Պէտք է ընկերին համբերել սիրոյ ու քաղցրութեան հողով . . . . .	225
ԳԼՈՒԽ ԼԲ. Թէ պէտք է ամէն բանի մէջ Աստուծոյ կամացը հաւանիլ, նոյն իսկ անանկ բանի մէջ, որն որ սեփական պատուոյ դէմ է . . . . .	229
ԳԼՈՒԽ ԼԳ. Ճշմարիտ սրբութեան նշաններուն վրայ . . . . .	232


Գ Ի Բ Ֆ Ե Ր Ր Ո Ր Գ

- ԳԼՈՒԽ Ա. Ո՛վ որ զՅիսուս կը սիրէ  
 պէտք է Յիսուսի հետ Գողգոթա  
 ելլել ու հոնանոր հետ շարձարուիլ. 235
- ԳԼՈՒԽ Բ. Վշտաց մէջ Աստուծոյ կա-  
 մացը հետ միաբանելու վրայ. . . . 240
- ԳԼՈՒԽ Գ. Համբերութեան վրայ . . . 244
- ԳԼՈՒԽ Դ. Թէ Աստուած շատ անգամ  
 ամենէն մեծ վշտերն իր ամենահա-  
 ւատարիմ ծառայիցը կը խաւրէ . 248
- ԳԼՈՒԽ Ե. Պէտք չենք վշտանալ ու  
 զարմանալ վշտաց դէմ մեր ունե-  
 ցած հակակրութեանց վրայ. . . . 253
- ԳԼՈՒԽ Զ. Խաչելեալ Յիսուսը նկա-  
 տելը զօրութիւն կու տայ վշտերը  
 քաջութեամբ ու հաստատու-  
 թեամբ կրելու . . . . . 256
- ԳԼՈՒԽ Է. Ի՛նչ զգածում ունենալու  
 ենք մեր թշնամեաց վրայ. . . . . 261
- ԳԼՈՒԽ Ը. Ի՛նչ զգածմունք պէտք ենք  
 ունենալ, երբոր կը ատենենք թէ  
 մեր ազգականքն ու բարեկամները  
 վիշտ կը կրեն . . . . . 264
- ԳԼՈՒԽ Թ. Ի՛նչպիսի հողուով պէտք է  
 որ համբերենք մեզի սիրելի եղող  
 անձինքը կորսընցընելուս վրայ . 268
- ԳԼՈՒԽ Ճ. Ի՛նչպէս պէտք է մարդ ինք

զինք զօրացընել հաւատոյ ու յու- սոյ մէջ, երբոր անանկ պարագա- ներու մէջ կը գտնուի, որոնք աս ա- ռաքինութեանց խիստ հակառակ կ'երեւան . . . . .	272
ԳԼՈՒԽ ԺԱ. Թէ ներդուծենէ ետեւ մխիթարութիւն կու գայ, բայց պէտք է առանց մխիթարութեան չարչարանաց համբերել գիտնալ .	277
ԳԼՈՒԽ ԺԲ. Թէ մեր ցանկուծիւնները պէտք են երկինք ձգուիլ. . . . .	280
ԳԼՈՒԽ ԺԳ. Թէ ինչ պէտք ենք ընել Հոգին սուրբ մեր վրայ բերելու համար . . . . .	283
ԳԼՈՒԽ ԺԴ. Թէ ամէն մարդ՝ իր վիճա- կին համեմատ Աստուծոյ փառացն ու հոգւոց փրկութեան նախան- ձախնդիր պիտ'որ ըլլայ . . . . .	287
ԳԼՈՒԽ ԺԵ. Թէ ո՛ւր պիտի փնտռէ քրիստոնէան իր մխիթարութիւնը՝ առաքինութեան համար կրած չարչարանաց ու իր երկրաւոր տա- րադրութեան յերկարութենէն պատճառած վշտացը մէջ . . . . .	291
ԳԼՈՒԽ ԺԶ. Մահուան պատրաստու- թեան վրայ . . . . .	297
ԳԼՈՒԽ ԺԷ. Արդարոց մահուանը քաղ- ցրութեան վրայ . . . . .	301



ԳԼՈՒԽ ԺԸ. Մահուան սուրբ փափար մ'ունենալու վրայ . . . . .	305
ԳԼՈՒԽ ԺԹ. Աստուծոյ սիրոյն վրայ . . . . .	308
ԳԼՈՒԽ Ի. Թէ երկնից փառքն իրբեւ վարձք խոստացուած է մեզի . . . . .	314



## Գ Ի Բ Ք Զ Ո Ր Ր Ո Ր Գ

ԳԼՈՒԽ Ա. Սուրբ Աստուածածնայ մե- ծամեծ առանձնաշնորհութեանց վրայ . . . . .	319
ԳԼՈՒԽ Բ. Յիսուսի ու Մարիամայ մէջ եղած նմանութեան նկարագիրնե- րուն վրայ . . . . .	322
ԳԼՈՒԽ Գ. Երկնից մէջ Մարիամայ ու- նեցած փառաց վրայ . . . . .	326
ԳԼՈՒԽ Դ. Յովհաննու երանութեանը վրայ, որուն Յիսուս մայր տուաւ զՄարիամ, որ երանութեան մաս- նակից են ամէն քրիստոնեայք . . . . .	331
ԳԼՈՒԽ Ե. Մեր Մարիամայ ունենալու սիրոյն վրայ . . . . .	335
ԳԼՈՒԽ Զ. Մարիամայ որդւոյն՝ իր մօրն առաւելութեացն ու փառացը հա- մար ունենալու նախանձախնդրու- թեան վրայ . . . . .	339

ԳԼՈՒԽ Է. Սուրբ Կուսին՝ Աստուծոյ քով մարդկան նկատմամբ ունեցած կարողութեան վրայ . . . . .	342
ԳԼՈՒԽ Ը. Ամենասուրբ Կուսին մեր վրայ ունեցած գթասիրութեան վրայ . . . . .	346
ԳԼՈՒԽ Թ. ՋՄարիամ օգնութեան կանչելու վրայ . . . . .	349
ԳԼՈՒԽ Ժ. Մարիամայ՝ մանաւանդ Աս- տուծոյ դառնալ ու թողութիւն ըն- դունիլ ուզող մեղաւորաց ունենա- լու վստահութեան վրայ . . . . .	353
ԳԼՈՒԽ ԺԱ. Հրեշտակային ողջունա- տրութեան վրայ . . . . .	357
ԳԼՈՒԽ ԺԲ. Կենդանութեան ատեն Մարիամայ վրայ ունենալու վստա- հութեան զգածմանց վրայ . . . . .	360
ԳԼՈՒԽ ԺԳ. Մահուան մօտենալու ա- տեն Մարիամայ վրայ ունենալու վստահութեան զգածմանց վրայ . . . . .	364
ԳԼՈՒԽ ԺԴ. Սուրբ Յովսէփայ՝ ամենա- սուրբ Կուսին փեսային ունենալու ջերմեռանդութեան վրայ . . . . .	367

---

Աղօթք սուրբ Աստուածածնայ սլաշու- պանութեան ապաւինելու . . . . .	372
Ներողութեան աղօթք մը . . . . .	372



# ԽՈՍՏՈՎԸՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՆ

## ԱՂՕԹ-ՔԵՇԲ

Մեղքերը ճանչնալու համար լուսաւո- րութիւն խնդրելու աղօթք . . .	373
Աղօթք զղջման ու յառաջադրութեան .	374
Աղօթք խոստովանութենէ յառաջ . . .	376
Աղօթք խոստովանութենէ ետքը . . .	376
Հաղորդութենէն յառաջ ընելու ա- ղօթքներ . . . . .	377
Հաղորդութենէն ետեւ ընելու աղօթք- ներ . . . . .	384
Աղօթք առ ամենասուրբ Կոյսն Հաղոր- դութենէ ետեւ . . . . .	392
Ներողութեան աղօթք . . . . .	393
Աղօթք առ խաչելեալն Յիսուս, Հաղոր- դութենէ ետեւ . . . . .	394




# Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ

## ԳԼԽԱԽՈՐՏՕՆԵՐԸ

ՍՐԻՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԻԱՌԱԶ	395
ԱԻԵՏՈՒՄ . . . . .	396
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ . . . . .	397
ՎԵՐԱՓՈԽՈՒՄ . . . . .	398
ԾՆՈՒՆԴ . . . . .	400
ԸՆԾԱՅՈՒՄ . . . . .	401
ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԻՒՆ . . . . .	402
ԱՆՈՒՆ ՄԱՐԻԱՄԱՅ . . . . .	403









207

